



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA  
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

VIKTOR KATVALYAN

DIALECTAL OVERVIEW  
OF THE REPUBLIC OF ARMENIA

VOLUME 1

REGION OF GEGHARKUNIK

YEREVAN - 2018

8(47.925)

2-28

h2

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

ԳԻՐՔ 1

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

0659

ԵՐԵՎԱՆ - 2018



ՀՏԴ 81'28  
ԳՄԴ 81.2-67  
Կ 280

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան  
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից  
տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382  
գիտական թեմայի շրջանակներում:

Պատասխանատու խմբագիր՝  
բան. գիտ. թեկնածու Ն.Գ.Հովհաննիսյան

**Կատվայան Վ.Լ.**

Կ 280 Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր,  
Գիրք 1. Գեղարքունիքի մարզ: – Ե., «Ասողիկ» հրատարակչություն,  
2018թ., 402 էջ:

Աշխատության մեջ ընդհանուր գծերով ներկայացվում են Գեղարքունիքի մարզում գործածվող բարբառային միավորները, տրվում են տեղեկություններ բնակչության տեղաշարժերի, խոսվածքների բարբառային պատկանելության վերաբերյալ, բերվում են մարզի բնակավայրերի բարբառային բնութագրերը: Գիրքը ներառում է նաև բարբառային տառադարձությամբ գրի առնված խոսքի նմուշներ ու բառացանկ:

Գիրքը կարող է կարևոր նյութ մատուցել հայերենագիտական հետազոտություններին, նպաստել հայ բարբառագիտության, հայոց լեզվի պատմության շատ հարցերի պարզաբանմանը: Այն օգտակար կլինի նաև հայ բանահյուսության, ազգագրության, ժողովրդագրության հարցերով զբաղվող մասնագետներին: Առկա նյութը կարող է օգտագործվել հանրագիտարանային բնույթի աշխատանքներում, ուսումնական դասընթացներում:

ՀՏԴ 81'28  
ԳՄԴ 81.2-67

## Ն Ա Ն Ա Ք Ա Ն

Հայոց լեզուն Հայաստանի Հանրապետությունում (նաև՝ Արցախի Հանրապետությունում, Ջավախքում, արտերկրի հայկական շատ համայնքներում) ամենօրյա կենդանի հաղորդակցման միջոց է՝ իր յուրօրինակ տարածական տարբերակներով, որոնցից յուրաքանչյուրի հետազոտությունն ու նկարագրությունը մեծ կարևորություն ունեն ոչ միայն լեզվաբանական, այլ նաև բանահյուսական, ազգագրական, ժողովրդագրական, կրթական, պատմամշակութային և մի շարք այլ առումներով: Արդյի հայերենի տարածական բոլոր դրսևորումների ուսումնասիրությամբ հնարավոր կլինի ըստ հնարավորին ամբողջացնել լեզվի մասին պատկերացումները, ձեռք բերել փաստական նոր ու բազմաբնույթ նյութ, կատարել գիտականորեն ճիշտ եզրահանգումներ: Լեզվի նման հետազոտությունը, ինչ խոսք, մեծ նպաստ կբերի հայ բարբառագիտությանը, լեզվաբանական աշխարհագրությանը, բայց նաև թույլ կտա ձևավորել հայերենի տարածագործառական ներկա ամբողջական պատկերը, մյուս կողմից՝ կստեղծվի Հայաստանի Հանրապետության լեզվական քարտեզը:

Հայ բարբառագիտության մեջ, որպես կանոն, մեծ ուշադրություն է դարձվել առանձին բարբառների ուսումնասիրությանը, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքում դիտարկվել է հիմնականում բարբառային կենտրոնի խոսվածքը, ներկայացվել են բարբառի հիմնական հատկանիշները, հաճախ անդրադարձ է կատարվել նաև կարևոր այլ խոսվածքների, նշվել են առավել էական տարբերակային իրողություններ, հիշատակվել են բարբառի տարածման շրջանները: Նման մոտեցմամբ առավել կամ պակաս խորությամբ նկարագրվել են բազմաթիվ բարբառներ, ձևավորվել է բարբառային միավորների նախնական տարածման ընդհանուր պատ-

կերը<sup>1</sup>: Այլ դեպքերում ներկայացվել են որևէ բարբառի տարբերակային դրսևորումները ըստ բնակավայրերի խմբերի<sup>2</sup>, առանձին տարածաշրջանների<sup>3</sup>: Կատարվել են նաև որոշակի տարածաշրջաններում հայերենի բարբառային տարբեր միավորների գործառության ու տարածական յուրահատկությունների հետազոտություններ<sup>4</sup>: Հայ բարբառագիտության ոլորտում զգալի ներդրում են հնչյունաքերականական ու բառագիտական բարբառային գուգաբանությունների տարածագործառական հետազոտությունները<sup>5</sup>: Կազմվել է Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր<sup>6</sup>, որի միջոցով Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցները գիտարշավների ընթացքում մոտ 500 տեղերում արձանագրել են

<sup>1</sup> Տե՛ս Հ.Աճառյան, Քննություն Կանի բարբառի, Ե., 1952, Մ.Ասատրյան, Ուրմիայի (Տոյի) բարբառը, Ե., 1962, Մ.Հ.Բաղդասարյան-Թավադյան, Մշո բարբառը, Ե., 1958, Հ.Մկրտչյան, Կարևո բարբառը, Ե., 1952, Մ.Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 1982, էջ 108-183 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, Ռ.Մարկոսյան, Արարատյան բարբառը, Ե., 1989:

<sup>3</sup> Տե՛ս Մ.Հ.Բաղդասարյան-Թավադյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973:

<sup>4</sup> Տե՛ս Ռ.Բաղդասարյան, Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., 1972, Ն.Մկրտչյան, Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը, Ե., 2006:

<sup>5</sup> Տե՛ս Կ.Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966, Աբրահամյան Ա., Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում, Ե., 2013, Աղաբեկյան Մ., Մյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն, Հայերենի բարբառագիտական ատլաս, պ. 3, Ե., 2010, էջ 154-165, Բառնասյան Ջ., Ժամանակակից բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009, Գևորգյան Գ., Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառական բնութագրերը, Ե., 2013, Խաչատրյան Հ., Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009, Մեսրոպյան Հ., Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում, Ե., 2010, Միքայելյան Ժ., Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարածամանակյա քննություն), Ե., 2009 և այլն:

<sup>6</sup> Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977:

բարբառային հայերենի հատկանիշները ըստ առանձին բնակավայրերի՝ հատկապես նպատակ ունենալով գրանցել Արևմտյան Հայաստանի խոսվածքների հատկանիշները: Անցյալի և ներկայի հայախոս 120 բնակավայրերի՝ ըստ բարբառային հատկանիշների բնութագրերը կարելի է ձևավորել Գ.Ջահուկյանի կազմած աղյուսակների տվյալներով<sup>7</sup>:

Ինչ խոսք, հայերենի բարբառների հետազոտության ոլորտում կատարվել է մեծ ծավալի աշխատանք, սակայն լեզվի տարածական արդի դրսևորումները դեռևս հիմնովին ուսումնասիրված չեն:

Ընդհանրապես, լեզվի հասարակական բնույթը, նրա գործառական յուրահատկությունները պայմանավորում են տարբերակված դրսևորումներ տարածության ու ժամանակի մեջ: Ինչպես նկատել է Հ.Աճառյանը, «...մարդկային հաղորդակցության միությունը բացարձակ չէ. ամեն մի համայնք իր ուրույն կյանքն ունի, և այս ուրույն կյանքը, միացած կլիմայական տարբեր պայմանների և ձայնական գործարանների տարբեր տիպի գործունեության հետ, առաջ է բերում մարդկային լեզվի մեջ տարբերություններ»<sup>8</sup>: Կարևոր է նաև հայագետի հետևյալ դիտարկումը. «Լեզուն ներկայացնում է անթիվ անհամար զանազանությունների մի շարք, որոնք մի կետից սկսելով քանի հեռանում, աստիճանաբար ու ավելի են շեշտվում: Ամեն մի վայրում կան մի խումբ երևույթներ, որոնք նույն կամ նման են այս հարևանի հետ, ուրիշ երևույթներ, որոնք նույն կամ նման են այն հարևանի հետ. այսպես շարունակաբար: Բայց չկա մի վայր, որի լեզուն ամբողջությամբ նույնը լիներ մի ուրիշ վայրի կամ ուրիշ վայրերի լեզվի հետ...»<sup>9</sup>: Ըստ Ա.Ղարիբյանի՝ «Ամեն մի բարբառին պատկանող տեղական խոսվածքները նույնպես խոշոր տարբերություններ ունեն միմյանցից, այնպես որ կարելի է ասել՝ որքան գյուղ, այնքան խոսվածք»<sup>10</sup>:

<sup>7</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

<sup>8</sup> Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Ե., 1951, էջ 114:

<sup>9</sup> Նշվ. աշխ., էջ 324-325:

<sup>10</sup> Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, 1953, էջ 86:

Բացի այդ, հայ բարբառների մի մասը եղեռնի, դրան նախորդած ու հաջորդած տեղահանությունների, գաղթերի պատճառով կորստի է մատնվել, իսկ մյուս մասը գրկվել է բնօրրանից և հատվածաբար շարունակում է գործառել տարբեր վայրերում: Արևելյան Հայաստանում՝ բնիկ բարբառների միջավայրում կամ դրանցից անջատ, սկսել են գործառել (նաև կողք կողքի) հայրենակորույս տարբեր բարբառների խոսվածքներ: Ժամանակի ընթացքում ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում ձևավորվել է բարբառային միավորների տարածման յուրօրինակ խճանկար՝ խոսվածքների՝ նախնական վիճակներին տարբեր աստիճանի հարագատությամբ, փոխազդեցություններով, բարբառային նկարագրի առավել կամ պակաս պահպանմամբ, կորստով և այլն: Վերջին շրջանում բազմաթիվ բնակավայրերում ստեղծվել է լեզվական նոր իրավիճակ՝ պայմանավորված բնակչության նոր տեղաշարժերով, արցախյան հակամարտության հետևանքով տեղի ունեցած ներգաղթով:

Հայ բարբառագիտության կարևորագույն խնդիրներից մեկը համարելով Հայաստանում բարբառային միավորների և հատկանիշների տարածական արդի պատկերի ձևավորումը, երկրի բարբառային քարտեզի կազմումը և ամբողջացումը, նկատի ունենալով, որ ՀՀ յուրաքանչյուր բնակավայրի խոսվածքի հետազոտությամբ ձեռք բերված արդյունքները կարևոր նյութ կմատուցեն հայերենի բարբառագիտական մեթոդյա և ապագա ուսումնասիրություններին՝ ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը իրականացնում է «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» համալիր ծրագիրը՝ նպատակ ունենալով հետազոտել երկրի բոլոր բնակավայրերի լեզվական յուրահատկությունները, ձևավորել դրանց բարբառային բնութագրերը և առանձին հատորներով ներկայացնել ըստ ՀՀ մարզերի: Ծրագրի առաջին փուլում 2013-2015թթ. ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցներ Վ.Գատվայանը, Հ.Խաչատրյանը, Ժ.Միքայելյանը և Գ.Մկրտչյանը

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ հետազոտություններ են իրականացրել Գեղարքունիքի մարզում: Մարզի բնակավայրերում բարբառախոսների տեսաձայնագրմամբ և հարցումներով գրանցվել են բարբառային և բանահյուսական նյութեր, կատարվել է անհրաժեշտ գիտական գրականության և ԳԱԱ լեզվի ինստիտուտում առկա ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրով<sup>11</sup> լրացված համապատասխան տետրերի ուսումնասիրություն: Անհրաժեշտ նյութ ստանալու նպատակով հարցումներ են կատարվել նաև Գավառի պետական համալսարանի մարզաբնակ ուսանողության շրջանում:

Արդյունքում ձևավորվել են Գեղարքունիքի մարզի բնակավայրերի լեզվական (իմա՝ բարբառային) բնութագրերը՝ համալրված բարբառային և բանահյուսական հարուստ նյութով, ժողովրդագրական տեղեկություններով ու փաստական տվյալներով<sup>12</sup>, ստացվել է գործառող բարբառային հատկանիշների և բարբառային միավորների տարածման ամբողջական պատկերը:

Հետազոտությունը թույլ է տվել արձանագրել բարբառային հայերենի արդի վիճակը Գեղարքունիքի մարզում, ճշգրտել տարածաշրջանում Բայազետի, Դիաղինի, Մշո բարբառների, Գանձակի միջբարբառի<sup>13</sup>, Մակուի և Արծափի խոսվածքների մի շարք

<sup>11</sup> Հայերենի բարբառագիտական առկա նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977:

<sup>12</sup> Մարզի բնակավայրերի վերաբերյալ տեղեկությունները հիմնականում քաղվել են Թ.Հակոբյանի, Մու.Մելիք-Բախշյանի, Հ.Բարսեղյանի «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» բազմահատորյակից և «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան» աշխատանքից:

<sup>13</sup> Ճամբարակի տարածաշրջանի լեզվավիճակը հետազոտած Ռ.Բաղրամյանի հավաստմամբ՝ Մարտունի գյուղից բացի տարածքի հայաբնակ բոլոր գյուղերում խոսվում է միօրինակ խոսվածքով, և այդ լեզվատարբերակը լեզվաբանը անվանում է Բաշքենդի խոսվածք (տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 4), միաժամանակ խոսվածքը վերագրվում է Գանձակի միջբարբառին (տե՛ս նշվ. աշխ., էջ 3): Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման ընդհանուր աղյուսակում բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիս-արևելյան միջբարբառախմբում ընդգրկված է Ղազախ-Կիրովաբադի միջբարբառը, որ ներկայացված է Թովուզ, Ղազախ, Կիրովաբադ տարածքներով (տե՛ս

յուրահատկություններ, վեր հանել բարբառային խոսքի գործառական հատկանիշներ և զարգացման միտումներ: Դիտարկումները ցույց են տալիս, որ գրեթե յուրաքանչյուր բնակավայր, այլ բնակավայրերի հետ ընդհանրություններով հանդերձ, ունի խոսվածքային յուրահատկություններ, որոնք պայմանավորված են ինչպես բնակիչների նախնիների ծագումնաբանությամբ, այնպես էլ խոսվածքների ինքնուրույն զարգացմամբ:

Նկատելի է, որ խոսվածքները ժամանակի ընթացքում ենթակա են տարաբնույթ փոփոխությունների՝ պայմանավորված տարբեր գործոններով: Մայր բարբառից կտրված և բարբառախոս այլ, բայց մերձավոր միջավայրում հայտնված խոսվածքը կարող է կորցնել տարբերակիչ այս կամ այն հատկանիշը: Օրինակ, բայազետցիների, մշեցիների կամ դիաղինցիների սերունդները բարբառախոս այլ միջավայրերում, պահպանելով մայր բարբառի շատ հատկանիշներ, կորցրել են մի շարք այլ հատկանիշներ, երբեմն էլ ենթարկվել այլ բարբառի զգալի ազդեցության: Հետաքրքրական իրավիճակ են ներկայացնում բնակիչների ծագումնաբանորեն տարբեր հատվածներ ունեցող բնակավայրերը: Օրինակ, Մարուխան և Նորատուս գյուղերի բնակիչների տարբեր ծագում ունեցող հատվածները ոչ միայն հստակորեն գիտակցում են իրենց ծագումնաբանական տարբերությունը, այլ նաև, ավելի քան 180 տարի ապրելով նույն գյուղում, պահպանել են լեզվական մի շարք զանազանություններ, իսկ Շովազարդ գյուղի բայազետցիների և մշեցիների լեզվական տարբերությունները ավելի մեծ են, սակայն ուրվագծվում է փոխադարձ ազդեցությամբ ձևավորվող մի նոր լեզվավիճակ: Մի շարք բնակավայրերի բնակիչները, որոնց նախնիները կամ հենց իրենք եկել են տարբեր վայրերից, հաղորդակցվում են խոսակցական հայերենով, որը սովորաբար երանգավորվում է խոսվածքային հատկանիշներով, և բավականին դժվար է նման բնակավայրի խոսքը իբրև մեկ խոսվածք դիտարկելն ու

Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 136): Մենք նպատակահարմար ենք գտնում գործածել Գանձակի միջբարբառ եզրույթը:

հատկանիշները որոշելը: Նման բնակավայրերից են Սևան քաղաքը, Գագարին ավանը, Ճամբարակի տարածաշրջանի Մարտունի գյուղը և այլն:

Վարդենիսի և Ճամբարակի բազմաթիվ բնակավայրեր էլ բնակեցված են դարաբաղյան իրադարձությունների հետևանքով Ադրբեջանից բռնագաղթած հայերով, որոնք Ղարաբաղի բարբառի տարբեր խոսվածքների կրողներ են: Դեռևս վաղ է խոսել նման բնակավայրերում միասնական խոսվածքի առկայության մասին:

Հետազոտությունների ընթացքում երևան են եկել նաև մինչ այժմ տվյալ բարբառում չնկատված կամ բավարար ուշադրության չարժանացած բարբառային հետաքրքիր իրողություններ: Օրինակ, Մարտունու տարածաշրջանի մի շարք խոսվածքներում բառակզբում դրսևորվում է երկշրթնային ձայնորդ (ւ), Մշո և Դիաղինի բարբառները ներկայացնող խոսվածքներում գրեթե համընդհանուր բնույթ ունի ներկայի արտահայտությունը նաև առանց կը մասնիկի և այլն:

Ներկայիս Գեղարքունիքի մարզում ընդգրկված բնակավայրերի խոսվածքները ժամանակին ուսումնասիրել է Ռ.Բաղդամյանը: Իր «Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները»<sup>14</sup> աշխատանքում լեզվաբանը, ըստ ժամանակի վարչական բաժանումների, տեղեկություններ է հաղորդում բնակավայրերի հիմնադրման վերաբերյալ, ընդհանուր գծերով ներկայացնում, իր բնորոշմամբ, Բայազետի, Նորատուսի, Արծափի, Մակվի ենթաբարբառների, Դիաղինի բարբառի, Մշո բարբառի խոսվածքների և Հին Բաշգյուղի խոսվածքի հիմնական հնչյունական ու ձևաբանական հատկանիշները, բերում բարբառային խոսքի նմուշներ տարբեր բնակավայրերի խոսվածքներով և աշխատանքը ամփոփում գրաբարից Սևանի ավազանի խոսվածքներ բառացանկով: Հետազոտությունը, ինչ խոսք, ունի տեղեկատվական մեծ արժեք, այն կարող է համեմատության եզր լինել նույն խոսվածքների մի քանի տասնամյակ իրարից բաժանող վիճակները համադրելիս: Ի դեպ,

<sup>14</sup> Ռ.Բաղդամյան, նշվ. աշխ.:

հետաքրքրական է, որ Ռ.Բաղրամյանի կարծիքով՝ մաքուր բարբառախոսներ այլևս անհնար է գտնել, և բարբառները դատապարտված են կործանման<sup>15</sup>, իսկ իր նկարագրած բարբառային շատ հատկանիշներ ժամանակի նոր սերնդի խոսքում այլևս չկան<sup>16</sup>: Մակայն Ռ.Բաղրամյանի հիշյալ աշխատության հրապարակումից շուրջ հինգ տասնամյակ անց անվերապահորեն կարելի է փաստել, որ Գեղարքունիքի մարզի բնակավայրերում բարբառային խոսքը հաստատուն է պահում հնչյունական և քերականական հիմնական հատկանիշները, և այս տարածաշրջանում գրական լեզվի ազդեցությամբ բարբառների վերանալու մասին խոսք լինել չի կարող: Բարբառները զարգանում են բնականոն հունով՝ բնականաբար տեղաշարժեր ունենալով հատկապես բառապաշարում:

Գեղարքունիքի մարզի բնակավայրերի լեզվավիճակի մեր հետազոտության արդյունքները ամփոփող սույն աշխատության առաջին մասում, օգտագործելով նաև եղած ուսումնասիրություններում առկա դիտարկումներն ու փաստական նյութը, բերում ենք ընդհանուր տեղեկություններ մարզում գործառող Մշո, Բայազետի, Դիադինի բարբառների, Գանձակի միջբարբառի և Մակուի ու Արծափի խոսվածքների վերաբերյալ, ապա ներկայացնում տարածաշրջանում բարբառային այդ միավորների դրսևորումների առանձնահատկությունները: Ձեռնպահ ենք մնում Ղարաբաղի բարբառը բնութագրելուց և չենք անդրադառնում նրա դրսևորումների յուրահատկություններին, որովհետև այս բարբառը լիարժեք գործառում է նախ և առաջ իր բնօրրանում և շարունակաբար ուսումնասիրվում է բարբառակիրների կողմից, իսկ Գեղարքունիքի մարզում Աղբբեջանից տեղահանված հայերով բնակեցված բնակավայրերը առայժմ լեզվականորեն անհամասեռ, խառը պատկեր են երևան բերում, և շատ հաճախ դժվար է խոսել տվյալ բնակավայրում Ղարաբաղի բարբառի այս կամ այն խոսվածքի ընդհանուր գործառության մասին:

<sup>15</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 3-4:

<sup>16</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 13:

Գրքի երկրորդ մասում այբբենական ցանկով ներկայացված են մարզի բնակավայրերը՝ իրենց բարբառային բնութագրերով<sup>17</sup>: Նպատակահարմար ենք գտել յուրաքանչյուր բնակավայր բնութագրել մեր ընտրած լեզվական հատկանիշների ամբողջությամբ և ոչ թե միայն մայր բարբառից կամ խոսվածքից ունեցած տարբերություններով՝ նպատակ ունենալով ամեն մի դեպքում ըստ հնարավորին լիարժեք պատկերացում տալ տվյալ բնակավայրի խոսվածքի վերաբերյալ: Բացի այդ, առաջին հայացքից նույնական իրողությունները հաճախ ուղեկցվում են խոսվածքային նուրբ յուրահատկություններով: Նկատենք, որ դեպքերի մեծ մասում խոսվածքի բարբառային պատկանելությունը հստակ է, սակայն առանձին դեպքերում ձևավորվել են նոր իրողություններ՝ բարբառային տարբեր միավորների հատկանիշների յուրօրինակ զուգորդումներով: Օրինակ, Վարդենիսի տարածաշրջանի Ակունք գյուղի խոսվածքը պատկանում է Ում ճյուղին և քերականական որոշ հատկանիշներով նմանվում է Բայազետի բարբառին, սակայն հնչյունական համակարգը ենթարկվել է Դիադինի բարբառի զգալի ազդեցությանը և, կարելի է ասել, լիովին նույնացել նրա հետ: Նման դեպքերում կարելի է խոսել խառը տիպի խոսվածքների մասին: Ի դեպ, համանման իրողություն ի հայտ են բերում Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանների մի շարք խոսվածքներ, որոնք, ճիշտ է, Մշո բարբառի դրսևորումներ են, սակայն համադրում են Ալաշկերտի և Մշո բարբառի այլ խոսվածքների հատկանիշներ:

Աշխատության մեջ չենք բերում ոչ միայն Ղարաբաղի բարբառը, այլ նաև խոսակցական հայերենը ներկայացնող բնակավայրերի բնութագրերը՝ առաջին դեպքում լեզվական խառը վի-

<sup>17</sup> Նկատենք, որ բնութագրերը ներկայացնում են դաշտային աշխատանքների ընթացքում դիտարկված հիմնական հատկանիշները և իրողությունները, դրանք չեն կարող համարվել խոսվածքների ամբողջական հետազոտություններ ու վերլուծություններ:

ճակներին, երկրորդ դեպքում՝ խոսվածքները տարբերակող և բնութագրող լեզվական հատկանիշների սակավության պատճառով:

Ընդհանուր առմամբ՝ Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի բոլոր բնակավայրերում, ինչպես նաև Վարդենիսի տարածաշրջանի մոտ մեկ տասնյակ բնակավայրերում (Ախպրաձոր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ) գործածական է Մշո բարբառը: Հարկ է նշել, որ Մարտունու տարածաշրջանի Երանոս, Լիճք, Չորագյուղ, Մաղինա, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Վարդաձոր բնակավայրերում խոսում են Ալաշկերտի խոսվածքով, իսկ Վարդենիսի տարածաշրջանի հիշյալ բնակավայրերում և Մարտունու տարածաշրջանի մյուս բնակավայրերում (Աստղաձոր, Արծվանիստ, Գեղիովիտ, Զոլաքար, Մարտունի, Վաղաշեն, Վարդենիկ, Ծակքար, Ծովասար, Ծովինար) գործածական են Մշո բարբառի տարբեր դրսևորումներ: Վարդենիս քաղաքում հաղորդակցվում են Դիաղինի բարբառով, Գավառի տարածաշրջանում՝ Բայազետի բարբառով, Սևանի տարածաշրջանում՝ Մակուի խոսվածքով, իսկ ճամբարակի տարածաշրջանում՝ Գանձակի միջբարբառով: Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ գյուղում գործածվում է Արծափի խոսվածքը: Վարդենիսի և ճամբարակի տարածաշրջանների մի շարք բնակավայրերում հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառի խառը խոսվածքներով, մարզի որոշ բնակավայրերում գործածական է խոսակցական հայերենը:

Գրքի երրորդ մասում բերում ենք բարբառային խոսքի նմուշներ գիտական տառադարձությամբ՝ ըստ հնարավորին ներառելով տարաբնույթ նյութեր: Աշխատությունը եզրափակվում է Գեղարքունիքի մարզի խոսվածքներում մեր արձանագրած բարբառային բառերի ցանկով:

Գրքում օգտագործվել են դաշտային աշխատանքների ընթացքում Վ.Կատվայանի, Հ.Խաչատրյանի, Ժ.Միքայելյանի և Գ.Մկրտչյանի՝ տեսաձայնագրությամբ հավաքած նյութերը, Հ.Խաչատրյանի լրացրած հարցարանները:

Հեղինակը գործընկերների և իր անունից խորին երախտագիտությամբ հիշատակում է բարբառախոսների և աջակիցների անունները. **Գավառի** տարածաշրջանից՝ Հ.Միքայելյան (գ.Ծաղկաշեն), Զ.Գրիգորյան, Կ.Չատիկյան, Լ.Մելիքյան (ք.Գավառ), Ս.Թադևոսյան, Հ.Թադևոսյան, Ս.Ղարիբյան (Գավառի Հացառատ թաղամաս), Զ.Թադևոսյան, Է.Գևորգյան, Ա.Մնեյան (Գավառի Արծվաքար թաղամաս), Ս.Արևշատյան, Ա.Արևշատյան, Ս.Բաղիկյան, Ս.Ավետիսյան (գ.Կարմիրգյուղ), Ս.Գրիգորյան, Է.Մկրտչյան, Ա.Գալստյան (գ. Նորատուս), Է. Մարգարյան, Վ.Հարությունյան, Ս.Պետրոսյան, Շ.Հակոբյան, Ռ.Արսենյան (գ. Գանձակ), Ա. Օհանյան (գ. Հայրավանք), Լ. Ղազարյան (գ. Գեղարքունիք), Ս. Իսկանդարյան, Ս.Ավետիսյան, Հ.Իսկանդարյան (գ. Լանջաղբյուր), Ա. Պողոսյան (գ. Լճափ), Պ. Քալոյան, Վ.Կարեյան, Հ.Չիչոյան (գ. Մարուխան), Ն.Հակոբյան, Ռ.Շառոյան, Ա. Մահակյան, Ա. Բալեյան (գ. Ծովագարդ). **Մարտունու** տարածաշրջանից՝ Հ.Հունանյան, Մ.Կնյազյան (գ.Աստղաձոր), Բ.Խաչատրյան, Գ.Խաչատրյան, Ա.Սահակյան, Մ.Սմբատյան, Ժ.Գալստյան (գ.Արծվանիստ), Դ.Ներսիսյան, Է.Սարգսյան, Ա.Նալբանդյան, Լ.Օհանյան, Վ.Սարգսյան, Գ.Ղուկասյան (գ.Գեղիովիտ), Մ.Քարամյան, Շ.Հազեյան, Ա.Հազեյան, Ա.Մովսիսյան (գ.Երանոս), Հ.Ամիրյան, Խ.Ամիրյան, Խ.Սահակյան (գ.Զոլաքար), Հ.Մնեյան, Ս.Սմբատյան, Հ.Բաղդասարյան (գ.Լիճք), Ս.Ավետիսյան, Ռ.Խաչատրյան, Վ.Հակոբյան, Ծ.Բաղդասարյան, Ն.Եղոյան (գ.Ծակքար), Դ.Գևորգյան, Վ.Մանուկյան, Հ.Հայրապետյան (Ծովասար), Արաքսի տատ, Ա.Հարությունյան (գ.Ծովինար), Ս.Ղազարյան, Ն.Մկրտչյան, Շ.Ավետիսյան, Ս.Սարգսյան, Ս.Ումրշատյան, Հ.Գալստյան, Ա.Հակոբյան (գ.Չորագյուղ), Դ.Միրիբյան, Ռ.Միրսիկյան, Ա.Կարապետյան, Հ.Դիմոյան (գ.Մաղինա), Ն.Կիրակոսյան, Յու.Ալեքսանյան, Օ.Թամազյան (գ.Ներքին Գետաշեն), Ծ.Մկրտչյան, Տ.Հակոբյան (գ.Վերին Գետաշեն), Ս.Ենոքյան, Հ.Հայրապետյան, Ե.Ավետիսյան, Վ.Վարդանյան (գ.Վաղաշեն), Ռ.Միրականյան, Վ.Ավետիսյան, Գ.Ղարախանյան (գ.Վարդաձոր), Օ.Խուրշուրյան (գ.Վարդենիկ), Ս.Արզոյան, Ա.Գևորգյան, Ա.Սաֆարյան (ք.Մարտունի). **Վարդենիսի** տարա-

ծաշրջանից՝ Ջ.Մարտիրոսյան, Ս.Հովհաննիսյան, Ա.Գևորգյան, Ս.Աբրահամյան, Հ.Հակոբյան, Ռ.Հակոբյան (գ.Լճավան), Ա.Պետրոսյան (գ.Լուսակունք), Ա.Սահակյան, Ա.Հարությունյան, Բ.Գրիգորյան, Ա.Սահակյան (գ.Ծովակ), Ս.Հովհաննիսյան, Հ.Գևորգյան, Ա.Սահակյան, Ռ.Կարապետյան, Ա.Հովհաննիսյան (գ.Կարճաղբյուր), Պ.Դանիելյան (գ.Խաչաղբյուր), Ն.Հովհաննիսյան, Ղ.Հովհաննիսյան (գ.Նորակերտ), Է.Պողոսյան, Ն.Գրիգորյան, Ա.Բարսեղյան, Ա.Շաբոյան, Դ.Կարապետյան, Խ.Խլոյան, Ս.Ստեփանյան (ք.Վարդենիս), Գ.Ղուկասյան (գ.Ախպրաձոր), Պ.Դանիելյան (գ.Խաչաղբյուր), Ն.Մխիթարյան (գ.Մաքենիս), Ա.Խլոյան, Մ.Մարտիրոսյան, Օ.Խլոյան (գ.Մեծ Մասրիկ)։ **Մեանի** տարածաշրջանից՝ Դ.Ներսեսյան (գ.Գեղամավան), Ֆ.Գրիգորյան, Կ.Հակոբյան, Ռ.Ավետիսյան (գ.Դղմաշեն), Ջ.Հովհաննիսյան, Թ.Հայրումյան (գ.Լճաշեն), Տ.Մկրտչյան (գ.Ծաղկունք), Բ.Գալստյան, Վ.Մկրտչյան, Վ.Գալստյան (գ.Ծովագյուղ), Բ.Զաքարյան, Կ.Հովհաննիսյան, Մ.Հակոբյան (գ.Զովաբեր), Հ.Կարապետյան Կ.Մանուկյան (գ.Նորաշեն), Վ.Աղամանյան (գ.Վարսեր), Շ.Հունանյան, Հ.Սարգսյան (գ.Զկալովկա)։ **Ճամբարակի** տարածաշրջանից՝ Լ.Ավագյան, Ս.Խաչատրյան, Վ.Մակարյան, (ք.Ճամբարակ), Ս.Աբրահամյան (գ.Վահան), Գ.Ծովյան (գ.Աղբերք), Ս.Իսկանդարյան (գ.Արծվաշեն), Է.Ճաղարյան, Ս.Աղաջանյան (գ. Դրախտիկ)։

## ՄԱՍ 1.

## ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

## ԳԼՈՒԽ 1.1.

## ՄՇՈ ԲԱՐԲԱՌԸ ԵՎ ՆՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

## Ա. Ընդհանուր տեղեկություններ Մշո բարբառի վերաբերյալ

Մշո բարբառը պատկանում է հայ բարբառների Կը ճյուղին, ունի քառաստիճան (բ', բ, պ, փ) բաղաձայնական համակարգ, ընդգրկված է արևմտյան իմբալեցության Մուշ-Տիգրանակերտի կամ հարավկենտրոնական բարբառախմբում։

Այս բարբառը տարածված էր Վանա լճի հյուսիսային, արևմտյան և հարավարևմտյան սահմաններում<sup>18</sup>։ Ըստ Հ.Աճառյանի՝ «Իր կեղրոնն է Մուշ քաղաքը. ասոր հիւսիսէն կը տարածուի մինչև Խնուս և Ալաշկերտ, հարաւէն Բաղէշ, արևելքէն կը հասնի մէկ կողմէն Մոկս և միւս կողմէն Տիատին, արևմուտքէն Լճէ, Ճապաղ-

<sup>18</sup> Տե՛ս Ա.Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, էջ 5: Ք.Պատկանյանը նշում է, որ այս բարբառը գործառու է Կարսի և Վանա լճի արևմտյան ափերի միջև, Մուշի գավառի մեծ մասում (տե՛ս Կ.Պատկանյան, Исследование о диалектах армянского языка, СПб, 1869, էջ 103): Լ.Մսերյանցը կարծում է, որ Պատկանյանը Մշո բարբառի տարածման սահմանները ընդլայնել է Վանի բարբառի հաշվին, և Մշո բարբառի գործառությունը տեսնում է Մուշ քաղաքում ու նրա շրջակայքում, այլ կերպ ասած՝ Մշո բարբառը Մշո դաշտի բարբառն է, հին Տարոնի գավառի բարբառը (տե՛ս Լ.Մսերյան, Этюды по армянской диалектологии, ч. I, М., 1897, էջ XI-XII):

ջուր են»<sup>19</sup>: Լեզվաբանը բարբառի տարածման վայրեր էր համարում Մուշը, Մասունը, Բաղեշը, Խիզանը, Խլաթը, Արճեշը, Բուլանըխը, Մանագկերտը, Խնուսը և Ալաշկերտը (փաստորեն Մշո բարբառի մեջ ներառում էր նաև Մասունը)<sup>20</sup>: Ըստ Ա.Գրիգորյանի՝ Մշո բարբառով խոսում էին Մուշ քաղաքի և շրջակա 600 գյուղերի հայ բնակիչները<sup>21</sup>: Մուշի և Ալաշկերտի բնակչության մի մասը ևս ռուս-թուրքական պատերազմների շրջանում գաղթել ու բնակություն է հաստատել Արևելյան Հայաստանում՝ Ապարանում և Նոր Բայազետի հարավային կողմերում՝ Սևանա լճի ափերին<sup>22</sup>, այլ վայրերում, իսկ բնօրրանում մնացածների սերունդները եղեռնի զոհ են դարձել կամ տարագրվել: Հ.Աճառյանը թվարկում է Սևանի եզերքի՝ մշեցիներով ու ալաշկերտցիներով բնակեցված 21 բնակավայր. Երանոս, Ադամխան (այժմ՝ Վարդաձոր), Չորագեղ կամ Վալի աղալու (այժմ՝ Չորագյուղ), Ծակքար, Գյուլ (այժմ՝ Լիճք), Թագաքենդ (այժմ՝ Ծովասար), Ներքին և Վերին Ադաման (այժմ՝ Ներքին Գետաշեն և Վերին Գետաշեն), Վերին և Ներքին Ղարանլուղ (այժմ՝ Գեղիովիտ և Մարտունի), Ավդալաղալու (այժմ՝ Վաղաշեն), Ալիկրըխ (այժմ՝ Աստղաձոր), Չուլխաչ (այժմ՝ Չուլքար), Վերին և Ներքին Գյոզալղարա (այժմ՝ Վարդենիկ), Վերին և Ներքին Քյուլաղրան (այժմ՝ Ծովինար), Ներքին Ալուչալու (այժմ՝ Արծվանիստ), Գետակբուլաղ (Կարճաղբյուր), Ջաղալու (այժմ՝ Ծովակ) և Թուսկուլու (Լուսակունք)<sup>23</sup>: Նա Մշո բարբառի շրջանակում, ըստ *h-hu* հարաբերակցության, առանձնացնում է տարածքների երկու խումբ՝ ա) հինհայերենյան *h*-ի դիմաց *h* ունեցող տարածքներ Մուշ, Բուլանըխ, Ալաշկերտ, Ապարան (նաև Մասուն), ինչպես նաև Սևանա լճի եզերքի վեց գյուղեր՝ Երանոս,

<sup>19</sup> Հ.Աճառեան, Հայ բարբառագիտություն, -Ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների, Մոսկուա-Նոր Նախիջեւան, 1911, էջ 116:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Տե՛ս Ա.Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, էջ 363:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>23</sup> Տե՛ս Հ.Աճառեան, նշվ. աշխ., էջ 116:

Ադամխան (Վարդաձոր), Չորագեղ (Չորագյուղ), Գյուլ (Լիճք), Ն. և Վ. Ադաման (Ն. և Վ. Գետաշեն), ք) հինհայերենյան *h*-ի դիմաց *hu* ունեցող տարածքներ՝ Բաղեշ, Խլաթ, Արճեշ, Արծկե, ինչպես նաև Սևանա լճի եզերքի մյուս բնակավայրերը: Աճառյանը նշում է երկրորդ խմբի տարածքների՝ առաջին խմբից տարբերվող այլ հատկանիշներ ևս (էական բայի *ա* ձև, քմայնացած *գ* բաղաձայն) և կարծում, որ Մշո բարբառի մեջ կարելի է առանձնացնել Բաղեշի ենթաբարբառ, որի շրջանակում պետք է ներառվեն նաև Խլաթը, Արճեշն ու Արծկեն<sup>24</sup>: Ըստ Ս.Բաղդասարյան-Թափալցյանի՝ նկատելի են խոսվածքային տարբերություններ Բաղեշի, Ալաշկերտի, Խլաթի, Խնուսի և բուն Մշո շրջանի բարբառի մեջ<sup>25</sup>: Բարբառը հետազոտողը նշում է, որ Մշո բարբառով խոսող համեմատաբար շատ հայեր բնակվում են Թալինի, Աշտարակի, Արագածի, Ապարանի, Նոր Բայազետի, Վարդենիսի, Արթիկի, Շիրակի, Էջմիածնի, Ախուրյանի տարածաշրջաններում: Մշո բարբառը կրող հայեր բնակվում են նաև Վրաստանի մի շարք բնակավայրերում<sup>26</sup>: Ք.Մաղաթյանը փաստում է, որ Ալաշկերտի խոսվածքը տարածված է Մարտունու շրջանի գյուղերի մեծ մասում, Ապարանի շրջանի մի շարք գյուղերում, այլ վայրերում<sup>27</sup>:

Մշո բարբառը վաղուց է գրավել հետազոտողների ուշադրությունը: Այս բարբառի վերաբերյալ առկա են ինչպես տեսական դիտարկումներ ու ուսումնասիրություններ, այնպես էլ հրապարակված բանահյուսական նյութեր, նմուշներ: Նշանավոր հայագետ Լ.Մսերյանցը, նկատի ունենալով հնչյունական համակարգը, Մշո բարբառը դասում է «արևելյան բարբառների» խմբին: Նա նկատում է, որ չնայած Վանի բարբառին Մշո բարբառի թվացյալ մերձավորությանը՝ վերջինս առանձնանում է հնչյունական համակարգով<sup>28</sup>: Լ.Մսերյանցն արձանագրում է նաև օտար լեզուների

<sup>24</sup> Տե՛ս Հ.Աճառեան, նշվ. աշխ., էջ 117-118:

<sup>25</sup> Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 5:

<sup>26</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 9-10:

<sup>27</sup> Ք.Մաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը, էջ 6:

<sup>28</sup> Տե՛ս Լ.Мсерианн, նշվ. աշխ., էջ XII:

ազդեցությունը Մշո բարբառի, հատկապես նրա բառապաշարի վրա, որն արտահայտվում է թուրքերեն և թուրքերենի միջոցով պարսկերեն, արաբերեն և քրդերեն բառերի ներթափանցումով<sup>29</sup>: Մշո բարբառը, ըստ Հ.Աճառյանի, ձայնավորներով հարուստ չէ և այդպիսով զանազանվում է Վանի բարբառից: Բարբառի հնչյունական համակարգի համար նա բնութագրական է համարում *ե,ռ* երկբարբառայինների առկայությունը, որոնք ծագում են հայերենի շեշտյալ *ե,ռ* հնչյուններից<sup>30</sup>: Բաղաձայններով, ընդհակառակը, Մշո բարբառը հարուստ է ունենալով քառաստիճան բաղաձայնական համակարգ: Ծնչեղ ձայնեղների և բառասկզբում ձայնեղ *հ*-ի առկայությամբ ևս Հ.Աճառյանը Մշո բարբառը տարբերում է Վանից: Քերականական իրողություններից հիշատակում է *զ, ի* նախդիրների առկայությունը, ստացական ածականներից հետո գոյականի՝ հոդ չստանալը, ստացական ածականների նաև հետադաս և նախադրությունների նախադաս գործածությունը, անկատարի եզակի 1-ին դեմքի փոխարեն հոգնակի կիրառումը, *գալ, լալ, տալ* բայերի՝ *ի* նախաձայն ստանալը, հարակատարի *ուկ* վերջավորությունը և այլն<sup>31</sup>: Ընդ որում՝ նկատում է, որ ստացական ածականների հետադաս կիրառությունը հատուկ է միայն Մշո բարբառին. «Ստացական ածականները կրնան դրուիլ գոյականէն յետոյ. ասիկա ո՛չ մէկ բարբառի մէջ կը գտնուի. բայց Մշեցիք գրաբարի նմանութեամբ կ'ըսեն՝ *ձ էոնէ մզի* «մեր ձեռքէն», *բ էրնէ քզի* «քու բերնէդ», *սիրտ ձ ըզի ուրաք չուզա* «ձեր սրտերը իրար չսիրեն», *ձ էոնէ ընձի* «իմ ձեռքէն», *ձ էոնէ ձ զի* «ձեր ձեռքէն», լեզու ուրանց, բուկ ուրանց «իրենց լեզուն, իրենց բուկը»<sup>32</sup>: Հետաքրքրական է, որ իր «Հայ բարբառագիտութիւն» աշխատանքում Հ.Աճառյանը Մշո բարբառին նվիրված բաժնում, ի թիվս Մշո բարբառով

<sup>29</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ XII- XIII:

<sup>30</sup> Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 116:

<sup>31</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 118-119, Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 338-339:

<sup>32</sup> Տե՛ս Հ.Աճառյան, Հայ բարբառագիտութիւն, էջ 118:

ներկայացված նմուշների, բերում է նաև Սևանի ավազանի 13 գյուղերի խոսվածքներով նմուշներ (ընդ որում՝ գրի առնված իր կողմից 1907թ. Ճամփորդության ընթացքում)՝ յուրաքանչյուր դեպքում տեղեկություն հաղորդելով բնակիչների ծագման մասին և ըստ հնարավորին հարազատորեն ներկայացնելով բարբառային խոսքի արտասանական յուրահատկությունները<sup>33</sup>: Ա.Ղարիբյանը նշում է, որ Մշո բարբառը Կը ճյուղի ևս երկու՝ Կարնո և Ուզմիի բարբառների հետ ունի բաղաձայնական քառաստիճան համակարգ, և այս երեք բարբառները այդպիսով նմանվում են Ում ճյուղի երկու հիմնական Արարատյան և Նոր Ջուղայի բարբառներին<sup>34</sup>: Բարբառի ընդհանուր բնութագիրը, հնչյունական ու քերականական յուրահատկությունները ներկայացրել է Ա.Գրիգորյանը<sup>35</sup>: Բարբառիս համեմատաբար ամբողջական ուսումնասիրությունն է ներկայացնում Ս.Բաղդասարյան-Թափալցյանի «Մշո բարբառը» աշխատությունը<sup>36</sup>: Բարբառի առանձին խոսվածքների ուսումնասիրությանն են նվիրված Ռ.Բաղդամյանի և Ք.Մաղաթյանի աշխատանքները<sup>37</sup>: Ըստ բազմահատկանիշ դասակարգման՝ Մշո բարբառը Տավորիկ-Մոտկանի, բուն Սասունի և Տիգրանակերտի բարբառների հետ կազմում է արևմտյան խմբակցության Մուշ-Տիգրանակերտի կամ հարավ-կենտրոնական բարբառախումբը<sup>38</sup>: Գ.Ջահուկյանը բարբառի առանձին միավորներ է համարում Բաղեշը, Խլաթը, Արծկեն, Արճեշը, Մանազկերտը, Մուշը, Բուլանդը, Խնուսը և Ալաշկերտը<sup>39</sup>: Ուսումնասիրողները

<sup>33</sup> Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 133 - 139:

<sup>34</sup> Ապա եզրակացնում է. «Այսպիսով, Կենտրոնական Հայաստանի հիմնական բարբառները պատկանում են բաղաձայնների քառաստիճան խմբին» (տե՛ս Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 383):

<sup>35</sup> Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 363-388:

<sup>36</sup> Ս.Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958:

<sup>37</sup> Ռ.Բաղդամյան, նշվ. աշխ., էջ 134-178, Ք.Մաղաթյան, նշվ. աշխ.:

<sup>38</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 134:

<sup>39</sup> Նույն տեղում:

վկայում են, որ Մշո բարբառով բավականաչափ գրվածքներ են հրապարակվել<sup>40</sup>:

Մշո բարբառն ունի ձայնավոր ութ հնչյուն՝ *ա, ե, է, ը, ի, ո, ու, օ*: Հ.Աճառյանը նկատում է, որ Մշո բարբառը քմայնացած ձայնավորներ չունի և այդպիսով տարբերվում է Վանի բարբառից<sup>41</sup>: Ըստ Ս.Բաղդասարյան-Թափալցյանի՝ ընդհանրապես բարբառում *ա* ձայնավորի թույլ քմայնացում նկատվում է հիմնականում փոխառյալ բառերում<sup>42</sup>, սակայն Խլաթում հանդիպում են քմայնացած ձայնավորների առկայությունն արձանագրել է նաև Գ.Ջահուկյանը<sup>43</sup>: Ինչպես նշում է Հ.Աճառյանը, Մշո բարբառի *ե, ո* հնչյունները ունեն ակնհայտ երկբարբառային արտասանություն, ընդ որում շեշտակիր վանկում, իսկ շեշտից գրկվելով՝ սրանք վերածվում են *է, օ* պարզ ձայնավորների<sup>44</sup>: Հինհայերենյան *ե, ո*-ին միավանկ բառերի սկզբում համապատասխանում են *յե, վո* կազմություններ (օրինակ՝ *յեգ, յերք, վոդ, վորի*, բայց՝ *որ>օր*), իսկ բազմավանկ բառերի սկզբում՝ *է, օ* (*էռալ, էրգաթ, օխչար, օրծկալ*): Գրաբարյան երկբարբառների դիմաց բարբառն ունի պարզ ձայնավորներ, ինչպես՝ *էձ, փիլլալ* (փայլել), *պօձառ* (պայծառ), *լուսնագ, կուս* (կոյս), *արուն, սուն* (սին), *գ էդ, հարիր, ուր* (ուր), *ուրին* (ուրեան), *տէրութեն* (տէրութիւն) և այլն:

Մշո բարբառում գործառում են 36 բաղաձայններ (*բ, պ, փ, գ, կ, ը, դ, տ, թ, ձ, ծ, ց, ջ, ճ, չ, բ, գ, դ, ձ, ջ, վ, Ֆ, գ, ս, ժ, շ, դ, խ, հ, հ, մ, ն, լ, ը, ո, յ*): Բարբառը բնութագրվում է բաղաձայնական քառաստիճան համակարգով և շնչեղ ձայնեղների, ինչպես նաև ձայնեղ *հ*-ի առկայությամբ: Շնչեղ ձայնեղները գործառում են բառա-

<sup>40</sup> Տե՛ս Հ.Աճառեան, նշվ. աշխ., էջ 120-121, Ս.Բաղդասարյան, Մշո բարբառը, էջ 7-8:

<sup>41</sup> Տե՛ս Հ.Աճառեան, նշվ. աշխ., էջ 116:

<sup>42</sup> Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 17:

<sup>43</sup> Նշվ. աշխ., էջ 5:

<sup>44</sup> Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 75-76:

<sup>45</sup> Հ.Աճառեան, նշվ. աշխ., էջ 116:

սկզբում՝ գրաբարյան ձայնեղների դիմաց: Բառասկզբում է գործառում նաև ձայնեղ *հ*-ն՝ իբրև ձայնավորով սկսվող բառերում դրսևորվող հավելում (*հ՛ առու, հ՛ ըմեն, հ՛ էրգեն, հ՛ իմաստուն, հ՛ ուսում*): Հինհայերենյան *հ*-ին, որպես կանոն, համապատասխանում է *հ* խուլը<sup>46</sup> (*հըգար, հաստադ, հարսնիս, հինգ, հուսիս*): Առանձին դեպքերում *հ*-ի դիմաց կարող է հանդիպել *խ* (*հետ>խըտ, ահ>ախ, դահ>դախ*), երբեմն էլ՝ *յ* (*տօյմ, Տիրույի, սայման, պայել, գ՛ոյ, մայ* և այլն):

Մշո բարբառն ունի վերջնավանկային շեշտ, սակայն երկվանկ և բազմավանկ բառերում մի թույլ շեշտ ունենում է նաև առաջին վանկը<sup>47</sup>:

Բարբառում դրսևորվում են մի շարք արտաբերական օրինաչափություններ (ինչպես՝ *ո-օ, է-է* զույգերի, *յ-ի* դիմաց *հ-ի*, բառասկզբի շնչեղ ձայնեղների դրսևորումները), որոնք թերևս գալիս են հինհայերենյան շրջանից:

Ինչպես հայերենի շատ այլ տարբերակներում, Մշո բարբառում ևս համակարգային բնույթ են կրում պատմական հնչյունափոխության այնպիսի իրողություններ, ինչպիսիք են հնչյունական նոր միավորների (*հ, Ֆ*) առաջացումը, երկբարբառների պարզեցումը, ձայնավորների անկումը բազմավանկ բառերի նախաշեշտ վանկերում (*ավէղրան, կադդել, հայլի, ավլել, բ՛օլըրել, մօլըրել*), միավանկ բառերի սկզբում երկբարբառային ձայնավորից առաջ բաղաձայնական տարրի հավելումը (*յեգ, վոսպ*) և այլն: Բառամիջում ու բառավերջում տեղի է ունեցել ձայնեղ հպականների և հպաշփականների շնչեղ խլացում (*բ՛օրփոս, խափել, յեփ, գ՛աքաթ, կարթել, ձ աք, մարթ, դ աթար, օթ, բ արցել, բ արց, օց, հ իչնալ, օչիլ, վերչ, աչ*), խուլերի ձայնեղացում (*բ՛օրիգ, արբուստ, բ՛ էրընկար, թիգունք, կարգուդ, անառագ, գ՛ էղին, կըղուց, գ՛որդ, մըգրադ, մըդաձել, կօրձել, գ՛որձ, կօջագ, կարջ, խիջ*): Մասնավոր բնույթ են

<sup>46</sup> Ինչպես արդեն նշել ենք, որոշ տարածքներում *հ*-ի դիմաց օրինաչափորեն առկա է *խ*:

<sup>47</sup> Տե՛ս Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 16:

կրում ձայնավորական (օրինակ՝ *ա>ը՝ ածել>ըծել, անցուցանել>հ՝ ընցուցել, ապա>հ՝ ըբա, ասել>ըսել, արջ>հ՝ ըբջ, ամեն>հ՝ ըմեն, ե>ը՝ մեզ>մըզի, մեր>մըր, վեր>վըր, ու>ը՝ բուրջ>բըբջ, ուխտաւոր>ըխտավոր, ու>օ՝ ուղղորդ>օղորթ, գլուխ>գ՝ ըլօխ, ո>ու՝ քո>քու, թոնիր>թունդիր, ա>է՝ նեղենալ, էղվընեզ, հ՝ էվէլի* և այլն) և բաղաձայնական (անկում՝ *ջ՝ աղաչ, ընկոյզ>զուզ, գիտենալ>զինալ*, հավելում՝ *թըմբըրել, մենն, շնչեղացում՝ հոտոտել>հօնթընթել, պրծանել>փըրցընալ*, արտաբերության եղանակի փոփոխություն *պատիժ>պատիջ, երագ>էրաձ* և այլն) զանազան փոփոխություններ: Հնչաշղթայի ձևավորման գործող օրինաչափություններով են պայմանավորված բաղաձայնների փոխազդեցական բնույթի զանազան փոփոխություններ, ինչպես խլացում (*ջ՝ աղաչ > ջ՝ ախըններ, մըշագ > մըշկու, ժողով > ժօվօխք, քաղաք > քախքըններ*), ապաշնչեղացում (*յաղթել > ախտել*), շփականի հպաշփականացում (*քանգ > քընց*), դրափոխություն (*հ՝ անգաջ < ականջ, օխչար < ոչխար, վըլացք < լվացք, մանցի < մնացի*) և այլն:

Շեշտով պայմանավորված հնչյունափոխական իրողություններ են դրսևորվում բառաթեքման, բառաբարդման ու ածանցման ժամանակ: Ընդհանուր առմամբ՝ շեշտազրկման հետևանքով կարող է հնչյունափոխվել ձայնավորների մեծ մասը (բացի *օ-ն* և *ը-ն*), ինչպես *տագ > տըգեր, հիվընդի, ախքըղութեն, յեռ > էռալ, ճեղ > ճիղու, ձ՝ ըմեռ > ձ՝ ըմրովա, կեր > կերկոխ, էշ > իշութեն, հ՝ ըմեն > հ՝ ըմնուց, ձ՝ էթ > ձ՝ իթխաց, ինչ > ընչի, տիլ > տըլոդ, քըրդինք > քըրդընքի, հորթ > հորթարաձ, ծոց > ծօցեր, հալիվոր > հալվօրնալ, ունք > ընքներ, ջ՝ ուր > ջ՝ ըրթըթախ, դ՝ ըթում > դ՝ ըթմի* և այլն:

Ալաշկերտի խոսվածքն առանձնանում է նրանով, որ բառամիջի ու բառավերջի դիրքերի հինհայերենյան ձայնեղ և շնչեղ խուլ հպականների ու հպաշփականների դիմաց ունի խուլեր խապել, *գ՝ ակատ, մառտ, առծան, էպել, բ՝ օղօկ, թուտ, աձկ, բ՝ աձ, քիձ*: Ըստ Ք.Մաղաթյանի<sup>48</sup>՝ հատկապես Ալաշկերտի խոսվածքին է

բնորոշ բառակզբում *դ-ի* դիմաց *խ-ի* առկայությունը՝ *խագար, խուզաս, խրամատ, խօնախ, խասաբ* և այլն:

Մշո բարբառում առավել մեծ գործածականություն ունեն *եր, ներ* հոգնակերտները, որոնց բաշխումը, գրական հայերենի պես, պայմանավորված է բառերի վանկերի քանակով: Գործածական են նաև *ք, ստան, դիք, դանք, վըդիք, անք, բանք, վի, վանք, ունք* և այլ հոգնակերտներ<sup>49</sup>: Բարբառում մեծ տարածում ունեն բաղադրյալ հոգնակիները (*տիրվըղանքներ, ձ՝ իանքներ, հօբէստանքներ, ճիղվանքներ*):

Բարբառս, Կը ճյուղի մյուս բարբառների պես, ներգոյական հոլով չունի, հոլովական այդ իմաստը կարող է արտահայտվել *սեռական հոլով + մէչ (տան մէչ), մըչ նախադրություն + տրական հոլով (մըչ քախքին)* կառույցներով, հայցական հոլովով (*տուն, քաղաք*): Բարբառում սեռականը և տրականը տարբերվում են որոշիչ հոդի գործածությամբ (*ջ՝ ըրու, ջ՝ ըրէրու, ջ՝ ըրուն, ջ՝ ըրէրուն*), հայցական հոլովը միշտ նման է ուղղականին և որոշյալ առման դեպքում ստանում է *գ* նախդիր (*ջ՝ ուր, ըզջ ուրըն, ջ՝ ըրեր*,

<sup>49</sup> Սրանց գործածությունը, որպես կանոն, պայմանավորված է բառերի *ձևային (ք, ստան՝ ի, ա* ձայնավորներով ավարտվող բառերի դեպքում՝ *գ՝ ինիք, փէսէք, գ՝ ինէստան, փէսէստան*) և *իմաստային (դիք, վըդիք* ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերի դեպքում՝ *ախպըրդիք, հօբքըրդիք, քուրվըղիք, անք՝ կենդանիների անունների դեպքում՝ ձ՝ իանք, գ՝ իլանք, բանք* տեղ անվանող բառերի դեպքում՝ *գ՝ էղրանք, տէխրանք, վի* մարմնի կրկնակ մասերի անունների դեպքում՝ *հ՝ աչվի, ձ՝ էմվի, օղվի*) հատկանիշներով: Միավանկ մի շարք բառեր հոգնակին կազմում են *վանք* մասնիկով (*իշվանք, իձվանք, ճիղվանք, ճօթվանք, ճուղ>ճըղվանք*), թերևս ավանդաբար *ունք* են ստանում *որթ<որդն, ծաղից* բառերը (*օրթունք, ծաղունք*): Սակավ բառերի հոգնակին է կազմվում *դանք* մասնիկով (*հ՝ ընգէրդանք, կըղօրդանք, օսկըրդանք*), մեկական բառերի հոգնակի են կազմում *վըղանք (տիրվըղանք), բունք (դ՝ էղրունք), իք (մարթիք), էրք (լըն-դէրք)* մասնիկները: Վերջում *ք* ունեցող շատ հոգնակերտներ գործածական են նաև առանց *ք-ի (հ՝ ընգէրդանք – հ՝ ընգէրդան, տիրվըղանք – տիրվըղան, իշվանք – իշվան, գ՝ էղրանք – գ՝ էղրան)*: Ք.Մաղաթյանը Ալաշկերտի խոսվածքի համար նշում է միայն առանց *կ>ք-ի* ձևեր՝ *դան, վըղան, ան, վան, բան* (տե՛ս նշվ. աշխ., էջ 70-71):

<sup>48</sup> Տե՛ս Ք.Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 5:

ըզջ ըրերըն), բացառական հոլովը կազմվում է *է, էն, ից, ուց* վերջավորություններով (*զ ութնից, զ ութնէն, զ ութնէ, զ ութներուց, զ ութներից, զ ութներէն, զ ութներէ, ջ ըրուց, ջ ըրից, ջ ըրէն, ջ ըրէ, ջ ըրերուց, ջ ըրերից, ջ ըրերէն, ջ ըրերէ*), հատուկ տեղանունների դեպքում նաև *ու, ա* վերջավորություններով (*Մըշու, Խըլաթա*): Գործիական հոլովն ունենում է *օվ* վերջավորություն՝ *ջ ըրօվ, ջ ըրերօվ*:

Բարբառումն Ու հոլովումը ամենատարածվածն է<sup>50</sup>, մեծ տարածում ունի Ի հոլովումը ևս<sup>51</sup>: Գործածական են նաև Վա, Ան, Ոջ, Ա, Ո, Ց հոլովումները<sup>52</sup>:

<sup>50</sup> Մի շարք դեպքերում այս հոլովումն ունի կիրառության ձևային (*ի*-ով ավարտվող բառեր՝ *ձի, խընամի, մըշէցի, դ օլլի*), իմաստային (ազգությունների անուններ՝ *հայ, քուրթ*, անխակական կապեր՝ *մէչ, հ ատէչ*, կրոնական բառեր՝ *աստված, սուրբի*, կենդանիների անուններ՝ *զ էլ, աչառ*, մարդու մարմնի մասերի անուններ՝ *զ ըլօխ, սիրդ*, ընտանեկան հարաբերությունների անուններ՝ *էրէխա, ճիժ, մամ*, հատուկ տեղանուններ՝ *Մուշ, Ալաշկերդ*, բնության իրողությունների անուններ՝ *արեւ, ցուրդ*), ձևաիմաստային (անորոշ դերբայի ձևեր՝ *էրթալ, մէխտըրէլ*) հիմքեր: Այս հոլովման են ենթարկվում նաև շատ այլ բառեր (*ամիս, գ ու, ծուռ, ամօթ, թաքվոր, կըսկիձ, ծոց* կլն), ինչպես և՛ բոլոր բառերը հոգնակի թվում՝ բացառությամբ *ք* և *ք*-ով ավարտվող հոգնակներտ ունեցողները:

<sup>51</sup> Այս հոլովման կիրառությունը ևս ունի ձևային (*ու*-ով վերջացող բառեր՝ *կադու, ձ ու, ա*-ով ավարտվող բառեր, *ագան, էլիք, ութեն, ող, ուզ, իզ, անք, ում* վերջածանցներ ունեցող բառեր՝ որոշ բացառություններով) և իմաստային (ամիսների անունները՝ բացի *մարդ* և *արբիլ* բառերը) հիմքեր: Այս հոլովման ենթարկվում են նաև մի շարք այլ բառեր (*ախշար, քաղաք, օխշար, օքուդ, ախշադանք, արառած, հաց, զ ութան, պանիր* և այլն):

<sup>52</sup> Մրանք ևս որպես կանոն, ունեն գործառության իմաստային (Վա՝ ժամանակին անչվող բառեր՝ *շուղ, հ անքան, տարի, գ ախ, հ իրգուն, հերու, ձ ըմեռ, մըզլօր*, Ոջ՝ ազգակցություն անվանող բառեր՝ *քուր, տալվ, կիսուր, աներ, հ ընգեր, տեր*, Ա արտաքին հատուկ տեղանուններ՝ *Խըլաթ, Վան, Մասուն*), ձևային (Ա ներքին՝ *ուն* - ով ավարտվող բառեր՝ *տուն, շուն, ձ ուն*, Ան՝ *ուս*-ով վերջացող բառեր<sup>52</sup>՝ *համբարցում, կօղորում*, բառավերջի գրաբարյան *ն*-ն կորցրած բառեր՝ *շուրթ, յեզ, ուն*-ով ավարտվող բառեր՝ *գ արուն, աշուն, Ց ք* և դրանով ավարտվող այլ հոգնակներտ ունեցող բառեր՝ *էրէխէք - էրէխէքոց, էրէխոց, Ավիզենք - Ավիզենց*) կամ ձևաիմաստային (Ա արտաքին *իզ*-ով վերջացող հատուկ անուններ՝ *Ավիզ,*

Ալաշկերտի խոսվածքն ունի հոլովական որոշ յուրահատկություններ, մասնավորապես՝ այստեղ *զ* նախդիրը չի գործառում, Վա հոլովման են ենթարկվում նաև *ի* ձայնավորով վերջացող հատուկ տեղանունները (*Կառպի - Կառպրվա, Ջանգի - Ջանգրվա, Լոռի - Լոռվա, Փառպի - Փառպրվա*) և այլն:

Մշո բարբառում գործածական են *ը* և *ն* որոշիչ հոդերը (ուղղական, տրական և հայցական հոլովներում), ընդ որում՝ ձայնավորով սկսվող բառից առաջ *ը* հոդը *ն*-ով չի փոխարինվում: Անորոշ *մէ, մը* հոդերն ունեն ինչպես նախադաս (*մէ մարթ*), այնպես էլ հետադաս (*մարթ մէ, մարթ մը*) կիրառություն: Ստացականությունը դրսևորվում է *ս, տ* հոդերով, որոնց վրա ավելանում է *ի* ձայնավորը՝ *խէլքսի, գ ըլօխսի, տունտի, տըղէտի*: Ստացական հոդերի հետ կարող են գործածվել ստացական դերանուններ՝ *իւ տունսի, քու գ իրքտի*: Իբրև դիմորոշ հոդեր ևս գործածվում են *ս* -ն և *տ* - ն: Մշո բարբառում ցուցական հոդն է *ն* - ն, որը հավասարապես կարող է արտահայտել և՛ *այս*, և՛ *այն* դերանունների իմաստ (*գ իրքըն* - այս գիրքը//այն գիրքը):

Ալաշկերտի խոսվածքում որոշիչ միակ հոդն է *ն* - ն, որը հաստատուն կիրառություն չունի, և շատ դեպքերում որոշյալ բառը գործածվում է առանց հոդի<sup>53</sup>:

Բարբառում ածականի համեմատության աստիճանները արտահայտության յուրահատկություններ գրեթե չունեն: Բաղդատականը դրսևորվում է տարբեր միջոցներով, ինչպես՝ *Իդա կընիզ ինա կընգընէն խօրող է. Իդա գ էղ է լ մենձ է. Իդա գ էղ հ էվէլի մենձ է*: Ածականի գերադրական աստիճանը ձևավորվում է *հ ըմնուց* բառով՝ *Իդա գ էղ հ ըմնուց մենձ է*: Ալաշկերտի խոսվածքում բաղդատական աստիճանը ավելի հաճախ կազմվում է *դըհա* և *ջըլիզ* բառերով (*դըհա բ արագ, ջըլիզ խօրող*): Բարբառում ածականները գոյականաբար գործածվելիս ենթարկվում են Ի հոլովման:

*Լուսիզ*, նաև՝ *ախչիզ, կընիզ*, Ո՝ բառամիջում է ունեցող ազգակցություն ցույց տվող բառեր՝ *հեր, մեր* ախպեր) հիմքեր:

<sup>53</sup> Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս Ք.Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 96-97:

Գրանորման էական յուրահատկություններ հանդես չեն բերում նաև թվականները: Տասնավորները միավորներին կապակցվում են *ու* շաղկապով, որը ձայնավորից առաջ դառնում է *վ* (*տըսնումեգ, տըսվիրեք, քըսանուչորս, քըսանվերգուս*): Բարբառը դասական թվականների հատուկ ձևեր չունի, դասականների իմաստ կարող է արտահայտվել *վըր* նախադրությամբ և թվականի տրական հոլովով (*վըր իրեքին* երրորդ անգամ): Բաշխական թվականների իմաստ արտահայտվում է քանակականների կրկնությամբ (*երգուս - երգուս*): Ալաշկերտի խոսվածքում տասնավորները միավորներին կապակցվում են առանց շաղկապի (*տասերգու, քսանիրեկ, տասնըչորս, հ իծունըրուս*):

Բարբառի անձնական դերանուններն են՝ *յես, դ ու, ընի, հ ինք*, սրանց հոգնակիներն են՝ *մենք, դ ուք, ընդոնք // ընոնք, ուրանք*: Առաջին և երկրորդ դեմքերի դերանունների տրական հոլովի ձևերը Մշո բարբառում ունեն *ի* կամ *իզ* հավելված (*ընձի, ընձիզ, քըզի, քըզիզ, մըզի, ձ ըզի*): Սրանք սեռական հոլովում ունեն գուգահեռ ձևեր (*իմ//իմուն, քու//քումուն, մեր//մերուն, ձ էր//ձ էրուն*): Անձնական դերանունները հայցականում ունենում են *զ* նախդիր (*զիս, զընձի, զքըզի, զընդրան, զզմըզի, զզձ ըզի, զընոնք, զուրանց*), բացառական հոլովում՝ *է, էն, ից* վերջավորություններ (*ընձնէ, ընձնէն, ընձնից*): Մշո բարբառի ցուցական դերանուններն են՝ *իդա // ըդի, ինա//ընի* (սրանց հոգնակիները՝ *իդոնք, ինոնք // ընդոնք*), նաև *իդատեղ, ինատեխ, իդաքան, ինաքան, իդամլա, ինամլա*: Բարբառում *իդա* և *իդոնք* ձևերը միաժամանակ արտահայտում են *այս* և *այդ*, *սրանք* և *դրանք* դերանունների իմաստներ, այսինքն՝ *այս* և *սրանք* իմաստների համար առանձին ձևեր չկան: Ցուցական դերանունների հոլովման մեջ եզակի թվում նկատելի է *որ* կազմիչի (*իդա, իդոր, իդըրնէ, իդըրնուս*), հոգնակի թվում՝ *ոն* կազմիչի (*իդոնք, իդոնց, իդընցնէ, իդընցնուս*) առկայությունը: Ստացական դերանունները անձնական դերանունների սեռական հոլովաձևերն են (*իմ//իմուն, քու//քում//քումուն, էնոր, մըր//մեր//մերուն, ձ ըր//ձ էր//ձ էրուն, էնոնց*), որոնք իրենց հերթին հոլով-

վում են (*իմ, զիմ, իմունէ, իմունուս, մըր, ըզմըր, մըզնէ, մըրնուս* և այլն): Ստացական դերանուններից հետո գոյականը որոշիչ հոդ չի ստանում (*մըր հաց, մըր տուն*): Մշո բարբառում ստացական դերանվան իմաստ արտահայտվում է նաև *մի, ձ ի* ձևերի<sup>54</sup> (Ալաշկերտի խոսվածքում՝ *մե, ձ է*), անձնական դերանվան հոգնակի տրական հոլովաձևերի օգնությամբ (*խելք մի, խելք ձ ի, ձ էոներ մի, ձ էոներ ձ ի, օդներ մըզի, տըներ ձ ըզի*)<sup>55</sup>: Իբրև անձերին վերաբերող հարցահարաբերական դերանուն, ընդ որում՝ միայն եզակի թվով, հանդես են գալիս *օվ* և *վոն* ձևերը՝ *հ ում, (զ)օվ, հ ումնէ, հ ումնուս* և *վիր, վին, (զ)վոն, վիրնէ, վիրնուս* համապատասխան հոլովաձևերով: Հարցահարաբերական մյուս դերանուններն են՝ *ինչ, վոր մէզ, հ օրի, հ ընչի, իմալ, հ ուր, դոր, յեփ, քընի, ինչխըղըր, ինչտեխ* և այլն: Մշո բարբառում գործառող դերանվան մյուս տեսակները (փոխադարձ՝ *մէզմէզու, հ իրուր*, որոշյալ՝ *հ ըմմէն, մէզէլ, սախ, անորոշ՝ մէ, մը, մէզ*<sup>56</sup>, ժխտական՝ *հէչ մէզ, վոչ մէզ, հէչ, հէչ քան*) էական յուրահատկություններ չունեն:

Բարբառումս և՛ Ե, և՛ Ա խոնարհումների բայերում հինհայերենյան *ան* ածանցի դիմաց առկա է *ն* (*ախքըդնալ, լուսնալ, հասնել, հէձնել*): Բացակայում է չ բայաձանցը (*դ իքնալ, թըրոնալ, կօրել, ուրել*), սակավաթիվ բայեր ունեն *էն* ածանց (*կամէնալ, պարձէնալ, մօղէնալ, ունէնալ*): Պատճառական բայերը Մշո բարբառում ունենում են *ցուց* կամ *ուց* կազմիչ (*քընցուցել/քընուցել, խըմցուցել/խըմուցել, դ օղցուցել, հ էվէցուցել, թըքուցել*), ներկայի հիմքից կազմվող ձևերում՝ Ու խոնարհիչ (*կըխըմցում, կըխըմցուս, կըխըմցու* և այլն): Պատճառականություն արտահայտվում է նաև *իդալ* (տալ) բայի միջոցով՝ *ք ըրնել իդալ, փըրնել իդալ*: Կրավորական *վ* ածանց ունեցող բայերը անցյալ կատարյալում խոնարհվում են

<sup>54</sup> Ս.Բաղդասարյանը կարծում է, որ սրանք ամենայն հավանականությամբ ծագում են *մեր, ձ էր* ձևերից (տե՛ս Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 98, տողատակ):

<sup>55</sup> Հ.Աճառյանը նշում է, որ այս կարգի ձևեր որևէ այլ բարբառի հատուկ չեն (տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 118):

<sup>56</sup> Սրանք նույնանուն են անորոշ հոդի հետ և գործածվում են ինչպես նախադաս, այնպես էլ հետադաս:

կրավորաձև՝ *ա, ար, ավ, անք, աք, ան* վերջավորություններով: Իբրև բազմապատկական ածանց հիմնականում հանդես է գալիս *ըրդ* մասնիկը (*փըշըրել – փըշըրդել, հելվալ – հելվըրդալ*):

Մշո բարբառում անորոշ դերբայն ունի երկու վերջավորություն՝ *ալ, էլ*, սակայն խոնարհիչները չորսն են՝ *ա, է, ի, ու* (*կըմընամ, կիրիցեն, կըկարիմ, կըթըրքում*), ընդ որում՝ Ե լծորդության բայերը սովորաբար խոնարհվում են *ի* խոնարհիչով<sup>57</sup>: Ընդհանուր առմամբ՝ *ե* և *ի* խոնարհիչները մի դեպքում ազատ տարբերակներ են, մյուս դեպքում տարբերակում են ներգործաձև և կրավորաձև խոնարհումները<sup>58</sup>: Բարբառում բայի սեռը կարող է դրսևորվել ածանցմամբ (*վ՝ ջ՝ արթըրվել > ջ՝ արթել, ուց կամ ցուց քընուցել կամ քընցուցել > քընել*), բայական համապատասխան վերջավորություններով (ներգործաձև՝ *կըջ՝ արթեմ, կըջ՝ արթես, կըջ՝ արթե, կրավորաձև՝ կըջ՝ արթիմ, կըջ՝ արթիս, կըջ՝ արթի*), շարահյուսական միջոցներով (ներգործական սեռ յես *կըկողորիմ* ըզբար. կրավորական սեռ յես *կըկողորիմ* դ՛արդէ): Ինչպես նկատվել է, Մշո բարբառում «նույն բայը կարող է խոնարհվել և՛ կրավորաձև, և՛ ներգործաձև ու լինել չեզոք սեռի բայ»<sup>59</sup>, սակայն ավելի կարևոր է, որ «բարբառում կան բայեր, որոնք խոնարհվում են և՛ կրավորաձև, և՛ ներգործաձև և մի դեպքում կրավորական, մյուս դեպքում ներգործական իմաստ են արտահայտում»<sup>60</sup>: Ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերությունն արտահայտվում է նաև Ե խոնարհման պարզ բայերի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքում՝ *կազաղի* (ազատվում է) – *կազաղէ* (ազատում է)<sup>61</sup>: Ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ դրսևորվում են անցյալ

<sup>57</sup> Տե՛ս Է Աճառեան, նշվ. աշխ., էջ 119, Ս. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 117:

<sup>58</sup> Տե՛ս Ս. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 116-117, 125 – 127: Մշո բարբառը բայական լծորդությունների արտահայտության առումով մոտ է միջին հայերենին, որը պահպանել էր գրաբարյան չորս լծորդությունները (տե՛ս նաև Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 301):

<sup>59</sup> Ս. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 117:

<sup>60</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>61</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 127:

կատարյալում (*խըմի, քընա, գ՛ըրվա*), եզակի հրամայականում (*խըմա՛ կամ խըմէ՛, քընի՛, գ՛ըրվի՛*), ըղձական ապառնու և դրանից կազմվող եղանակային այլ ձևերի եզակի թվի երրորդ դեմքում (*խըմէ, քընի, գ՛ըրվի*)<sup>62</sup>:

Բարբառում բայն ունի 6 դերբայ՝ անորոշ, հարակատար, ենթակայական, ապառնի, վաղակատար, ժխտական և ձևի: Անորոշ դերբայն ունի *ել, ալ* վերջավորություններ և եզակի թվում ենթարկվում է Ու հոլովման: Որոշ բայերի դեպքում գործածական են անորոշի գուգահեռ ձևեր՝ *ել* և *ալ* վերջավորություններով (*թըրնել – թըրնալ, հ՛ընգնել – հ՛ընգնալ, հ՛իչնել – հ՛իչնալ, մըղնել – մըղնալ* և այլն): *Գալ, լալ, տալ* բայերի անորոշ դերբայի բարբառային ձևերն են՝ *հ՛իքալ, հ՛իլալ, իղալ*: Հարակատար դերբայն ունի *ուգ* և *աձ* վերջավորություններ (*գ՛ըրուգ – գ՛ըրաձ, նըսուուգ – նըսուաձ*), ընդ որում՝ ավելի տարածված է *ուգ* վերջավորությամբ ձևը: Ներգործական սեռի բայերի հարակատարը առանց սեռաձանցի արտահայտում է նաև կրավորականության իմաստ և որպես կանոն *վ* ածանց չի ընդունում<sup>63</sup>: Հարակատարի *աձ* վերջավորությամբ ձև հանդես է գալիս վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերի հոգնակի թվի երրորդ դեմքում (*էզաձ է – եկել են, գ՛ացաձ է – գնացել են, տէսաձ ին – տեսել էին, խըմաձ ին – խմել էին*)<sup>64</sup>: Այս նույն իրողությունը դիտարկելով Ալաշկերտի խոսվածքում՝ Ք. Մաղաթյանը նշում է, որ *աձ* վերջավորությամբ դերբայը չունի ինքնուրույն գործածություն, և խոսվածքում բուն հարակատար դերբայը կազմվում է *ուգ* վերջավորությամբ<sup>65</sup>: Մշո բարբառում վաղակատար դերբայն ունի *էր* վերջավորություն՝ *զըրէր, խըմէր*, ընդ որում՝ շրջուն շարադասության դեպքում *ր*-ն ընկնում է՝ *շուղ էր պըռձէ*: Ենթակայական դերբայի վերջավորությունն է *ոյ՝ քընոյ, ջ՛առթոյ*: Ժխտական դերբայն այս բարբառում ունենում է *ի, ա, է* վերջավորություններ (*քընի, խօսս, ուղէ*),

<sup>62</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 129-154:

<sup>63</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 109:

<sup>64</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 110:

<sup>65</sup> Տե՛ս Ք. Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 109:

ընդ որում՝ նույն բայը, ունենալով տարբեր լծորդություններով ձևեր, համապատասխանաբար կարող է ունենալ ժխտական դերբայի գուգահեռ ձևեր, ինչպես՝ (չըմ) *մըղնի, մըղնա*<sup>66</sup>: Արձանագրելով, որ Ալաշկերտի խոսվածքում Ե խոնարհման բայերի ներկա ժամանակի ժխտական ձևերում դերբայն ունի *ի* վերջավորություն, իսկ անցյալի ձևերում՝ *է* վերջավորություն՝ Ք.Մաղաթյանը եզրակացնում է, որ խոսվածքում «*է* խոնարհման բայերի ժխտական դերբայի ձևավորումը դեռևս լրիվ չափով չի ավարտվել»<sup>67</sup>: Ընթացակցական դերբայը բարբառում ունի *էն* վերջավորություն՝ *ուղէկէն կըխաղէր* (ուտելով խաղում էր): Մշո բարբառը ապառնի դերբայ չունի, ապառնի ժամանակի իմաստը «բարբառում հիմնականում արտահայտվում է *բըղի-պըտի* մասնիկով և ըղձական եղանակի համապատասխան ձևերով, ինչպես և սահմանականի ներկայով»<sup>68</sup>: Ըստ Ս.Բաղդասարյան-Թափալցյանի՝ «Մշո բարբառում չափազանց տարածված է ապառնի դերբայի *իք* վերջավորությամբ ձևը»<sup>69</sup>:

Օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ *իմ, իս, է, ինք, իք, ին*, անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ալաշկերտի խոսվածքի համապատասխան ձևերն են՝ *իմ, իս, ա, ինկ, իկ, ա* և *էնկ, էր, էր, էնկ, էկ, էն*, բայց բաղադրյալ ստորոգյալի կազմում ներկայի հոգնակի երրորդ դեմքն ունենում է *ին* ձևը՝ *մատտ ին* (մարդ են):

Բարբառում ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը կազմվում են *կը* մասնիկով՝ *կըկարթամ, կըկարթի*, ընդ որում՝ այդ ձևերն արտահայտում են նաև ապառնի, անցյալի ապառնի ժամանակների և ենթադրական եղանակի իմաստներ: *Գալ, լալ, տալ* բայերի ներկայի ձևերն են՝ *զիքամ, զիլամ, կիդամ*: Հագագով սկսվող բայերի դեպքում եղանակիչի բաղաձայնը, միանալով հագագին, ձայնեղանում է՝ *զընզընամ (հ ընզնէլ), գուգիմ (հ ուգէլ)*:

<sup>66</sup> Տե՛ս Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 114:

<sup>67</sup> Տե՛ս Ք.Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 113-114:

<sup>68</sup> Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 107:

<sup>69</sup> Նշվ. աշխ., էջ 106:

Ալաշկերտի խոսվածքում վաղակատար ներկայի եզակի երրորդ դեմքը կարող է գործածվել նաև առանց օժանդակ բայի (*Կարօն ցորեն քաղե, ախձե պըռձե*), իսկ վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակաձևերի հոգնակի երրորդ դեմքի ձևերում հանդես է գալիս *աձ* վերջավորությամբ դերբայական ձև (*քաղաձ ա՛ քաղել են, քաղաձ էն՝ քաղել էին*)՝ ի տարբերություն եզակի թվի ու հոգնակի առաջին ու երկրորդ դեմքերի՝ *եր* վերջավորությամբ ձևերի (*քաղեր իմ, քաղեր իս, քաղեր ա, քաղեր ինկ, քաղեր իկ*)<sup>70</sup>: Խոսվածքում *աձ* վերջավորությամբ դերբայական ձևը այլ կիրառություն չունի, իսկ հարակատար դերբայը ձևավորվում է *ուգ* վերջավորությամբ<sup>71</sup>:

Ե խոնարհման պարզ, բազմապատկական ածանց ունեցող բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել և՛ ներկայի, և՛ անցյալի հիմքերից՝ *գ ըրի//գ ըրէցի*: Արգելական հրամայականը Մշո բարբառում ձևավորվում է *մը* արգելականով և հաստատական հրամայականով՝ *մըգ ըրա//մըգ ըրէ՛, մըգ ըրէ՛ք*, իսկ Ալաշկերտի խոսվածքում հանդես է գալիս *մի՛* արգելականը: Հարկադրականի ձևերը բարբառումս կազմվում են *բըղի* եղանակիչով՝ *բըղի կարթամ*: Ժխտական խոնարհման դեպքում *կը* մասնիկը փոխարինվում է չ ժխտականով՝ *չըխըմիմ* (չեմ խմում), *չըխըմէր* (չէր խմում), ընդ որում՝ «Չը ժխտականը Մշո բարբառում կարող է դրվել թե՛ մասնիկների, թե՛ օժանդակ բայի, թե՛ բայի հետ. յես բըղի գ ըրիմ – յես չըբըղի գ ըրիմ – յես բըղի չըգ ըրիմ, յես կերեր իմ – յես չըկէրէր իմ – յես չըմ կերեր իմ»<sup>72</sup>:

<sup>70</sup> Ք.Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 123:

<sup>71</sup> Նշվ. աշխ., էջ 109, 111:

<sup>72</sup> Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 156:

### Բ. Մշո բարբառի դրսևորումները Գեղարքունիքի մարզում

Մշո բարբառը Գեղարքունիքի մարզում գործառու է Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններում:

Մարտունու տարածաշրջանի բոլոր բնակավայրերի խոսվածքների համար ընդհանուր են Մշո բարբառի հնչյունական մի շարք էական հատկանիշներ: Այսպես, միավանկ բառերի սկզբի հինհայերենյան *n*-ից առաջ առկա է շրթնային տարրի հավելում, ընդ որում՝ Աստղածորի, Արծվանիստի և Մաղինայի խոսվածքներում այդ տարրը *վ*-ն է, այլ դեպքերում՝ *ւ*-ը: Բոլոր խոսվածքներում նման հավելում տեղի չի ունեցել *որ* շաղկապի դեպքում, որն ունի *օր* արտասանություն: Միավանկ բառերի սկզբի հինհայերենյան *ե*-ից առաջ առկա է *յ*-ի հավելում, ընդ որում՝ Ծովասարի, Ներքին Գետաշենի և Վաղաշենի խոսվածքներում այդ *յ*-ն շատ ավելի թույլ արտաբերություն ունի, քան մյուս խոսվածքներում: Բազմավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n, ե*-ի դիմաց առկա են *օ, է* ձայնավորներ: Բոլոր խոսվածքներն ունեն *ե, n* երկբարբառային հնչյուններ: Ինչպես Մշո բարբառում ընդհանրապես, Մարտունու տարածաշրջանի խոսվածքներում ևս քմայնացած *ա* ձայնավորը սակավ գործածություն ունի, բոլոր խոսվածքներում էլ այն դրսևորվում է մի շարք փոխառյալ և բնիկ բառերում: Դեռևս միջինհայերենյան շրջանից եկող՝ բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղման երևույթը առկա է բոլոր խոսվածքներում: Բաղաձայնական համակարգը բոլոր դեպքերում քառաստիճան է՝ ունենալով նաև հպական ու հպաշփական շնչեղ ձայնեղ բաղաձայններ: Տարբեր խոսվածքներում բառասկզբի ձայնավորից առաջ հագագի հավելումը տարբեր ընդգրկում ունի, բայց երևույթը ընդհանուր է: Բոլոր խոսվածքներին բնորոշ է վերջնավանկային շեշտը:

Դիտարկվող խոսվածքների համար ընդհանուր քերականական իրողություններից են *եր, ներ* հոգնակերտների հետ նաև այլ մասնիկների առկայությունը, բաղադրյալ հոգնակիների գործածությունը, Ու հոլովման տարածվածությունը եզակի թվում և գերակայությունը հոգնակի թվում, ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականի ձևավորումը *յ*-ով, բացառական հոլովի *ց*-ով կազմությունը, ներգոյական հոլովի իմաստի՝ հայցական հոլովով կամ սեռականով ու *մեջ* կապով արտահայտումը, միայն *ն* հոդի, և այն էլ՝ սահմանափակ, կիրառությունը<sup>73</sup>, անձնական դերանվան տրական հոլովի ձևերում *ի* ձայնավորի առկայությունը, հարցական *ով* դերանվան դիմաց *ւոն/վոն* ձևի գործածությունը (Աստղածորի, Արծվանիստի և Մաղինայի խոսվածքներում վկայված է *վոն* ձևը, իսկ մյուսներում՝ *ւոն* ձևը) և սեռականի ու տրականի *վի, վին* ձևերի կիրառությունը, *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց *էնել, ըսել, եղնել, հ՛էլնել, կըռնալ* ձևերի գործածությունը, *լալ* և *տալ* բայերի ներկայի կազմությունը *գի/կի* մասնիկով (*գիլամ, կիտամ/կիդամ*), վաղակատարի կազմությունը *ր*-ով և հարակատարինը *ուկ//ուգ*-ով, անցյալ կատարյալի կազմությունը և՛ ներկայի, և՛ անցյալի հիմքերով, *գնալ* և *մնալ* բայերի անցյալի հիմքի *գ աց* և *մաց* ձևերը, տրամաբանական շեշտ կրող բառն ընդգծելու համար դիմավոր ձևերից առաջ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձևի լրացուցիչ կիրառությունը, չ ժխտական մասնիկի՝ վերլուծական ձևերում դերբայի վրա դրվելը, պատճառական *ցուց/ուց* ածանցի կիրառությունը, չ բայաձանցի բացակայությունը և այլն:

<sup>73</sup> Ըստ Բ.Մաղաթյանի՝ այս հատկանիշը բնորոշ է միայն Ալաշկերտի խոսվածքին (տե՛ս Բ.Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 5), իսկ Ս.Բաղդասարյան-Թափալցյանը վկայում է, որ Մշո բարբառի որոշիչ հոդերն են *ը, ն* (տե՛ս Ս.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 101): Մարտունու տարածաշրջանում կատարված մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ և՛ Ալաշկերտը ներկայացնող, և՛ մյուս բոլոր խոսվածքներում գործառու է միայն *ն* հոդը, ընդ որում՝ սահմանափակ կիրառություններով:

Թե՛ հնչյունական և թե՛ քերականական շատ հատկանիշներով խոսվածքները հանդես են բերում տարբերություններ և զանազանություններ: Առավել ցայտուն են բաղաձայնական համակարգում դրսևորվող համակարգային իրողությունները, որոնք նաև բարբառային կարևոր հատկանիշներ են: Մասնավորապես, ոչ միայն խոսվածքներ, այլ նաև բարբառներ տարբերակող դեր ունի հինհայերենյան *h*-ի դիմաց *h* կամ *խ* հնչյուններից մեկի գործառությունը: Այնուամենայնիվ, Մշո բարբառի շրջանակներում այս հատկանիշը, ինչպես արդեն նշվել է, տարբերակում է խոսվածքներ<sup>74</sup>: Մարտունու տարածաշրջանի խոսվածքներում *h*-ի դիմաց *խ* ունեն Արծվանիստի, Աստղաձորի, Գեղհովիտի, Ջուլաքարի, Ծակքարի, Ծովասարի, Ծովինարի, Մարտունու, Վաղաշենի, Վարդենիկի խոսվածքները, մինչդեռ Երանոսի, Լիճքի, Ձորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդաձորի խոսվածքները հինհայերենյան *h*-ի դիմաց ունեն *h*: Մշո բարբառի շրջանակներում կարևոր տարբերակիչ դեր ունեն նաև ոչ բառակազմի դիրքերում հպական ու հպաշփական բաղաձայնների դրսևորումները ըստ ձայնեղացման-խլացման, շնչեղացման-ապաշնչեղացման գործընթացների: Այսպես, Երանոսի, Լիճքի, Ծակքարի, Ծովասարի, Ծովինարի, Ձորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդաձորի խոսվածքներում հինհայերենյան ձայնեղ և շնչեղ խուլ հպականների ու հպաշփականների դիմաց առկա են խուլեր<sup>75</sup>, իսկ խուլերի դիմաց առկա են ձայնեղներ: Մյուս խոսվածքներում (Արծվանիստի, Աստղաձորի, Գեղհովիտի, Ջուլաքարի, Մարտունու, Վաղաշենի, Վարդենիկի) հինհայերենյան ձայնեղների դիմաց առկա են շնչեղ խուլեր, իսկ խուլերի դիմաց մի շարք դեպքերում առկա են ձայնեղ-

<sup>74</sup> Համաձայն Գ.Ջահուկյանի աղյուսակների՝ Մշո բարբառի շրջանակներում *h*-ի դիմաց ոչ առնմանական *խ* ունեն Բաղեշի, Խլաթի, Արճեշի և Արծկեի խոսվածքները (տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 56-57):

<sup>75</sup> Ըստ Գ.Ջահուկյանի՝ Մշո բարբառում այս հատկանիշն ունի միայն Ալաշկերտը (տե՛ս նշվ. աշխ., էջ 56-57):

ներ: Խոսվածքները միմյանցից հստակորեն տարբերվում են նաև փոխառյալ բառերի սկզբում *ղ*-ի դիմաց դրսևորվող հնչյունով: Այսպես, եթե Աստղաձորի, Արծվանիստի, Գեղհովիտի, Երանոսի, Ջուլաքարի, Ծակքարի, Ծովասարի, Ծովինարի, Մարտունու, Վաղաշենի և Վարդենիկի խոսվածքներում բառակազմի *ղ*-ի դիմաց առկա է *կ*, ապա Լիճքի, Ձորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդաձորի խոսվածքներում *ղ*-ի դիմաց գործառում է *խ*<sup>76</sup>: Հետաքրքրական է, որ *ղ*-ի դիմաց *կ* ունեցող որոշ խոսվածքներում զուգահեռաբար կարող է հանդես գալ նաև *կ*՝ փոխառյալ հնչյունը (այդպես է, օրինակ, Երանոսի և Ծովինարի խոսվածքներում), իսկ *ղ*-ի դիմաց *խ* ունեցող խոսվածքներում, որպես կանոն, *կանչել* բայի դիմաց ևս գործառում է *խ*-ով ձև՝ *խանչել*: Հետազոտության ընթացքում ձայնավորների կամ երկբարբառների դրսևորումներում նկատվել են սակավաթիվ, բայց հետաքրքրական որոշ իրողություններ: Այսպես, Գեղհովիտի, Ջուլաքարի, Վաղաշենի խոսվածքներում բացարձակ բառակազմում, բառի առաջին վանկում՝ խուլ բաղաձայններից հետո, որոշակիորեն գործառում է շրթնայնացած *ա* ձայնավոր: Վաղաշենի, Վարդաձորի, Վերին Գետաշենի խոսվածքներում *եա*-ի դիմաց առկա է *յւ*, ի կամ *ե* (*Ավետիսյան, Պեղրօսեն, կենկ, օկնուտեմբ, ծընընդեն*): Արծվանիստի խոսվածքում *գալ* բայն ունի ներկայի (և ապառնու) յուրահատուկ ձևեր՝ երկբարբառային *n* հնչյունով, ինչպես *q ում, q ոս, q ո, q ոնք, q ոք, q ոն* (< *գամ, գաս, գա, գանք, գաք, գան*): Ծովասարի Երանոսի, Ծակքարի խոսվածքներում հանդիպում է *խ* երկբարբառ (*խրրն, իւրա, իւրղ*):

Քերականական համակարգում ևս դրսևորվում են մի շարք հատկանիշներ, որոնք հստակորեն սահմանազատում են առանձին խոսվածքներ: Այսպես, ստացական հոդերից հետո *ի* ձայնավորի հավելում ունեն Երանոսի, Լիճքի, Ծակքարի, Ծովասարի,

<sup>76</sup> Գ.Ջահուկյանի աղյուսակներում Մշո բարբառի բոլոր խոսվածքներին վերագրված է *ղ*-ի դիմաց *խ*-ի գործածություն, չեն դիտարկվել *կ*/*ղ*-ի առկայության դեպքեր (տե՛ս նշվ. աշխ., էջ 56-57):

Չորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդաձորի խոսվածքները<sup>77</sup>: Անձնական դերանվան տրականի հետադաս կիրառությամբ հոգնակի ստացականության արտահայտություն դիտարկվել է Լիճքի, Շակքարի, Շովասարի, Շովինարի, Չորագյուղի, Վաղաշենի, Վարդաձորի, Վարդենիկի, Վերին Գետաշենի խոսվածքներում: Անձնական դերանունների *քրզի, մրզի, ձրզի* ձևեր ունեն Երանոսի, Լիճքի, Շովասարի, Չորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդաձորի խոսվածքները, կրճատ *քե, մե, ձե* ձևեր՝ Չուլաքարի, Շովինարի, Մարտունու, Վաղաշենի, Վարդենիկի խոսվածքները: Միայն *քե* կրճատ ձև ունեն Աստղաձորի, Արծվանիստի, Գեղհովիտի խոսվածքները: Գալ բայի *գ իքամ//գիկամ* ձև ունեն Աստղաձորի, Երանոսի, Շակքարի, Շովասարի, Չորագյուղի, Մաղինայի, Մարտունու, Վարդաձորի, Վերին Գետաշենի խոսվածքները, իսկ *գ ուքամ//գ ուկամ* ձև ունեն Արծվանիստի, Ներքին Գետաշենի, Վաղաշենի, Վարդենիկի խոսվածքները: Մի շարք բարբառային միավորներ էլ, ինչպիսիք են Գեղհովիտի, Չուլաքարի, Լիճքի և Շովինարի խոսվածքները, զուգահեռաբար ունեն *գալ* բայի այդ երկու ձևերն էլ: Օժանդակ բայի ներկայի *եմ, ես, ա, ենք, էք, են* ձևեր ունեն Աստղաձորի, Արծվանիստի, Գեղհովիտի, Չուլաքարի, Շակքարի, Շովինարի, Մարտունու, Վաղաշենի, Վարդենիկի խոսվածքները: Այս խոսվածքներում, բացառությամբ Շակքարի և Շովինարի, օժանդակ բայի անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Երանոսի, Լիճքի, Շովասարի, Չորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի և Վարդաձորի խոսվածքներում օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ *իմ, իս, ա, ինկ, իկ, ին*, և անցյալի ձևերն են՝ *էնկ, էր, էր, էնկ, էկ, էն*<sup>78</sup>: Անցյալի այս նույն

<sup>77</sup> Գ.Ջահուկյանի աղյուսակներում այս հատկանիշը վերագրված է Մշո բարբառի բոլոր խոսվածքներին (տե՛ս նշվ.աշխ., էջ 93-94):

<sup>78</sup> Գ.Ջահուկյանի աղյուսակներում Մշո բարբառի բոլոր խոսվածքներին վերագրված է օժանդակ բայի անցյալ անկատարի երկձայնավոր ձևերի մեջ *է-ի* սղում (տե՛ս նշվ.աշխ., էջ 113-114):

ձևերն ունեն նաև Շակքարի և Շովինարի խոսվածքները: Ներկայի հիմքից կազմվող ձևերում *ն* բայածանցը բացակայում է Արծվանիստի, Գեղհովիտի, Չուլաքարի, Շովինարի, Մարտունու, Վաղաշենի խոսվածքներում: Կօ հաստատական մասնիկ ունեն Արծվանիստի, Գեղհովիտի, Չուլաքարի, Շովինարի, Մարտունու, Վարդենիկի խոսվածքները: Էլ շաղկապի դիմաց լէ ունեն Երանոսի, Լիճքի, Շակքարի, Շովասարի, Շովինարի, Չորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդաձորի խոսվածքները: Ներգոյական հոլովի իմաստն արտահայտելու համար *նե* մասնիկ են գործածում Աստղաձորի, Չուլաքարի, Մարտունու, Վաղաշենի, Վարդենիկի խոսվածքները:

Իհարկե, այս կամ այն խոսվածքում կամ խոսվածքների խմբում դիտարկված որոշ քերականական հատկանիշներ կարող են դրսևորվել նաև այլ խոսվածքներում՝ չնայած մեր կողմից արձանագրված չլինելուն: Թերևս ավելի լայն ընդգրկում կարող են ունենալ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են հատուկ տեղանունների հոլովումը Ա հոլովիչով, Ոջ հոլովման առկայությունը, բացառականի նաև է-ով կազմության առկայությունը ց-ով կազմության գերակայությամբ, անորոշ հոդի հետադաս գործածությունը, անձնական դերանունների՝ *իկ*-ով ձևերի առկայությունը, *գալ* բայի՝ *իկամ, հիկամ* տիպի ձևերի առկայությունը, բայի անցյալ ժամանակում եզակի առաջին դեմքի իմաստով հոգնակիի ձևի գործածությունը և այլն: Ի վերջո, բարբառին հատուկ իրողությունները տարբեր խոսվածքներում կարող են ունենալ արտահայտության տարբեր կերպ ու ցայտունություն:

Առանձնապես հետաքրքրական են մեկ-երկու այլ իրողություններ: Այսպես, Արծվանիստի, Շովասարի, Վաղաշենի խոսվածքներում *էնեչ* (անել) բայի բոլոր ժամանակաձևերը կազմվում են *էն* բացարձակ հիմքով, Արծվանիստի խոսվածքում այդկերպ է դրսևորվում նաև *դ ընեչ* բայը՝ *դ ըն* հիմքով: Հետազոտության ընթացքում *գ* նախդրի կիրառություն հանդիպել է միայն Վերին Գետաշեն գյուղում, այն էլ ուղղական հոլովի հետ:

Ընդհանուր առմամբ, դիտարկումները ցույց են տալիս, որ Մարտունու տարածաշրջանում գործառոջ խոսվածքները կարելի է բաժանել երեք խմբի<sup>79</sup>: Առաջին խմբում կրնոգրկվեն Երանոսի, Լիճքի, Ձորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդաձորի խոսվածքները: Սրանց միավորող և մյուս խմբերից տարբերակող հատկանիշներից են՝ 1. հինհայերենյան *հ*-ի դիմաց *հ* - ի առկայություն, 2. ոչ բառասկզբում հինհայերենյան ձայնեղ և շնչեղ խուլ հպականների ու հպաշփականների դիմաց խուլերի առկայություն, 3. նույն այդ դիրքերում հինհայերենյան խուլերի դիմաց ձայնեղների առկայություն, 4. բառասկզբում *ղ*-ի դիմաց *խ*-ի գործառություն, 5. ստացական հոդերից հետո *ի* ձայնավորի հավելում<sup>80</sup>, 6. անձնական դերանունների *քրզի, մըզի, ձրզի* ձևերի առկայություն, 7. օժանդակ բայի ներկայի *իմ, իս, ա, ինկ, իկ, ին* և անցյալի *ենկ, էր, էր, ենկ, էկ, են* ձևերի առկայություն, 8. *էլ* շաղկապի դիմաց *լէ* ձևի կիրառություն: Բերված հատկանիշների մի մասը հիմնականում հատուկ է Ալաշկերտի խոսվածքին<sup>81</sup>, ուստի կարելի է փաստել, որ Մարտունու տարա-

<sup>79</sup> Ժամանակին Հ.Աճառյանը Մշո բարբառի՝ Սևանի ավազանի խոսվածքների խմբավորման մասին գրել է. «Որչափ որ կրցանք հետևցնել Նոր-Բայազիդի շրջանի գիւղերին՝ տարբերությունը միայն իս ձայնին մէջ է, իսկ մնացեալ բոլոր կէտերում մէջ երկու ճիւղերը համաձայն են իրարու: Նոր-Բայազիդի շրջանին մէջ Մշոյ ճիւղին պատկանող և հ ձայնն ունեցող գիւղերն են՝ Երանոս, Աղամխան, Ձորագեղ, Գեօլ, Ն. և Վ. Աղեաման. իսկ իս ունեցող գիւղերն են՝ Ծակքար, Ն.Կարանլըղ, Ատալաղալու, Ալիկըրլիս, Ձուլխաչ, Ն.Գիւզաղարա, Վ.Գիւզաղարա, Վ. և Ն. Քեօլաղոսան, Ն. Այուչալու, Գետակըրուլաղ և Ջաղալու» (Հ.Աճառեան, նշվ. աշխ., էջ 118): Մեկ այլ տեղում Հ.Աճառյանը փաստում է, որ Ծովինար, Արծվանիստ, Կարձաղբյուր գյուղերը պատկանում են Մշո ճյուղին, բերում է տվյալներ բնակիչների ծագման մասին և նշում հատկանիշներ *հ>խ, լէ, կիզ ամ, կիտամ, ա օժ*. բայ կլն (տե՛ս նշվ.աշխ., էջ 139):

<sup>80</sup> Այս հատկանիշը Ալաշկերտի խոսվածքում չի դիտարկվել (տե՛ս Բ.Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 95-96), սակայն Մշո բարբառում արձանագրվել է (տե՛ս Ա.Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 102):

<sup>81</sup> Տե՛ս Բ.Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 38, 29-35, 91, 117, 149:

ճաշրջանի խոսվածքների այս խումբը ներկայացնում է Ալաշկերտի խոսվածքը<sup>82</sup>:

Երկրորդ խմբում կմիավորվեն Աստղաձորի, Արծվանիստի, Գեղիովիտի, Ջուլաքարի, Մարտունու, Վաղաշենի, Վարդենիկի խոսվածքները, որոնց բնորոշ հատկանիշներից են հետևյալները. 1. հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ*-ի գործառություն, 2. ոչ բառասկզբում հինհայերենյան ձայնեղների դիմաց շնչեղ խուլերի առկայություն, իսկ խուլերի դիմաց որոշ դեպքերում ձայնեղների առկայություն, 3. բառասկզբի *ղ*-ի դիմաց *կ/կ*-ի առկայություն, 4. անձնական դերանունների կրճատ *քե, մե, ձե* ձևերի առկայություն, 5. օժանդակ բայի ներկայի *եմ, ես, ա, ենք, էք, են* և անցյալի *ի, իր, էր, ինք, իք, ին* ձևերի գործածություն, 6. ներկայի հիմքից կազմվող ձևերում *ն* բայածանցի բացակայություն, 7. *կօ* հաստատական մասնիկի գործածություն, 8. ներգոյականի իմաստն արտահայտող *նե* մասնիկի կիրառություն: Թվարկված հատկանիշները հատուկ չեն Ալաշկերտի խմբին, բայց և Մշո բարբառի որևէ այլ տարածքի համար բնութագրական փունջ չեն կազմում: Միայն *հ*-ի դիմաց *խ*-ի առկայությունն է, որ ըստ Գ.Ջահուկյանի աղյուսակների՝ Մշո բարբառում հատուկ է Բաղեշի, Խլաթի, Արճեշի և Արծկեի խոսվածքներին<sup>83</sup>: Այնպես որ, պետք է արձանագրել՝ այս խմբի խոսվածքները համատեղում են Մշո բարբառի տարբեր խոսվածքներին բնորոշ հատկանիշներ, ուրեմն կարող են ուղղակի բնութագրվել իբրև Մշո բարբառի խոսվածքներ<sup>84</sup>:

Երրորդ խումբը կկազմեն Ծակքարի, Ծովասարի և Ծովինարի խոսվածքները, որոնք ունեն ինչպես Ալաշկերտին բնորոշ (օր. ոչ բառասկզբում ձայնեղների և շնչեղ խուլերի դիմաց՝ խուլեր, իսկ խուլերի դիմաց՝ ձայնեղներ և այլն), այնպես էլ Ալաշկերտից տար-

<sup>82</sup> Ալաշկերտի խոսվածքի՝ բուն Մուշի բարբառից տարբերվող հատկանիշների մասին տե՛ս նաև Բ.Մաղաթյան, նշվ. աշխ., էջ 5-6:

<sup>83</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 56-57:

<sup>84</sup> Կարծում ենք՝ հետագա հետազոտություններով հնարավոր կլինի ավելի ճշգրիտ եզրահանգումներ անել:

բերվող հատկանիշներ (օր.՝ *հ*-ի դիմաց *խ*, իսկ *դ*-ի դիմաց՝ *կ*): Պետք է կարծել, որ այս խոսվածքները ներկայացնում են Մուշի տարբեր շրջաններից, նաև Ալաշկերտից եկածների լեզվական հատկանիշների զուգորդումներ և փոխազդեցություններ՝ վերջին հաշվով լիարժեք ներկայացնելով Մշո բարբառը:

Վարդենիսի տարածաշրջանի Մշո բարբառը ներկայացնող Լճավանի, Լուսակունքի, Ծովակի, Կարճաղբյուրի, Մեծ Մասրիկի, Նորակերտի, Ախպրաձորի, Խաչաղբյուրի, Մաքենիսի խոսվածքները հիմնականում ունեն Մարտունու տարածաշրջանի բոլոր խոսվածքների համար մեր հիշատակած ընդհանուր բարբառային հատկանիշները: Լուսակունքի, Ծովակի, Կարճաղբյուրի, Մաքենիսի և Մեծ Մասրիկի խոսվածքներին հատուկ են Մարտունու տարածաշրջանի Մշո խմբին հատուկ և մյուս խոսվածքներից գատու հետևյալ հատկանիշները. բառամիջի և բառավերջի ձայնեղների դիմաց շնչեղ խուլեր, նույն դիրքերի խուլերի դիմաց երբեմն ձայնեղներ, հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ*-ի առկայություն, բառակզրի *դ*-ի դիմաց *կ*-ի գործածություն, ներգոյականի իմաստի արտահայտություն նաև *նե* մասնիկով, օժանդակ բայի ներկայի *եմ*, *ես*, *ա*, *ենք*, *էք*, *են* և անցյալի *ի*, *իր*, *էր*, *ինք*, *իք*, *ին* ձևերի առկայություն, *ն* բայածանցի բացակայություն, *կօ* հաստատականի առկայություն: Ախպրաձորի և Խաչաղբյուրի խոսվածքներում հինհայերենյան *հ*-ի դիմաց առկա է *հ*, իսկ օտար բառերի սկզբում գործածվում է *դ*: Մշո խմբի խոսվածքների հետ ընդհանրություններն արտահայտվում են մասնավոր մեկ-երկու այլ հատկանիշներով ևս: Այսպես, Աստղաձորի, Արծվանիստի, Գեղհովիտի խոսվածքների պես անձնական դերանունների միայն *քե* կրճատ ձև ունեն Լուսակունքը, Կարճաղբյուրը, Նորակերտը, Ախպրաձորը: Արծվանիստի և Վաղաշենի խոսվածքների պես *էնել* բայի բոլոր ձևերը *էն* բացարձակ հիմքով են կազմվում Լուսակունքի, Ծովակի, Կարճաղբյուրի, Մաքենիսի խոսվածքներում, Արծվանիստի խոսվածքի պես՝ Լուսակունքի և Խաչաղբյուրի խոսվածքներում նույն կարգի հատկանիշ դրսևորում է նաև *դ ընել* բայը՝ *դ ըն* բացարձակ

հիմքով: Վարդենիսի տարածաշրջանի՝ Մշո բարբառի խոսվածքները երբեմն ունեն նաև տարբերակող հատկանիշներ: Այսպես, Լուսակունքի խոսվածքը աչքի է ընկնում քմայնացած *ա* ձայնավորի առատությամբ. այդ հնչյունը գրեթե կանոնավորապես հանդես է գալիս բառակզրի շնչեղ ձայնեղներից հետո: Այս խոսվածքում լայն տարածում ունի նաև հետնալեզվային քմայնացած հպական բաղաձայնների գործածությունը<sup>85</sup>: Ծովակի խոսվածքում սովորական է *վըր*, *մըչ* կապերի նախադաս կիրառությունը: Մեծ Մասրիկի խոսվածքում հանդիպում է *ուլ* դերանվան *վուլ* տարբերակ, Մաքենիսի խոսվածքում՝ *վան* տարբերակ: Ախպրաձորի խոսվածքը չունի *ո* երկբարբառային հնչյուն: Խաչաղբյուրի խոսվածքում Ու հոլովումը մեծ տարածում չունի եզակի թվում, չի գործառում հոգնակի թվում, այստեղ *ուլ* դերանվան դիմաց առկա է *վան* ձև, *գնալ*, *մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են *գ ընաց*, *մընաց*: Հետաքրքրական է, որ տարածաշրջանի Լճավանի և Նորակերտի խոսվածքներում, Ծակքարի, Ծովասարի և Ծովինարի խոսվածքների պես, զուգորդվում են Ալաշկերտի և բուն Մշո խոսվածքների հատկանիշները: Մասնավորապես, Լճավանի խոսվածքում բառամիջի և բառավերջի դիրքերում ձայնեղ հպականների և հպաշփականների դիմաց, որպես կանոն, առկա են շնչեղ խուլեր, բայց և նույն կարգի ձայնեղ և շնչեղ խուլ բաղաձայնների դիմաց երբեմն հանդիպում են խուլեր, իսկ նախնական խուլերի դիմաց գործառում են ձայնեղներ: Այդպես նաև՝ Նորակերտի խոսվածքում հինհայերենյան *հ*-ի դիմաց առկա է *հ* (Ալաշկերտ), մինչդեռ բառակզրի *դ*-ի դիմաց առկա է *կ* (Մուշ) և այլն: Կարծում ենք՝ այս դեպքում ևս խոսվածքների խառը պատկերները պայմանավորված են բարբառակիրների ծագումնային յուրահատկություններով, նաև ազդեցություններով:

<sup>85</sup> Այս իրողությունները թերևս Դիաղինի բարբառի ազդեցության հետևանք են:

## ԳԼՈՒԽ 1.2.

ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԸ ԵՎ ՆՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

## Ա. Ընդհանուր տեղեկություններ Բայազետի բարբառի վերաբերյալ

Բայազետի բարբառը պատկանում է հայ բարբառների Ում ճյուղին, ունի քառաստիճան (բ՛, բ, պ, փ) բաղաձայնական համակարգ, ընդգրկված է արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբում:

Մինչև 19-րդ դարի սկզբները Բայազետի բարբառը գործառու էր Արևմտյան Հայաստանի Բայազետի գավառում, որը զբաղեցնում էր Էրզրումի նահանգի հարավարևելյան մի հատվածը՝ Վանա լճից հյուսիս-արևելք: Բայազետի բարբառը արևմուտքից սահմանակից էր Դիաղինի, արևելքից՝ Խոյ-Մարաղայի բարբառներին, հարավից՝ Վանի, հյուսիսից՝ Արարատյան բարբառներին, հյուսիս – արևմուտքից՝ Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքին:

Բայազետի գավառը պատմականորեն մոտավորապես համապատասխանում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Կոզովիտ գավառին: Մինչև 1829թ. Կոզովիտը բազմամարդ էր, ուներ գրեթե միատարր հայ բնակչություն: Սակայն 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կազմակերպվում է արևմտահայերի զանգվածային արտագաղթ, և գաղթական կոզովիտցիների հիմնական հատվածը հաստատվում է Սևանա լճի արևելյան, հարավային, մասամբ նաև արևմտյան ափերին: Այնուհետև իրար հաջորդող աղետները, պատերազմները, կոտորածները, տեղահանություններն ու գաղթերը իսպառ հայաթափում են Բայազետը, որն այժմ բնակեցված է թուրքերով ու քրդերով:

Բայազետի բարբառը անխաթար պահպանվել և գործառու է Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանում՝ Գավառ քաղաքում և Հացառատ, Արծվաքար, Սարուխան, Նորատուս, Գանձակ, Կարմիրգյուղ, Ծաղկաշեն, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Օովազարդ, Լճափ, Հայրավանք, Բերդկունք բնակավայրերում:

Բարբառիս գիտական առաջին մեկնաբանությունը տրվում է Հ.Աճառյանի «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ, որտեղ այն «Պայազիտի ենթաբարբառ» անվանումով համարվում է Երևանի բարբառի երեք ենթաբարբառներից մեկը<sup>86</sup>: Բայազետի բարբառային միավորի վերաբերյալ (արդեն *Նոր Բայազետի ենթաբարբառ* անվանումով) Ա.Նարիբյանը գրում է. «Արարատյան բարբառը, խառնվելով Մշո բարբառի արևելյան և հյուսիս-արևելյան (Արճեշ) հատվածին, տվել է Նոր-Բայազետի ենթաբարբառը, որին պատկանում են նաև Ախտայի շրջանի մի շարք գյուղերի խոսվածքները»<sup>87</sup>: Նախորդների համեմատությամբ Բայազետի բարբառի վերաբերյալ ընդարձակ տեղեկություններ է տալիս և առաջին անգամ բարբառիս հատկանիշները քիչ թե շատ հանգամանորեն ներկայացնում Ռ.Բաղրամյանը «Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները» աշխատությունում<sup>88</sup>՝ ներկայացնելով նաև Բայազետի բարբառի մի շարք խոսվածքներով նմուշներ գիտական տառադարձությամբ: Բայազետի բարբառային միավորը առաջին անգամ առանձին բարբառ (*Բայազետի բարբառ* անվանումով) դիտարկվեց Գ.Ջահուկյանի կողմից՝ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման արդյունքում: Ըստ այդմ՝ բարբառների արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախումբը կազմում են Երևանի կամ Արարատյան, Ջուղայի, Բայազետի, Աստրախանի և Արդվին-Թբիլիսիի բարբառները<sup>89</sup>: Առաջին անգամ այլ բարբառների շարքում բարբառս ներկայացվում է հնչյունաբանական և ձևաբանական

<sup>86</sup> Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 33:

<sup>87</sup> Ա.Նարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 219 – 220:

<sup>88</sup> Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., 225 էջ:

<sup>89</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 135:

հատկանիշների ամբողջությամբ, որոշվում է բարբառի դիրքը հայ բարբառների շարքում, և Բայազետի բարբառը հստակորեն սահմանագատվում է Արարատյան բարբառից: Գ.Ջահուկյանի կազմած աղյուսակները վկայում են<sup>90</sup>, որ Արարատյան բարբառի տարբեր խոսվածքներից Բայազետի բարբառը տարբերվում է երկուսուկես տասնյակից մինչև երեք տասնյակ հատկանիշներով: Բայազետի բարբառի շնչեղ ձայնեղ բաղաձայնների փորձառական ուսումնասիրությամբ ու դիտարկումներով զբաղվել են Ա.Խաչատրյանը<sup>91</sup>, Ա.Հանեյանը<sup>92</sup>, բարբառի հնչյունական իրողություններին ըստ անհրաժեշտության անդրադարձել է Հ.Մուրադյանը<sup>93</sup>: Բայազետի բարբառի ամբողջական ուսումնասիրություն է Վ.Կատվայանի «Բայազետի բարբառը և նրա առնչությունները շրջակա բարբառների հետ» աշխատությունը<sup>94</sup>, որում բարբառի համակարգը համակողմանիորեն քննվում է ինչպես շրջակա բարբառների հետ հարաբերությունների, այնպես էլ պատմական զարգացման մեջ:

Բայազետի բարբառով մեզ հայտնի գրավոր առաջին նյութերը վերաբերում են 19-րդ դարավերջին: Տիգրան Նավասարդյանցի՝ 1889թ. հրատարակված «Հայ ժողովրդական հեքիաթների» 5-րդ գրքում «Հին Բայազետու բարբառով» գրանցված է «Ուստայ

<sup>90</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 51 – 119:

<sup>91</sup> Տե՛ս Ա.Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչյութաբանություն, Ե., 1988, էջ 146. А.А.Хачатрян, Природа звонких придыхательных в некоторых армянских диалектах, Лингвистическая география, диалектология и история языка, Ер., 1976, էջ 432-440. А.А.Хачатрян, Природа звонких придыхательных в армянских диалектах, Միջազգային հայերենագիտական գիտաժողով - 1982, Եր., 1984, էջ 327-336:

<sup>92</sup> Ա.Հանեյան, Չայնեղ շնչեղները հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 3, Ե., 2010, էջ 166-231:

<sup>93</sup> Տե՛ս Հ.Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, հնչյունաբանություն, Ե., 1982:

<sup>94</sup> Վ.Կատվայան, Բայազետի բարբառը և նրա առնչությունները շրջակա բարբառների հետ, Ե., 2016:

նաջարի ասուածը» վերնագրով հեքիաթը<sup>95</sup>: Բայազետի բարբառին առնչվող մի շարք նյութեր կան «Ազգագրական հանդեսի» էջերում: Հանդեսի 13-րդ գրքում (1906թ.) Ե.Լալայանը հրապարակել է հայկական էպոսի իր գրած մի տարբերակ՝ «Մասմայ Ծոեր (Նոր-Բայազետի բարբառով)»<sup>96</sup>, իսկ 14-րդ գրքում՝ «Ռուստամ Զալ (Նոր-Բայազետի բարբառով)» պատումը<sup>97</sup>: «Ազգագրական հանդեսի» 19-րդ գրքում (1910թ.) Ե.Լալայանը «Նոր Բայազետի գաւառի բանահիւսութիւնից» խորագրով հրապարակել է երեք հեքիաթ<sup>98</sup>, սակայն դրանցից միայն մեկը՝ «Լալազար» հեքիաթն է ներկայացնում Բայազետի բարբառը<sup>99</sup>: Բարբառի ուսումնասիրության համար կարևոր աղբյուր է «Հայ ազգագրություն և բանահյուսություն» շարքի 11-րդ հատորը<sup>100</sup>, որում զետեղված են Նոր Բայազետի շրջանից հավաքված ազգագրական և բանահյուսական նյութեր: Այս գրքում ընդգրկված է Բայազետի բարբառով երբևէ գրի առնված ամենածավալուն և բազմաբնույթ նյութը (հեքիաթներ, զրույցներ, առակներ, անեկդոտներ, երգեր, առածներ, ասացվածքներ, դարձվածքներ, անեծքներ), որն ուշագրավ է և ժամանակի առումով. Արտահայտում է 20-րդ դարի առաջին կեսի պատկերը<sup>101</sup>: Վ.Կատվայանի «Քննված խանսնք-չանսնք (Զվարճապատումներ Բայազետի բարբառով)»<sup>102</sup> գրքում բարբառակրի կողմից գիտական ճշգրիտ տառադարձությամբ ներկայացվում է բարբառիս արդի վիճակն արտացոլող ծավալուն նյութ: Բայազետի բարբառի բառապաշարի վերաբերյալ զգալի նյութ է պարունակում Հ.Աճառյանի «Հայերեն գաւառական բառարանը» (Թիֆլիս, 1913):

<sup>95</sup> Տե՛ս Տ.Նավասարդեանց, Հայ ժողովրդական հեքիաթներ, 5-րդ գիրք, Տիֆլիս, 1889, էջ 79-80:

<sup>96</sup> Տե՛ս «Ազգագրական հանդես», XIII գիրք, 1906, 1, էջ 37-82:

<sup>97</sup> Տե՛ս «Ազգագրական հանդես», XIV գիրք, 1906, 2, էջ 69-85:

<sup>98</sup> Տե՛ս «Ազգագրական հանդես», XIX գիրք, 1910, 1, էջ 115-150:

<sup>99</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 150:

<sup>100</sup> Հայ ազգագրություն և բանահյուսություն, 11, Ե., 1980, էջ 166:

<sup>101</sup> Նշվ. աշխ., էջ 7:

<sup>102</sup> Վ.Կատվայան, «Քննված խանսնք-չանսնք», Ե., 2009:



ցումը և այլն: Մասնավոր բնույթ են կրում ձայնավորական (անկում, տեղաշարժ ըստ արտաբերության բացվածքի՝ նեղացում և լայնացում, շրթնայնացում և ապաշրթնայնացում) և բաղաձայնական (անկում, հավելում, շնչեղացում, ապաշնչեղացում և այլն) զանազան փոփոխություններ<sup>106</sup>:

Հնչաշղթայի ձևավորման գործող օրինաչափությունները առաջ են բերել և պատճառ են դառնում բաղաձայնների փոխադրեցական բնույթի հնչյունափոխությունների, ինչպիսիք են ձայնեղացումն ու խլացումը, շնչեղացումն ու ապաշնչեղացումը, հպաշփականի շփականացումը և շփականի հպաշփականացումը, դրափոխությունը, արտաբերության տեղի փոփոխությունը և այլն<sup>107</sup>:

Շեշտով պայմանավորված հնչյունափոխական իրողությունները բառաթեքման, բառաբարդման ու ածանցման ժամանակ բազմազան դրսևորումներ ունեն, և այս դեպքում որոշակի նշանակություն ունի բառերի միավանկ կամ բազմավանկ լինելու հանգամանքը: Ընդհանուր առմամբ՝ շեշտագրկման հետևանքով կառուցվող պայմանավորված հնչյունափոխվում են *ի* և *ու* ձայնավորները, իսկ բազմավանկ բառերի դեպքում շեշտագրկման հետևանքով կարող են հնչյունափոխվել բոլոր ձայնավորներն էլ (բացի *ը*-ն)<sup>108</sup>:

Բայազետի բարբառում ընդհանրական բնույթ ունեն *եր*, *ներ* հոգնակերտները, որոնք որպես կանոն միմյանց փոխարինել չեն կարող, սակայն կարող են փոխարինել այլ հոգնակերտների: Գործածական են նաև *ք*, *րանք*, *տանք*/*տիք*, *անք*, *ոնք*, *ենք*, *վանք*, *իք*, *անիք*, *երք*, *ստանք* հոգնակերտները<sup>109</sup>:

<sup>106</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 138-167:

<sup>107</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 167-178:

<sup>108</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 178-183:

<sup>109</sup> Մրանց գործածությունը պայմանավորված է բառերի ձևային (ք), իմաստային (րանք, տանք/տիք, անք, ոնք, ենք), նախնական ձևաբանական (վանք) հատկանիշներով, իսկ սակավ հանդիպող *անք* (ձիյանք), *իք* (մանթիք), *անիք* (կրնանիք), *երք* (տրդերք), *ստանք* (զ էտրստանք) թեքություններից առաջին երեքը գործածվում

Բարբառը ներգոյական հոլով չունի, սեռականը և տրականը տարբերվում են որոշիչ հոդի գործածությամբ, հայցական հոլովը իրի առման դեպքում նման է ուղղականին, իսկ անձի առման դեպքում՝ տրականին, սովորական են բացառականի ց-ով ձևերը, բայց գործածվում են նաև է-ով ձևեր: Հատուկ տեղանունների բացառականը ունենում է *ա* վերջավորություն:

Բարբառում գոյականների մեծ մասը ենթարկվում է Ի հոլովման, իսկ Ու հոլովումը իր ընդգրկմամբ երկրորդն է և ունի ձևային (*ի* հնչյունով ավարտվող բառեր) և ձևաիմաստային (անորոշ դերբայ) հիմքեր: Վա հոլովման բառերի՝ բացառականի է վերջավորությամբ ձևերը Բայազետի բարբառում ավելի սովորական են (*հ՝ առավորնէ, կէսօրնէ*): Ան հոլովման ենթարկվող բառերի թիվը խիստ սահմանափակ է Բայազետի բարբառում, Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը, իսկ Ց հոլովումն ունի ձևաիմաստային հիմք: Ա արտաքին հոլովման ենթարկվում են հատուկ տեղանունները, սեռական-տրականում *ա* հոլովիչ են ունենում մի քանի բառեր ևս<sup>110</sup>:

Բայազետի բարբառը բնութագրվում է *ը* և *ն* որոշիչ հոդերի գործածությամբ (ուղղական, տրական և հայցական հոլովներում): Անորոշ հոդը ունի նախադաս կիրառություն: Երբեմն հանդիպող կրկնակի հոդառությունը ընդհանուր առմամբ բնութագրական չէ բարբառի համար և մարող հատկանիշ է: Ստացականությունը դրսևորվում է *ս*, *տ* հոդերով, որոնք կարող են դրվել բոլոր հոլովների վրա: Հոգնակի ստացականություն արտահայտելու համար թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ բառերը ստացական հոդից առաջ ստանում են *ներ* հոգնակերտը (*քրթըներըս, գ ըլխըներըս*): Բարբառում գործածվող դիմորոշ հոդերն են *ս* և *տ*, որոնք կարող են դրվել անձնանիշ գոյականների կամ իբրև այդպիսիք գործածվող

են ավանդույթով, վերջին երկուսը՝ հարևան բարբառների ազդեցությամբ (տե՛ս նշվ. աշխ., էջ 268-284):

<sup>110</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 292-316:

այլ բառերի բոլոր հոլովական ձևերի վրա: Մակավ են *u* հոդի՝ ցուցական իմաստով կիրառության դեպքերը:

Բարբառում որակական ածականի համեմատության աստիճանները դրսևորվում են շարահյուսական միջոցներով (*էնի քեզնից բոյով ա*), վերլուծական (*հ'ավէլի լավ*), նկարագրական (*ճրնդրիկ սեւ*) եղանակներով, ածանցմամբ (*հ'ըմընայլով*), բառաբարդմամբ (*ցուտտ-կըյամաթ*), նաև հնչերանգով (*ջ'ո՛չ կընիկ* – շատ ծեր կին): Թվականները դրսևորման էական յուրահատկություններ հանդես չեն բերում:

Անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի տրական հոլովի ձևերը Բայազետի բարբառում ունեն *ի* կամ *իկ* հավելված (ընձի/կ/, քեզի/կ/ և այլն), նաև առանց *զ*-ի ձևեր (*քե, մե, ձ'է*): Ցուցական դերանուններն ունեն պարզ և հավելվածավոր կազմության ձևեր (*էս, էսի, էսա, էսիկ, էսակ*): Ցուցական դերանվան *ի* հավելվածով ձևերը ենթարկվում են Ու անվանական հոլովման, ընդ որում՝ եզակի սեռականից սկսած՝ կարևոր է *տ* – *ի* հավելումը: Ստացական դերանունները Բայազետի բարբառում ևս անձնական դերանունների սեռական հոլովաձևերն են, որ հոդի միջոցով ձևավորվում են իբրև սկզբնաձևեր, ձեռք բերում ինքնուրույն իմաստ ու գործածություն և հոլովվում՝ եզակի թվում Ու հոլովմամբ, հոգնակի թվում՝ Ց հոլովմամբ (*իմ-իմու, իմոնք-իմոնց*): Իբրև անձերին վերաբերող հարցահարաբերական դերանուն գործածվում են *վորը* և *վոն* ձևերը՝ *վիր, վիրը, վիրնից, վիրնով* և *վի, վին, վինից, վինով* համապատասխան հոլովաձևերով:

Բայազետի բարբառում և՛ Ե, և՛ Ա խոնարհումների բայերում հինհայերենյան *ան* ածանցի դիմաց գործածվում է *ն* ածանց (*հ'իշնել, գ'ըթնել, խասկընալ, գ'օղնալ*), և այդ բայերի կազմությունը շարունակում է տարբերակվել միայն լծորդությամբ, ու ըստ այդմ էլ խոնարհման համակարգում բայերը հանդես են բերում յուրահատկություններ: Բարբառում բացակայում է չ բայածանցը, կենսունակ է Ա խոնարհման բայեր ձևավորող *ն*-ն: Կրավորական վ՛ ածանցը Բայազետի բարբառում ներգործական սեռի բայերը

վերածում է առավելաբար չեզոք սեռի, ընդ որում՝ շատ բայեր այդ ածանցը կա՛մ ընդհանրապես չեն ընդունում, կա՛մ հազվադեպ են ընդունում: Բայազետի բարբառն ունի պատճառական *ցըն* ածանց (*խասցընել, կերցընել*): Պահպանվել են հինհայերենյան շրջանից եկող ներգործաձև և կրավորաձև խոնարհումները (անցյալ կատարյալ ժամանակաձևում՝ *ջ'ըրի, քընա*, ըղձական (նաև ենթադրական, հարկադրական) ապառնու եզակի երրորդ դեմքում՝ *ջ'ըրա, քընի* և այլն, եզակի հրամայականում՝ *ջ'ըրա՛, քընի՛*):

Բարբառում բայն ունի 7 դերբայ՝ անորոշ, հարակատար, ենթակայական, անկատար, վաղակատար, ժխտական և ձևի: Անորոշ դերբայն ունի *ել, ալ* վերջավորություններ և եզակի թվում ենթարկվում է Ու հոլովման: Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն, վաղակատարը՝ *էր//եր* վերջավորություն: Անկատար դերբայը Բայազետի բարբառում ունի *ում* վերջավորություն, որը *զ ալ, լնլ, տալ* բայերի դեպքում ավելանում է անորոշի վրա՝ *զ'ալում, լնլում, տնլում*: Ժխտական դերբայն ունի *ի* և *ա* վերջավորություններ (*չեմ գ'ըրի, չես խօսա*), սակայն ժխտական խոնարհման ենթադրական ապառնու՝ Ե խոնարհման բայերի եզակի երրորդ դեմքի ձևը կազմվում է ոչ թե ժխտական դերբայով, այլ հաստատականից՝ *կըթըխա – չըթըխա, կըճելըցընա – չըճելըցընա*: Ձևի կամ ընթացակցական դերբայը Բայազետի բարբառում ձևավորվում է *էն* կամ *ուն* մասնիկներով, որոնք ավելանում են անորոշ դերբայի վրա (*թըռվըռալէն, թնլէլուն*): Եղանակաժամանակային ձևերը Բայազետի բարբառում կազմավորվում են հիմնականում գրական արևելահայերենին բնորոշ եղանակներով:

Բարբառը ապակատար դերբայ չունի, և սահմանականի ապառնու իմաստն արտահայտվում է ենթադրական ու հարկադրական եղանակների ձևերով (*կէթամ, պըտի էթամ*): Սահմանական եղանակի վաղակատար ներկայի հոգնակի երրորդ դեմքի ձևում (*քընած//քընած ա* «քնել են») ակնհայտորեն դրսևորվում է Ալաշկերտի խոսվածքի ազդեցությունը: Ե խոնարհման պարզ, բազմապատկական ածանց ունեցող բայերը անցյալ կատարյալը

կարող են կազմել ն' ներկայի, ն' անցյալի հիմքերից (*տըվի//տըվե-ցի, ծըռի//ծըռեցի*): Պատմական ներկայի իմաստը բարբառումնա շատ հաճախ արտահայտվում է ենթադրական ապառնու ձևերով (*Մէ օր էլ կէթա, կըտէնա՝ սմնդ կէրած*. «Մի օր էլ գնում տեսնում է՝ ամբողջը կերել են»): Հարկադրականի ձևերը կազմվում են *պըտի* եղանակիչով:

### Բ. Բայազետի բարբառի դրսևորումները Գեղարքունիքի մարզում

Բայազետի բարբառը Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանում հանդես է բերում խոսվածքային յուրահատկություններ, տարբերակային դրսևորումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն լեզվի բուն էությամբ, այլ նաև բարբառախոս հանրությունների ծագումնաբանական յուրահատկություններով:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի բնակիչների նախնիները գաղթել են ոչ միայն Բայազետ քաղաքից և հարակից բնակավայրերից, այլ նաև Վանից, Խոյից, Մուշից և այլ վայրերից: Վերջիններիս սերունդները այլ բարբառով խոսողների հոծ և կայուն միջավայրում ժամանակի ընթացքում բնականաբար կորցրել են իրենց մայրենի խոսվածքները, սակայն Բայազետի բարբառի տարբեր խոսվածքներում դեռևս առկա են դրանց հետքերը: Մյուս կողմից Բայազետի բարբառային խոսքը, հայտնվելով մեկ այլ, օրինակ Դիաղինի բարբառի միջավայրում, ժամանակի ընթացքում ազդվել է այդ բարբառից: Մեր դիտարկումներով Վարդենիսի տարածաշրջանի Ակունք գյուղի խոսվածքը, որի բնակիչների նախնիները գաղթել են Բայազետից, զգալիորեն հեռացել է մայր բարբառից: Այստեղ, օրինակ, բացակայում է Բայազետի բարբառի ձայնավորական համակարգի ամենաբնորոշ հատկանիշը՝ շրթնայնացած *ա*-ն, և ընդհակառակը՝ լիարժեքորեն արտահայտվում է Դիաղինի բարբառին խիստ բնորոշ մի հատկանիշ՝ ձայնավորների և բաղաձայնների ընդգծված քմայնացումը:

Գավառ քաղաքի, Հացառատ և Արծվաքար թաղամասերի, Սարուխան, Նորատուս, Գանձակ, Կարմիրգյուղ, Ծաղկաշեն, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Հայրավանք, Բերդկունք համայնքների խոսվածքներում Բայազետի բարբառը ներկայանում է անխառն վիճակով, իր բնականոն գործառության ու զարգացման ընթացքում, բայց և որոշակի զուգաձևություններով, հատկանիշների տարբերակային դրսևորումներով:

կարող են կազմել և՛ ներկայի, և՛ անցյալի հիմքերից (*տրվի/տրվեցի, ծրոի/ծրոեցի*): Պատմական ներկայի իմաստը բարբառումս շատ հաճախ արտահայտվում է ենթադրական ապառնու ձևերով (*Մէ օր էլ կէթա, կրտէնա՝ սնդ կէրած*. «Մի օր էլ գնում տեսնում է՝ ամբողջը կերել են»): Հարկադրականի ձևերը կազմվում են *պըտի* եղանակիչով:

## Բ. Բայազետի բարբառի դրսևորումները Գեղարքունիքի մարզում

Բայազետի բարբառը Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանում հանդես է բերում խոսվածքային յուրահատկություններ, տարբերակային դրսևորումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն լեզվի բուն էությամբ, այլ նաև բարբառախոս հանրությունների ծագումնաբանական յուրահատկություններով:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի բնակիչների նախնիները գաղթել են ոչ միայն Բայազետ քաղաքից և հարակից բնակավայրերից, այլ նաև Վանից, Խոյից, Մուշից և այլ վայրերից: Վերջիններիս սերունդները այլ բարբառով խոսողների հոծ և կայուն միջավայրում ժամանակի ընթացքում բնականաբար կորցրել են իրենց մայրենի խոսվածքները, սակայն Բայազետի բարբառի տարբեր խոսվածքներում դեռևս առկա են դրանց հետքերը: Մյուս կողմից Բայազետի բարբառային խոսքը, հայտնվելով մեկ այլ, օրինակ Դիադինի բարբառի միջավայրում, ժամանակի ընթացքում ազդվել է այդ բարբառից: Մեր դիտարկումներով Վարդենիսի տարածաշրջանի Ակունք գյուղի խոսվածքը, որի բնակիչների նախնիները գաղթել են Բայազետից, զգալիորեն հեռացել է մայր բարբառից: Այստեղ, օրինակ, բացակայում է Բայազետի բարբառի ձայնավորական համակարգի ամենաբնորոշ հատկանիշը՝ շրթնայնացած *ա-ն*, և ընդհակառակը՝ լիարժեքորեն արտահայտվում է Դիադինի բարբառին խիստ բնորոշ մի հատկանիշ՝ ձայնավորների և բաղաձայնների ընդգծված քմայնացումը:

Գավառ քաղաքի, Հացառատ և Արծվաքար թաղամասերի, Մարուխան, Նորատուս, Գանձակ, Կարմիրգյուղ, Ծաղկաշեն, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Հայրավանք, Բերդկունք համայնքների խոսվածքներում Բայազետի բարբառը ներկայանում է անխառն վիճակով, իր բնականոն գործառության ու զարգացման ընթացքում, բայց և որոշակի զուգաձևություններով, հատկանիշների տարբերակային դրսևորումներով:

Խոսվածքային յուրահատկություններ դրսևորվում են ինչպես հնչյունական ու ձևաբանական համակարգերում, այնպես էլ բառապաշարում:

Հնչյունական համակարգում զանազանություններ կան և՛ իրողության արտահայտման աստիճանի, ընդգրկման առումներով, և՛ հնչյունափոխական երևույթների դրսևորման, բառերի հնչյունական ձևավորման տեսանկյուններից: Կան նաև միայն այս կամ այն խոսվածքում նկատվող երևույթներ: Այսպես, *ա*-ի շրթնայնացման աստիճանները տարբեր են Գավառ քաղաքում և Սարուխանում (վերջինում շրթնայնացումն ավելի ընդգծված է)<sup>111</sup>, քմայնացած *ա*-ն ավելի տարածված է Գանձակում և Նորատուսում, քան այլ վայրերում: Գավառում, Ծաղկաշենում, Հացառատում, Նորատուսում *գալ* բայի հրամայականն է *հ'արի*, իսկ Սարուխանում, Լանջաղբյուրում, Գեղարքունիքում՝ *արի*: Հնչյունափոխական իրողությունները դրսևորման յուրահատկություններ ունեն խոսվածքների մեծ մասում: Այսպես, հետնալեզվային բաղաձայնների քմայնացում նկատվում է միայն Գանձակում և Նորատուսում: Միայն Նորատուսում և Հայրավանքում է, ե, ի և *ւ* ձայնավորներից առաջ *գ, կ, ք* հետնալեզվայինների դիմաց առկա են *ջ, ճ, չ* հպաշփականներ, միայն Գավառում և Կարմիրգյուղում փոխառյալ բառերում *ու*-ի դիմաց կա *ի՝ քիֆուսի, մինսիթ, շիշու*: Հնչյունական ձևավորման տարբերությունների այլ օրինակներ. *գ ըլօխկօնձի* (Սարուխան), *գըլըխկօնձի* (Ծաղկաշեն), *գըլխակօնձի* (Հացառատ), *գըլխըկօնձի* (Գանձակ). *օղոռթ* (Սարուխան), *օղառթ* (Գավառ, Ծաղկաշեն), *կօլթուղ* (Սարուխան) - *կօլթօղ* (Հայրա-

<sup>111</sup> Բայագետի բարբառում շրթնայնացած *ւ* ձայնավորի դրսևորումների մասին տե՛ս նաև՝ Վ. Կատվայան, «Ա» ձայնավորի դրսևորումները Բայագետի բարբառում և «Աճառյանի օրենքը», Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2012, 2, էջ 48 - 64:

վանք). *խօնթխընթալ* (Սարուխան) - *խօտխըտալ* (Հայրավանք), Նորատուս և Հայրավանք՝ *բա* - մյուսները՝ *բւ*. *վէղրօ* կամ *վէրօ* (Սարուխան) - *վէղըր* (Արծվաքար) և այլն:

Ձգալի են տարբերությունները ձևաբանական համակարգում: Այդպիսիք վերաբերում են և՛ անվանական (հոգնակերտ մասնիկներ, սեռականի ձևավորում, դերանվան կարճ ու երկար ձևեր), և՛ բայական (բայի կազմություն, խոնարհիչներ) համակարգերին: Այս դեպքում գերակշռում են երևույթի առանձնակի դրսևորումները: Օրինակ, Գավառում *ւնֆուօ* բառի հոգնակին է *ւնֆուօք*, մյուս համայնքներում՝ *ւնֆուօներ*. *տիք* հոգնակերտը հատուկ է միայն Նորատուսին. բոլոր խոսվածքներում *քեզ* ձևի դիմաց կա նաև *քե*, Սարուխանում, Լանջաղբյուրում և Ծաղկաշենում՝ նաև *մեզ, ձեզ* ձևերի դիմաց՝ *մե, ձ է*. Գավառում և Հացառատում *ուվ*-ի դիմաց ունենք *վոն*, իսկ մյուսներում՝ *վորը*. *կօ* հաստատական մասնիկ գիտեն միայն Սարուխանը, Լանջաղբյուրը և Գեղարքունիքը. ներկայի հիմքում *ն* ածանցի անկումը հատուկ է հիմնականում Լանջաղբյուրին (*հըլեմ, գըթեմ, խաքեմ, հիչեմ*), մասամբ՝ Սարուխանին (*հընգեմ, մըտեմ*). մյուս խոսվածքների *հիշկալ, կըռվել* բայերի դիմաց Գավառում գործառում են *հիշկել, կըռվալ* ձևերը: Չայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը *յ*-ով են կազմում խոսվածքների մեծ մասը (Սարուխան, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Հացառատ, Նորատուս՝ *Կնրօյ, Աննայ, կօֆէյ*), մինչդեռ Գավառում հանդես է գալիս *ի* հոլովիչը՝ *Կնրօյի, Աննայի, կօֆէյի*: Յուրահատուկ կազմություն է հանդիպում Նորատուսում և Հայրավանքում հոգնակի ստացականության իմաստով՝ *վոտը մե, ձ էքը մե* (մեր ոտքերը, մեր ձեռքերը): Նորատուսում երբեմն որոշիչ հոդը բառիմաստի տարբերակման դեր է ստացել՝ *դոր ես էթում* (ուր ես գնում) - *դորն ես էթում* (ինչպես ես գնում):

Առավել ցայտուն են բառապաշարային տարբերությունները: Կան բառեր, որոնք հատուկ են առանձին խոսվածքների, ինչպես,

օրինակ. Մարուխան՝ *կնվառ, օգնողօգիկ* (մողես), Գավառ՝ *երկունմնտ* (եղան), *կրվաս* (կաղամբով և գազարով թթու). Նորատուս՝ *խընօցի, գովըկ* (մեծ ձագար), *մղմասօրիկ* (ատամահատիկ), *կըլըմբօտիկ* (գլուխկոնծի). Ծաղկաշեն՝ *կեսավուր* (կեսօր). Գանձակ՝ *կունարկ* (բասմա). Հացառատ՝ *պրտավոր* (զատիկ). Հայրավանք՝ *անան* (տատիկ). Արծվաքար՝ *մղընջուկ* (եղինջ), կան բառեր էլ, որ հանդես են գալիս երկու և ավելի խոսվածքներում, ինչպես, օրինակ, Գավառ, Արծվաքար՝ *տմքոց-դ ողոց* (տենդ), *կըտուր*. Հացառատ, Ծաղկաշեն՝ *ըոցկնայ* (խուրձ). Մարուխան, Ծաղկաշեն՝ *տաննիս* (տանիք). Գավառ, Հացառատ՝ *մխայ*. Մարուխան, Հացառատ, Նորատուս՝ *յեղըռձիկ* (եղինջ): Կան նաև բառիմաստի տարբերություններ: Օրինակ՝ Գավառ քաղաքում *մուղթուղա* բառը նշանակում է *ճաշի խյուս*, մյուսներում՝ *խորիզ*. Նորատուսում և Հայրավանքում *հողա* բառը նշանակում է *գուլ*, այլ խոսվածքներում՝ *գոմում առանձնացված տեղ՝ նստելու համար*. խոսվածքների մեծ մասում *հախսպուր*-ը բնական աղբյուրն է, իսկ Հացառատում, Ծաղկաշենում՝ նաև *ծորակը*: Կան նաև բառակազմական յուրահատկություններ: Օրինակ՝ խոսվածքների մեծ մասում բաղիյուսական բարդությունները կազմվում են *ու շաղկապով՝ տուն ու տեղ, դուռ ու դուս, խաց ու պանիր*, մինչդեռ Գավառում շաղկապի փոխարեն հնչում է *ը* (*տունըտեղ, դուռըդուս, խացըպանիր*):

Խոսվածքները բարբառի ներսում որոշակի ընդհանրություններով կազմում են խմբեր. ա) Գավառ, Հացառատ, Կարմիրգյուղ և Արծվաքար, բ) Մարուխան, Լանջաղբյուր և Գեղարքունիք, գ) Նորատուս և Հայրավանք, դ) Գանձակ և Ծաղկաշեն: Այս խմբավորումը պայմանավորված է համայնքների բնակիչների ծագման յուրահատկություններով: Այսպես, առաջին խմբի խոսվածքները կրողների նախնիները եկել են Բայազետ քաղաքից և հարակից գյուղերից, երկրորդ խմբինը՝ հիմնականում Բայազետի գավառի Ջանգիգոր և Մուրբ Օհան գյուղերից, երրորդ խմբինը՝ Արծափի Քորուն և Մոսուն գյուղերից, չորրորդ խմբինը՝ Խոյից,

Մալմաստից և Բայազետից<sup>112</sup>: Ուշագրավ է, որ երրորդ և չորրորդ խմբերի խոսվածքներում իրենց զգացնել են տալիս ենթաշերտային իրողություններ (հատկապես հնչյունական համակարգում և բառապաշարում, երբեմն նաև քերականական համակարգում): Նշենք նաև, որ երբեմն այս կամ այն խոսվածքում նկատելի է բարբառային այլ միավորի ազդեցություն: Այսպես, Մարուխանի խոսվածքում հանդիպում են կապերի նախադաս գործածությամբ քարացած ձևեր (Բայազետի բարբառին հատուկ է համապատասխան կապերի հետադաս գործածությունը), ինչպես՝ *վըր վըզի, դուռ վըր դըռան, խըտ գ'ալը* (գալուն պես), որոնք ակնհայտորեն Մշո բարբառի ազդեցության հետևանք են:

Նկատելի է, որ խոսվածքները սովորաբար տարբերվում են բարբառային ընդհանուր հատկանիշների դրսևորման յուրահատկություններով և բառապաշարային իրողություններով: Բարբառի շրջանակում խոսվածքները տարբերակվում են նաև մեկ տասնյակի չհասնող բարբառային հատկանիշներով, ընդ որում՝ որևէ խոսվածքի հատուկ են նման հատկանիշներից առավելագույնը չորսը կամ հինգը:

<sup>112</sup> Տե՛ս նաև Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 7-9:

## ԳԼՈՒԽ 1.3.

ԴԻԱԴԻՆԻ ԲԱՐԲԱՐԱՆԵՎ ԳԱՆՁԱԿԻ ՄԻՋԲԱՐԲԱՆՈՐ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

## Ա. Դիադինի բարբառը

Դիադինի բարբառի բնօրրանը՝ Դիադինի գավառակը, Բայազետի գավառի կազմում էր: Դիադին քաղաքը գտնվում էր Արածանիի վերին հոսանքի աջ ափին, Բայազետից մոտ 38 կմ դեպի արևմուտք՝ Օադկանց լեռների արևելյան փեշերին: 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Դիադինի բնակչությունը գաղթում է Արևելյան Հայաստան և հիմնականում բնակչություն հաստատում Սևանի ափին՝ Բասարգեչար գյուղում (այժմ՝ Վարդենիս քաղաք)<sup>113</sup>:

Հ.Աճառյանը Դիադինը համարում է Վանի ենթաբարբառ՝ բերելով մի շարք ընդհանրություններ, ինչպես՝ *գ.կ.ք*-ի քմայնացում, *հ*-ի դիմաց *խ*-ի առկայություն, *ե,ռ* - ի երկբարբառային արտասանություն, *ալ*-ի դիմաց *է* - ի դրսևորում, բացառականի *ից* - ով ձև և այլն: Նշում է նաև Դիադինի մի շարք յուրահատկություններ, ինչպես՝ Վանի *խ*-ի դիմաց *ու* ձայնավորի գործածություն, ձայնեղ բաղաձայնների առկայություն, էական բայի եզակի երրորդ դեմքի *ա*<sup>114</sup>: Աճառյանը նկատում է նաև, որ Վանի երեք (Դիադին, Մոկք և Ոզմի) ենթաբարբառներից Դիադինը ավելի մոտ է գրական լեզվին<sup>115</sup>: Բարբառային այս միավորը առանձին բարբառ է համարել Ա.Ղարիբյանը, որի կարծիքով Աճառյանի նշած փաստերից իսկ երևում է, որ «այդ խոսվածքն իսկական բարբառ է և ոչ ենթա-

<sup>113</sup>Տե՛ս Թ.Հակոբյան, Պատմական Հայաստանի քաղաքները, Ե., 1987, էջ 107-108, ինչպես նաև՝ Հ.Աճառեան, Հայ բարբառագիտություն, էջ 140, 145-146:

<sup>114</sup>Տե՛ս Հ.Աճառեան, նշվ. աշխ., էջ 146:

<sup>115</sup>Տե՛ս Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 340:

բարբառ»<sup>116</sup>: Լեզվաբանը բերում է այս խոսվածքը Վանի բարբառից գատող 11 հատկանիշ (եռաստիճան բաղաձայնական համակարգ, օժանդակ բայի 3-րդ դեմքի *ա* ձև, *ուկ*-ով հարակատար դերբայ, Ու հոլովում հոգնակիում, բացառականի և՛ *էն*, և՛ *ից* վերջավորություններ, տարբերություններ դերանունների հոլովման մեջ և այլն), ինչպես նաև 4 ընդհանրություններ (*հ*-ի դիմաց *խ* հնչյուն, *գ.կ.ք*-ի քմայնացում, *ռ,ե*-ի երկբարբառային արտասանություն, օժանդակ բայի անցյալի ձևերի *է*-ի սղում) և եզրակացնում է, որ ենթաբարբառ համարված այս խոսվածքը սկզբունքային հատկությունների մի ամբողջ խմբով տարբերվում է և՛ Վանի, և՛ մյուս բարբառներից ու «պետք է այդ ենթաբարբառ կոչվածը համարենք միանգամայն *անկախ բարբառ*, անվանելով այն *Դիադինի բարբառ*»<sup>117</sup>: Հետևելով Հ.Աճառյանին՝ Դիադինը Վանի ենթաբարբառ է համարում նաև Ա.Գրիգորյանը<sup>118</sup>, սակայն Գ.Ջահուկյանը այն իբրև առանձին բարբառ Վանի բարբառի հետ ընդգրկում է արևմտյան խմբակցության Վանի կամ հարավային միջբարբառախմբում<sup>119</sup>: Դիադինի բարբառի մասին ընդհանուր տեղեկություններ տալիս է Ռ.Բաղդամյանը իր «Հայերեն բարբառներ (Սևանա լճի ավազանի խոսվածքները)» աշխատանքում<sup>120</sup>: Բարբառի մասին տեղեկություններ կարելի է քաղել Վ.Խաչատրյանի «Վարդենիսի (Դիադինի) բարբառը» գրքից<sup>121</sup>:

Իր այժմյան բնօրրանում՝ Վարդենիս քաղաքում, Դիադինի բարբառը ներկայանում է բավականին հստակորեն պահպանված բարբառային հատկանիշներով և դրանց յուրահատուկ փնջով: Բարբառի բառակազմում ձայնեղների դիմաց գործածվում են *բ*, *գ*, *դ*, *ձ*, *ջ* շնչեղ ձայնեղներ: Դիադինի բարբառում շնչեղ ձայնեղներ

<sup>116</sup>Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 91:

<sup>117</sup>Նշվ. աշխ., էջ 91-92:

<sup>118</sup>Տե՛ս Ա.Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 314:

<sup>119</sup>Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 134-135:

<sup>120</sup>Տե՛ս Ռ.Բաղդամյան, նշվ. աշխ., էջ 116-134:

<sup>121</sup>Վ.Խաչատրյան, Վարդենիսի (Դիադինի) բարբառը, Ե., 2004:

դիտարկել է Ա.Ղարիբյանը<sup>122</sup>, սակայն Հ.Մուրադյանը, հիշատակելով նաև Ռ.Բաղրամյանի տեսակետը<sup>123</sup>, կարծում է, որ «այստեղ ձայնեղները ունեն ձայնեղի և խուլի միջին արտասանություն և փաստորեն ներկայանում են որպես միջին օղակ՝ դեպի Վասպուրականի ձայնեղագուրկ բարբառների բաղաձայնական համակարգը»<sup>124</sup>: Դիադինի բարբառային խոսքի մեր դիտարկումներից ելնելով՝ փաստում ենք, որ այդ բարբառի ձայնեղները մյուս վայրերի շնչեղ ձայնեղներից առանձնանում են շնչեղության ավելի թույլ աստիճանով: Դիտարկվող բարբառի բառամիջում ու բառավերջում նախնական ձայնեղների դիմաց որպես կանոն առկա են շնչեղ խուլեր, իսկ նախնական խուլ հպականների ու հպաշփականների դիմաց առկա են նույն կարգի հնչյուններ (*շապիկ, շիտակ, կարկուտ, անիծել, խավիծ, կոճ*)<sup>125</sup>: Բառամիջում ու բառավերջում ապաշնչեղացում թերևս կատարվում է հարևան բաղաձայնների ազդեցությամբ (միտք > *միտկ*, պետք > *պետկ*, գաղթական > *գախտական*, թուղթ > *թուխտ*, յաղթել > *հ' ախտել*, թթխմոր > *թրխտրմոր*, խօսք > *խօսկ*, հրաշք > *հրրաշկ*, շարժք > *ժւշկ*, անեծք > *անէծկ*, աչք > *հւշկ*, մեղք > *մեխկ*, քաղցր > *քւիսծրր*): Դիադինի բարբառի բաղաձայնական համակարգի էական հատկանիշ է *գ, կ, ք* հետնալեզվայինների քմայնացումը<sup>126</sup>, որը հիմնականում պայմանավորված չէ փոխազդեցական գործոններով (*քւնի, քընել, խելք*)<sup>127</sup>: Բարբառում երբեմն նախաբաղաձայնական դիրքում

<sup>122</sup> А.Гарибян, Об армянском консонантизме, ВЯ, 1959, N 5, էջ 83-84.

<sup>123</sup> Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 121-122:

<sup>124</sup> Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 283:

<sup>125</sup> Տե՛ս նաև ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում պահվող՝ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով լրացված թիվ 8 տետրը:

<sup>126</sup> Ըստ Հ.Մուրադյանի՝ քմային *գ, կ, ք* պայթականները «առավելապես հատուկ են եզրային բարբառներին և խիստ տարածված են Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի և հարակից բարբառներում» (Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 310):

<sup>127</sup> Ինչպես նկատում է Հ.Մուրադյանը, «Բառասկզբի ք-ի ուժեղ ու արտահայտված քմայնացում կա Վանի, Մոկսի, Դիադինի և հարակից այլ վայրերի բարբառներում,

տեղի է ունենում հպաշփականների շփականացում (*օշուտ, էրթնակ, օրօկըտալ, լրպըգտրալ /լպրծտիլ/, հ'ւնշկ, ճաշնալ, միշնեկ, մեշկ, փրորշտալ*)<sup>128</sup>: Բառամիջի կամ բառավերջի դիրքերում *հ*-ի դիմաց որոշ դեպքերում հանդես է գալիս *յ* ձայնորդ (դահլիճ > *այլիճ*, թագուհի > *թաքույի*, շահ > *շայ*, ջահել > *ջւյել*)<sup>129</sup>: Դիադինի բարբառում հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է հավելական ձայնեղ շունչ (*հ'ւնգւնճ, հ'ւնխպուր, հ'ըմէն, հ'ւնշկ*)<sup>130</sup>: Այս բարբառին հատուկ է հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ*-ի գործածությունը<sup>131</sup> (*հայ > խայ*, հասանել > *խասնել*, հիւանդ > *խիվանդ*, ջրօրհներ > *ջըրօխներ*, պահել > *պախել*, մահ > *մախ*, գոեհ > *գըռեխ*): Փոխառություններում բառասկզբի *դ*-ի դիմաց Դիադինի բարբառն ունի հայերենի համար ոչ սովորական կոկորդային *կ* բաղաձայն (դալմադալ > *կալմակալ*, դայիշ > *կւյիշ*, Ղազար > *Կւնգար*)<sup>132</sup>:

Բարբառային հայերենում հին երկբարբառների դիմաց որպես կանոն գործառում են ձայնավոր հնչյուններ: Այսպես, հայտնի

րում, որոնց մեջ ք-ի քմայնացումը չի պայմանավորված տվյալ բաղաձայնին հաջորդող ձայնավորի բնույթով» (Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 311-312):

<sup>128</sup> Տե՛ս նաև Վ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 44:

<sup>129</sup> Տե՛ս Վ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 147-150, նաև Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով լրացված թիվ 8 տետր:

<sup>130</sup> Նկատվել է, որ ձայնեղ *հ*'-ի հավելումը հատուկ է Արարատյան, Կարնո, Մշո, Բայազետի և այլ բարբառներին (տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 315):

<sup>131</sup> Բարբառային այս հատկանիշը ընդգրկում է խիստ որոշակի տարածք: Ինչպես նշում է Հ.Մուրադյանը, «Նրա սահմանները անցնում են Ոզմ, Մոկս, Շատախ, Վան, Ուրմիա, Մարաղա, Թավրիզ, Սալմաստ, Խոյ, Մակու, Բայազետ, Դիադին, Մանակլերտ բնակավայրերով և այնուհետև Վանա լճի հյուսիս-արևմտյան ծովեզրով ձգվում դեպի հարավ՝ ներառնելով Արճեշ, Արծկե, Խլաթ, Բաղեշ բնակավայրերը» (տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 264), իսկ Գ.Ջահուկյանը գրում է, որ «...երևույթը տարածված է հատկապես Վասպուրականում և Պարսկահայրում» (տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 267):

<sup>132</sup> Վ.Խաչատրյանը «Վարդենիսի բարբառը» աշխատանքում (էջ 48) Դիադինի համար արձանագրում է *հ*, սակայն մեր դիտարկումները ցույց են տալիս, որ այստեղ առկա է *կ* հնչյուն:

է, որ այ-ի դիմաց արևմտյան բարբառներում սովորաբար հանդես է գալիս *ա*, իսկ արևելյան բարբառների մեծ մասում՝ *է*<sup>133</sup>: Դիադինի բարբառը, ինչպես և Հայաստանի Հանրապետության տարածքում գործառող արևմտյան մյուս բարբառները, այս հատկանիշով հիմնականում հարում է արևելյան բարբառներին՝ հանդես բերելով այ *~է* համապատասխանություն (այծ>էծ, հայր>խւր, կայծակ>կէծակ): Բարբառային այս միավորում հինհայերենյան *խ* երկբարբառի դիմաց սովորաբար առկա է *ու* (խր>ուր, ալիւր>ալուր, սին>սուն, եղբայրութիւն>ախպրություն), երբեմն՝ *ե* (իւղ>յեղ, գիւղ>գէղ) կամ *ի* (հարիւր>խսրիւր, կիւրակի>կիրակի): Դիադինի բնորոշ հատկանիշներից են նաև *ե,ո* երկբարբառային հնչյունների առկայությունը և դրա հետ կապված՝ օրինաչափորեն միավանկ բառերի սկզբնային *ե*-ից առաջ *յ*-ի և *ո*-ից առաջ շրթնային տարրի հավելումը: Դիադինի բարբառում քմային *ւ* հանդես է գալիս օրինաչափորեն՝ համաձայն «Աճառյանի օրենքի»:

Ինչպես հայտնի է, հայերենի շատ բարբառների հատուկ է բազմավանկ բառերի նախաշեշտ վանկի ձայնավորի սղումը, որ սկիզբ է առել դեռևս միջինհայերենյան շրջանում<sup>134</sup>: Դիադինի բարբառում նման հնչյունափոխության դեպքեր առավելաբար դիտարկվում են *ա*-ի դեպքում, բայց կան նաև մյուս ձայնավորների փոփոխության դեպքեր ևս (ակնատ > *ակնաթ*, հարսանիք > *խասւրնիս*, ոսկերիչ > *օսկըրիչ*, ածելի > *առծըլի*, թիթեռնիկ > *թիթըռնեկ*, տանտիկին > *տանդըկին*, սովորել > *սօվրել*, ժողովել > *ձողվել*)<sup>135</sup>: Բարբառում բառավերջի *ք*-ն *ն* հնչյունից առաջ երբեմն դառնում է *յ*՝ *սըղէյներ*, *իրէյնոց*:

Դիադինի բարբառը բնութագրվում է մի շարք քերականական յուրահատկություններով: Բարբառում *եր*, *ներ* վերջավորություններից բացի գործածական են նաև *անք*, *վանք*, *րանք*,

<sup>133</sup>Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 155:

<sup>134</sup>Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 86-87:

<sup>135</sup>Տե՛ս նաև Վ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 24-30:

*տիք* հոգնակերտներ՝ *ձիյանք*, *իշվանք*, *գիլվանք*, *գեղրանք*, *կողրանք*, *տէքըրտիք*, *խընամտիք*: Բարբառը զուգորդում է բացառականի կազմության երկու եղանակները՝ *ց*-ով ձևերի գերակայությամբ ունենալով նաև *է*-ով ձևեր: Այստեղ պահպանվել է հինհայերենյան համակարգին բնորոշ՝ տեղանունների *ա*-ով բացառականի ձևը: Շատ գոյականներ եզակի թվում և գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման: Դիադինի բարբառում որոշիչ միակ հոդն է *ն*՝ *շունըն խատալ*: Հատուկ անձնանունները կարող են գործածվել առանց որոշիչ հոդի՝ *Վաթթան քէրեց*: Անորոշ *մէ* հոդը գործածվում է միայն նախադաս՝ *մէ մառթ, մէ տուն*: Անձնական դերանունների տրականում առկա է *ի* հավելված՝ *ընձի*, *քէգի*, *մէգի*: Ցուցական դերանունների թեք հոլովներում տեղի է ունենում *տ* (*ղ*)-ի հավելում՝ *ըստոր, ըստու, ընդոր*: Հարցահարաբերական *ուլ* դերանվան իմաստը արտահայտվում է *վոն* (*վի*, *վին*) ձևով: Դիադինի բարբառը ներկայացնում է հիմնականում Կը ճյուղին բնորոշ բայական հատկանիշներ ևս: Այստեղ պատճառական ածանցի դերում դրսևորվում են *ցուց* և *ուց* մասնիկները՝ *նըստըցուցել*, *խաքուցել*: Դիադինի բարբառում բայը հիմնականում ունի Ե և Ա խոնարհումներ, սակայն այստեղ պետք է ընդունել նաև Ու խոնարհման առկայությունը, որը դրսևորվում է պատճառական բայերի խոնարհման դեպքում, ինչպես՝ *կօ կը նըստըցում, նըստըցուցի, նըստըցում, նըստըցու*: Ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ են դրսևորվում անցյալ կատարյալի, ըղձական ապառնու և եզակի հրամայականի ձևերում. *գըրի*, *նըստա*, *հախտըվա* (անցյալ կատարյալ), *գըրա*, *նըստի*, *հախտըվի* (ըղձական ապառնի և դրանից կազմվող ձևեր), *գըրա*, *նըստի*, *հախտըվի* (եզակի հրամայական): Հարակատար դերբայն ունի *ուկ* վերջավորություն *յերքուկ*, *գացուկ*, վաղակատարը՝ *եր* վերջավորություն *յերքեր*, *գացեր*: Դիադինի բարբառը ապառնի դերբայ չունի: Օժանդակ բայի ձևերն են՝ *եմ*, *ես*, *ա*, *ենք*, *էք*, *են* և *ի*, *իր*, *եր*, *ինք*, *իք*, *ին*: Ե խոնարհման պարզ, բազմապատկական ածանց ունեցող բայերի անցյալ կատարյալը կազմվում է և՛ ոչ ցոյական, և՛ ցոյական հիմքերով: Բարբառում ներկայի

ձևը *կօ* մասնիկի հետ արտահայտում է շարունակական ներկայի իմաստ՝ *կօ կը գրբեւ*: Միավանկ *գալ, տալ, լալ* բայերի ներկան կազմվում է *գ ու կամ կու* մասնիկով<sup>136</sup>:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ Դիադինի բարբառը Գեղարքունիքի մարզում դրսևորվում է մեկ՝ Վարդենիսի խոսվածքով, որի ընդհանուր բնութագիրը ներկայացվում է սույն աշխատության երկրորդ մասում:

#### Բ. Գանձակի միջբարբառը Գեղարքունիքի մարզում

Ռ.Բաղրամյանի վկայությամբ՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանում (նախկինում՝ Կարմիրի շրջան) գործածվում է Գանձակի միջբարբառը<sup>137</sup>: Հայերենի այս դրսևորման վերաբերյալ հետազոտությունները համեմատաբար քիչ են: Հ.Աճառյանը Ղարաբաղի բարբառի շրջանակում խոսում է Գանձակի և Ղազախի ենթաբարբառների մասին: Նշվում է, որ Գանձակի ենթաբարբառը շատ մոտ է Ղարաբաղի մայր բարբառին, միայն թե պարունակում է նրանից ավելի մաքուր, այսինքն՝ հին լեզվին մոտ ձևեր: Մասնավորապես՝ էական բայի ձևերն են *եւ, էս, էնք* և այլն, *ի* ձայնը մնում է անփոփոխ, հինհայերենյան *ն* վերջնահնչյունի դիմաց առկա է *ք* և այլն<sup>138</sup>: Ինչ վերաբերում է Ղազախի ենթաբարբառին, ապա այն է՛լ ավելի մոտ է Երևանին: Այստեղ բացառականն ունի *ից* վերջավորություն, անցյալ դերբայը ձևավորվում է *էլ* մասնիկով, գործում է շեշտից առաջ ձայնավորի անկման օրենքը, հարկադրականի եղանակիչի ձևերը համառոտված են՝ *դեւ, դէս, դէն* և այլն<sup>139</sup>: Աճառյանը բերում է նաև Ղազախի և Գանձակի ենթաբարբառներով նմուշներ՝ դրանք քաղած լինելով հրապարակված նյութերից<sup>140</sup>: Ա.Ղարիբյանը նկատում է, որ Գանձակի խոսվածքը, լինելով Ղարաբաղի բարբառի ենթաբարբառ, նրանից ունի տարբերություններ (ձայնավորների սղման և հնչյունափոխության նվազում, *ական* վերջավորությամբ դերբայի բացակայություն, օժանդակ բայերի նմանություն Արարատյան բարբառին և այլն), որոնք խոսվածքը մոտեցնում են Արարատյան բար-

<sup>136</sup> Տե՛ս Վ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 99-100:

<sup>137</sup> Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 3:

<sup>138</sup> Տե՛ս Հ.Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 70:

<sup>139</sup> Նույն տեղում:

<sup>140</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 73-75:

բառին<sup>141</sup>: Ավելին, Գանձակից դեպի արևմուտք Արարատյան բարբառի գծերն ուժեղանում են, «Շամշադինի և Դիլիջանի խոսվածքների մեջ գերակշիռ տեղ բռնում են Արարատյան բարբառի գծերը (ձևաբանությամբ դրանք նման են Երևանին, իսկ տեղաշարժով՝ Ղարաբաղին)»<sup>142</sup>: Ըստ հայերենի բարբառների Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման՝ արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբում առանձնանում է Ղազախ-Կիրովաբադի միջբարբառը, որն ընդգրկում է Թովուզը, Ղազախը և Կիրովաբադը<sup>143</sup>: Բարբառային այս միավորը, ըստ Գ.Ջահուկյանի դասակարգման աղյուսակների, բնութագրվում է բաղաձայնական հետևյալ հատկանիշներով. ձայնեղ պայթականների և հպաշփականների դիմաց բառակազմում առկա են խուլեր, բառամիջում ու բառավերջում՝ շնչեղ խուլեր, գործածվում են քմայնացած հետնալեզվայիններ, բառակազմի ձայնավորից առաջ առկա է հավելական շունչ, ցուցական դերանունների միջձայնավորային *ը*-ի դիմաց՝ *հ*: Չայնավորական համակարգի համար բնութագրական է *ույ*, *յու* երկհնչյունների դիմաց ոչ շրթնային ձայնավորի (*ի*) առկայությունը, բացակայում են երկբարբառները, միավանկ բառերի սկզբում առկա է *ն*-ից առաջ շրթնային տարրի և *ե*-ից առաջ՝ *յ*-ի հավելում: Առկա են քմայնացած ձայնավորներ (*ü*, *ö*, *ni*), շեշտակիր *ն*-ի ապաշրթնայնացածություն, նախավերջավանկային շեշտակրություն, *ը*-ից տարբեր խառը ձայնավորներ: Անվանական քերականական բնորոշ հատկանիշներից են *նի*, *անի* և դրանցով բաղադրված հոգնակերտների, *ան*՝ հոգնակերտի առկայությունը, (*ն*)եր-ով հոգնակիի Ի հոլովման ենթարկվելը, *ց*-ով բացառականը, *ուս*-ով ներգոյականը, ցուցական դերանունների թեք հոլովաձևերում հավելական *տ, դ* հնչյունների առկայությունը և այլն: Միջբարբառի բայական համակարգի համար բնութագրական են *ուս*-ով ներ-

<sup>141</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 235:

<sup>142</sup> Նույն տեղում:

<sup>143</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 136:

կան, օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա*-ով ձևը և անցյալ անկատարի երկձայնավոր ձևերի մեջ *է*-ի սղումը, *պիտի* եղանակիչի առաջին վանկի սղումը, ժխտական մասնիկների հետադաս գործածությունը, գրաբարատիպ անցյալ անկատարը և այլն<sup>144</sup>:

Խնդրո առարկա բարբառային միավորի առավել ամբողջական ուսումնասիրությունը թերևս Բ.Մեծունցի «Շամշադին-Դիլիջանի խոսվածքը» աշխատությունն է<sup>145</sup>: Ըստ հեղինակի՝ Շամշադին-Դիլիջանի խոսվածքն ընդգրկում է Շամշադինի (այժմ՝ Տավուշ), Իջևանի, Դիլիջանի և Կրասնոսելսկի (այժմ՝ Ճամբարակ) շրջանները<sup>146</sup>: Փաստվում է, որ այս խոսվածքով խոսող հայերը երկու հիմնական շերտ են կազմում՝ բնիկներ և Արցախի գավառներից տեղափոխվածներ: Այդ է պատճառը, որ խոսվածքը դրսևորում է երկվություն. մի խումբ հատկանիշներով այն հարազատ է Արարատյան բարբառին, իսկ այլ հատկանիշներով նույնանում է Ղարաբաղի բարբառին<sup>147</sup>: Գործածելով հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման սկզբունքները՝ Բ.Մեծունցը հանգում է այն եզրակացության, որ Շամշադին-Դիլիջանի տարածքի հայերի խոսակցական լեզուն իր տարբերակիչ հատկանիշների քանակով առանձնանում է որպես մի խոսվածք, և քանի որ այդ կարգի հատկանիշների համարյա միևնույն քանակով այն հետանում է թե՛ Արարատյան և թե՛ Ղարաբաղի բարբառից, ուստի այդ միավորը կարելի է կոչել «միջին խոսվածք»<sup>148</sup>: Աշխատության մեջ քննության առնելով խոսվածքի հնչյունական և ձևաբանական առանձնահատկություններն ու բառային կազմը՝ հեղինակը ներկայացնում է նաև բարբառային խոսքի նմուշներ Ճամբարակի տարածաշրջանի գյուղերի (Նոր Բաշքենդ, Թթուջուր, Ներքին

<sup>144</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 61, 80, 98, 118:

<sup>145</sup> Բ.Մեծունց, Շամշադին-Դիլիջանի խոսվածքը, Ե., 1989:

<sup>146</sup> Տե՛ս նշվ. աշխատ., էջ 3:

<sup>147</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 4:

<sup>148</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 9:

Ճամբարակ, Վերին Ճամբարակ, Օրջոնիկիձե, Հին Բաշքենդ) խոսվածքով<sup>149</sup>:

Գանձակի միջբարբառի՝ Հին Բաշգյուղի խոսվածքի ընդհանուր բնութագիրը ներկայացրել է Ռ.Բաղդրամյանը<sup>150</sup>: Հետազոտողը նշում է, որ Կարսի վարչական շրջանում (այժմ՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջան), բացի Մարտունի գյուղից, մյուս բոլոր հայաբնակ գյուղերում խոսվում է միօրինակ խոսվածքով: Լեզվաբանի վկայությամբ՝ հին բաշգյուղցիների նախնիները Ղարաբաղի մեղիքությունների ժամանակաշրջանի տեղափոխվածներ են: 1790-ական թվականներին է հիմնվել Վերին Ճամբարակ գյուղը, Նոր Բաշգյուղը հիմնվել է 1922թ., ընդ որում՝ բնակիչները եկել են Հին Բաշգյուղից, և խոսվածքն էլ նույնն է: Նույն ծագումն ունեն նաև Օրջոնիկիձե (այժմ՝ Վահան) գյուղի բնակիչները: Ներքին Ճամբարակի բնակիչները եկել են Շամշադինի (այժմ՝ Տավուշի տարածաշրջան) Չորաթան և շրջակա գյուղերից, սրանց խոսվածքը նույնանում է մյուս գյուղերի խոսվածքներին: Տարածաշրջանում տարբեր խոսվածք ունի միայն Մարտունի գյուղը, որի բնակիչների նախնիները եկել են Կարսից, Վանից, Արդահանից, Մուշից և Բասենից: Ի վերջո, Ռ.Բաղդրամյանը արձանագրում է, որ Ճամբարակի տարածաշրջանում գործածական է երկու հիմնական խոսվածք՝ Բաշքենդի և Մարտունու<sup>151</sup>:

Ռ.Բաղդրամյանը, ներկայացնելով Հին Բաշգյուղի խոսվածքը<sup>152</sup>, արձանագրում է քմայնացած *ü, ö, ni* ձայնավորների (հատկապես խլացած հպականներից ու հպաշփականներից հետո) և *q, k, p* բաղաձայնների առկայությունը (*qürթուն, k'örut, dön, k'niթան, q'irraq'h, p'hrել*), երկբարբառների բացակայությունը, նախաշեշտ վանկում ձայնավորների անկումը (*ըղաչանք, ըղողել, ըղարկել, ըրուգուն*), միավանկ բառերի սկզբում *n*-ի դիմաց *վէ*-ի և

<sup>149</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 174-182:

<sup>150</sup> Տե՛ս Ռ.Բաղդրամյան, նշվ. աշխ., էջ 178-194:

<sup>151</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 6:

<sup>152</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 178-187:

է-ի դիմաց՝ *յէ*-ի առկայությունը (*վէտ>ոտն, վէրց>որձ, յէփ, յէզ*), ձայնավորական մասնավոր մի շարք փոփոխություններ (*պէժինք, սըվերել, կակող, արկաթ* և այլն), *իւ*-ի և *ոյ*-ի դիմաց *ի*-ի առկայությունը (*ալիր, քիր*): Արձանագրվում է, որ ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց բառասկզբում առկա են խուլեր (*պան, պորթ, կէտ, տանշտ, ծեռ, ճաղաց* և այլն), բառամիջում ու բառավերջում՝ շնչեղ խուլեր: Անվանական քերականական բնորոշ հատկանիշներից են *եր, ներ* մասնիկներից բացի հոգնակերտ մի շարք այլ վերջավորությունների (*նի, էնի, ան, ք, տինք, իք, անիք, էրք*) առկայությունը, Ի հոլովման գերակայությունը, Ոջ հոլովմամբ միայն *տեր* բառի հոլովումը (*տոիրոնեյ*), Տ հոլովման յուրօրինակ դրսևորումները (*տըքերտինք - տըքերտունց, կնանիք - կնանունց, ըխճկերք - ըխճկերանց*), դերանունների ուղիղ և թեք ձևերի յուրահատկությունները (*ընձանի/ց, մըզանով, քըզանի/ց, տոն, քու, ծըզանից, իրան //ուրան, սան, տան, նան, սրան, նրանի/ց, օվ, ում, վեր, վերի, ընչի/խի, լօխ* և այլն): Բայական բնորոշ հատկանիշներից են *ոււ*-ով անկատար (*ասում, ուտում*, միաժամանակ՝ *կանի/ս, տալիս*), *ական*-ով ապառնի (*ըսլական, ընլական*), *էլ*-ով վաղակատար (*պիրել, թլացել*), *ած*-ով հարակատար (*խըսացած, մացած, փախած*), *իլ*-ով և *ալ*-ով ժխտական (*ասիլ, կանլ*) դերբայները, օժանդակ բայի *եւ, էս, ա, էնք, էք, էն, չեւ, չէս, չի, չենք, չէք, չեն* և *ի, իր, էր, ինք, իք, ին, չի, չիր, չեր, չինք, չիք, չին* ձևերը: Խոսվածքում անցյալ անկատարի իմաստը կարող է արտահայտվել նաև ըղձական ապառնու ձևերով (*ըսի, ըսիր, ասեր, ըսինք, ըսիք, ըսին*): Անցյալ կատարյալը սովորաբար կազմվում է անցյալի հիմքով (*ըսեցի, սիրեցի*): Ըղձական անցյալի ապառնու իմաստը սովորաբար արտահայտվում է վաղակատար անցյալի ձևերով (*վեր յէս հաց ի կերել* – որ ես հաց ուտեի): Հարկադրական եղանակի ժամանակաձևերը կազմվում են հետադաս գործածվող և խոնարհված (*ըրդեւ, ըրդէս, ըրդի, ըրդի, ըրդիր, ըրդեր* ձևերով (*ասիլ դէս*): Գործածական են նաև *պէտկա* եղանակիչով կազ-

մություններ (*պէտկա ուտէս*): Ժխտական խոնարհման դեպքում վերլուծական ժամանակաձևերի օժանդակ բայերը և արգելական հրամայականի *մի* և *միք* մասնիկները ունեն հետադաս կիրառություն (*ասում չէմ, ասում չէր, թլանալ մի, պի՛րիլ միք*): Խոսվածքում բայն ունի պատճառական *ցն* (*կօրցնել*) և բաղադրական *չ* (*փախճել*) ածանցներ: Ռ.Բաղրամյանը ևս բերում է բարբառային խոսքի նմուշներ ճամբարակի տարածաշրջանի գյուղերի (Հին Բաշգյուղ, Նոր Բաշգյուղ, Օրջոնիկիձե, Վերին ճամբարակ, Թթուջուր, Մարտունի) խոսվածքով<sup>153</sup>:

Դիտարկվող բարբառային միավորի ճամբարակի և Վահանի խոսվածքների ընդհանուր բնութագրերը ներկայացվում են աշխատության երկրորդ մասում:

## ԳԼՈՒԽ 1.4.

ՄԱԿՈՒԻ ԵՎ ԱՐԾԱՓԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԸ<sup>154</sup>  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

## Ա. Մակուի խոսվածքը Գեղարքունիքի մարզում

«Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ Հ.Աճառյանը Խոյի բարբառի տարածման վայրերը ներկայացնելիս նշում է, որ Պարսկաստանի մեջ այն ընդգրկում է Խոյի, Մալմաստի և Մակուի գավառները<sup>155</sup>: Մակայն «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ արդեն Աճառյանը Մակուի խոսվածքը ընդգրկում է Բայազետի բարբառային միավորի կազմում՝ գրելով. «Բայազետի ենթաբարբառը պարունակում է Հին-Բայազետ քաղաքը Արևմտահայաստանում, Կաղզվան, Մակու (Պարսկահայաստանում) և Նոր-Բայազետ՝ Սևանի լճի եզերքը, իր 10 գյուղերով, որոնք Հին-Բայազետի գաղութ են»<sup>156</sup>: Ա.Ղարիբյանը Մակուի խոսվածքը չի հիշատակում, սակայն հավանաբար նկատի ունի Հրազդանի տարածաշրջանում այդ խոսվածքի դրսևորումները, երբ գրում է. «Ախտայի շրջանի խոսվածքները կազմում են նույնպիսի անցումային օղակ Արարատյան բարբառից դեպի Բայազետի ենթաբարբառը»<sup>157</sup>: Ռ.Բաղրամյանը Մակուի բարբառային միավորը համարում է Արարատյան բարբառի ենթաբարբառ Բայազետի, Նորատուսի և Արծափի ենթաբարբառների հետ<sup>158</sup>: Բարբառագետը վկայում է, որ Սևանի տարածաշրջանի մոտ տասը գյուղում «խոսվում է Մակվի ենթաբարբառով, որը, սակայն, միօրինակ չէ»<sup>159</sup>: Նկա-

<sup>154</sup> Գեղարքունիքի մարզում, մասամբ նաև այլ տարածաշրջաններում գործառույ այս խոսվածքները դեռևս ինչպես հարկն է ուսումնասիրված չեն:

<sup>155</sup> Տե՛ս Հ.Աճառեան, նշվ. աշխ., էջ 288:

<sup>156</sup> Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Ե., 1951, էջ 329:

<sup>157</sup> Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 87:

<sup>158</sup> Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 3:

<sup>159</sup> Նշվ. աշխ., էջ 10:

<sup>153</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 187-194:

տենք նաև, որ Գեղամավան գյուղի խոսվածքին անդրադարձել է Ռ.Սաղաթեյանը՝ այն համարելով Արարատյան և Մուշի, Ուրմիայի, Նոր Բայազետի բարբառների խառնուրդով առաջացած մի յուրօրինակ խոսվածք և չհիշատակելով Մակուի խոսվածքը<sup>160</sup>: Այսպիսով, Մակուի բարբառային միավորի վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ, որոնք հիմնականում փաստական նյութով կամ հետազոտություններով հիմնավորված չեն, բարբառային հայերենի այդ դրսևորումը որևէ կերպ ներկայացված չէ Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակներում, և փաստորեն նրա դիրքը հայ բարբառների շարքում վերջնականապես ճշգրտված չէ<sup>161</sup>:

Ինչևէ, Ռ.Բաղրամյանը, փաստելով, որ Մակուի «ենթաբարբառը չի ուսումնասիրված. գիտական տառադարձությամբ նմուշներ էլ չկան»<sup>162</sup>, Սևանի տարածաշրջանի խոսվածքների հետազոտության արդյունքում նկարագրել է Մակուի խոսվածքի հնչյունաքերականական հիմնական հատկանիշները<sup>163</sup>, որոնք հիմք ընդունելով էլ՝ կներկայացնենք այդ խոսվածքի ընդհանուր բնութագիրը:

Մակուի խոսվածքի ձայնավորներն են՝ *ա, մ, մ, է, ի, ու, օ, ը*: Քմային *մ*՝ ձայնավորը հանդիպում է փոխառյալ բառերում, նաև հայերեն որոշ բառերում՝ հիմնականում առանց որևէ օրինակափոխության, ինչպես՝ *մինսկ, հ մշկ, գմտիկ, դ մտ, ժմծք* և այլն: Ըստ

<sup>160</sup> Տե՛ս Ռ.Սաղաթեյան, Գեղամավանի խոսվածքը և նրա դիրքը «ում» և «կը» ճյուղերի բարբառների միջև, Բանբեր Երևանի համալսարանի, Ե., 2002, 3, էջ 154-158, Ռ.Սաղաթեյան, Տեղաշարժեր Գեղամավանի խոսվածքում, Հայագիտական հանդես, Ե., 2017, 2, էջ 35-46:

<sup>161</sup> Մակուից եկածների (հիմնականում 1829-1830թթ. կազմակերպված գաղթի ընթացքում) սերունդներով բնակեցված են տարբեր բնակավայրեր նաև Աբովյանի, Հրազդանի և այլ տարածաշրջաններում: Թերևս Մակուի խոսվածքի առկա բոլոր դրսևորումների ուսումնասիրության դեպքում հնարավոր կլինի որոշել բարբառային այս միավորի հիմնական հատկանիշները, փոխհարաբերությունները այլ բարբառների հետ և դիրքը հայերենի բարբառների շարքում:

<sup>162</sup> Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 93:

<sup>163</sup> Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 93-115:

Ռ.Բաղրամյանի՝ *մ*-ն «Բայազետին ու Վանին էլ հատուկ կոկորդային *ա է*»<sup>164</sup>: Խոսվածքն ունի *է, ռ* երկբարբառային հնչյուններ:

Մակուի խոսվածքն ունի շնչեղ ձայնեղ բաղաձայններ, որոնք գործառում են միայն բառասկզբում՝ *բ ըննել, գ օսէշ, դ անակ, ձ անի, ջ անթել*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ տեղի է ունեցել ձայնեղ հազագի հավելում՝ *հ անգաջ, հ ուրիշ, հ անտ*: Բառամիջում և բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց, բացառությամբ որոշ դիրքերի, խոսվածքն ունի շնչեղ խուլեր, ինչպես՝ *սուրփ, յերք, բ անց, վեռչ, գ քթաթ, ձ իք, օթ, օց, խափել* և այլն: Հետնալեզվային պայթականները առաջին շարքի ձայնավորներից առաջ քմայնանում են (*գ իշեր, կ իստ, ք լրթել*), որոշ դեպքերում էլ՝ վերածվում հպաշփականի՝ *ջ իշեր* (գիշեր), *ճ էս* (կես), *չ էնի* (քենի), *չիթ* (քիթ): Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *մէշկ, հ իշնել*: Ինչպես վկայում է Ռ.Բաղրամյանը, Մակուի Սևանի ավազանում դրսևորվող խոսվածքների մեծ մասում *հ*-ի դիմաց առկա է *խ՝ ախ, խազալ, խամբրել, խավ, խերու* և այլն<sup>165</sup>:

Խոսվածքին բնորոշ են նաև երկբարբառների պարզեցումը (*էծ, ալուր, լուս, գ էղ*), ձայնավորների անկումը բազմավանկ բառերի նախաշեշտ վանկերում (*չարչրանք, պարտկել, սորվել, օլրել, յեռուն*), բառասկզբում երկբարբառային ձայնավորից առաջ բաղաձայնական տարրի հավելումը (*յեփ, յերք, վոտ, վոռց*):

*Եր, ներ* հոգնակերտներից բացի, խոսվածքում գործառում են սահմանափակ տարածում ունեցող այլ հոգնակերտներ ևս՝ *ք, իք, անիք, էրք, դանք, անք, բանք (ք էնիք, մարթիք, կրնանիք, տրդերք, ախպըրդանք, ձ իանք, գ էղրանք)*:

Մակուի խոսվածքը ներգոյական հոլով չունի, հոլովական այդ իմաստն արտահայտվում է հայցական հոլովով կամ սեռականով և *մէջ* կապով: Սեռական և տրական հոլովները տարբերվում են որոշիչ հոդի գործածությամբ, հայցական հոլովը իրի

<sup>164</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 93:

<sup>165</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 98:

առման դեպքում նման է ուղղականին, իսկ անձի առման դեպքում՝ տրականին, սովորական են բացառականի *g*-ով ձևերը, բայց գործածվում են նաև *t*-ով ձևեր:

Խոսվածքում գոյականների մեծ մասը ենթարկվում է Ի հոլովման, մյուս հոլովումների ենթարկվում են առանձին բառախմբեր: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը (*տիրոջ*): Յ հոլովման են ենթարկվում ոչ միայն *էնք*, *ոնք* մասնիկներով, այլ նաև *իք* - ով ավարտվող բառերը՝ *Մընացէնց*, *քեռոնց*, *կընանիքոց*, *Թիֆլիսցոնց*: Չայնավորով ավարտվող անձնանունների սեռակաւնը ձևավորվում է *j*-ով՝ *Բաղէյ*, *պապէյ*, *աղէյ*, *Կարոյ*:

Մակուի խոսվածքն ունի *ը* և *ն* որոշիչ հոդեր, որոնք գործածվում են ուղղական, տրական և հայցական հոլովներում: Երբեմն կարող է դրսևորվել հոդի կրկնակի կիրառություն՝ *ձ ինք*, *կունք*: Ռ.Բաղրամյանը վկայում է, որ որոշյալ գոյականը կարող է նաև անհոդ գործածվել<sup>166</sup>: Անորոշ հոդը ունի նախադաս կիրառություն: Ստացականությունը դրսևորվում է *ս*, *տ* հոդերով, որոնք կարող են դրվել բոլոր հոլովների վրա:

Անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի տրական հոլովի ձևերը Մակուի խոսվածքում ունեն *ի* կամ *իկ* հավելված (*ընձի/կ*, *թեզի/չեզի*, *մեզի* և այլն), գործածվում է նաև *քե* կարճ ձևը: Ցուցական դերանուններն ունեն պարզ և հավելվածավոր կազմության ձևեր՝ *էս*, *էսի*, *էտ*, *էտի*, *էն*, *էնի*, որոնց թեք հոլովաձևերից են՝ *ըստա*, *ըստու*, *ըստրա*, *ըտա*, *ըտու*, *ըտրան*, *ընդա*, *ընդրու*, *ընդու*, *ըստուց*, *ըտուց*, *ընդուց* և այլն: Իբրև անձերին վերաբերող հարցահարաբերական դերանուն հանդես են գալիս *վոր* և *վոն* ձևերը՝ *վի*, *վին*, *վիր*, *վորի*, *վիրնից*, *վիրնով* թեք ձևերով:

Բայն ունի Ե և Ա խոնարհումներ: Ներկա ժամանակը կազմվում է *ում*//*ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով՝ *ասըմ*//*ասում* *եմ*: Խոսվածքն ապառնի դերբայ չունի: Վաղակատար դեր-

բայն ունի *p*-ով վերջավորություն՝ *տըվէր*, *ասէր*, հարակատարի վերջավորությունն է *ուկ մացուկ*, *տարուկ*: Խոսվածքն ունի պատճառական *ցըն* ածանց (*վէրացընէլ*, *կէրցընէլ*): Օժանդակ բայի ձևերն են՝ *եմ*, *ես*, *ա*, *ենք*//*ենքք*, *էք*//*էքք*, *են* և *ի*, *իր*, *էր*, *ինք*//*ինքք*, *իք*, *ին*: Թերևս տրամաբանական շեշտն ընդգծելու մղումով՝ օժանդակ բայը երբեմն կրկնվում է՝ *Նոր եմ բ' էրէր եմ*: Ենթադրական եղանակի ձևերը կազմվում են *կ(ը)* եղանակիչով, հարկադրականի եղանակիչն է *պըտի*//*բըդի*:

Գեղարքունիքի մարզում Մակուի խոսվածքը գործածական է Գեղամավան, Դոմաշեն, Զովաբեր, Լճաշեն, Ծաղկունք, Նորաշեն, Չկալովկա, Վարսեր բնակավայրերում, Սևան քաղաքի որոշ թաղամասերում<sup>167</sup>: Մեր դիտարկումներով՝ ներկայում բոլոր բնակավայրերին բնորոշ հնչյունական հատկանիշներից են քմայնացած *ա* ձայնավորի գործածությունը փոխառյալ և բնիկ որոշ բառերում, միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ից և *t*-ից առաջ բաղաձայնական տարրի (համապատասխանաբար *վ* և *յ*) առկայությունը, իսկ բազմավանկ բառերի սկզբում *n*-ի, *t*-ի դիմաց *o* և *է* ձայնավորների գործածությունը, *է, n* երկբարբառային հնչյունների առկայությունը, բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը, բառամիջում և բառավերջում ձայնեղների դիմաց շնչեղ խուլերի գործածությունը, բառասկզբում ձայնավորից առաջ ձայնեղ հագագի հավելումը, փոխառյալ բառերի սկզբում *n*-ի դիմաց *կ*-ի կամ *կ'*-ի առկայությունը: Բոլոր խոսվածքներն ունեն վերջնավանկային շեշտ:

Դիտարկվող խոսվածքների համար ընդհանուր քերականական իրողություններից են՝ *եր*, *ներ* հոգնակերտների հետ նաև այլ հոգնակերտների գործածությունը, բացառական հոլովի ձևավորումը *g*-ով, ներգոյական հոլովի բացակայությունը և դրա իմաստի արտահայտումը հայցականով, ինչպես նաև սեռականով և *մեջ* կապով, անձնական դերանվան տրական հոլովի ձևերում հավելական *ի* հնչյունի առկայությունը, վաղակատար դերբայի ձևավոր-

<sup>166</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 103:

<sup>167</sup> Այս մասին տե՛ս նաև Ռ.Բաղրամյան, նշվ.աշխ., էջ 9-11:

րույնը *ր*-ով, օժանդակ բայի *ես, ես, ա, ենք, էք, են* և *ի, իր, էր, ինք, իք, ին* հաստատական, *չես, չես, չի, չենք, չէք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին* ժխտական ձևերի առկայությունը, պատճառականի *ցըն* անանցի գործածությունը, բայական *չ* անանցի բացակայությունը և այլն:

Մի շարք հատկանիշներ էլ տարածված են խոսվածքների մեծ մասում: Այսպես, Գեղամավանի, Դրմաշենի, Ջովաբերի, Լճաշենի, Նորաշենի, Չկալովկայի, Վարսերի խոսվածքները բառակզբում ունեն շնչեղ ձայնեղներ, մինչդեռ Ծաղկունքի խոսվածքը ներկայացնում է խառը պատկեր, երբ հին բառաշերտում ավելի հաճախ գործածվում են ձայնեղներ, բայց և երբեմն գործառում են շնչեղ ձայնեղներ: Գեղամավանից բացի դիտարկվող բոլոր խոսվածքներում բառամիջում ու բառավերջում խուլերի դիմաց ձայնեղներ հանդես են գալիս երբեմն, մինչդեռ Գեղամավանի խոսվածքում այդ իրողությունը օրինաչափ է: Գեղամավանի, Լճաշենի, Նորաշենի, Չկալովկայի և Վարսերի խոսվածքներում բաղաձայնից առաջ հպաշփականը վերածվում է շփականի, իսկ Ջովաբերի և Ծաղկունքի խոսվածքներում այս իրողությունը թեև հանդիպում է, բայց օրինաչափ չէ: Բոլոր խոսվածքներն ունեն *ու* վերջավորությամբ անկատար դերբայ, բայց Ջովաբերի և Ծաղկունքի խոսվածքներում անկատարը զուգահեռաբար ունենում է նաև *ը* վերջավորություն, Գեղամավանի խոսվածքում անկատարը ավելի հաճախ ձևավորվում է *ը* մասնիկով: Անցյալ կատարյալի ձևերը թե՛ անցյալի, թե՛ ներկայի հիմքերից են կազմվում Դրմաշենի, Ջովաբերի, Ծաղկունքի, Նորաշենի, Չկալովկայի, Վարսերի խոսվածքներում, առավելաբար անցյալի հիմքից են ձևավորվում Գեղամավանի խոսվածքում, սովորաբար ներկայի հիմքից Լճաշենի խոսվածքում: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են *գ՛աց, մաց*, միայն Ջովաբերի խոսվածքում սովորական են *գ՛ընաց, մընաց* հիմքերը:

Մի շարք իրողություններ դիտարկվել են խոսվածքների փոքր խմբում կամ առանձին խոսվածքներում: Այսպես, բառի ա-

ռաջին վանկում որոշակիորեն շրթնայնացած *ա* ձայնավոր դրսևորվում է Դրմաշենի, Ջովաբերի, Լճաշենի, Չկալովկայի խոսվածքներում: Բառամիջում և բառավերջում շնչեղ խուլերի ապաշնչեղացում առկա է միայն Գեղամավանում: Հետնալեզվային պայթականների քմայնացում դիտարկվում է Ջովաբերում և Լճաշենում, իսկ առաջին շարքի ձայնավորներից առաջ *գ,կ,ք>ջ,ճ,չ* անցում՝ Գեղամավանում և Դրմաշենում: Հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ* ունեն Դրմաշենը, Ջովաբերը, Լճաշենը, Նորաշենը, Չկալովկան և Վարսերը, *հ*-ի դիմաց *հ* ունեն Գեղամավանը և Ծաղկունքը: Բառակզբում *հո*-ի դիմաց *ֆո* ունի Ծաղկունքը: Բաղիյուսական հարադրություններում *ու* շաղկապի դիմաց *ը* է հանդիպում Գեղամավանում և Ջովաբերում: Գեղամավանում, Դրմաշենում, Նորաշենում, Չկալովկայում արձանագրվել է հատուկ տեղանունների հոլովում Ա հոլովիչով, ձայնավորով ավարտվող անձնանունների սեռական հոլովը *յ*-ով է ձևավորվում Դրմաշենի, Ծաղկունքի, Նորաշենի, Չկալովկայի խոսվածքներում: Դրմաշենում և Վարսերում հանդիպում են բացառականի նաև *է*-ով ձևեր: Գեղամավանի և Ծաղկունքի խոսվածքներում ներգոյական հոլովի իմաստը հաճախ արտահայտվում է տրական հոլովով: Գեղամավանում և Լճաշենում գործածվում են անձնական դերանունների տրական հոլովի նաև *իկ*-ով ձևեր, Լճաշենում՝ նաև կրճատ *քե* ձև: *Ով* դերանվան դիմաց Գեղամավանը, Դրմաշենը, Ջովաբերը, Չկալովկան և Վարսերը ունեն *վորը* ձևը (սեռ. և տր.՝ *վիր, վիրը*), Լճաշենն ունի *վոն* ձև (սեռ. և տր.՝ *վիր, վին*), *օվ* ձև ունեն Ծաղկունքը (սեռ. և տր.՝ *ու*) և Նորաշենը (սեռ. և տր.՝ *վիր, վիրը/վինը*): Հարակատար դերբայը *ուկ* վերջավորությամբ է ձևավորվում Դրմաշենի, Լճաշենի, Նորաշենի, Չկալովկայի և Վարսերի խոսվածքներում, *աձ* վերջավորությամբ՝ Գեղամավանում, *ած*-ով՝ Ջովաբերում և Ծաղկունքում: Նորաշենի խոսվածքում *չ* ժխտական մասնիկը կարող է դրվել դերբայի վրա: Գեղամավանում և Դրմաշենում *ն* բայածանցը երբեմն բացակայում է ներկայի հիմքից կազմվող ձևերում: Ջովաբերի խոսվածքում գործածվում է *կօ* հաստատական մասնիկը, իսկ Լճաշենի խոսվածքում հոգնակի ստացակա-

նությունը կարող է արտահայտվել անձնական դերանվան տրական հոլովաձևի հետադաս կիրառությամբ:

Միավորվելով ընդհանուր շատ հատկանիշներով՝ դիտարկվող խոսվածքները, այսպիսով, հանդես են բերում նաև զգալի առանձնահատկություններ: Նկատելի է, որ որոշակիորեն մերձավոր են Գեղամավանի և Ծաղկունքի խոսվածքները<sup>168</sup>՝ մյուսներից տարբերվելով իրենց համար ընդհանուր էական այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են հինհայերենյան *h*-ի դիմաց *h*-ի առկայությունը, ներգոյական հոլովի իմաստի արտահայտությունը տրական հոլովով, հարակատար դերբայի *աձ//աժ* վերջավորությունը: Մյուս կողմից թերևս պետք է արձանագրել, որ բոլոր բնակավայրերն էլ, ըստ բնակիչների ծագումնաբանության, ներկայացնում են որոշակիորեն խառը պատկեր, և այս կամ այն հատկանիշը կարող է ենթաշերտային իրողություն լինել: Օրինակ, Գեղամավանի խոսվածքում բառամիջի և բառավերջի դիրքերում շնչեղ խուլերի դիմաց պարզ խուլերի, ինչպես նաև նույն դիրքերում պարզ խուլերի դիմաց ձայնեղների գործածությունը պետք է համարել Ալաշկերտի շերտի ազդեցություն: Գեղամավանի, Ծաղկունքի և Զովաբերի խոսվածքներում հարակատար դերբայի ձևավորումը *աձ//աժ* մասնիկով թերևս կարող է Խոյի բարբառի ազդեցության հետևանք լինել: Դրմաշենի, Զովաբերի, Լճաշենի, Չկալովկայի խոսվածքներում շրթնայնացած *ա* ձայնավորի դրսևորումները ամենայն հավանականությամբ Վանի կամ Բայազետի բարբառների ենթաշերտի առկայությունն են վկայում: Առաջին շարքի ձայնավորներից առաջ հետևալեզվային պայթականների քմայնացման երևույթը Զովաբերի խոսվածքում պետք է պայմա-

<sup>168</sup> Ի դեպ, Ռ.Բաղրամյանը, նկատելով, որ Սևանի տարածաշրջանի տասը գյուղում խոսվում է Մակվի ենթաբարբառով, սակայն առկա են որոշակի ներքին տարբերություններ, նույն խմբում է ընդգրկում Գեղամավանի և Ծաղկունքի խոսվածքները՝ հիմք ընդունելով դրանց մյուս խոսվածքներից տարբերվող հետևյալ հատկանիշները. հինհայերենյան *h*-ի դիմաց նույն հնչյունի առկայություն, անկատարի *ըմ* վերջավորության գործածություն, առաջին շարքի ձայնավորներից առաջ *գ, կ, ք > ջ, ճ, չ* անցում (տե՛ս նշվ. աշխ., էջ 10-11):

նավորել Վանի, իսկ Լճաշենի խոսվածքում՝ Դիադինի ենթաշերտերի առկայությամբ: Վերլուծական կազմության դեպքում ժխտական մասնիկի՝ դերբայի վրա դրվելու հատկանիշը Նորաշենի խոսվածքին կարող է անցած լինել Սշո բարբառից և այլն:

### Բ. Արծափի խոսվածքի ընդհանուր բնութագիրը

Արծափ գյուղը 19-րդ դարի վերջերին մտնում էր Էրզրումի նահանգի Բայազետի գավառի մեջ: 1828-1829 թթ. շատ արծափ-ցիներ գաղթում և բնակություն են հաստատում Սևանի ավազանի Չիրուխլու (այժմ՝ Ծովագյուղ) և Թայչարուխ (այժմ՝ Մեղրաձոր) գյուղերում: 1909թ. Արծափն ուներ 120 տուն հայ բնակչություն, 1914 թ. Արծափից գաղթել է 100 հայ ընտանիք<sup>169</sup>: Ըստ Ռ.Բաղրամյանի՝ 1828-1832թթ. Արևմտյան Հայաստանի Արծափ գավառակից տեղահանված հայերի ստվար խումբը հանգրվանել է Սևանա լճի ավազանում, Մարմարիկ գետակի ափերին, Աշտարակի և այլ շրջաններում: Արծափցիների սերունդները մայրենի խոսվածքը անադարտ պահել են «Սևանի շրջանի Ծովագյուղում, Հրազդանի շրջանի Մեղրաձոր, Մաքրավան գյուղերում և Աշտարակի շրջանի Արագյուղում»<sup>170</sup>: Հետազոտողը փաստում է, որ «Ծովագյուղի, Մեղրաձորի, Մաքրավանի ու Արագյուղի խոսվածքները կազմում են կուռ միասնություն, որը շատ կետերում ընդհանուր լինելով Հին Բայազետի բարբառի հետ, վեր է հանում որոշ յուրահատկություններ, որոնք իրավունք են վերապահում արծափցիների խոսվածքը համարելու Արարատյան բարբառի ենթաբարբառ»<sup>171</sup>: Ռ.Բաղրամյանը Արծափի խոսվածքին բնորոշ տարբերակիչ հատկանիշներ է համարում ըղձականի անցյալի ապառնու յուրահատուկ կազմությունը (երբ իբրև հիմք ընդունվում է այդ ժամանակի եզակի երրորդ դեմքի ձևը և դրա վրա ավելացվում են դիմային վերջավորություններ), բառամիջի և բառավերջի ձայնեղների և շնչեղ խուլերի խլացումը և նույն դիրքերում խուլերի ձայնեղա-

<sup>169</sup> Տե՛ս Թ.Հակոբյան, Ստ.Մելիք-Բախչյան, Հ.Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Ե., 1986, հ.1, էջ 448:

<sup>170</sup> Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 69-70:

<sup>171</sup> Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 70:

ցումը, առաջին շարքի ձայնավորներից առաջ *գ, կ, ք > ջ, ճ, չ* անցումը և այլն<sup>172</sup>:

Ինչպես նկատում է լեզվաբանը, «Արծափի ենթաբարբառով գիտական տառադարձությամբ նմուշներ չկան: Մա հայ բարբառագիտությանն անհայտ խոսվածքներից է»<sup>173</sup>: Ռ.Բաղրամյանը իր ուսումնասիրությունը կատարել է Սևանի տարածաշրջանի Ծովագյուղի և Հրազդանի տարածաշրջանի Մեղրաձորի խոսվածքների հիման վրա<sup>174</sup>, ներկայացրել է բարբառային խոսքի նմուշներ<sup>175</sup>:

Արծափի խոսվածքի ձայնավորական համակարգը<sup>176</sup> բնութագրվում է ընդհանուրհայերենյան հնչյուններից բացի նաև *ü, և<sup>h</sup>* հնչյունների առկայությամբ: Սրանցից առաջինը նույնանում է բարբառային այլ միավորների համապատասխան հնչյունի հետ և հանդես է գալիս փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում: Երկրորդը, ըստ Ռ.Բաղրամյանի, ներկայացնում է *ա* և *է* ձայնավորների միջին աստիճանի հնչումը<sup>177</sup>: Խոսվածքում գործածական են *է, ո* երկբարբառային հնչյունները, որոնցից վերջինը, ըստ Ռ.Բաղրամյանի, ունի *օժ* հնչում<sup>178</sup>: Խոսվածքում առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ, բառակերպի ձայնավորներից առաջ դրսևորվող ձայնեղ հազագ: Հետնալեզվային պայթականները առաջին շարքի ձայնավորներից առաջ որոշ չափով քմայնանում են, նաև վերածվում հպաշփականների՝ *ճէս > կէս, ճիսաղ > կիսատ, չիտ > քիթ, չէնի > քենի*: Փոխառյալ բառերում դրսևորվում է *կ* օտար հնչյուն, որը, ըստ Ռ.Բաղրամյանի, խիստ կոկորդային հնչում ունի և

<sup>172</sup> Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 70:

<sup>173</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 70-71:

<sup>174</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 69-86:

<sup>175</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 87-92:

<sup>176</sup> Գրքի այս հատվածում Արծափի խոսվածքի ընդհանուր հատկանիշները ներկայացնում ենք՝ հիմք ունենալով Ռ.Բաղրամյանի ուսումնասիրությունը:

<sup>177</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 71:

<sup>178</sup> Տե՛ս նույն տեղում:

ներկայացնում է *կղ* կամ *ղկ* միահնչումը<sup>179</sup>: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի անկումը (*հասունիկ, մարկրիդ, գ՛ողնալ, կոժգեղ*): Միավանկ բառերի սկզբում *ե*-ից առաջ առկա է *յ*-ի հավելում՝ *յեպ, յեզ, իսկ ո*-ից առաջ՝ *վ*-ի հավելում՝ *վոռպ, վոռծ*: Բազմավանկ բառերի սկզբում *ե*-ի և *ո*-ի դիմաց հանդես են գալիս *է* և *օ* (*էրգանկ, էտալ, օրօճալ, օխճար*): Բառամիջում ու բառավերջում ձայնեղ և շնչեղ խուլ հպականների ու հպաշփականների դիմաց առկա են խուլեր (*խսպել, մառտ, անօտի, կարկել, թուկ, խուռծ, թած, թըռճել, հառէճ, կանանճ*), նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ (*աբրանկ, կողբես, հըբառդ, խախտդ, բարեգամ, խավիճ, կարիջ*): Բաղաձայնից առաջ հպաշփականները վերածվում են շփականների՝ *կոժգել, հեզնել, ծասկել*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է հավելյական ձայնեղ հազագ՝ *հ՛ախպուր, հառդ, հ՛ընդանիկ, հ՛օտտում, հ՛էրես*: Սակավ բառերում *հ*-ի դիմաց առկա է *խ՛ խոդ, խազալ*: Բառասկզբի *հո*-ի դիմաց հանդես է գալիս *ֆո՛ ֆոդ>հոտ, ֆոր>հոր*:

Խոսվածքում, *եր, ներ* հոգնակերտներից բացի, գործածվում են նաև սահմանափակ տարածում ունեցող մի շարք այլ հոգնակերտներ՝ *կ* (*գիհիկ, փեսեկ*), *անկ* (*ձիանկ*), *երկ* (*տըղերկ*), *անիկ* (*կընանիկ*), *դանկ* (*քըվորդանկ, տեկըրդանկ*), *վանկ* (*տիրվանկ*): Արծափի խոսվածքը ներգոյական հոլով չունի, այդ հոլովի իմաստն արտահայտվում է հայցականով, սեռականով և *մեջ* կապով, նաև տրականով (*դ՛աշտին քաղվոր կա*): Ոչ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը, *մառտիկ, կընանիկ* ձևերի սեռականներն են *մառտիկոնծ, կընանիկոնծ*: Ձայնավորով ավարտվող անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *աղէյ, Մաքօյ*: Բացառականը ունենում է ծ(g)-ով վերջավորություն՝ *ձըվիծ, օրիծ*: Անձնական դերանունները տրականում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*: *էս, էտ, էն* դերանունների սեռականի ձևերն են *ըստու, ըտու, ընդու*: Ով դերանվան դիմաց առկա է *վոլ*,

<sup>179</sup> Տե՛ս նույն տեղում:

որի թեք ձևերն են՝ *ուս, ուսը, ուսիժ, ուսօլ*: *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալըմ, լալըմ, տալըմ*: *Գալ* բայի ապառնու ձևերը կազմվում են *գու* մասնիկով՝ *գուգ՛ամ// գուկամ, գուկաս, գուգ՛ա//գուկա, գուկանկ, գուկակ, գուկան*: Օժանդակ բայի ձևերն են՝ *ես, ես, է՛, ենկ, էկ, էն և ի, իր, էր, ինկ, իկ, ին*: Սրանց ժխտականներն են՝ *չեմ, չես, չե՞, չենկ, չեկ, չեն և չի, չիր, չէր, չինկ, չիկ, չին*: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն, հարակատարը՝ *աճ, ուզ* վերջավորություններ: Խոսվածքում բայն ունի Ա, Ե, Ի խոնարհումներ: Յուրահատուկ կազմություն ունեն ըղձական եղանակի անցյալ ժամանակի ձևերը (նաև ենթադրական ու հարկադրական անցյալների ձևերը), որոնց համար իբրև հիմք հանդես է գալիս եզակի երրորդ դեմքը՝ ստանալով համապատասխան դիմային վերջավորություններ՝ *էտերի, էտերիր, էտեր, էտերինկ, էտերիկ, էտերին*: Պատճառական ածանցն է *ծըն* (ցըն)՝ *փախծընել*: Հարկադրականը կազմվում է *պըղի* եղանակիչով:

Արծափի բարբառային միավորը Գեղարքունիքի մարզում դրսևորվում է մեկ՝ Ծովագյուղի խոսվածքով, որի ընդհանուր բնութագիրը ներկայացվում է սույն գրքի երկրորդ մասում:

## ՄԱՍ 2.

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ  
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԵՎ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ  
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

## ԳՆՈՒՆ 2.1.

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ  
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

**ԱԶԱՏ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Աղքիլիսա: Մինչև 1988թ. գյուղը եղել է աղբբեջանաբնակ, ներկայում այստեղ բնակվում են Աղբբեջանից բռնագաղթած հայեր: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ԱՆՊՐԱՁՈՐ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Վերին Զաղալու: Բնակիչները Սասունից, Մուշից 1915թ. գաղթած հայերի սերունդներն են: Նախկինում այստեղ բնակվել են նաև աղբբեջանցիներ: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Ախպրաձորի խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վօ* և *յե*, ինչպես *վօտ*, *վօրթ*, *յեգ*, *յերք*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *n*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *ե*, ինչպես՝ *օսկօտ*, *օչխար*, *էրինջ*, *էրագ*: Խոսվածքն ունի *ե* երկբարբառային հնչյուն՝ *գ իշեր*, *ձ ըմեռ*: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած *ü* ձայնավոր, ինչպես՝ *թյւյզյւ*, *քյւյսիք*, *գյւրկել*, *ջյւհէլ*, *Քյւվյւն*, *չյւյիր* և այլն: Բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղոււմը՝ *ծիծղալ*, *սօրվել*, *հավքել*: Բաղաձայնական համակարգի հա-

մար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ էրել*, *գ էղ*, *գ իշեր*, *դ ուռ*, *ձ ուկ*, *ձ ըմեռ*, *ջ ուր*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *կարքին*, *անքամ*, *հօրի*, *ընթունել*, *մառթ*, *վեռչ*, *մէչ*, *չօք*, *կառթալ*, *բանցրր* և այլն: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքն ունի *h*, սակավ դեպքերում՝ *խ*, ինչպես՝ *խօղ*, *խօր*: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *h*-ի հավելում, ինչպես *h ավելի*, *h անէչ*, *h էսօր*, *h էքուց*, *h ընգեր*, *h ուշիկ*, *h ուզել*, *h ընչի* և այլն: Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *ղ*, ինչպես՝ *ղագան*, *ղավորմա*, *ղարիք*, *ղըսմաթ*, *ղըստու*: Հպաշփականը բաղաձայնից առաջ կարող է վերածվել շփականի՝ *հաշկ*, *մէշկ*, *բօշկա*, *կըսկըվել*: Շեշտը վերջնավանկային է:

Ընդհանուր հոգնակերտներից<sup>180</sup> բացի՝ գործածական են նաև *ք*, *տանք*, *վանք*, *րանք* մասնիկները, ինչպես *փէսէք*, *ախպրրտանք*, *իշվանք*, *գ իլվանք*, *իծվանք*, *տիրվանք*, *գ էղրանք*, *տեղրանք*: Կին բառի հոգնակիի ձևն է *կընգըթիք*: Հանդիպում են բաղադրյալ հոգնակերտների գործածություններ՝ *էրէխէքներ*, *մառթիկներ*, *տըղէքներ*: Մի շարք անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *բիձու*, *ճրձու*, *գ ըլխու*, *կօվու*, *գ իլու*, *աղվրսու*, *ախչիկներու*, *տըղէքներու*, *գ ըրքերու*, *ճրձերու*, *թըվերու*, *թօններու* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *քըրօջ*, *անէրօջ*, *հ ընգերօջ*, *տիրօջ*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Մարօյ*, *Մաքօյ*, *վէղրօյ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *գ էղից*, *ճրձուց*, կան նաև է վերջավորությամբ քարացած ձևեր՝ *տընէ տուն*, *ղ ընէղ ղ ուռ*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով *մեր* *գ էղ* (մեր գյուղում), *գ էղի մէչ*: Որոշիչ հոդն է *ն-ն*՝ *Հէրըն չօբան ա*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ *Իրա հէր* *գ ընաց*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում

<sup>180</sup> Նկատի ունենք *եր*, *ներ* հոգնակերտները, որոնք գործածական են մարզի բոլոր խոսվածքներում, ուստի և չեն հիշատակվում որևէ խոսվածքի բնութագրում:

են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*, գործածական է նաև *քե* կրճատ ձևը: Երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինք, իրանք*: Ուղիղ դերանվան դիմաց առկա է *վոն*, որի սեռականի և տրականի ձևերն են *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *քու, իրա, իրանց, էս, էսի, էն, էնի, ըսըրա, ընդըրա* (դրա, նրա), *ընդըրանից, ըստեղ, ընդեղ, ըտեղ, հիրար, հուր* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէլնել, կրոնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկյան կազմվում է *գի/կի* մասնիկով՝ *գիքամ, գիլամ, կիտամ*, մյուս բայերինը՝ *կը/կ* մասնիկով՝ *կըխօսամ, կընայեմ, կընրստիմ, կէնէմ*: Միանալով բայասկզբի հագագին *կ*-ն ձայնեղանում է, ինչպես՝ *գընգի, գավքա*: Հարկադրականի եղանակիցն է *պըտի*, ինչպես *պըտի էթան*: Անորոշ դերբայը կարող է արտահայտել ապառնու իմաստ, ինչպես՝ *գացած ախչիկ հուզել*: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն՝ *գացեր* (եմ), *քոցեր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *սարքուկ, քաղուկ, նըստուկ, խըմուկ*: Էական բայի ներկյա ժամանակի ձևերն են՝ *եմ, էս, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին, սրանց* ժխտականներն են՝ *չեմ, չես, չք, չենք, չէք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է առավելաբար ներկայի, նաև անցյալի հիմքերից՝ *գըրինք, տըվինք/տըվէցինք*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գաց, մաց*: Եզակի հրամայականում տարբերվում են ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ՝ *թըրաշա, գըրա, նըստի, կայնի*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *խօր ա կըփօրենք, շատ ա գուզեմ, էնենց ա կցավա, դասն էր կըպատմէր, կաթ էր կիտէր*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է օժանդակ բայի վրա, ինչպես *չեմ տեսե*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի

վրա՝ *չըգըրեմ* (չեմ գրում), *չըբէրեմ* (չեմ բերում): Բայասկզբի հագագին միանալով՝ չ-ն ձայնեղանում է՝ *ջուզեմ, ջընգիս*: Պատճառական ածանցն է *ուց/ցուց մըտուցել, խօցուցել*: Պատճառական բայերի ներկյա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս ու խոնարհիչը՝ *թըրցուս, տեղավօրցո՛ւ, մըտցո՛ւ, մըտո՛ւ*: Խոսվածքը չ բայածանց չունի: Հաճախ ներկայի հիմքից կազմվող ձևերում բացակայում է նաև *ն* ածանցը՝ *առիմ, գէլի, կեղի, գըթին, գիչիմ, գըհասին* և այլն:

Գործածական է *կօ* հաստատական մասնիկը, ինչպես՝ *կօյես քսէցի* (դե էս ասացի):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *հընչի, ճիժ, իմալ, մըկա, քօնձախ, հօլիկ* (շան բույն), *օթաղ, սըրախ, ճար, տանիք, հէթօիկ, հացատուն, թալվա, ըղպէս, տատի, հարնան, հունթ, հառավօտ, հուզընգան, գարնան գըլօխ, խըլըսել, մինչև, դըրկել, խարար, խօրօտ, հիրգուն, քօմել, միրալ, բօռալ, քնսիք, ճարընգան, չըթիկ, կըղէ* և այլն:

**ԱԿՈՒՆԷՔ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Բնակավայրը 1830թ. հիմնել են Հին Բայազետի գավառի Ղարաքենդ գյուղից գաղթածները: 1935թ. գյուղը վերանվանվել է Ակունք (նախկինում՝ Ղըրխբուլաղ, Բազմաղբյուր): Ռ.Բաղրամյանը փաստում է, որ «Ակունքի խոսվածքը նույնն է Կամոյի շրջանի Սարուխան, Գեղարքունիք գյուղերի ու սրանց հարող խոսվածքների հետ»<sup>181</sup>, սակայն դիտարկումները ցույց են տալիս, որ ներկայում գյուղի խոսվածքը զգալիորեն տարբերվում է Բայազետի բարբառից: Չնայած պահպանվել են Ում ճյուղի պատկանելությունը և քերականական հիմնական առանձնահատկությունները, սակայն հատկապես հնչյունական հատկանիշներով խոսվածքը նմանվում է Դիաղիսի բարբառին:

Խոսվածքում բառի տարբեր դիրքերում, նաև բառասկզբի շնչեղ ձայնեղներից հետո հաճախ հանդես է գալիս քմայնացած *սի*,

<sup>181</sup> Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 6:

ինչպես՝ *բ'անի, ձ'անի, աղանթ, քանդի, քանսիր, հառու, քաննի, զանել, օրինակ, քաննան, հանգան, խանրիր, ընդ որում՝ Դիադինի բարբառի համեմատությամբ նկատելի է քմայնացման ավելի թույլ աստիճան: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի և *h*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե՝ վոռց, վոռթ, յեգ, յեփ, բազմավանկ բառերի սկզբում՝ օ* և *է*, ինչպես՝ *օխձան, օչիլ, էրէվալ, էրինջ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *նեղ, ցորեն, սոխ, խրնձոր*: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *կարկըտան, խասկընալ, ավէղրան, խանյի*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ՛ըռնել, բ'ան, գ'ատ, գ'իշեր, դ'ուս, ձ'որ, ձ'անի, ջ'ուր, ջ'օկել*: Բառամիջում ու բառավերջում հպական ու հպաշփական ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *կարքել, խափել, վեռչ, մէշ, բ'անցրր, բ'անց, վոռփ, օքուդ, մառթ*: Նույն դիրքերում երբեմն խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *ավէղրան, պաղըռել, աքրել, կըղրել, կօղրել*: Տարածված է հետնալեզվային բաղաձայնների քմայնացումը առաջին շարքի ձայնավորներից առաջ, ինչպես՝ *պաքել, գ'եղ, գ'ինձ, շանխան, գ'ինի, գ'երան*: Բաղաձայնից առաջ հետնալեզվային պայթականի դիմաց հաճախ առկա է *յ* ձայնորդ՝ *խայնել, սյլոր//անքլօր, պայսել//պաքսել, տայնալ, ճայտի*, բաղաձայնասկիզբ բառից առաջ, նաև բառամիջում բաղաձայնից առաջ տարածված է *նք>յ, նգ>յ* փոփոխությունը՝ *մեյ գ'անցինք* (մենք գնացինք), *քաղիյ բ'երինք* (քաղեցինք բերեցինք), *հըլնեյ դ'ուս* (ելնենք դուրս), *էթայ տուն* (գնանք տուն), *իշվայներ* (իշվանքներ), *յեղըյներ* (եղունգներ): Երբեմն բաղաձայնից առաջ հպաշփականի դիմաց առկա է շփական՝ *հ'աշկ, մէշկ, ծասկել, ճաշնալ, հ'իժնել* (իջնել), *հ'անգրժներ*: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ՝ խանել, ախ, բ'ան, պախել, խող, խանյի, խա, խաց, մախ, սախ-**

*մընել*: Բառասկզբի ձայնավորներից առաջ հաճախ առկա է *հ՝ի* հավելում՝ *հ'եսօր, հ'ուրիշ, հ'առու, հ'անրիք, հ'ըմեն, հ'երէկ, Հ'երէվան, հ'էժան, հ'ախպուր, հ'էվընալ, հ'անցանկ, հ'ընգեր, հ'ատէձ, հ'իմնալ, հ'իժնել* (հ'իճավ): Օտար բառերի բառասկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ*, ինչպես՝ *կ'օշ, կ'ազան, կ'ափաղ, կ'անսոու, կ'օնախ, կ'ըսամթ, կ'օնդախ, կ'ըժալ, կ'անրիք, կ'օնախ, կ'ուշ* (ղուշ): Երբեմն էլ հետնալեզվային պայթականների դիմաց է հնչում կոկորդային կիսաշփական *կ*, ինչպես՝ *կ'անչել, կ'ըչկըչալ* և այլն: Շեշտը վերջնականակային է:

Հոգնակին խոսվածքում կազմվում է նաև *ք, վանք, անք, րանք, տանք, անիք* մասնիկներով՝ *խընամիք, գիլվանք, իշվանք, իծվանք, ձ'իյանք, տեղրանք, քըվըռտանք, ախպրտանք, հընգրտանք, կընանիք//կընթընել*: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *տիրոչ, քրրոչ, անըրոչ, տալոչ, տէքրոչ, կիսրոչ, հընգրրոչ*: Հատուկ տեղանունները կարող են ենթարկվել Ա հոլովման՝ *Հ'երէվնա, Ք'անվնա, Մատոունա, Սէվանա*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով, ինչպես՝ *Կարօյ, Աննայ, Լիպօյ, Տիկօյ, վէղրօյ, աղէյ, պապէյ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *ախպօրից, դ'աշտէրից*, մի շարք դեպքերում՝ նաև *է*-ով, ինչպես՝ *օրվընէ, գ'իշերվընէ, տընէ, սաքախսովընէ*: Ներգոյականը արտահայտվում է հայցական հոլովով, ինչպես նաև սեռականով և *մէշ* կապով՝ *գ'եղըն* (ցյուղում), *ջ'ըրի մէշ*: Որոշյալության իմաստն արտահայտվում է *ն* հոդով՝ *Մառթըն գ'ընաց*, որը միշտ չէ, որ գործառում է, օրինակ՝ *Արմէն ասափ*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի, երբեմն իկ* հավելված՝ *ընձի(կ), քեզի(կ), մեզի(կ), ձ'եզի(կ)*, կան նաև կրճատ ձևեր՝ *քէ, մէ, ձ'է*: Երրորդ դեմքի ուղղականի ձևերն են՝ *հինք, ընդոնք, հ'իրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի, էսա, էտա, էնա*, սրանց թեք հոլովների ձևերից են՝ *ըստու, ըտու, ընդու, ըստոնց, ըտոնց, ընդոնց* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *վոն* ձևը, որի սեռականն է՝ *վի,*

տրականը՝ *վին*: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *քօ, հ իր, հ իրա, հ իրանց, ընդորանք, ընդորանց, էսան, էտան, էնան* (սա, դա, նա), *իմնի, էսենց, էտենց, դսս, դստ, դան, դսսի, դստի, դանի, ըստոնք, ըտոնք, ընդոնք, դոր, դորից, հ ուր, հ ըմէն, հ ըմէն մէկ, հ ըմընի, հ իրսնր* և այլն:

**Գալ, լալ, տալ** բայերի ներկայի ձևերն են *գ'անում, լանում, տալում*: Վաղակատար դերբայն ունի *ք-ով* վերջավորություն՝ *տէ-սէր* (եմ), *բ էրէր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *բ էրուկ, նըստուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, էս, ա, ենք, էք են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին, սրանց ժխտականներն են՝ չեմ, չես, չը, չենք, չէք, չեն և չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքերից՝ *շըլկին//շըլկէցին, բ էրին/բ էրէցին*: **Գնալ, մնալ** բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ աց, մաց*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *խըմա՛, գ ըրա՛, նըստի՛, խասի՛*: Պատճառական ածանցն է *ցըն՝ թըռցընել, խասցընել*: Պատճառական բայերի եզակի հրամայականն ունենում է *ա, նան ու* վերջավորություն՝ *խըմցըրա, խըմցո՛ւ*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր: Գործածական է *կօ* հաստատական մասնիկը՝ *կօ նըստուկ եմ* (դե նստած եմ, էլի):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *կայթ, պուտ, շուք, խօվ, տախտ, ճամբախ, տանիս, հստիք, տիլ, մուխ, փօշի, թուփ* (տերև), *կուտ, պուտուկ, թէշի, ուզընգան, խոզգընի, հսնչկալուսանք, տըղասկան, ճիժ, մառթ, դ ըրկէց, միրավ, մօղօգօրիկ, սյլօր, գըռթան, ձ ու, պուճուճակ, հունթ, թառթափ, հ ընցըցընել, սաբախտան, հ իրկուն, մըռու, պըստիկ, կակուղ, հ իրիշկալ, տըփել, պաճառավոր, բ սնրկ, ժըխշել, խայնել, չուր//չուրի, ջ ոչ, թալվա, սըրախ, թունդիր, փարատիչ, մօծիլ, դսստըխուն, խառնիս, հօլիկ* (շան բույն), *էրինջ, սնն, էրմունգ, ճըմուռ, կէսրէր, հ էքխոդ,*

*մըկա, ջ ախճըփան, պաքել, իմնլ, ճըլօթել, թուշ, ժօղօվկըրան, բիձս, ափէր, ջ ոչօ, ադէ* (տատ), *խօրքուր, գ ըլօխ խառցընել, կօժէ, դսնվն, կուզըննել, սայսոն, գ սնխ, դընգ, ջ աղաց, մունսթ, հօնքուռ-հօնքուռ, կարքըվել* (ամուսնանալ՝ նան կանանց վերաբերյալ), *տալվ, յսբս, մանի, հ օռթում, պաղըռել, խօրօխպէր, յեղըռճիկ, տափոցի, գսխախօրել, ծաղըր, թեկգ ըլօխ* և այլն:

**ԱՂԲԵՆՔ** - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Գյուղի բնակիչների հիմնական մասը Ադրբեջանից բռնագաղթած հայերն են: Ադրբեք (նախկինում՝ Ադրուլաղ) է վերանվանվել 1991թ.: Ընդգրկված է Շողակաթ համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ԱՅԳՈՒՏ** - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Այգուտ (նախկինում՝ Գյոլքենդ) է վերանվանվել 1991թ.: Գյուղում ապրում են Ադրբեջանից բռնագաղթած հայեր: Ընդգրկված է Ճամբարակ համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ԱՆՏԱՌԱՄԵՁ** - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Հիմնադրվել է 1850 - ական թվականներին: 1988 թ. վերաբնակեցվել է Ադրբեջանի Շամխորի շրջանի հայաբնակ գյուղերի փախստական հայ ընտանիքներով: Անտառամեջ (նախկինում՝ Մեշաքենդ) է վերանվանվել 1991թ.: Ընդգրկված է Ճամբարակ համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ԱՍՏՂԱՁՈՐ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակիչների նախնիները 1829-30թթ. գաղթել են Ալաշկերտից և Վանից: Նախկինում՝ Խաչաձոր, Ձոր: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Աստղաձորի խոսվածքում միավանկ բառերի սկզբում հին-հայերենյան *ռ-ի* և *ե-ի* դիմաց առկա են *վո* և *յե*, ինչպես *վոնչ, վոռց,*

յես, յեփ, բացառություն է որ շաղկապը, որն ունի օր արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *ռ*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օսկի, էրագ, էրկու*: Խոսվածքն ունի *ե*, *ռ* երկբարբառային հնչյուններ՝ *իրեք, ցորեն, չոռ, խոռ*: Փոխառյալ ու բնիկ որոշ բառերում հանդես է գալիս քմայնացած *ւ* ձայնավոր, ինչպես՝ *նւֆււր, թււուր, քւնոի, ււմի, գււրկել* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *յեռուն, խավնել, խասկընալ*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ՛լրել, բ՛արություն, դ՛րրկեց, դ՛եզ, գ՛եղ, գ՛իշեր, ջ՛ուր, ձ՛ավար*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *դ՛ առցա, տեքքր, մէչ, անքամ, շափաթ, խաքնել*: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *պաղայական, արբել, գււրգել, փեղ*: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքն ունի *խ*, ինչպես՝ *խօրօխպէր, խինգ, պախել, խավնել, խատ, խառ, խա, խեքաթ, խիվընդություն, խալալ, խաց, խօրքուր*: Շատ դեպքերում բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հ՛ ավալ, հ՛ ուզել, հ՛ էսօր, հ՛ ընցնել, հ՛ առէչ, հ՛ ընգել, հ՛ առու* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ՛* կրսււ, *կուրբան, կօնախ*: Շեշտը վերջնականակային է:

Հոգնակին խոսվածքում կազմվում է նաև *ք, տիք, րանք* մասնիկներով՝ *թավլէք, տեքրոտիք, տավլըտիք, դ՛իզրանք, տեղրանք*: Երբեմն հանդես են գալիս կրկնակի հոգնակերտներ՝ *դ՛իզրանքներ, թավլէքներ*: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *մառթու, տրդու, ճամփու, ջ ըրու, դ՛իզրանքներու, գ՛ էրեզմըներու, աչքերու, տրներու* և այլն: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Շաբօյ, Յեղօյ*: Հատուկ տեղանունները հաճախ ենթարկվում են Ա հոլովման՝ *Հ՛ էրեվնա, Վաղաշէնա*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *ձ՛ ավրից, աչքերուց*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ

մէչ կապով և սեռականով՝ *գ՛ էղրն, գ՛ էղի մէչրն*, երբեմն նաև՝ *նէ մասնիկով, ինչպես՝ կարսի նէ* (կարասի մեջ), *քառակի նէ* (քառակի՝ քառակուսի ձևով ավազանի մեջ): Որոշիչ հոդն է *ն-ն՝ Մառթըն հավէլի խըխձօլ ա*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես *Իմ խէր բ՛ էրե, տըվէ իմ մօր*: Երբեմն անորոշ հոդը հետագաս է գործածվում, ինչպես՝ *շափաթըմ, փըշում*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛ էզի*, հանդիպում է նաև *քե* կրճատ ձևը: Անձնական դերանվան երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինք, ուրանք*: Ով դերանվան դիմաց առկա է *վոն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են՝ *քու, ուր* (իր), *ուրնից, էսա, էսի, էտի, էսօր* (սրան), *էնդոր* (նրա), *էնդոց* (նրանց), *էնքան, ընդեն* (այնտեղ), *էտտււր* (այդքան), *դ՛ աս/դ՛ ասի* (այստեղ), *դոր* (ուր), *հըմէն* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէլնել, կըռնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան կազմվում է *գի/կի* մասնիկով՝ *գ՛իքամ, գ՛իլամ, կիտամ*, մյուս բայերինը՝ *կը/կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըքաղին, կուտինք, ֆըռըցուն*: Վաղակատար դերբայն ունի *ր-ով* վերջավորություն՝ *դ՛ ըրէր* (եմ), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *նըստուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, էս, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից՝ *հուզեցին, օրտիր*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ աց, մաց*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *խօրօխպէր ա կըսենք, կօֆէ յա կըխըմա, կառտօլ էր կըցանէր*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես *չէկէր էր, չունէցէր եմ*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է

բայաձևի վրա՝ *չբայատկերացու*: Պատճառական ածանցն է *ցուց/ուց նեղցուցել, ֆրոռցուցել, խաբուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *պատկերացու, պատկերացո՛ւ*: Խոսվածքը չ բայաձանց չունի, երբեմն բացակայում է նաև *ն* ածանցը, ինչպես *մեռիմ, մըտիս*:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *բաջօ* (հորեղբոր կին), *ափեր, ջօջօ* (տատ, մեծ կին), *աղէ* (մայրիկ), *մըկա, փըշում, պարկել, ջօկըտտել, ընդուց դէն, դըրկեց, միճանկ, հուզելուն, խօրօտ, առնել, ճիժ, գըտտընակ քաշել, կէսրէր, իմալ, օրշընիտկ, բօռալ, գէրէզմընէր, կըշտօվ, բէտընալ, կարքըվել* (ամուսնանալ նաև կնոջ վերաբերյալ), *թավլա, հօրի, ձիթխաց, դնուռ, հանդա, բօլոր, ճամփիսել, դօլօվ գուռնօվ, սօվ ու սըրատուրուն, օքտել, հուստ, փայ ու բաժին, ջոչ, ինչօր քեզի, աղաջան, իրկամեռ, բաժ, ժէխ, օղաց ճամփա, տալվ, իշկել, ինք* և այլն:

**ԱՎԱԶԱՆ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988 թ. վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնի տեղահանված հայ ընտանիքներով: Ավագան (նախկինում՝ Գոյսու) է վերանվանվել 1990թ.: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ԱՐԾՎԱՆԻՍՍ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակիչների նախնիները 1829 – 30 թթ. գաղթել են Ալաշկերտից: Ըստ Հ.Աճառյանի՝ բնակիչները եկել են Բայազետի Չախըր-Բեկ գյուղից, Վանից և Մակուից<sup>182</sup>: Արծվանիստ (նախկինում՝ Ալուչալու) է վերանվանվել 1968թ.: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հիմնադրեւնյան *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վո* և *յե*, ինչպես՝ *վոտ, վոոց, յես, յերք*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն:

<sup>182</sup> Տե՛ս Հ.Աճառեան, Հայ բարբառագիտութիւն, էջ 139:

Բազմավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օսկի, օխճար, էրագ, էրինջ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *քաղվոր, կօլուն, դըրկեց, խես*: Փոխառյալ ու բնիկ որոշ բառերում հանդես է գալիս քմայնացած *ա* ձայնավոր, ինչպես *քմաննր, գմբուն, թմն, քմնի, քմփաննկ, հմագ էնել* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *առօրթէ, խավնել, բ՛ածնել*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *գ՛ալ, ձ՛եռ, գ՛իշեր, բ՛էրել, գ՛լլօխ, գ՛ոռծ, դ՛ուս, ջ՛առթել*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *ճրաքու, խաքնել, խօքի, կարքըվել, ջ՛առթել, մառթ* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *պաղմել, աքրել, ազաք, փէղ*: Հիմնադրեւնյան *հ*-ի դիմաց խոսվածքն ունի *խ*, ինչպես՝ *խառս, խա, խին, խեստ, խամար, խառսնիս, խալալ, խաց, խօ, խօրեմ, խիվանդ, գ՛ախ*: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հ՛ընգնել, հ՛առու, հ՛ընցնել, հ՛առէչ, հ՛էրէկ, հ՛էվել* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ՛ կօչաղ, կըլալ, կավուրմա*: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում կազմվում է նաև *ք, տիք* մասնիկներով՝ *բալէք, տըղէք, քէչէք, ախպըրտիք, տէքըրտիք, կընգըրտիք*: Երբեմն հանդես են գալիս կրկնակի հոգնակերտներ՝ *բալէքներ, տըղէքներ*: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *ձ՛օրու, գ՛ոմու, փորու, կօվու, խառսներու, կօվերու, սիրօղներու* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *կիսրոչ*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, նաև հասարակ որոշ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Վանօյ, Չինօյ, Յեվէյ, Ֆէրմայ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *փըշից, տարուց, կօվերուց*, հազվադեպ *է*-ով՝ *տընէն*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *սարն* ենք, *դ՛աշտի մէչըն*: Որոշիչ հոդն է *ն*-ն՝ *Սուրփըն դ՛ան ա*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում

է, ինչպէս՝ *էն մէ տրրակտրրիստ կըսա*: Երբեմն անորոշ հոդը հետադաս է գործածվում, ինչպէս՝ *բ'ածակըմ, քիչըմ*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*, եզակի երկրորդ դեմքը ունի նաև *քե* կարճ ձևը, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինք, ուրանք/հուրանք*: Ով դերանվան դիմաց առկա է *վոն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *քու, հուր* (իր), *հուրանց/ուրանց, էնդոր* (նրա), *էնդըրանք, էնդոց, էսա, էսի, էտի, էնի, դոր, վորդեն, դասի, դաստ, դաստի, դասն, դասնի, էնթասը* (այնալիսի), *ըմալ* (այնպէս), *հիրար* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, էլնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէլնել, կըռնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան կազմվում է *գ ու, գ ի/կի* մասնիկով՝ *գ ուքամ, գ իլամ, կիտամ*, մյուս բայերինը՝ *կը/կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կաբրինք, կըգ'օղնան, իմ խելք էթա* (խելքս գնում է): Բայասկզբի *հ*-ին միանալով՝ *կ*-ն դառնում է *գ*, ինչպէս՝ *գ իստըկինք*: *Գալ* բայն ունի ներկայի և ապառնու զուգահեռ յուրահատուկ ձևեր՝ *գ ում, գ ոս, գ ո, գ ոնք, գ ոք, գ ոն*: Վաղակատար դերբայն ունի *ր-ով* վերջավորություն՝ *տէսէր* (էր), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *ցանուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպէս ներկայի, այնպէս էլ անցյալի հիմքից՝ *բ'էրին, ջ'առթին, տըփի, թօրգի, նըշանէցին*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ'աց, մաց*: *էնել* և *դ'ընել* բայերի անցյալի հիմքում պահպանվում են *էն, դ'ըն* ձևերը՝ *էնէց* (արավ), *էնէր եմ* (արել եմ), *էնա* (արա՛), *անուն եմ դ'ընե* (անուն եմ դրել): Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպէս՝ *ինչ ա կուտես, գ ոմու մէչն էր կաբրինք*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժան-

դակ բայի, այլ դերբայի վրա, ինչպէս՝ *չըհաշվէր եմ, չըտէսէր էր, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ չըկըռնամ, չեղի*: Պատճառական ածանցն է *ուց/ցուց հիշուցել, սովըոցուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *կըզըզվըցուն, յեոցո՛ւ*: Ներկայի հիմքից կազմվող ձևերում ևս *ն* բայածանցը սովորաբար բացակայում է, ինչպէս՝ *մեռիմ, գէլի* (կելնեի), *կեղի* (կլինի), *խաքինք* (հագնեինք), *առի* (առնեի), *կըխասի* (կհասնի): Գործածական է *կօ* հաստատական մասնիկը, ինչպէս՝ *կօ մընա* (իհարկէ մնում է):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *խըլղ, պըստըկութուն, հորի, մուրադ, ճիժ, հալ, մըկա, մառթ, ջ ոչ, դ'անէն, սըքա, իմալ, խօրօտ, գ'էշ, աղէ, ափէր, կակօ, շուշուտ, դան, հուզընգան, կըմճըտել/կըճըմթել, պատի խես, զըվա, ջ'ըխպալ, հըմալ, ազաբ, կըխտոտ, մըթէլ, յօրդան, էտօլ դէն, շօտ աչք, խօրօտ, սիրօղ, հիլօտ քանիանակ, իրիկ, գ'օխտուկ, քանֆկախան էնել, էսխանտ, տարէ լիս, խացատուն, չօթնէ՛ ճաշ, գ'ոնտ, դ'ըրկեց, տալվ, ընձի խօթի կա, չինաշխարիկ, ջ ոչօ* (տարեց տղամարդ), *բաջօ* (ծեր կին), *հանդա, մատղաշ, ջաղդա, ինք, կարքըվել* (նաև կանանց վերաբերյալ), *յերփի, արաբա, նըշանլու, էրաղ* և այլն:

**ԱՐԾՎԱՔԱՐ** – Գավառ քաղաքի թաղամաս, նախկինում գյուղ Արծվաքար, Ղշլաղ, Ծմակ: Արծվաքար է վերանվանվել 1945թ., թաղամաս է դարձել 1961թ.: Բնակիչների նախնիները 1829-1830թթ. գաղթել են Բայազետից: Հաղորդակցվում են Բայազետի բարբառով:

Բայազետի բարբառին բնորոշ դիրքերում խոսվածքը կանոնավորապես ունի շրթնային *մ* ձայնավորը՝ *մսել, մշուն, մրաղ, պմրկել, պանիր, տմրի, ճմմփա, ճմր, շմտ, սմղ, ծմտ, մմքուր* և այլն: Հիմնականում փոխառյալ, բայց նաև բնիկ մի շարք բառերում գործածվում է քմայնացած *ւմ* ձայնավոր, օրինակներ՝ *նւմֆտ, լւմց*,

խայրի, ջայնան, քուֆտան, քայնան, հայնաթ, Քանվան, ջայել, չայիր, քուլան, ձան (ձեռք) և այլն: Հինհայերենյան *n*-ի և *ե*-ի դիմաց միավանկ բառերի սկզբում առկա են համապատասխանաբար *վո* և *յե*՝ *վոր*, *վոխ*, *յես*, *յերք*, բազմավանկ բառերի սկզբում՝ *ո* և *է*, ինչպես՝ *օխճար*, *օչիլ*, *էրկանք*, *էրինջ*: Խոսվածքն ունի *ե*, *ո* երկբարբառային հնչյուններ՝ *վեց*, *գորեն*, *փոր*, *բանվոր*: Արժվաքարի խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում ձայնավորի սդումը՝ *խայրի*, *խասկընալ*, *փատըտել*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բաժան*, *բըռնել*, *Գառնիկ*, *գարի*, *դուս*, *դաշտ*, *ջըրել*, *ջոչ*, *ձեն*, *ձուն*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *տէքրր*, *բանցրր*, *հօքոստոս*, *ջոչ*, *հանէչ*, *օց*, *խափել*, *սուռփ* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *գիղալ*, *դրբոց*, *պանդասխան*, *պանդայել*, *կրդրել* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *բասվել*, *լրսվել*, *իշքան*, *հանչկ* և այլն: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ*՝ *խեստ*, *պախել*, *խանել*, *խէր*, *խառնիս*, *էն գախ*, *խինգ*, *խիվանդ*, *խամօվ*: Նկատելի է հետևալեզվային պայթականների քմայնացում, ինչպես՝ *կանրաք*, *հօքի*, *խօրքուր*, *քանոխ*: Քմայնացման հետևանքով *ուրթուն* ածանցում տեղի է ունենում *թ>ց* անցում, ինչպես՝ *խարամուցուն*, *նեղուցուն*: Խոսվածքում *տն* խմբի դիմաց երբեմն առկա է *նն*՝ *մաններ*, *վոններ*, *դր*-ի դիմաց՝ *յր*, ինչպես՝ *կօյրել*: Օտար բառերի բառասկզբի *դ*-ի դիմաց գործածվում է կ՝ *Կրըլադ*, *Կանլանդար*, *կրրադ*, *կանվուրմա*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ տեղի է ունեցել *h*-ի հավելում՝ *հանալոտ*, *հօքոստոս*, *հիմանալ*, *հանու*, *հէրես*, *հանէչ*, *հընգեր*, *հընցընել*, *հավէլի*, *հընչի* և այլն: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք*, *անք*, *վանք*, *րանք*, *տանք*, *անիք* մասնիկները՝ *քանվանցիք*, *բուրուկէք*, *ձիյանք*, *իշվանք*, *գիլվանք*, *ըստերանք*, *տեղրանք*,

*քրվորտանք*, *անխալքոտանք*, *կրնանիք*: Ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Զինայ*, *Մանրոյ*, *Փանրոյ*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Մանոտունա*, *Մէվանա*, *Թիվլիզա*: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տիրոջ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *պոչից*, *գէղից*, *դաշտերից*, *երբեմն էլ է-ով*, *ինչպես տընէ*, *հանալտընէ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գէղը*, *գըրքի մէչը*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի*, *քեզի*, *մեզի*, *ձեզի*, նաև գործածվում է *քե* կրճատ ձևը: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են՝ *ընդոնք*, *հիրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս*, *էտ*, *էն*, *էսի*, *էտի*, *էնի*: Ով դերանվան դիմաց առկա է *վորը* տարբերակը, որի սեռականի ձևն է՝ *վիր*, տրականինը՝ *վիրը*: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *մենք*, *հինքը*, *հիրա*, *հիրանք*, *ըտու*, *ըստոնք*, *ըտոնք*, *ըտոնց*, *էտենց*, *ընդէ*, *հըմէն*, *հուրիշ*, *վորդէ*, *ըստանք* (այսքան), *ընդանք* (այնքան) և այլն:

*Գալ*, *լալ*, *տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գալում*, *լալում*, *տալում*: Վաղակատար դերբայն ունի *էր/եր* վերջավորություն՝ *մանցէր են*, *նըստէր ա*, հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *ցանուկ*, *քաղուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *են*, *ես*, *ա*, *ենք*, *էք*, *են*, անցյալի ձևերը՝ *ի*, *իր*, *էր*, *ինք*, *իք*, *ին*, սրանց ժխտականներն են՝ *չեն*, *չես*, *չք*, *չենք*, *չէք*, *չեն* և *չի*, *չիր*, *չէր*, *չինք*, *չիք*, *չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես անցյալի հիմքից՝ *տըվէցին*, *նըշանէցին*, այնպես էլ ներկայի հիմքից՝ *մըրինք*, *դըրինք*: *Գնալ*, *մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են *գաց*, *մաց*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *անջատա՛*, *կանյնի՛*: Պատճառական ածանցն է *ցըն*՝ *խասցընել*, *տանքընել*: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է *ա* վերջավորու-

թյուն՝ *խասցրրա՛, մօսկըցրրա՛*: Խոսվածքում չկան չ անանցով բայեր՝ *թըռնել, փախնել, ուռել*:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *սինօռ, պըստի, մամթ, հեքսի օր, իմալ, քեփըլտալ, թըմել, կըլոր տմրի, թուփ* (թթու դրած կաղամբ), *բ՛ըլել, կըժիկ, ջ՛ոչ, ճմր, թամաշ մնել, ճըգըռել, գ՛ըթան, ուզել* (սիրել), *կընդել, հմբրինգ, կմվրո, դըվաժօ, հա, գ՛ըլօխ խանել, մինչեվի//չումքի, բօգ, կըղըլ (թալանել), կըտոր, մընաց, խըրեղեն, մէշու, հէսա, քմոէշտ, ձ՛իթխաց, մուրուս, թալվա, մսկ, մնընավոր, բ՛ւտ, տմդմէր, ցավ քաշել, թօրկել, կէծակ, ժեխ, ճոթ, չըռնակոթ, փօշի, մնընջուկ, քէլեխ//պմդարաք, կըտոր խանել, խընզըռել, խափանել, սըրախ, մնդու, մխտել, մփիէր, խուր էթալ* (արագ գնալ), *ցուսկ, փունք, կըմուկ, տմնիս//կըտուր, հ՛առիք* և այլն:

**ԱՐՏԱՆԻՇ** - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Բնակեցված է Աղրբեջանից բռնագաղթածներով և Արծվաշենից բռնի տեղահանվածներով: Ընդգրկված է Շողակաթ համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ԱՐՓՈՒՆՔ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988թ. վերաբնակեցվել է Աղրբեջանից բռնագաղթած փախստականներով: Արփունք (նախկինում՝ Բահար) է վերանվանվել 1991թ.: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

## Բ

**ԲԵՐԴԿՈՒՆՔ** - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Նախկինում՝ Աղկալա, Ագատ: 1920թ. վերաբնակեցվել է Նորատուս և Գանձակ գյուղերից եկած ընտանիքներով: Հաղորդակցման միջո-

ցը Բայազետի բարբառն է՝ Նորատուսի խոսվածքի հատկանիշներով, նույնանում է Հայրավանքի խոսվածքի հետ (տե՛ս ՀԱՅՐԱՎԱՆՔ):

## Գ

**ԳԱԳԱՐԻՆ** - 1955թ. հիմնվել է իբրև բանավան Աթարբեկյանի ՀԷԿ - ին կից, հետագայում կոչվել է Գագարինավան: 1961թ. մինչև 1995 թ. համարվել է քաղաքատիպ ավան: Այժմ ընդգրկված է Սևան համայնքի կազմում: Ըստ Ռ.Բաղրամյանի՝ բնակիչները շրջակա ու Մարտունու շրջանի գյուղերի հայեր են, համայնքը միասնական խոսվածք չունի<sup>183</sup>: Այժմ հաղորդակցվում են խոսակցական հայերենով:

**ԳԱՆՁԱԿ** - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Նախկինում՝ Քոսամահմեդ, Բատիկյան: Բնակիչների նախնիները 1828թ. ներգաղթել են Բայազետի, Ալաշկերտի, Խոյի ու Սալմաստի գյուղերից: Ռ.Բաղրամյանը վկայում է, որ Ուրմիայի գավառից 1828-1832թթ. գաղթածները իրենց մայրենի խոսվածքի չնչին հետքեր են պահում նոր միջավայրում՝ Բաղիկյանում<sup>184</sup>: Գանձակի խոսվածքը բարբառի մյուս դրսևորումներից տարբերվում է քմայնացած ձայնավորների ու բաղաձայնների առատությամբ:

Գյուղի խոսվածքը ներկայացնում է Բայազետի բարբառը: Խոսվածքում թե՛ բնիկ, թե՛ փոխառյալ բառերում բավականին տարածված է քմայնացած *մ* ձայնավորը, օրինակներ՝ *մնդմթ, իմնլ, հ՛մնէչ, թմնգմ, փէսմ, սիֆտմկ, փմնդու, դ՛մր, շմոժ, կըսմ, շուշմն, նմֆտուլ, հօգմջ, վիճմկ, չմրչըրել, գմնթընել, պէնջմկ*: Բայազետի բարբառին բնորոշ դիրքերում խոսվածքը կանոնավորապես ունի շրթնային *մ* ձայնավորը՝ *մխպէր, մոթէն, կմրաս,*

<sup>183</sup> Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 9:

<sup>184</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 3:

պմպական, տանջանք, ծմխել, ճակաթ, սմրքել, մմքուր, շմտ և այլն: Գանձակի խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *մվկղրրան, խավնել, մմննիք, կմրկրտել, սորվել*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ռ*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *վո* և *յե՝ վոտ, վոր, յես, յեփ*, բազմավանկ բառերի սկզբում՝ *ո* և *ե*, ինչպես՝ *օխճար, օլըրվել, էրէխա, էրկու, էրինջ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *մխշատել, վեց, հ ընգե, ջ՝ոչ, փիդոն, ջ՝ըրխոր*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ՛ետ, գ՛ոռձ, դ՛ուս, ձ՛րվածեղ, ջ՛աղաց*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *հ առցակուոթ, շմփաթ, ուրփաթ, կմրքել, տէքսրկրնիկ, հսնէչ, վեոչ, օց, վոռփ*: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *ծրձաղ, մրբել, փագ, գիդալ, ցաձրր, մվկղրան, օքուդ, փէղ, խէձուկ* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *հսւշկ, վոշ մէկը, մրասցրնել, ծասկել, լրսվել, ճմշնալ, խէզնել, ընգնից*: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքը բուրդ դիրքերում ունի *խ՝ խին, խագար, պմխել, բ՛ախ*: Հետնալեզվային պայթականների քմայնացումը բավականին տարածված է, ինչպես՝ *ըրտորնքի, կիսուր, նմխակէն, տմտիկիս, գիցե, խէքսթ, գսմ, մաքի, գ՛ըրակետ*, երբեմն նույնիսկ պայթականները թողնում են հպաշփականի տպավորություն կամ էլ վերածվում են հպաշփականի, ինչպես՝ *գ՛ղջուգսմ<գուգսմ, չէսս<քեչա*: Քմայնացման հետևանքով *ուրյուն* ածանցում երբեմն տեղի է ունենում *թյ>չ* անցում՝ *պմդմուչուն, հարքստուչուն, բ՛աժանուչուն*: Խոսվածքում *տն* խմբի դիմաց որպես կանոն առկա է *նն՝ մմննիք* (մատանի), *մրննել* (մըտնել), *վոններ*: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ՛ կրսս, կմզան, կսնիմ, կմվուրսա*: Առանձին բարբառախոսների խոսքում

բառասկզբի *դ*-ի դիմաց հնչում է հպաշփական հնչյուն (մոտավորապես *կդ* սերտ արտասանությամբ): Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ՛*-ի հավելում՝ *հ՛ էսօր, հ՛ ընգնել, հ՛ ախպուր, Հ՛ առաքել, հ՛ իրա, հ՛ իրկուն, հ՛ արի* և այլն: Շեշտը վերջնականակային է: Խոսվածքում *սերմ, թարմ* բառերը երկվանկ են և ունեն *սերրմ, թարրմ* արտասանություն: Բաղիյուսական հարադրություններում կամ դրանցից առաջացած կցականներում *ու*-ի դիմաց գործառում է *ը*-ն՝ *մսկըտմկ, տուներտեղ, մմոթը կրնիկ, իմը քօ* (իմ ու քո), *բ՛ ուքը ձ՛ ուն, մոըտուր*:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, անք, վանք, բանք, տանք, անիք* մասնիկները՝ *գ՛ էղացիք, սմրուխանցիք, ճմմփէք, ձ՛իյանք, իշվանք, գ՛իլվանք, ըտերանք, տեղրանք, տէքրրտանք, քրվըոտանք, մխպըոտանք, կրնանիք*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Գ ընձօյ, Գ էլօյ, Սէփօյ, Վանօյ*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Սմրուխանա, Հացառատա, Գըոհձօրա*: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տիրոչ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *պոչից, գ՛ էղից, գ՛ ինուց, գ՛ ըլխըներից, երբեմն էլ՛ է-ով, ինչպես՝ հագարէն, ձ՛ եոնէրէս*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գ՛ էղը, ջ՛ ըրի մէչք*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛ եզի*, նաև գործածվում է *քե* կրճատ ձևը: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են՝ *ընդոնք, հ՛ իրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի(կ), էտի(կ), էնի(կ)*, սրանց թեք հոլովների ձևերն են՝ *ըստու, ըտու, ընդու, ըստոնց, ըտոնց, ընդոնց* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *վոն* տարբերակը, որի սեռականի ձևն է՝ *վի*, տրականինը՝ *վին*:

*Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ ալում, լսլում, տմլում*: Վաղակատար դերբայն ունի *էր/էր* վերջավորություն՝ *գ՛ ըրէր եմ, գ՛ ըրէր ա*, հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝

*խասուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին, սրանց ժխտականներն են՝ չեմ, չես, չք, չենք, չէք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես անցյալի հիմքից՝ *կննպեցի, դըրեցի*, այնպես էլ ներկայի հիմքից՝ *մրին, տըվի*: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են *գ'աց, մաց*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *փագա՛, էփա՛, նըստի՛, հ՛էլի*: Պատճառական ածանցն է *ցըն՝ կննըցընել, խաքցընել*: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է *ա* վերջավորություն՝ *նըստըցըրա՛, կէրցըրա՛*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (թըռնել, փախնել, ուռել):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *մըլօրակննչ, խօվ, տաննիս, ձիթխաց, տիլ, մուխ, մըսկէրանք, բ՛էտ, թօնել, բ՛ըռնենք, օղոռթ, պըստիկ, ծանխկավոր, չըմդէ, մէմմըտել, մմէք մմոռթ, նննֆտուլ, կընդել, շիքել, ճիժ, խօտաղ, շնոժ, պննպական, փիդոն մննել, խեռնիկ, քննֆկախան մննել, խոզգին, խըրվոր* (հարսանիքի օրը հարսին հոր տանից բերելու գնացողները), *կննքել, ընդօքի, սիրօղ, մմոռթ, ճիկ տալ, տննիել, տըփել, չումի, չըկըմիշել, մըկա, իմննլ* և այլն:

**ԳԱՎԱՌ**<sup>185</sup> - Քաղաք, մարզկենտրոն: Նախկինում՝ Գեղարքունի, Նոր Բայազետ, Կամո: 1829-30թթ. վերաբնակեցվել է Բայազետից գաղթած 240 ընտանիքներով, որոնք էլ բնակավայրը կոչել են Նոր Բայազետ: Գավառ է վերանվանվել 1995թ.: Քաղաքի կազ-

<sup>185</sup> Քաղաքի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական առլասի կյոթերի հավաքման ծրագրով 1999թ. լրացված թիվ 501ա տետրում, առկա են նաև քաղաքում 2013թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

մում են Արծվաքար և Հացառատ թաղամասերը: Հաղորդակցվում են Բայազետի բարբառով:

Գավառի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ կննրկըտան, *օղըղել, հ՛էրգըննալ*: Բայազետի բարբառին բնորոշ դիրքերում խոսվածքը կանոնավորապես ունի շրթնային *մ* ձայնավորը (որի շրթնայնացումը պակաս ընդգծված է, քան, ասենք, Սարուխանի խոսվածքում)՝ *մմնընալ, կննպել, պննոավ, տննրէկան, ծննել, ճննչ, մննգաղ, ննմակ, սննդ, շննպիկ* և այլն: Փոխառություններում և սակավաթիվ բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *մ* ձայնավոր՝ *մժել, ձ՛մք, թննթ, գննրգել, լննց, ժննգ, խէքննթ, փէսնն, գննգննր, կէքննթ, կննրիք, մննդննժ, հննյննթ, ննն*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե՛ վոր, վոռց, վոռթ, յեգ, յեփ, յերք*, բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է*, ինչպես *օխճար, օչիլ, օռնալ, օրօճ, էրկու, էրէվալ, էրակ, էրկաթ*: Խոսվածքն ունի *ե, n* երկբարբառային հնչյուններ՝ *սեք, ձըվածեղ, ձըմեռ, թոք, շընոխլ*: Փոխառյալ բառերի *ու* ձայնավորի դիմաց հաճախ առկա է *ի*՝ *քիֆտննքուֆտնն, դիզը>դուզը, շիշնն>շուշնն, մինննթ>մունննթ* և այլն: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ՛օպիկ, գ՛էլ, դ՛եղել, ձ՛ըքել, ջ՛ընջել*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *խափել, լիոփ, մննրաք, թաքավոր, թըռչել>թըջել, մնոչ, փոցանք, վոռց, վառթ*: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *գաղ, ցաճըր, մբրուստ, մվէղիս, ցուող, հ՛իրգուն, մխկաղ, փէղ, յերգիր* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *օշուտ, հ՛իշնել, կըսկել, ծասկել, միժննկ*: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ՛ խաստ, պննխել, բ՛ախ*: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ՛ կննվուրմա, կուրթի, կօնախ*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *h՛*-ի հավելում՝ *հ՛ննշկեռտ, հ՛առճակ,*

հանգաճ, հիշնել, հուրիշ և այլն: Շեշտը վերջնավանկային է: Բաղիյուսական հարադրություններում ու շաղկապի դիմաց հանդես է գալիս ը՝ դուռը դուս, դարը դաշտ, տունը տեղ, կմորը ձեւ, մանթը կրնիկ:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, անք, վանք, րանք, տանք, անիք* մասնիկները՝ *մվտօք, վեղոք, ձիանք, իշվանք, գիլվանք, տիրվանք, գեղրանք, մխպրրտանք, տեքրրտանք, կրնանիք*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *ի-ով՝ Մնթոյի, Մնթոյի*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Հէրէվնա, Սէվանա, Գորիսա*: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը *տիրոջ*: Բացառական հոլովը ձևավորվում է *ց-ով՝ մղվրգից, գի-նուց, գեղրանքից, գըլխրնէրից*: Ներգոյականը արտահայտվում է հայցականով կամ սեռականով և *մէչ* կապով՝ *կրճուճք* (կճուճում), *կրճրճի մէչք*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*, դրսևորվում է նաև *քե* կրճատ ձև: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են՝ *ընդոնք, հիրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի*, սրանց թեք հոլովների ձևերն են՝ *ըստու, ըտու, ընդու, ըստոնց, ըտոնց, ընդոնց* և այլն: Ով դերանվան դիմաց առկա են *վոն, վորը* տարբերակները, որոնց սեռականի ձևն է *վի*, տրականինը՝ *վիրը*:

Անորոշ դերբայի յուրահատուկ ձևերից են՝ *կրովալ* (կովել), *հիշկել* (նայել), *կմիտվրկել* (կախվել): *Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գալում, լալում, տալում*: Վաղակատար դերբայն ունի *էր/եր* վերջավորություն՝ *գըրէր եմ, գըրէր ա*, հարակատարը ուկ վերջավորություն՝ *խըմուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին, սրանց ժխտականներն են՝ չեմ, չես, չը, չենք, չէք, չեն և չի, չիր, չէր, չինք, չիր, չին*: Ե խոնարհման պարզ բայերի

անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից՝ *գըրէցի/գըրի*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են *գաց, մաց*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *փագա՛, կրղրա՛, նրստի՛, հէլի՛*: Պատճառական ածանցն է *ցրն՝ թրոցընել, լանցըընել*: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է *ա* վերջավորություն՝ *խըմցըրա՛, մօտկըցըրա՛*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (թըռնել, փախնել, կուրել, ուռել):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *պուտ, պուգ, խօվ, խագ, կրտուր, հատիք, մխպ, չրոնակոթ, մնձոխ, տիլ, մօծիլ, մուխ, փօշի, թուփ* (տերև), *կուտ, մղինջ, կրոուք, էրկումմնտ/չոռսըմմտ, դէշնկ, խօրիգ, ձըցում, թէշի, ծընըտկան, հանչկալուսանք, ճիժ, մնոթ, մօղօզըրիկ, օրօճիկ, գըրթան, ձու, պուճուճակ, թառթիչ/թառթափ, խօքու խաց, գրոնիս/քէն, տմքոց-դօղոց, հատաֆտուն, կում, մըռու, պըստի(կ), մէշու, քարկ, մղու, կըժմըթել, հիրարտալ, հընցըընել, պմոզաջըրել, տմփել, հիշկել, տըփել, հըրըկել, գըրըշտել, մըկա, հէքուց, օղաոթ, գեղացվարի, հընչի, չուր/չուրի, հէսա, քանկոտ, իշտան* և այլն:

**ԳԵՂԱՄԱԲԱԿ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Կայաբաշ (Ղայաբաշ): Գեղամաբակ է վերանվանվել 1991թ.: 1988-1989թթ. վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթած հայ ընտանիքներով: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ԳԵՂԱՄԱՎԱՆ**<sup>186</sup> - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Նախկինում՝ Շահրիգ: Բնակիչների նախնիների մի մասը 1828-29թթ.

<sup>186</sup> Խոսվածքի հատկանիշները ներկայացվում են ըստ Գեղամավանում 2015թ. կատարված տեսաձայնագրությունների և հետազոտությունների: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում: Տե՛ս նաև Ռ.Սաղաթեյան, Գեղամավանի խոսվածքը և նրա դիրքը «ում» և «կը» ճյուղերի բարբառների միջև, Բան-

գաղթել է Մակու գավառի Անձուկ գյուղից, ինչպես նաև՝ Ալաշ-կերտի, Մալմաստի, Խոյի, Մուշի, Բայազետի գյուղերից: Հաղորդակցվում են հիմնականում Մակուի խոսվածքով:

Գեղամավանի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի աղումը՝ *բ' աժնրվել, հարսնիկ*: Փոխառություններում և սակավաթիվ բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *ւ* ձայնավոր՝ *ւնվնլ, ւնժել, օրինւնգ, քնփ, միննիկ, մննոյն, դ'ւննուտուն, հնյնթ, տէքնր, սիգտնգ, կնստու, թնլել, թնփել, գննիգ, լնլ*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի դիմաց առկա է *վ*, *ե*-ի դիմաց՝ *յե, ինչպես վոր, վոր, վոնց, յես, յեռ, իսկ* բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես *օղորմի, էրկու, էրէվալ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *խէխտել, տըվե, փոս, ջաղվոր*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ' աժնրվել, գ ըրակետ, դ'ւշտ, ջ' ուր, ձ' էն*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *ժողովրդական, մառթ, անքամ, հ' էրուց, հօրի, վեռչ, բ' առց, շնչեղ խուլերի դիմաց առավելաբար գործածվում են պարզ խուլեր՝ Մէլիկ, մակուր, խանուտ, նախըռճի, կըտել, ատար, հավակել, հիծուն*: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ *ախճիգ, պաղերազմ, ուղել, նըստած, պըրձընել, կըջուջ, լըջեր, Օնիգ, հ' էրգէն* և այլն: Հետևալեզվային *գ, կ, ք* պայթականների դիմաց հաճախ դրսևորվում են *ջ, ճ, չ* հպաշփականներ, ինչպես *չեռի, չնլան, չնչնլ, ջըվն թէ, ջնդն ջուղէք, ջօզուկ, ջուլնջ*<sup>187</sup>: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *հ' ւնչկ, հ' իշնել, մէշկ, ծասկել, հ' ընսնել*: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքը առանձին դեպքերում ունի *խ' խազալ, խոր, գ' ախ*: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ' կնստու, կա-*

բեր Երևանի համալսարանի, Ե., 2002, 3, էջ 154-158. Ռ.Մաղաթեյան, Տեղաշարժեր Գեղամավանի խոսվածքում, Հայագիտական հանդես, 2017, 2, էջ 35-46:

<sup>187</sup> Իրողությունը Գեղամավանում արձանագրել է նաև Ռ.Բաղրամյանը (տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 11):

*զան, կօնախ*: Բառակազմի ձայնավորից առաջ հաճախ առկա է *h*-ի հավելում՝ *հ' իմանալ, հ' ինքը, հ' օղորգել, հ' առաջ, հ' էրուց, հ' էրես, հ' ւնչկ, հ' ընգընել* և այլն: Շեշտը վերջնավանկային է: Բաղիյուսական հարադրություններում կամ դրանցից կազմված կցականներում *ու* շաղկապի դիմաց երբեմն հանդես է գալիս *ը' տունը տեղ, թնորթնմըզ, հուրըջ' ուր*:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, վանք, բանկ, տանք/դանք, անիք* մասնիկները՝ *ջնդն ջուղէք, ջըջըռցիք, գ' իլվանք, տեղրանկ, ախպըրդանք, կըղըրտանք* (կտուրներ), *գ' էղրանկ, կընանիք*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Հ' էրէվնա, Մէվանա, Գ' էղամավանա*: Բացառականը ձևավորվում է *ց/ծ*-ով՝ *կօվիծ, սարիծ, ւնվնլվանից, բ' էրնից, տընից, կընանիքից, գ' էղրանքից, իմուց*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ սեռականով և *մէշ* կապով՝ *թունդիրը* (թոնրում), *կըջըջի մէշք*, նաև տրականով, ինչպես *կօլխօզին* աշխաղէր եմ. *ճաշարանին* հաց ինկ ուղըմ. հիրա տեղին նըստըմ ա. *սարին* կօլ եմ կըտե: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի(կ) հավելված՝ ընձի(կ), քեզի(կ), մեզի(կ), ձ' էզի(կ)*: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են *ընդոնք, հ' իրանք*: Ցուցական դերանվան ձևերից են՝ *էս, էդ, էն, էսի(կ), էդի(կ), էնի(կ), ըդա, ըդան, ընդան, ըտոնցը, ընդըրանից* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *վորը* տարբերակը, որի սեռականի ձևն է *վիր*, տրականինը՝ *վիրը*:

*Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ' ալըմ, լնլըմ, տալըմ*: Անկատար դերբայը ավելի հաճախ կազմվում է *ըմ*, *քան թե ում* մասնիկով, ինչպես՝ *հաքնըմ, թնփըմ*: Վաղակատար դերբայն ունի *էր//եր* վերջավորություն՝ *հէլեր* (ա), *պըսագվէր* (եմ), հարակատարը՝ *աձ* վերջավորություն՝ *խէխտըվաձ, կախվաձ, նըստաձ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*, սրանց ժխտականներն են՝ *չեմ, չես, չի, չենք, չէք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին*:

Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է անցյալի հիմքից՝ *նըշանեցին, դըրեցինք*, երբեմն էլ ներկայի հիմքից՝ *արին*: Կրավորական բայերն անցյալ կատարյալում ունեն կրավորաձև վերջավորություններ՝ *բ'ածնըվանք, փոխվալ*: Պատճառական ածանցն է *ցըն լողցընել, ուտըցընել*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (*թըռնել, փախնել*), երբեմն բացակայում է ն ածանցը՝ *հըլեն, լըցըմ*:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *պըսագվել, մատտ, կըդուր, խընօցի, մեր կըշտին, հօղօրգել/օղօրգել, հ'ատադուն, հ'իրգուն, հ'իրկըվանը, շաղվոր, խօրօտ, մինսնկ, ջըվսն թէ, քըռչիկ, հ'էքուց, ճըխտել, փօշի, մըռու, քօլիգ, կուռծ, օտաղ, հ'էրտիգ, մուխ, հ'անիկ, սէր ին, սիրաձ անել, թսնպօ, ճանգըրթել, կըլջել, մագիս համբարքի չափ, ջսնդսն ջուղէք, ջօզլուկ, թուխս, ձ'ու, կաստըրունգա, թսնըրթսմըգ, հ'էքսի օրը, համբըրել, ջէրուտուն, ճիժ, թէշի, ժէխ, ժըխշել, պըզդիգ* և այլն:

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ**<sup>188</sup> - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Նախկինում՝ Բաշքենդ: Բնակիչների նախնիները գաղթել են Բայազետի, Ալաշկերտի, Բուլանըղի և Մուշի գյուղերից 1829 - 30թթ. և 1914-19թթ.: Խորհրդային տարիներին գյուղում վերաբնակեցվել են Սարուխանից արտրվածներ: Հաղորդակցվում են Բայազետի բարբառով:

Խոսվածքի փոխառություններում և մի շարք բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *սն* ձայնավոր՝ *դսնող, Բսնշքսնը, դսնֆտսնը, միյնսնկ, սիֆտսնկ, փիլսնքսն, լսն, դուքսն, քսնքսն, շսնքսն, ձսնք* և այլն: Բայազետի բարբառին բնորոշ դիրքերում խոսվածքը

<sup>188</sup> Խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1998թ. լրացված թիվ 505ա տետրում, առկա են նաև գյուղում 2014թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

կանոնավորապես ունի շրթնային *սն* ձայնավորը՝ *սնմիս, սնտըված, սնխչիկ, սննա, պսնտք, պսնչել, տսնրի, տսնրեկան, կսննչել, կսնոճ, սսնր, սսնպոն, շսնտ, շսնդել, մսնոթ, մսնգ, մսնտաղ* և այլն: Գեղարքունիքի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *սմսըկոտ, ժօղվել, կսնրկըտան*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե*՝ *վոոց, վոխ, յես, յերք*, բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է*, ինչպես *օշիլ, օխճար, էրագ, էրկու*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *վեոչ, իրեք, փոդ, քավոր*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ'էոթ, Բ'ատսեղ, գ'ըթնըվել, գ'եղ, դ'ուռ, դ'ուս, ջ'աղաչ, ձ'էթ, ձ'ըմեռ*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *օքնել, սուրփ, մէչ, թաքավոր, անքամ, մսնոթ, օթ* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց մի շարք դեպքերում հանդիպում են ձայնեղներ՝ *սիոդ, Մըզըրդիչ, տեղդը, պսնդրաստել, Հագօփ, կըդըրել, պըռձնել, ցածրը, սնրբել, օքուղ* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *խաշքար, ինշ կա, իշքան, կըսկըվել, ծմսկել* և այլն: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ*՝ *խինգ, խեստ, խոդ, խանել, ջ'ըրխոր, խիվանդ, պսնխել, բ'ախ*: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ*, որը երբեմն հնչում է իբրև *կ*, օրինակ՝ *կսնյիշ, կօնդախ, կօլթուղ* և այլն: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում՝ *հ'անէչ, հ'ըղըրկել, հ'ակամա, հ'ըլնել, հ'էրես, հ'ուրիշ, Հ'էրէվան* և այլն: Երբեմն *ություն* ածանցում դրսևորվում է *թյ>չ* կամ *թ>ց* անցում, ինչպես *գօրուչուն, չարուցյուն*: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, անք, վանք, րանք, տիք, անիք* մասնիկները՝ *վոսկիք, ձ'իյանք, իշվանք, գ'իլվանք, տեղրանք, ախպըրտիք, քըվորտիք, կընանիք*:

Ձայնավորով ավարտվող հատուկ անունների սեռականը ձևավորվում է *-ով*՝ *Սմբոյ, Տիկոյ*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Սմբուխանա, Կրշլադա*: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տիրոջ*: Բացառականը ձևավորվում է *-ով*՝ *խօրից, անշխրքից*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ սեռականով և *մէջ* կապով՝ *ամանը* (ամանում), *տանջտի մէջը*, հազվադեպ՝ տրական հոլովով, ինչպես՝ *էրագին տէտը եմ*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*, դրսևորվում է նաև *քե* կրճատ ձև: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են՝ *ընդոնք, հիրանք*: Յուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի, էսա, էտա, էնա*, սրանց թեք հոլովների ձևերից են՝ *ըստու, ըտու, ընդու, ըստոնց, ըտոնց, ընդոնց* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *վոն* տարբերակը, որի սեռականի ձևն է՝ *վի*, տրականինը՝ *վիւ*: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *հինքը, հիր, հիրան, հիրանց, ըստե, ըտե, ըստով, ըտով, էտենց, ըստեղի, հրմէն* և այլն:

*Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գալում, լնլում, տնլում*: Վաղակատար դերբայն ունի *էր/էր* վերջավորություն՝ *շնրէր եմ, հէլէր ա*, հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *թրխուկ, նըշանվուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են, անցյալի ձևերը՝ ի, իր, էր, ինք, իք, ին, սրանց ժխտականներն են՝ չեմ, չես, չը, չենք, չէք, չեն և չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից՝ *անտեցին, բացեցին, խըմի, սիրիր*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են *գաց, մաց*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *կնայա՛, խաշա՛, կնայնի՛, մըտի՛*: Պատճառական ածանցն է *ցըն՝ հիչըցընել, թրոցընել*: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է *ա* վերջավոր-

ություն՝ *վեռչացրա՛, խախծրա՛*, երբեմն էլ՝ *ու* վերջավորություն՝ *մօտկըցու, քընցու*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (*դիրել, թըռնել, փախնել, ուտել*): Գործածական է *կօ* հաստատական մասնիկը, բայց ոչ շարունակական իմաստով՝ *կօ էկա* (առանց այդ էլ եկա):

Գեղարքունիքի խոսվածքի բառային միավորներից են՝ *հակամա, պուտ, փօշի, ձրցում, թէշի, ջուլ, ճմմփել, մընաց, պնոզել, անջողել, պըռոնել, թունդիր, գատ, յախնի, վըր ճըխնի, քունջուպուճաղ, տանիս, հատիք, հէթիս, մանթ, հուզընգան, տըղըցկան, ժողովկըրան, միրավ, ժեխ, չըռնակօթ, գէրեզմըներ, մանթ, մողէ* (տաստ), *ճիժ, գըրթան, պուճուճակ, սըրփանք, սըրբաս, խօրօտ, ջոջ, մէշու, կըմըշտել, խամբըրել, պնդել, ճըղել, ուշկը էթալ, հէքուց չէ մէկէլ օր* և այլն:

**ԳԵՂԱՔԱՐ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Սուբաթան: Գեղաքար է վերանվանվել 1991թ.: 1988թ. վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթած հայերով: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ԳԵՂՆՈՎԻՏ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում՝ Վերին Կզնուտ: Բնակիչների նախնիները 1828-30թթ. գաղթել են Ալաշկերտի գյուղերից (Քուփոտան, Չանգագուր և Մանգասար): Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *տ* և *յե*, ինչպես՝ *տտ, տոց, յես, յեփ*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օսկոռ, օխճար, էրկու, էրինջ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *իրէք, գէղ, չոր, խընձոր*: Փոխառյալ ու բնիկ որոշ բառերում հանդես է գալիս քմայնացած *ա* ձայնավոր, ինչպես՝ *թնգնի, ջնյէլ, ննֆնր, թնդան, թնոս, քնլլն*,

*քանի, զանել, մնալու, թնք, վնգնել* և այլն: Բացարձակ բառակզբում և բառակզբի խուլ բաղաձայններից, *մ, ն* ձայնորդներից հետո *ա* ձայնավորը երբեմն շրթնայնացած արտաբերություն ունի: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *բ'ալնիս, ծիձղալ, սորվել*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *դ ու, գ էտին, գ էդ, բ'անակ, ձ'ըմեռ, բ'ալնիս, գ'ան, գ'երան, ջ'ոչ*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *խօքի, հառէչ, դ'անց, խափել, խաքնել, կարքել, կառթալ* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *կըղրել, տերղեր, դըբոց, գիղալ, պաղայել, ափառղել, ծիձղալ*: Հինհայերենյան *հ-ի* դիմաց խոսվածքն ունի *խ, ինչպես խաց, խավ, խիվանդ, խա, խետ, խառս, խօրօխպեր, խինգ, բախ, խամար, պախել, խէքաթ, խօքի*: Հաճախ բառակզբի ձայնավորից առաջ առկա է *հ-ի* հավելում, ինչպես՝ *Հ էրեվան, հ ընգնել, հ իչնել, հ'անէչ, հ'ելել, հ'ախպուր, հ ուզընգան, հ իրիկուն* և այլն: Օտար բառերի սկզբի *դ-ի* դիմաց խոսվածքն ունի *կ' կօչ, կագան, կարիք, կըստու, կնյր, կավուրմա*: Շեշտը վերջնականկային է:

Հոգնակիի կազմության մեջ խոսվածքում հանդիպում են նաև *ք, րանք, տիք* մասնիկները՝ *գօգալղարեցիք, գ էղացիք, ըտերանք, տեղրանք, կընգըտիք*: Երբեմն հանդես են գալիս կրկնակի հոգնակերտներ՝ *ճամփեքներ, միլիցեքներ, գ էղացիքներ*: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *ձ'օրու, կօվու, իշու, կօշու, հընգերներու, պապերու, թոռներու, ճըժերու, թըվերու, տատիկներու* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *անէրոց, մօրքուրոց, քուրոց*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *-ով*՝ *Գարօյ, Դօնէլ*: Բացառականը ձևավորվում է *ց-ով*՝ *գ էղից, կիսուրից, հընգերներուց*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գ էղըն կա, գ ըրքի մէչ*: Որոշիչ հոդն է *ն-ն*՝ *Մէ մատթըն պըտի էրկու կընիկ պախա*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ *էս*

*մատթ ձ'էն չէնա*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ'եզի*, եզակի երկրորդ դեմքը ունի նաև *քե* կարճ ձևը, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինք, ուրանք// հուրանք*: Ով դերանվան դիմաց առկա է *վոն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վիհ*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև *քու, մեր, հուր* (իր), *ուրանց, էտ, էսի, էտի, էնա, էղրան, էնդոր, էնդրանք, ըղրան, ըտոր* (դրա), *ըղրան, դնրըն* (դրան), *էնդուց, էստոնք, էնդոնք, ընդոնց, դնս* (այստեղ), *դատի* (այդտեղ), *էտմալ/էղմալ, էամալ// ըսմալ, էմալ, հիրնք, դոր, հըմէն* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, էլնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէլնել, կըռնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան կազմվում է *գ ու, գ ի/կի* մասնիկով՝ *գ ուքամ//գ իքամ, գ իլամ, կիտամ*, մյուս բայերինը՝ *կը/կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըխաքին, կէթամ, խօսանք*: Վաղակատար դերբայն ունի *ր-ով* վերջավորություն՝ *ծախեր էր*, հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *փրուուկ*: Եզակն բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքից՝ *ըսի, կարի, սարքին, քըշի, ըսեցի, դ ըրեցին, բ ըռնեցին, կապեցի*: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ'աց, մ'աց*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *կատուօլ ա կըրցանենք, բ'ախօվ էր փօրէր*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չէղեր ա, չըտէտէր էր*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըխասկընին* (չեն հասկանում), *չէնա* (չի անի): Պատճառական ածանցն է *ուց/ցուց մըտուցել, կայնըցուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս

ու խոնարհիչը՝ կրիստոցու, փախցու: Խոսվածքը չ բայաճանց չունի: Ներկայի հիմքից կազմվող ձևերում ն բայաճանցը ևս սովորաբար բացակայում է, ինչպես կրիսաքին (հագնում են), չրփախեր (չէր փախչում), կեղի (լինում է), կառի (առնում է), մեռի (մեռնի), գիչի (իջնում է): Հարկադրականի եղանակիչն է պրտի՝ պրտի ամուսնացուցիչ: Գործածական է կօ հաստատական մասնիկը, ինչպես՝ կօ հեռախօս ա (ահա հեռախօս է):

Խոսվածքի բառային միավորներից են՝ մրկա, տատմեր, իմալ, հորի, չրփալաղ, պրատիկ, կարքըվել, փայ ու բձմիս, խօրօտ, քրքրփուխ, հ ուզրնգան, խօսկ առնել, արաղ, դ՛առց, չուր, կրթու, քուֆրը, հրնչի, տատե, գատ, չումի մրկա, տանիս, միրավ, հիրիկուն, ջ աղաչ, հողա (գոմում առանձնացված հատված հավաքվելու համար), մուրը խանել, հրնգնավոր, քուֆուսի թնլոթ, հուրին-հուրին, խողել, մառթ, աղէ (մայր), մամէ, ճիժ, անըղնակ, քնորնգին, ժեխ, փողոց, ջաղղա, ձ՛րցում, թունդիր, իզկուրուս, ջ՛ախձրպան, ջ՛աղաչ, տրփել, ճետ, ճրգրոել, խառնիս, գրվամ, մօտիկ, լօխկընալ, հառիք, հեռթիս, խօսալէն, կակօ և այլն:

## Դ

**ԴԱՐԱՆԱԿ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Դարա: Դարանակ է վերանվանվել 1991թ.: Դարանակը հիմնադրել են 1921թ. նույն տարածաշրջանի Փամբակ գյուղից տեղափոխվածները: 1988-1989թթ. վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթած հայերով: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ԴԴՄԱՇԵՆ** - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Բնակիչների նախնիների մի մասը 1828-29թթ. ներգաղթել է Մակուից, մասամբ նաև՝ Վանի նահանգից: Հաղորդակցվում են Մակուի խոսվածքով:

Դդմաշենում բարբառակիրների մի մասի խոսքում բացարձակ բառակազմում, բառակազմի խուլ բաղաձայններից (բացի *հ,խ*-

ն), *մ,ն* ձայնորդներից հետո գործառում է որոշ չափով շրթնայնացած *մ* ձայնավորը՝ *Մանկու, մշխատել, պմհակ, տմխտակ, շմտ, սմրբել, ճմմփա, պմնիր, նմխրոչի, պմտմութուն* և այլն: Փոխառություններում և մի շարք բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *մ* ձայնավոր՝ *հմտէչ, հմշկ, խմնմք, լմլ, ժմժիկ, անգանլ, անջեր, գմրկան, հմշիվ, գմտ* (ոչիև), *մինակ, չմմիչ, ջմյնրմին, դ՛անտըկել, մմյմ, ջմհէլ* և այլն: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ն*-ի դիմաց առկա է *վո*, իսկ *ե*-ի դիմաց՝ *յե*, ինչպես՝ *վոտ, վոր, յես, յեփ*, բազմավանկ բառերի սկզբում առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օղորմի, օղըղել, էրագ, էրկու*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *թել, ձ՛րմեռ, կօտոշ, փոս*: Դդմաշենի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում բառամիջի ձայնավորի սղումը՝ *հավթել, փատտուկ, կարկրտան*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ՛ան, բ՛ալնիս, գ՛արուն, գ՛իշեր, դ՛ուս, ջ՛աղաչ, ջ՛ուր, ձ՛ու, ձ՛ուն* և այլն: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *խափել, կարք, թաքավոր, վեռչ, յեփ, հմտէչ, հ՛իչըցընել* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *փագել, փեղ, դըբա, հանգառծ, լրձել, հիդելվ* և այլն: Հետնալեզվային պայթականների դիմաց առանձին դեպքերում արձանագրվում են *ջ,ճ,չ* հպաշփականներ<sup>189</sup>, ինչպես՝ *ջ՛եղ, չմլմմ, չեռի, ջմդմ, չմսիբ*: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ՛ խէր, խալալ, խինգ, խա, խառնիս, խոր, խրմար, խառս, խավ, պախել, պախկըվել* և այլն: Փոխառոյալ բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ՛ կըրաղ, կօչաղ, կըսմ*: Բառակազմի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ՛*-ի հավելում՝ *հ՛ուստա, հ՛իրկուն, հ՛իրա, հ՛օղըրկել, հ՛էրես, հ՛էսօր* և այլն: Շեշտը վերջնավանկային է:

<sup>189</sup> Այս իրողությունը ժամանակին նկատել է Ռ.Բաղրամյանը (տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 11):

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, տանք* մասնիկները՝ *գ եղացիք, բալկեք, ախպըռտանք*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *գ ըլխից, տրնէրից*, պահպանվել են նաև *է*-ով ձևեր, ինչպես՝ *էն գ ըլխէն*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *Հ էրէվան, յերգըրի մէչք*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Հ էրէվնա, Քննվնոա, Սէվանա*: Չայնավորով ավարտվող հատուկ անունների և հասարակ որոշ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով, ինչպես՝ *Մակոյ, Տիկոյ, աղէ*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*: Ով դերանվան դիմաց առկա է *վորը* տարբերակը, որի սեռականի ձևն է՝ *վիր*, տրականինը՝ *վիրը*: Տուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի*: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *ընձընից, քեզնից, ըդենց, ընդէ, ըտըրան, հիրար, վոր մէկը, վոշ մէկը, ըստըրան, ըտըրան, ըստուց, ըտուց, ըստոնք, ըստոնց, հիրանց, վորդուց, հըմէն* և այլն:

*Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՛ալում, լննում, տալում*: Վաղակատար դերբայն ունի *էր/եր* վերջավորություն՝ *տըվէր* (են), *ուրխըցեր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *նըստուկ, փըռուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքերից՝ *արեցի, թալնեցիր, պախի, ք էրի*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ աց, մաց* (գ ացին, մացինք): Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *լըծա՛, կայնի՛*: Պատճառական ածանցն է *ցըն՝ հ էրկընցընէլ, ք անցըրցընէլ*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (*թըռնէլ, փախնէլ, ուռնէլ*): Որոշ դեպքերում բացակայում է նաև *ն* ածանցը՝ *լըցում ա* (լցնում է), *հըլէմ* (ելնեմ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *թայ, իմալ, դ՛ասատուր, շըշկըռէլ, շանվոռթի, ճիժ, յեթում, օղոռթից, հիրար գ՛ալ, վոռթարած, հօժար, աղէ* (ծեր կին), *մըկա, մօտկընալ, ջոշ,*

*քըռտընփըչէլ, պախկըվէլ, տընաշէն, խատել, միտել, ճօպան, ասէլի խէրըս, տըռճիկ տալ, անհախ, ցոնցել, պըսակել, կամ տէնալ* (ամուսնության համար թեկնածություն առաջադրել), *դուգ, ճնկատկապ, ճննվոու դ՛ընէլ, գ՛ուռդ ու գ՛էրի, շուն-շննգնլ, պըստի, հ՛առավոտ, հ՛իրիկուն, տախտ, ջ՛ըրճընքել, թախտըփել, ավէլ-թննի անել, հըմա, հիստըկել, քննանի, մառթ, հ ընչի, ճարել, մէշու, թնքըրիք* և այլն:

**ԴՊՐԱԲԱԿ** - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Նախկինում Չայքենք: Դպրաբակ է վերանվանվել 1991թ.: Բնակիչների մի մասը եկել է Ղազախից և Արցախից: 1990-ական թթ. գյուղում վերաբնակվել են Բաքու, Գանձակ, Սումգայիթ քաղաքներից, Արծվաշեն գյուղից բռնագաղթածները: Ընդգրկված է Ճամբարակ համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ԴՐԱՆՏԻԿ** - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Նախկինում Թոխլուջա: 1988թ. վերաբնակեցվել է Աղրբեջանից և Արծվաշենից բռնի տեղահանված հայերով: Ընդգրկված է Շողակաթ համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

## Ե

**ԵՐԱՆՈՍ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում Վարդերես, Չագ: Բնակիչների նախնիների մի մասը այստեղ է եկել 1829-30թթ. Ալաշկերտի գյուղերից: Հ. Աճառյանը փաստում է, որ եկել են Ալաշկերտի Խաստուր գյուղից<sup>190</sup>: Հաղորդակցվում են Սշո բարբառի Ալաշկերտի խոսվածքով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո-ի* և *ե-ի* դիմաց առկա են *տ* և *յե*, ինչպես՝ *տոտ, տոց, յես, յեպ*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն:

<sup>190</sup> Հ. Աճառեան, նշվ. աշխ., էջ 133:

Բազմավանկ բառերի սկզբում *մ*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օղորմի, օխճար, էտալ, էրինջ*: Ակատելի է, որ միավանկ բառի աճման դեպքում բառի սկզբում տեղի է ունենում *ւո>օ* անցում՝ *ւոտ>օղով, ւոտո>հոտոիգ, ւոտպ>օտպէվէրի*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *իրեկ, վեռճ, խրնձոր, փոռ*: Փոխառյալ ու բնիկ որոշ բառերում հանդես է գալիս քմայնացած *ա* ձայնավոր, ինչպես՝ *գննգնր, դ'սնոր, կնճ, հնճկ, լնրել, վննգնել, գննիգ, ննմ, քննյն, քնսնր, սննյն* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *ծիզղալ, յեռուն, հ իրգուն*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *դ ըտում, գ էղ, ճ ըծում, գ ստա, ջ ճճ, ճ ըրի, գ իշեր*: Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլերի և ձայնեղների դիմաց որպես կանոն գործառում են պարզ խուլեր՝ *դ ըտում, տապել, քրոճիգ, փոճրիս, ճ ըծում, կանտ, կատնով, թօպալ, գ ստա, ջ ճճ, մառտ, ինճ, յօտանասուն, էտալ, սուրպ, լիկ, հերեվընձի, տեղածի, հաճ* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *կուդ, կըջուջ, մաճուն, կօճօճ, կըճել, կօճճել, պաղարագ, սաղգել, փէղ, շարիգ, յեղըռջիգ, կագուդ* և այլն: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում խ հանդիպում է մեկ-երկու բառում՝ *խոդ, գ ախ*: Հաճախ բառակարգի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հ նրոր, հ առիկ, հ նճկ, հ ագոա, հ ապ, հ առէճ, հ առավող, հ ուրիշ, հ ախպուր* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ*, երբեմն էլ՝ *կ*, ինչպես՝ *կավուրմա, կուշ, կնյլոն* (մուշտուկ), *կաճաղ, կօճ*: Բաղաձայնից առաջ հպաշփականները որպես կանոն դառնում են շփական, ինչպես՝ *ծիզղալ, ծասկել, հ ըսնել, լըսվել, հ նճկ, մէշտեղ, կօճղէգ* և այլն: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում հանդիպում է նաև *կ, դիկ* մասնիկներով՝ *գ էղածիկ, ախպրդիկ, կընզըդիկ*: Տարածված է բաղադրյալ հոգնակերտների գործածությունը՝ *տրդէկներ, էրէխէկներ, մակիկներ, մառտիկներ, գ էղածիկներ, հրրագղանձիկներ*: Շատ անուն-

ներ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *կօվու, ճրժու, ամսու, անձրբելու, գ ըլխու, համու, փոսէրու, հընգերներու, տըներու, չօրներու* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *քուրոջ*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Ալաշկերդա, Մառդունա, Մէվանա*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Կօսուոյ, Տիկոյ, աղէ*: Բացառականը ձևավորվում է *ծ(ց)*-ով՝ *ախպօրիճ, գ ըլխուճ, գ էղէրուճ*, դերանունների դեպքում՝ նաև *է*-ով՝ *ընձընէ, քըզնէ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գ էղն ին, աղըլի մէճ*: Որոշիչ հոդն է *ն-ն*՝ *Մէզըն ճառքիկ չօբան կէղի*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես *էրէխէկներ վրէսի կօրաճ ա*: Մտացական հոդից հետո առկա է *ի* ձայնավորի հավելում, ինչպես՝ *հէրսի, գ ըլօխի*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քըզի, մըզի, ճ ըզի*, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են *հինկ, ուրանկ*: Ով դերանվան դիմաց առկա է *ուն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև *ընձընէ, քըզնէ, մըզնից, հինկըն, ուր* (իր), *իւրա* (իր), *ուրանց, իսա, իդա, ինա, էս, էսի, էստոր, էդոր, ըդոր, ընդոր, էդրան, ըդրուճ, էսմալ, էդմալ, հըմալ, դասի, դատի, դադ, դոր, հըմէն, ամէնկուն, հիրսնր* և այլն: Էլ շաղկապի դիմաց գործածվում է լէ ձևը՝ *մըգա լէ, փէջ լէ*:

Խոսվածքում *անել, ասել, լինել, էլնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէլնել, կըռնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան կազմվում է *գ ի/կի* մասնիկով՝ *գ իկամ, գ իլամ, կիտամ*, մյուս բայերինը՝ *կը/կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըք ըռնին, կաշխաղիս, քաղին, շարին*: Միանալով բայակարգի հագագին՝ այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ *գ ուգա, գ իշկալ*: Վաղակատար դերբայն ունի *ր-ով* վերջավորություն՝ *մեռեր ա, լըսէր իմ*, հարակատարը՝ *ուգ* վերջավորություն՝ *խըմուգ, նըստուգ*: Էական բայի ներկա ժամանակի

ձևերն են՝ *իւ, իս, ա, ինկ, իկ, ին*, անցյալի ձևերը՝ *էնկ, էր, էր, էնկ, էկ, էն*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքից՝ *ըսինկ, թօղիր, վերծինկ, բ'ածեծ, քաշեծի, ըսեծին*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են *գ'ած, մած*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *դոր ա կըտանիք, փող էր կհտէն*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չըմածէր ինկ, չէկէր էր*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըկըռնամ, չըսա*: Պատճառական ածանցն է *ծուծ նըստըծուծել, խըմծուծել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը *կընըստըծուն, հընծն*։ Հարկադրականի եղանակիչն է *բըղի բըղի բ էրէնկ*:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *կուդ, կըտոն, յեղըռջիգ, ձըծում, պուտուկ, դօպիգ, սըրպանկ, պաղարագ, արուր, պըզդիգ, մէշու, մէ փըշուր, մէ փըտտիգ, խօրխօզիգ, աղմասօրիկ, լուսուն, հիրգուն, հիւրանագ ախ, ջոճ, բ'էր, խօրօտ, անըղնակ, պաղ, բուգ, շուք, տախտ, ճամպախ, խագ, ջըղիգ, տանիկ, հառիկ, հեռտիկ, իմալ, հօրձըկտալ, մըգա, լուսուն չէ մըզլօր, օղորտ, հօրի, հընձի, դան, ախպ, ժեխ, չըռնակոթ, տիլ, պէձ, փօշի, մուխ, գըռըշտել, գ'օրձէլի, հըռըկել, թէշի, առձըգան, ջըլեր, կարքըվել, տապել, ժուռ էնել, հուզընգան, հիւշկալուսանք, դըղածկան, ճիժ, ջ'օձօ (տատ), աղէ (մայրիկ), կէսրէր, ուստ գ'ալ, կըժմըտել, կախվըզել, վըռըշնել, դըրգեձ, ճարընգան, ժօղօվկըրան, միրավ, սմի, պարէ, մօղօզիգ, հունտ, թըպլիգ, կագուդ, ճըժօվ, ճեղ, գ'ըտտան, հանդա, չումկի, չուր, չուրի, գըվա թէ, կավըռ, նընջեղել, հըրիսա, բըռձիկ, սօմի, ճըռ, հիսկել, կօվակիտ, թավլաբան և այլն:*

## Զ

**ԶՈՒԱՔԱՐ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում՝ Ակնախաչ, Չոլախաչ, Չորավոր խաչ: Բնակիչների նախնիների մի մասը գաղթել է Բայազետի Զիրոյ գյուղից<sup>191</sup>: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի և *ե*-ի դիմաց առկա են *ւո* և *յե*, ինչպես՝ *ւոտ, տոփ, յեփ, յերք*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *n*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օսկոռ, օխճար, էթալ, էրինջ*: Միավանկ բառի աճման դեպքում բառասկզբի *ւո*-ն դառնում է *օ*, *ւոտ>օտաց*: Խոսվածքն ունի *ե, n* երկբարբառային հնչյուններ՝ *իրէք, յեգ, խոդ, քաղվոր*: Փոխառյալ ու բնիկ որոշ բառերում հանդես է գալիս քմայնացած *ա* ձայնավոր, ինչպես՝ *քանի, քանի, քանիւմ, ժամիկ, քանլամ, գանենք, յան, թանվուր* և այլն: Բացաձակ բառասկզբում և բառասկզբի խուլ բաղաձայններից, *մ, ն* ձայնորդներից հետո *ա* ձայնավորը երբեմն որոշ չափով շրթնայնացած արտաբերություն ունի: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *գ'օղնալ, չօրնալ, ցամքել*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ'ան, գ'ըլօխ, գ'ըշեր, բ'անակ, գ'եղ, ջ'ուր, ձ'որ, գ'ոռ*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *անքամ, խօքի, դ'առցէք, օգ, կարքել, յերք, ժօղօվուրթ, մառթ, հ'առէչ, մէչ* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *արրել, ցաձըր, փըրգըվել, կըղրել*: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքն ունի *խ*, ինչպես՝ *խօրօխպօր, խառնիս, խօքի, խատ, խասնել, խավնել, խա, խառընիս, անասնապախ, խամար*: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *h*-ի հավելում, ինչպես՝ *հ առու, հ առ*

<sup>191</sup> Հ.Աճառյանը փաստում է, որ այս գյուղի բնակիչները եկել են Զիրոյի գյուղից և խամուրից (տե՛ս Հ.Աճառեան, նշվ. աշխ., էջ 138):

չին, հ'իմանալ, հ'ընգնել, հ'ատչ, հ'երեկընցի, հ'ընցընել և այլն: Օտար բառերի սկզբի ղ-ի դիմաց խոսվածքն ունի կ' կուռուխչի, կալմակալ, կանթաբ: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակիի կազմության մեջ խոսվածքում հանդիպում են նաև ք, բանք, վրտանք, տիք մասնիկները՝ գ' էրընդիք, վաղաշենցիք, ըտերանք, տիրվրտանք, կրնգրտիք: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ պատվու, հատվու, ձ'որու, ջ'ըրու, ճամփու, գ'ատու, ճիժերու, բ'ըթթերու, յերքերու, տրնէրու, բ'ըթթերու և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ խօրքրոջ, աներոջ: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է յ-ով՝ Դ'ըվել, Սարոյ, պապայ, մօտոյ: Բացառականը ձևավորվում է ց-ով՝ ծառից, ձ'որուց, շօրէրուց, երբեմն նաև է-ով, ինչպես՝ քեզնէ: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ մէջ կապով և սեռականով՝ ծընվէր եմ գ'եղ, փոսի մէջ, նաև նե մասնիկով՝ փոսի նե, ինչի նե (փոսի մեջ, ինչի մեջ): Որոշիչ հոդն է ն-ն՝ ջ'ուրըն կէթա, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ մատթու քէֆ լավ կեղի: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են ի հավելված՝ ընձի, քեզի, մեզի, ձ'եզի, նաև քե, մե, ձ'ե կարճ ձևերը, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ հինք, ուրանք/հուրանք: Ով դերանվան դիմաց առկա է վոն, որի սեռականի և տրականի ձևերն են՝ վի, վին: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ ուր (իր), ուրին, մեր, քեզնէ, ուրանց/հուրանց, ըտոնց, ընդոնց, վինից, էս, էղրրա//ըղրրա, էղրրան, էսմալ, էղմալ, ըմալ, էսթյւր (այսպիսի), էսենց, հիրար, դոր, դատ և այլն:

Խոսվածքում անել, ասել, լինել, ելնել, կարողանալ բայերի դիմաց գործածվում են էնել, ըսել, եղնել, հէլնել, կըոնալ տարբերակները: Գալ, լալ, տալ բայերի ներկան կազմվում է գ ու, գ ի//կի մասնիկով՝ գ ուքամ//գ իքամ, գ իլամ, կիտամ, մյուս բայերինը կը//կ մասնիկով կամ առանց դրա կըխասի, կաշխատիմ, կայնիս: Այդ մասնիկը, միանալով բայասկզբի հագագին, ձայնեղանում է՝

դառնալով գ կամ գ', ինչպես՝ գ ուգա, գէլի: Հարկադրականի եղանակիչն է պըտի, ինչպես՝ պըտի էփի: Վաղակատար դերբայն ունի ք-ով վերջավորություն՝ գ ացեր (եմ), հարակատարը ուկ վերջավորություն՝ նեղէցուկ: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ եմ, ես, ա, ենք, էք, են, անցյալի ձևերը՝ ի, իր, էր, ինք, իք, ին: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքից՝ ըսի//ըսէցի: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են գ աց, մաց: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ա կամ էր ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ խուզ ա կէնէնք, ինչ էր կէնէք: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ չեղէր էր, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ չըտէնամ (չեմ տեսնում): Պատճառական անձնանունը և ուց/ցուց խասուցել, չօքըցուցել: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս ու խոնարհիչը՝ կատթարացու, նըստըցու: Խոսվածքը չ բայաձանց չունի: Ներկայի հիմքից կազմվող ձևերում ն բայաձանցը ևս սովորաբար բացակայում է, ինչպես՝ գէլիս (կելնես), խասի (հասնի), կատինք (առնում ենք), կըմեռի (մեռնում է), մըտի (մըտնի), կըփախիմ (կփախչեմ): Գործածական է կօ հաստատական մասնիկը, ինչպես՝ կօ նըստուկ եմ (առանց այդ էլ՝ նստած եմ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ խավտիկ, չուր, թըխ, ճիժ, իրիկ, բաջօ (հորեղբոր կին), օտաց ճամբախ, ջաղղա, քէշ, բաժ, հէտոխս, հնիգ անել, նմի, մամէ, ադէ (մայր), տատէ, հունտ, կարքըվել, իմալ, էտ թավուր, թալվա, պապէ, բ'ըլել, մըկա, դան, հըռըքել, մըռութ, դ'ըրկեց, ամբըրոց, կախկըվել, բ'օլոր, մուխ, յնրս, լօտուել, ճանգել, ջանդակ, լըփօփել, պուճուճակ, թըմախ, կող ու կուշտ, իշկել, յերաբ, շխտկել, պըստիկ, ջ'ոչ, գուգ, խատել և այլն:

**ՋՈՎԱԲԵՐ** - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Նախկինում՝ Յաջի: Բնակիչների մեծ մասի նախնիները գաղթել են Մակուի շրջանից, մասամբ նաև՝ Վանի նահանգից: Հաղորդակցվում են Մակուի խոսվածքով:

Խոսվածքում մի շարք փոխառյալ և բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *ւ* ձայնավոր, ինչպես՝ *վւնեղ, վւնր, ձւն, դւնր-մւն, դւրբը, հւնխար, հւնսւվոտուն, հւնչկ, քւնեղտ, գւնսնց* և այլն: Զգալի է բացարձակ բառակցում, բառակցի խուլ բաղաձայններից (բացի *հ, խ*-ն) հետո *ա* ձայնավորի որոշ շրթնայնացում՝ *ւնչխատել, ւնրբել, տւննել, մւնդել, պւնժառ* և այլն: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի դիմաց առկա է *վո, ե*-ի դիմաց՝ *յե, ինչպես՝ վոք, վոտ, յեւ, յեգ*, բազմավանկ բառերի սկզբում համապատասխանաբար *ո* և *է*, ինչպես՝ *ոդորմի, օչխար, էփել, էրնել*, հանդիպում է նաև *վոչխար* արտասանությունը: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *վեռչ, ցորեն, չոռ, խոգ*: Բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը, ինչպես՝ *կօլնել, սօլրել, ր'աժնել*: Զովաբերի խոսվածքում առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ, ինչպես՝ *բ'այց, բ'ըննել, բ'առցել, գ'եղ, գ'ալ, դ'ուս, ձ'ուկ, դ'էգ, դ'ըննել, ջ'ուր, գ'ըլօխ, գ'էլ* և այլն: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *հօքի, հ'օքոստոս, բ'անցըրը, հանքըրնել, մառթ, բ'առցել, վեռչ, մէչ, հ'առեչ, խափել*: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *պաղահել, մրգրաղ, աբրել, փօգէմաղ, պըսազվել, հիրիգուն, խըրգել, յեղօ* և այլն: Հինհայերենյան *հ*-ի դիմաց բոլոր դիրքերում առկա է *խ*, ինչպես՝ *խաց, պախել, խէր, խըմար, խետ, խա, մէ խատ, խանել, խատ* և այլն: Առաջին շարքի ձայնավորներից առաջ հետնալեզվային պայթականները որոշ չափով քմայնանում են՝ *քւնեղտ, գ'ինի*: Հպաշփականները բաղաձայնից առաջ կարող են վերածվել շփականի, ինչպես՝ *խեզնել, հ'ւնչկ*: Բառակցի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում՝ *հ'ընգեր, հ'ուրիշ, հ'օքոստոս, հ'իմանալ, հ'ա-*

*ռեչ, հ'ւնչկ, հ'ինքը, հ'իրար, հ'ըննել* և այլն: Փոխառյալ բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ*, ինչպես՝ *կըսըր, կօչ*: Շեշտը վերջնավանկային է: Բաղիյուսական հարադրություններում կամ դրանցից ձևավորված կցականներում *ու* շաղկապի դիմաց առկա է *ը*, ինչպես՝ *դ'արը դ'աշտ, կերըխում*:

Խոսվածքում բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *տախտըկից, Կալինինոյից, տըղէրքից*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գ'եղը* (գյուղում), *դ'աշտի մէչ*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ'եզի*: Երրորդ դեմքի ուղղականի ձևերն են՝ *հ'ինքը, ընդոնք*: Յուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի*: Ով դերանվան դիմաց հանդիպում են *վոլ, վորը* ձևերը, սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը*: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *մեզնից, հ'իրանց, ըստե, ըտե, ընդե, ընդեղից, ըտա//ըտըրա* (դրա), *վորդե, հ'իրար* և այլն:

*Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ'ալըմ//ում, լւնլըմ//ում, տալըմ//ում*: Վաղակատար դերբայն ունի *եր//եր* վերջավորություն՝ *հ'էլեր* (ա), *լըծեր* (ենք), հարակատարը՝ *ած* վերջավորություն՝ *խըմած, նըստած*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Մրանց ժխտականներն են՝ *չեմ, չես, չի, չենք, չէք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքերից՝ *բ'երին//բ'երեցին, պըսազեցին, տըլին*: Տարածված են *գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի *գ'ընաց, մընաց* ձևերը: Պատճառական ածանցն է *ցըն՝ ֆըռըցընել, նըստըցընել*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր: Գործածական է *կօ* հաստատական մասնիկը՝ *կօ բ'երեր եմ* (դե բերել եմ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *հըմկա, ժօրօխկըվան, ուզընգան, հ'ըղըրկել, փօգէմաղ, պըսազվել, հիրիգուն, խըրգել, ջ'աղաչ, քւնեղտ, քարմաղ, ճըռիկ, ամբոլ, խօտաղ, խօրիկ, պըս-*

տիկ, հիւնսփոտուն, մինչեւի, ցէթել, քօ տունը շէն, իմալ, տրփոց, լօխկըցընել, յեռախօս, հնրրիկ, մնոթ, լօխկըցընել և այլն:

## L

**ԼԱՆՁԱՂԲՅՈՒՐ** - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Նախկինում՝ Քուզաջրդ: Բնակիչների նախնիները 1829-30թթ. գաղթել են Բայազետի գյուղերից: Հաղորդակցվում են Բայազետի բարբառով:

Բայազետի բարբառին բնորոշ դիրքերում խոսվածքը կանոնավորապես ունի շրթնային *մ* ձայնավորը՝ *մնթէն, շմտընալ, սմր, Մանիչար, մմճկալ, նմ, ծմխել, ծմոս, տմնջըվել, տմսը, պմյման, պմտ, կմպել* և այլն: Փոխառություններում և մի շարք բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *մ* ձայնավոր՝ *ծմծիկ, հմնէչ, անվմ, բիճմ, Քմվմո, թմլել, լմլ, խմնսք, խէքսթ, ճմք, օրինսնկ*: Լանջաղբյուրի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ քառսուն, *գէրընդի, սօրվել*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ն*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե*՝ *վոոց, վոխ, յեփ, յերք, բազմավանկ բառերի սկզբում առկա են օ* և *է*, ինչպես՝ *օխճար, օլրրել, օսկոո, օյիլ, էրկու, էրկաթ, էրինջ*: Խոսվածքն ունի *ե, ռ* երկբարբառային հնչյուններ՝ *վեց, ցօրեն, չոոս, թաքավոր*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բըոնել, բանակ, գէղ, գուրան, դուռ, դընել, ճըվածեղ, ճուկ, ջօչընալ, ջուր*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *խափել, հօքի, օքնական, խուոց, սրրփիչ, օց, մնթէն, օթ, վեոչ*: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *կըղրել, պմղմել, գիղալ, փեղ, ցաճըր, փագ, մըգրադ, գօջի* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *որժքսր, վոշ մէ, միշնսկ, ծմսկել,*

*բասվել*: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ*՝ *խող, գախ, խէտ, խօրօխալեր, խասնել, խատ, պմխել, աըրախ, խալալ*: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ*՝ *կալը, կսրիք, կօլթուդ*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում՝ *հառու, ճէրէվան, հընգեր, հուրիշ, հէսօր* և այլն: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, անք, վանք, րանք, տիք, անիք* մասնիկները՝ *սմրուխանցիք, սիգէք, ճիանք, իշվանք, գիլվանք, գէղրանք, կողրանք, խօրօխալըրտիք, անխալըրտիք, կընանիք*: Չայնավորով ավարտվող հասուկ անձնանունների, նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Տիկօյ, Հօլօյ, մֆտօյ, վէղրօյ*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Մէվանա, Քմվմոս, Հըրագղանա*: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տիրոչ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *տըղից, անշարքից, քմոիքից*, երբեմն էլ՝ *է*-ով՝ *հառավտընէ, օրէ, մօրէ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ սեռականով և *մէչ* կապով՝ *քաղաքը* (քաղաքում), *հառվըների մէչը*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*, դրսևորվում են նաև *քե, մե, ձե* կրճատ ձևեր: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են՝ *ընդոնք, հիրանք*: Տուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի*, սրանց թեք հոլովների ձևերից են՝ *ըստու, ըտու, ընդու, ըստոնց, ըտոնց, ընդոնց* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *վորք* տարբերակը, որի սեռականի ձևն է՝ *վիր*, տրականինը՝ *վիրը*:

*Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գալում, լւլում, տալում*: Վաղակատար դերբայն ունի *էր/եր* վերջավորություն՝ *դըրէր* (եմ), *տմրէր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *քընուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին, սրանց ժխտականներն են՝ չեմ, չես, չը, չենք, չէք, չեն և չի, չիր, չէր, չինք,*

չիք, չին: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից *թողեցի, տրվեցին, խափիր, բ'երին*: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են *գ'աց, մաց*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *քրցա', հ'էլի', գ'ըթի'*: Պատճառական ածանցն է *ցրն' սովորցրնել, խաբքրնել*: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է *ա* վերջավորություն՝ *բ'անցրցրրա, խըմցրրա, սովըոցրրա*, երբեմն էլ՝ *ու* վերջավորություն՝ *մօտկըցու, նըստըցու*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (*թըռնել, փախնել, կուրել, ուտել*): Ներկայի հիմքից կազմված ձևերում սովորաբար բացակայում է *ն* ածանցը՝ *հընգում* (ընկնում), *մըտում* (մտնում), *հըլեմ* (ելնել), *խաքեմ* (հագնել), *հ'իչեմ* (իջնել): Խոսվածքում գործածական է *կօ* հաստատական մասնիկը, բայց ոչ շարունակական իմաստով՝ *կօ մասի* (չէ՞ որ ասացի):

Լանջադրյուրի խոսվածքի բառային միավորներից են՝ *մըկա, մմի, բ'ընակըռել, գ'ախին, ջուխտ, համօլ, ժընջիլ, մըբբա, գ'ախնի, չուրի, դուզը, կյնը, ձ'ախումձ ուխ խօսալ, թուշ, հըմա, ընդուց, խաղալ, նեռս մննել, կըլոր տմրի, սըրախ, գ'իվմ թէ, հէսա, հիրկուն, թալվի հոդա, պըստի, ճմմփել, մննել, իմալ, կուշտը, մըռչեմ, կօխըռճել, ձ'իթխաց, վըր ճըխնի, տմնիս, հ'առիք, հ'եռթիս, ժեխ, չըոկօթան, գ'էրեզմըներ, ճիժ, մուխ* և այլն:

ԼԻՃՔ<sup>192</sup> - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում՝ Գել, Գյոլ, Գյուլենդ, Եդեգնագեղ: Բնակիչների նախնիները 1829-30թթ. եկել են Ալաշկերտ գավառից: Հաղորդակցվում են Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքով:

<sup>192</sup> Գյուղի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1984թ. լրացված թիվ 240 տետրում, առկա են նաև գյուղում 2014թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի դիմաց առկա է *ւո*, *ե*-ի դիմաց՝ *յե*, ինչպես՝ *ւոխ, տն, յեգ, յեպ, յեռ, բացառություն է որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օճխար, օսկի, էրագ, էրգանկ*: Միավանկ բառի ածման դեպքում բառասկզբի *ւո*-ն դառնում է *օ՝* *ւոդ>օդօվ, տոտ>օտտընել*: Գործածվում են *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *տէրեվ, հ'էրես, բ'եռ, կոդ, փոր*: Փոխառյալ և մի շարք բնիկ բառերում հանդես է գալիս քմային *ւն* ձայնավոր՝ *թւնբւնուգ, հւնր, հւնրօր, սիվդնւգ, կւնժ, կւնո, շւնշ, հ'իստւնգ, գւնրգել* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *գ'օդենալ, սօվրել*: Բառասկզբում ձայնավորից առաջ շատ դեպքերում առկա է *հ*-ի հավելում՝ *հ'ալիվոր, հ'առպել, հ'առեձ, հ'ըմէն, հ'իրգուն, հ'իճնել, հ'իմնալ, հ'ուզընգան, հ'ւնրօր, հ'իրար, հընզընել, հ'էրես* և այլն: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ'էրան, գ'ինձ, դ'եղնուց, ձ'ըմէրուգ, ջ'ընճըխել*: Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլերի և ձայնեղների դիմաց գործառում են խուլեր՝ *թըտու, կըտել, ուրակ, օժ, դ'ատար, առձ, սըռպել, գառտ, ուրպատ, թածըծուծել*: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *շարիգ, տագ, կադու, մօձագ, կօջագ*: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքն ունի *հ*: Օտար բառերի բառասկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *խ*՝ *խասար, խալմախալ, խըսմատ*, սրանց նմանությամբ *կանչել* բայի դիմաց գործառում է *խանչել* ձևը: Եեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում կազմվում է նաև *վանկ, տիկ//դիկ, րանկ* մասնիկներով՝ *գ'իլվանկ, իշվանկ, ձ'իլվանկ, ախպըռդիկ, քուրվըդիկ, տէկըրդիկ, կընզըտիկ, գ'եղրանկ*: Երբեմն հանդես են գալիս կրկնակի հոգնակերտներ՝ *կընզըտիկներ, գ'իլվանկներ, էրէխէկներ*: Շատ անուններ եզակի թվում, ինչպես նաև բոլոր գոյականները հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման սրըպու, ճըժու, աղվըսու, առձու, գ'իլու, գ'առու, գ'ըմշու, իշու,

խոզու, կօվու, հավու, գ՛ողերու, զօնկըջներու, օճխըրներու: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, ինչպես նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *-ու*՝ *Համօյ, Մընէյ, պապէյ*: Հատուկ տեղանունները հաճախ ենթարկվում են Ա հոլովման՝ *Վանա, Հէրէվնա, Աբարանա*: Առկա են *ծ/ց* հոլովման յուրահատուկ դրսևորումներ, ինչպես՝ *ախպըռողոնց, տէկորկընգըտոծ*: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *հընգերոճ, տալոճ, քուրոճ, կիսրոճ*: Բացառականը ձևավորվում է *ծ(ց)*-ով՝ *գ՛իլուծ, գ՛իլվանկներուծ, ախպօրիծ, ախպըռողօնծիծ, քուրօճիծ, քուրէրուծ*, երբեմն նաև՝ *-ու*՝, ինչպես՝ *ձեռէկնէէ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէճ* կապով և սեռականով՝ *գ՛էղըն* (գյուղում), *աշխըրկի մէճ*: Որոշիչ հոդն է *ն-ն*՝ *Իմ կիսուրըն մոս կըթապէր*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես *Տըղէկներ կըքօմէէ*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* կամ *իգ* հավելված՝ *ընձի(գ), քըզի(գ), մըզի(գ), ձըզի(գ)*, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինկ, ուրանկ*: Ցուցական դերանունները երկանդամ են՝ *էր, էն, էղի, էնի, իղա, ինա*, սրանց թեք հոլովների ձևերից են՝ *էղոր, էնոր, իղոր, իղոնց, էղոնց* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *տոն*, որի սեռականի ձևերն են՝ *վի, վիր*, տրականինը՝ *վին, վիր*: Անորոշ հոդը ունի հետադաս կիրառություն՝ *փըշումի, պաղի մօղ մի*: Ստացական հոդերից հետո առկա է *ի* ձայնավոր՝ *ձէողի, ցավղի, հէրէտի, գըլօխտի, մէրսի* (մայրս): Հոգնակի ստացականությունն արտահայտվում է անձնական դերանվան հոգնակի տրականի հետադաս կիրառությամբ, ինչպես՝ *տղ մըզի* (մեր ոտքերը), *ջէրեր ուրանց* (իրենց գրպանները): Հետադաս որոշ կապեր ունեն նաև նախադաս կիրառություն՝ *հօր հեղ/հըղ հօր, ճանպու վըրէն/վըր ճանպուն, ջըրի մէճ/մըճ ջըրիէ*: Էլ շաղկապի դիմաց գործածվում է լէ ձևը՝ *յես լէ գ՛իկամ*:

Խոսվածքում *անէլ, ասէլ, լինէլ, էլնէլ, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնէլ, ըսէլ, էղնէլ, հէլնէլ, կըռնալ* տարբերակները: Հանդիպում է *գալ* բայի անորոշի *հ՛իկալ* ձևը: *Գալ, լալ,*

տալ բայերի ներկան կազմվում է *գի//գ՛ու//կի* մասնիկով՝ *գ՛իկամ//գ՛ուկամ, գ՛իլամ, կիղամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըգ՛ըրիմ, գ՛ըրիմ, կուղիմ*: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն՝ *գ՛ըրէր*, հարակատարը՝ *ուգ* վերջավորություն՝ *քընուգ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *իմ, իս, ա, ինկ իկ, ին*, անցյալի ձևերը՝ *էնկ, էր, էր, էնկ, էկ, էէ*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից՝ *գ՛ըրէծի//գ՛ըրի*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ած, մած*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *գ՛ըրա՛, խըմա՛, նըստի՛, բ՛անծըրծի՛*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *իմ հեղ ա կըխօսա, տօկոս էր կըտըրվէր*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չըխախծէր իմ*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չընըստիմ* (չեմ նստում): Պատճառական ածանցն է *ծուծ//ուծ՝ թըռծուծէլ, փախծուծէլ, հակուծէլ, հասուծէլ*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *խըմծում, խըմծո՛ւ*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (*դիբնէլ, թըռնէլ, փախնէլ, կօրէլ, ուռէլ*):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *շուկ, տախտ, ջաղղա, ջըղիգ, ճոտ, հ առիկ, տիլ, մուխ, թուպ* (տերև), *կուղ, կըռուտ, խօրի, ձըծում, բ՛ըղիգ, առճըզան, հ ուզընզան, անգըջգըլա, դ ըղածկան, ճիժ, իրիգ, դըրգեծ, ջըրի միրավ, մօղօզիգ, ճեղ, գըռտան, հավգիտ, պուջուջագ, խօլտըղտագ, թատիճ, կուլտ, սաբախտան, լուսուն, լուսուն չէ մըզլօր, մըռու, պըզղի(կ), կագուխ, ճըժօվ, բ՛արգ, հ ընծուծէլ, հ իստըջըրէլ, կարկըվէլ, գըռըշտէլ, իշկալ, ծէձէլ, մըգա, լուսուն, հօրի, հանդա, հ իրար տալ, ձըկէլ, թյւրյւ-ռուգ, խէտէլ, խաճալըվա, տեղաշոր, հօխպէր, գուտկ, հւնրի/հւնր,*

ապան, աղե, ջօճօ (տատի), պարե, տադօ, հավգիտ, տրպել, հապրուգ, հուդա, հունա, թունդիր, հակլապուջիգ, թւրւնուգ, հւր և այլն:

**ԼՃԱՇԵՆ**<sup>193</sup> - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Նախկինում Պորտակ, Օրդակլու, Էրդակլու, Օրդաքլու: Բնակիչների նախնիները 1828թ. եկել են Մակուից (հիմնականում Խալֆալու գյուղից), Բայազետից, Դիադինից: Հաղորդակցման միջոցը նման է Բայազետի բարբառին՝ Մակուի խոսվածքի տարրերով:

Լճաշենում բարբառակիրների մի մասի խոսքում բացարձակ բառասկզբում, բառասկզբի խուլ բաղաձայններից (բացի *հ, խ*-ն), *մ, ն* ձայնորդներից հետո գործառում է որոշ չափով շրթնայնացած *մ* ձայնավորը՝ *մսել, մնգ, պմոտք, տմնձ, սմր, շմտ* և այլն: Փոխառություններում և սակավ բնիկ բառերում դրսևորվում է քնայնացած *մ* ձայնավոր՝ *լմլ, լմմբակ, դմնակ, մմոդ, դմոցրնել, թմմք, գմնել, հմշկ, գմյլմ, գմգմր, կրսմմթ, կմրիք*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ռ*-ի դիմաց առկա է *վո*, իսկ *ե*-ի դիմաց *յե*, ինչպես՝ *վոխ, վոռփ, յես, յեփ, յերք*, բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *օ* և *ե*, ինչպես՝ *օխձար, օչի, էրինջ, էրկանք, էրկու*: Խոսվածքն ունի *ե, ռ* երկբարբառային հնչյուններ՝ *ձեռ, վեռչ, բեռթ, վոր, գոռձ, խրնձոր*: Լճաշենի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում բառամիջի ձայնավորի սղումը՝ *գօղնալ, թաթխել, սորվել*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բարեկամ, գիրկ, դուս, ձի, ջուր*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *թաքավոր, դաթար, էք, խափել, օչիլ, բառց, վոռփ, ուրփաթ*: Նույն

<sup>193</sup> Գյուղի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1983թ. լրացված թիվ 205 տետրում, առկա են նաև գյուղում 2014թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *աբուր, մադիթ, ծիձադ, ցաձ, աբրուստ, մըգրաթ* և այլն: Հետնալեզվային պայթականները որոշ չափով քնայնանում են առաջին շարքի ձայնավորներից առաջ՝ *գէտին, գինի, կէտօր, քիթ*: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *հմշկ, լըվասկ, ծասկել, կօշկել, մէշկ*: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի խ՝ *խինգ, պմխել, բախ*: Փոխառյալ բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ՝ կմյիմ, կուշ, կրսմմթ, կըրադ*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում՝ *հանգաձ, հիրկուն, հիշնել, հուրիշ, հէրես, հընգեր* և այլն: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, անք, վանք, տանք, բանք* մասնիկները՝ *փէտք, խմյլիք, միլիցէք, ձիյանք, իշվանք, իծվանք, գիլվանք, քըվորտանք, ըստերանք*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *գիլից, գիլվանքից, լիզվից, ախճըկանից, գըլխընէրից*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէշ* կապով և սեռականով՝ *տաշտը, կըճըճի մէչք*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի/իկ* հավելված՝ *ընձի(կ), քեզի(կ), մեզի(կ), ձեզի(կ)*, առկա է նաև *քե* կրճատ ձևը: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են *ընդոնք, հիրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի*, սրանց թեք հոլովների ձևերից են *ըստու, ըտու, ընդու, ըստան, ըտան, ընդան, ըստանից, ըտանից, ընդանից, ըստըրանց, ըտըրանց, ընդըրանց* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *վոն(ը)* տարբերակը, որի սեռականի ձևն է՝ *վիր*, տրականի՝ *վին*: Լճաշենի խոսվածքում հոգնակի ստացականությունը երբեմն արտահայտվում է յուրահատուկ ձևով՝ *թնք մե* (մեր թները), *հուսք մե* (մեր ուսերը):

*Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գալում, լալում, տալում*: Վաղակատար դերբայն ունի *էր/եր* վերջավորություն՝ *գըրէր* (եմ), *գըրէր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավոր

րություն՝ *թըխուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Մրանց ժխտականներն են՝ *չեմ, չես, չի, չենք, չեք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ներկայի հիմքից *սիրի, ծախի*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *լրսա՛, վազի՛, մըտի՛*: Պատճառական ածանցն է *ցրն՝ լսցըցընել, թրոցընել*: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է *ա* կամ *ու* վերջավորություն՝ *բանցըրցո՛ւ, խըսցո՛ւ, նըստըցըրա՛, քընցըրա՛*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (*դիրնել, թրոնել, փախնել, կորել, ուռել*):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *բ՛ըլբ՛ըլուկ, թեվ բ՛ընոդ, կախվել թունդիրը, շոխկ, խագ, տանիս, ժեխ, ժոլօբ, տիլ, մուխ, մօծիր, թուփ, կուտ, յեղըռձիկ, կըռութ, վիլ, խօրիզ, ձըցում, թէշի, ուզընգան, տ՛ըղասկան, հանշկալուսանք, ճիժ, մնոթ, մօղօզիկ, գ՛ըրթան, ձ՛ու, պուճուճակ, կօլթուղ, թառթիչ, սաբախտան, կում, մըռու, պըստիկ, մէշու, ճըժօվ, գ՛ուռ, կըմըշտել, հ իրար տալ, հ՛անգընել, ցօղել, պըսակվել, հ իշկալ, տըփել, բըրթել, հըմկա, հ՛էքուց, հընչի, հ՛եսա, թամբըխել, իմալ, դոր, հ՛ախու, հէք* և այլն:

**ԼՃԱՎԱՆ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Յարփուալու: Բնակիչների մի մասի նախնիները 1828 - 29թթ. գաղթել են Պարսկահայաստանի գավառներից, 1918-20թթ.՝ Կարսի մարզից, Վանից, Մուշի ու Բուլանըլիսի գյուղերից: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վո* և *յե*, ինչպես՝ *վոդ, վոոց, յես, յերք*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օսկոռ, օխճար, էրկու, էրինջ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *իրեք, դ եդ, վոսկի, խընձոր*: Փոխառյալ

ու բնիկ որոշ բառերում հանդես է գալիս քնայնացած *ա* ձայնավոր, ինչպես՝ *շիշանկ, կյանք, ջանյէ, գանրգել, գանվան, խաննանլ, քանողի* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *չարչըրվել, ծիճղալ, սօրվել*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ՛ան, ջ՛ուր, գ՛եղ, գ՛իշեր, դ՛ար, գ՛ըլօխ, գ՛իշեր, ձ՛ըմերուկ, դ՛ուրան*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց հանդիպում են շնչեղ խուլեր՝ *խափել, մարթ, չ՛էմփածին, հաքնել, մարաք, ջ՛առթել, հառէչ* և այլն, այլ դեպքերում ձայնեղների և շնչեղ խուլերի դիմաց երբեմն հանդիպում են խուլեր՝ *ձ՛ըծում, ինճ, ունինկ, յօտ, էրտալ*: Նույն դիրքերում խուլերի դիմաց սովորաբար առկա են ձայնեղներ՝ *աբուր, ճիրոդ, ծիճղալ, էրգու, պադ, պաբէ, կըղրաձ, հադ, վոդ, կօդօրել, աբրել, պադմել, փըրգել, պըջգել, պըդի* և այլն: Հինհայերենյան *հ*-ի դիմաց երբեմն հանդիպում է *խ*, ինչպես՝ *խա, հ՛ախու, պախել*: Հաճախ բառակզրի ձայնավորից առաջ առկա է *հ՛*-ի հավելում, ինչպես՝ *չ՛էրէվան, չ՛էմփածին, հ՛ախպուր, հ՛առէչ, հ՛էսօր, հ՛ընգընել, հ՛ախու, հ՛առու* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց կարող է հանդիպել *խ* կամ *կ*՝ *խըրադ, կուռուխճի*: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակիի կազմության մեջ խոսվածքում հանդիպում են նաև *ք, րանք, տիք* մասնիկները՝ *գաղէցիք, տեղրանք, կընգըտիք*: Կարող են գործառել կրկնակի հոգնակերտներ՝ *տըղէկներ*: Հանդիպում է Յ հոլովման յուրօրինակ դրսևորում՝ *կընգըսոց*: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *Մըշու, գ՛օմշու, քըրդու, քընու, գ՛եղերու, ջանյէներու, հայերու, ծառներու, պատվըներու, թուրքերու* և այլն: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Շառօյ, Համօյ, պաբէյ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *գ՛եղից, գ՛եղրանքուց*, երբեմն նաև *է*-ով, ինչպես՝ *ձ՛եռէն*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գ՛եղըն, մարքի մէչ*: Որոշիչ հոդն է *ն*-ն՝ *էդ ժողովուրթըն*,

կրսա, քունդ ին, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ Մուրադ գետ լէ խրաղով կէթէր: Անձնական դերանվան հոգնակի տրականի հետադաս կիրառությամբ արտահայտվում է հոգնակի ստացականություն, ինչպես՝ վրրէն ուրանց (իրենց բոլորի վրա), վողներն ուրանց (իրենց ոտքերը): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են ի հավելված և գուգահեռ ձևեր՝ ընձի, մեզի//մըզի, քեզի//քըզի, ձ էզի//ձ ըզի, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են հինք, ուրանք//հ իրանք: Ով դերանվան դիմաց առկա է վոն, որի սեռականի և տրականի ձևերն են վի, վիե: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ ուր, ուրանց, էստեղ, իղա (այս), ըղի, էղրան, էղրանից, ըղոր, դաս, դասի, էղմալ//ըղմալ, հ ըմալ, հ ուր (որտեղ), ամէք, հ ըմէն և այլն: Էլ շաղկապի դիմաց գործածվում է լէ, ինչպես՝ էնդեղ լէ, էն մէզ լէ:

Խոսվածքում անել, ասել, լինել, ելնել, կարողանալ բայերի դիմաց գործածվում են էնել, ըսել, եղնել, հ էլնել, կրոնալ տարբերակները: Գալ, լալ, տալ բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է գ ի//կի մասնիկով՝ գ իկամ, գ իլամ, կիտամ, մյուս բայերինը՝ կը//կ մասնիկով կամ առանց դրա՝ կըհաքին, կեղի, պաղմէր: Բայասկզբի հագագին միանալով կամ բաղաձայնից առաջ կ-ն ձայնեղանում է՝ գընցին, գ էլնին, գըվառին (վառում են): Վաղակատար դերբայն ունի *ը-ով* վերջավորություն՝ չարչըրվէր (ենք), մացեր (ա), հարակատարը՝ ուկ//ուգ վերջավորություն՝ զինվուկ, քունդ: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ եմ, ես, ա, ենք, էք, են, անցյալի ձևերը՝ ի, իր, էր, ինք, իք, ին: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքից՝ մոռթինք, ջ առթին, ք էրին, քունին, ըսէցի, հավաքէցին, տըրվէցին, պըջգէցի: Էնել, դ ընել բայերի բոլոր ձևերը կազմվում են էն և դ ըն հիմքերով, ինչպես՝ էնա՛, էնէր էր, էնեց, դ ընէցին, դ ընէցինք: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ գաց, մաց: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ա կամ էր ձևը, երբ տրամաբանական շեշտը

կրում է նախորդ բառը, ինչպես՝ ընձի յա կըսիս, մանանա էր գ իչնէր: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ ջըվարէր ինք, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ չըխառնենք (չենք խառնում): Բայասկզբի ձայնեղից առաջ ժխտական մասնիկը ձայնեղանում է՝ ջըզհնամ, ջըվարիմ: Պատճառական ածանցն է ուց//ցուց ք ըլուցել, պարկըցուցել: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս ու խոնարհիչը՝ փախցուն, փախցո՛ւ: Խոսվածքը չ բայաձանց չունի: Ներկայի հիմքից կազմվող ձևերում հաճախ ն բայաձանցը ևս բացակայում է, ինչպես՝ կըհաքի (հագնում է), կառին (կառնեն), կեղի (կլինի), մըղին (մտնում էին), գ իչին (իջնում էին): Հարկադրականի եղանակիչն է պըղի՛ պըղի տանես:

Գործածական է կօ հաստատական մասնիկը, ինչպես՝ կօ էկա (ահա եկա):

Խոսվածքի բառային միավորներից են՝ մըկա, պըզտիկ, գնվան, գ ըրկանոց, ջան, պաքէ, իմալ, տեղաց էնել, ճիժ, ձ ըցում, թըվանք, հրօխալէր, չուրի, տըզըզ, դ ըրկեց, ճամբախ, մէթըքա, տըրփել, ջ աղաչ, ձօղ էցկել վըրէն, հառավոտ, մենձ, դընդընալ, էլման, իշկալ, սաբախտան, թառանա էնել, աբուր, ճամփել, տափել, քունել, թալել, աղըլ, ջաղղա, ժեխ, տանիք, հառիք, քնողի, մէ պուտ և այլն:

ԼՃԱՓ - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Բնակիչների մի մասը ծագումով Վերին և Ներքին Գետաշեն գյուղերից է, նաև Կարմիրգյուղ բնակավայրից: Գյուղի խոսվածքը պատկանում է բարբառների Ում ճյուղին և ներկայացնում է հիմնականում Բայագետի բարբառը՝ Մշո բարբառի որոշ ազդեցությամբ:

ԼՃափի խոսվածքում գործածական փոխառություններում և սակավ բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *ւն* ձայնավոր՝ քնվան, քուֆուն, քնոի, շուշւն, շուշպն. օրինակ և այլն: Միավանկ

բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի դիմաց առկա է *վո*, *ե*-ի դիմաց *յե*, ինչպես *վոր*, *վոտ*, *յերք*, *յես*, բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օղորմի*, *օչիլ*, *էրագ*, *էրինջ*: Խոսվածքն ունի *ե*, *n* երկբարբառային հնչյուններ՝ *ծոց*, *չոռս*, *վեց*, *օրենք*: Լճափի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *ճաշնալ*, *փատրտել*, *սօվրել*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բանակ*, *բանո*, *դանոցա*, *դուս*, *գիշեր*, *գլխի*, *ճրրի*, *ձավար*, *ջուր*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ տեքըր, հօքի, *դաթար*, *խափել*, *բանոց*, *մէչ*, *հանէչ*, *ուրփաթ*: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *մրշագել*, *կրնիգր*, *աբրել*, *էգան*, *պրդի*, *դադ*, *պաբել*, *մառդ* (ամիսը), *աբրիլ* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ կարող են վերածվել շփականի՝ *ճաշնալ*, *կրժմրթել*: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքը որպես կանոն ունի *խ*՝ *խա*, *խօրախպօր*, *պախե*, *գախ*, *էրնախող*, *խեղեղ*: Փոխառյալ բառերի բառասկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ*՝ *կօլթուղ*, *կավուրմա*, *կօնախ*, *կնրիք*, *կրամնթ*, *կրրադ*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *h*-ի հավելում՝ *հիրանց*, *Հերկվան*, *հատավոտ*, *հանէչ*, *հըմէն*, *հատտ*, *հարի* և այլն: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք*, *տանք*, *անիք* մասնիկները՝ *գեղացիք*, *քնոթիք*, *ախպրտանք*, *քրվորտանք*, *կրնանիք*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *կօլխօզից*, *մրչից*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *քաղաքք*, *պօլեզի մէչք*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, ինչպես նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ* մասնիկով՝ *Մարօյ*, *պաբել*: Հատուկ տեղանունները որպես կանոն ենթարկվում են Ա հոլովման՝ *Մէվանա*, *Քնվանու*: Ոչ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տիրոշ*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի*, *քեզի*, *մեզի*, *ձեզի*:

Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *հինքք*, *հիր*, *հիրա*, *ըստրրա*, *ըստուց*, *ըստոնց*, *ըտենց*, *էտենց*, *ըստե*, *հիրար*, *հրմէն*, *ամէք մառթ*, *վոն*:

*Գալ*, *լալ*, *տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գալում*, *լալում*, *տալում*: Անորոշ դերբայի սեռականը որոշյալ առումով կարող է արտահայտել ժամանակի իմաստ՝ *քօ գալուն* (քո գալու ժամանակ): Վաղակատար դերբայն ունի *էր/եր* վերջավորություն՝ *սիրէր* (եմ), *պախէր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *պարգուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ*, *ես*, *ա*, *ենք*, *էք*, *են*, անցյալի ձևերը՝ *ի*, *իր*, *էր*, *ինք*, *իք*, *ին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքերից՝ *արին*, *տըվին*, *ասին*, *հանեցին*: *Գնալ*, *մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գաց*, *մաց* (գացին, մացինք): Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *հիստըկա*, *նըստի*: Պատճառական ածանցն է *ցըն*՝ *թըրցընել*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (թըրնել, փախնել, ուռել):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *նըշանլու*, *նոր*, *հատավոտ*, *մըկա*, *ապէլանցի*, *աստըված կանչել*, *մընաց*, *ախճիկ առնել*, *կամփօվ տօլմա*, *կանամփ*, *թուփ* (թթու դրած կաղամբ), *փէսնփայ*, *ճնմփել*, *թուռդիր*, *իմալ*, *ճիժ*, *յեղըռճիկ*, *չըռնակօթ*, *ժէխ*, *ջոչ*, *տիլ*, *գէրէզմըներ*, *փօշի*, *ժօղօվկըրան*, *ճարընգան*, *դըրկեց*, *ձըցում*, *գըրթան*, *կըլավ*, *չադ*, *տախտ*, *տըփել*, *զաբուն*, *քառսընքակոխ*, *խուր էթալ* (հարսանիքի ժամանակ գնալ հարսի հետևից, արագ և հանդիսավոր գնալ), *հիստըկել*, *բընբընալ*, *մէշու*, *ուզընգան*, *պըշկել*, *ադու*, *օրօճիկ* (աչքի ուլունք, խխունջ), *բանջըրաբնուսիկ*, *հատիք*, *ննգոնննննն*, *գոխտու*, *մէ պուտ*, *կրժմրթել*, *մուռթուղա*, *պուճուճակ*, *զօմփ* և այլն:

**ԼՈՒՄԱԿՈՒՆՔ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում Թուսկուլու: Բնակիչների մի մասի նախնիները 1829-30թթ. գաղթել են Մուշի գավառից, Արճեշից: Ըստ Ռ.Բաղրամյանի

Լուսակունքում տիրապետում է Դիադինի բարբառը<sup>194</sup>: Այդ նույն կարծիքին է եղել Ա.Ղարիբյանը՝ Լուսակունքի (այն ժամանակ Թուսկուլու) խոսվածքով բերված հատվածը համարելով Դիադինի բարբառի նմուշ<sup>195</sup>: Սակայն ավելի վաղ Հ.Աճառյանը այս խոսվածքը իրավացիորեն դիտարկել է Մշո բարբառի շրջանակներում<sup>196</sup>: Այս խոսվածքի մասին լեզվաբանը գրել է. «Թիւսկիւլլի գիւղը, որ գաղթած է Արճէշի Գանձակ, Ջիրաքլու և Մշոյ Հատկոն, Լեզ, Մալաքանդ գիւղերէն միւսներէն բաւական կը տարբերի անով որ Ջուղայեցեց նման էականը *ա* ձայնաւորով կը բանեցնեն, ինչ. *բ՛էրեր ա, գ՛ացած ան, արթանք՛* երթանք. սակէ գատ ունի *հ-ի* տեղ *խ*, իսկ բացառականի մէջ էն և ից ձևերը: Մնացեալ կէտերուն մէջ նայն են Մշեցոց վերջին ճիւղին հետ»<sup>197</sup>: Դիտարկումները մեզ ևս բերում են այն համոզման, որ Լուսակունք գյուղում հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում *ո-ի* և *ե-ի* դիմաց առկա են *վո* և *յե*, ինչպես *վոչ, վոռց, յես, յեփ*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *ո-ի* և *ե-ի* դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *ե*, ինչպես *օսկոռ, օչխար, էրկու, էրագ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *իրեք, հ՛էրես, գ՛ոռծ, թոռ*: Փոխառյալ ու բնիկ որոշ բառերում, շատ դեպքերում բառասկզբի շնչեղ ձայնեղներից հետո հանդես է գալիս քմայնացած *ա* ձայնավոր, ինչպես *սւնդւ, ջւնյէ, վւնգէ, գւնրկէ, վւնխէնալ բ՛ւն, թւնգւ, դ՛ւնանկ, խւննչւն, գ՛ւնգէք, շւնքւնք, քւնթի, յւնշիկ* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *ծիծղալ, փաթըթվել, ամչընալ*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *դ ու, գ՛ոռծ, ջ ուր, բ՛աց, դ ուռ,*

<sup>194</sup> Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 6:

<sup>195</sup> Տե՛ս Ա.Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 92-93:

<sup>196</sup> Տե՛ս Հ.Աճառեան, նշվ. աշխ., էջ 116:

<sup>197</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 139:

*գ՛էղ, դ՛ուս, ձ՛ել*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *անքամ, հիչուցել, հառէչ, մառթ, բ՛առցել, խաքուկ, պաքել, բ՛ըթել, կարքել, հ՛էթիս* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղների *անգաջ, կըղրել, փէղըրվար, պադայել, փագել* և այլն: Նկատելի է հետնալեզվային հպականների որոշակի քմայնացում, ինչպես *իրեք, գ՛ւնգէք, քոուր, քւնթի*: Հինհայերենյան *հ-ի* դիմաց բոլոր դիրքերում առկա է *խ*, ինչպես՝ *խա, խին, խես, խինգ, խասկըցա, խառս, խօրօխալէր, խամար, պախել, խարիր, խէր, խիվանդ, խայ, բ՛ախ*: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ-ի* հավելում, ինչպես՝ *հ՛ւռէչ, հ՛վել, հ՛էրես, հ՛ւնու, հ՛էթիս, հ՛ըմէն, հ՛ընգեր, հ՛իրար, հ՛իչուցել* և այլն: Օտար բառերի սկզբի *դ-ի* դիմաց առկա է *կ՛ կուռուխճի*: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակիի կազմության մեջ խոսվածքում հանդիպում են նաև *ք, րանք, տիք* մասնիկները՝ *էրէխէք, էտերանք, կընգըտիք*: Հանդիպում են բաղադրյալ հոգնակերտների կիրառություններ՝ *տըղէքներ, մառթիկներ, էրէխէքներ, էտերանքներ*: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *կըրվու, գըժու, գըլխու, խայու, թոռու, ջըրու, անձըրելու, տիրու, օտներու, ճըժէրու* և այլն: Առկա է Ոջ հոլովում՝ *հընգէրոջ*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *-ով*՝ *Հէնդօյ, Հօլօյ*: Բացառականը ձևավորվում է *-ով*՝ *գ՛էղից, դ՛ըսուց*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գ՛էղըն* (գյուղում), *ջըրու մէչ*, երբեմն նաև *նէ* մասնիկով՝ *գ՛էղի նէ*: Որոշիչ հոդն է *ն-ն*՝ *Խացըն սարքէր եմ*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես *էտ տըղէքներ հ՛էլան*: Անձնական դերանվան հոգնակի տրականի հետադաս կիրառությամբ արտահայտվում է հոգնակի ստացականություն, ինչպես *վըրէն հուրանց* (իրենց բոլորի վրա), *քամակ ուրանց*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի(կ)* հավելված՝ *ընձի(կ), մեզի(կ), քեզի(կ), ձեզի(կ)*, գործառում է *քէ* կրճատ ձևը,

երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինք, ուրանք*: Ով դերանվան դիմաց առկա է *վոն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ընծրնից, քու, ուր, ուրին/հուրին, ուրանց, էսի, էտի, էտոնց, էդրա//էտըրա,, էտըրանց/էդըրանց, էստեղ, դաս, դասի, էտթաւր/էթաւր, էտաւր, էնքան, քմալ, հ ուր, դոր, հիրար, հրմէն, հրմընու, հրմէն ինչ, ամէք, ամէք մատթ* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հ էլնել* տարբերակները: *Փալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *զ ի//կի* մասնիկով՝ *զ իքամ, զ իլամ, կիտամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըփագեն, կըսենք, մընան*: Բայասկզբի հագագին միանալով՝ *կ*-ն ձայնեղանում է՝ *զ ընգիս, գուգես*: Վաղակատար դերբայն ունի *ր-ով* վերջավորություն՝ *ծախէր* (ենք), *զ ացեր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *դ ընուկ, բ աոցուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքից՝ *տըփի/տըփեցի, ջըրիք: Էնել, դ ընել* բայերի բոլոր ձևերը կազմվում են *էն, դ ըն* հիմքերով, ինչպես՝ *էնած* (արած), *հաջող եմ էնե* (արել), *փէջ ենք դ ընե* (դրել), *չայ դ ընեցի* (դրեցի), *դ ընի ճամփու* (դրեցի), *ձ էն չէնի* (չարեցի): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *զ աց, մաց*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես *ձ էզի յա կըսեմ, չըոիկ չէ՝ կըսենք, վորն էր կըսէր*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես *չըտըփէր ես*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըխասի* (չի հասնում): Բայասկզբի հագագին միանալով կամ ձայնեղից առաջ ժխտական մասնիկը ձայնեղանում է՝ *ջըլնի* (չի ելնի), *ջըզինան* (չեն

իմանում): Պատճառական ածանցն է *ուց//ցուց՝ խատուցել, ֆըոցուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *կըտեղավորցում, խատու, նըստըցու*: Խոսվածքը չ բայածանց չունի: Ներկայի հիմքից կազմվող ձևերում ն բայածանցը ևս հաճախ բացակայում է, ինչպես՝ *մեոիմ, եղին, աոիս, չըմըտիք*: Հարկադրականի եղանակիչն է *պըտի պըտի մընանք*:

Գործածական է *կօ* հաստատական մասնիկը, ինչպես՝ *կօ կարքին կըխօսամ* (դե կարգին խոսում եմ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *տըփել, մըկա, հընչի, մատթ, նախրագ ընա, կընիկ, յեոտտ, ճամփել//ճամփիսել, մընաց, նեղէնալ, աղանակ, խօրօտ, գ էշ, հուներ, ջաղդա, իմալ, կըոիվպօտօոոց, պաք-պըոօշտի, տեղաշոք, թալել, սաքախտան, ճիժ, դ ըրկեց, բ ըոթոց, բ ընակըոել, մուխ, չուր, ծըոել, ջ ոչ, կարքել* (նաև կանանց վերաբերյալ), *իմ կուշտ, անըղնակ, շաղ, մէ կաթ, մէ պուտ, տանիս, հնոիք, հեոթիս, պատ ու հնոիք էնել, ժէխ, չըոիկ, տիլ, սօլ, չուր մըկա, ջէք, պըստիկ, հուզել* (սիրել, ցանկանալ), *մէ փըշուր* և այլն:

## Խ

**ԽԱՉԱՂԲՅՈՒՐ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Չախրու, Սովետակերտ: Բնակիչների մի մասի նախնիները 1915-18թթ. գաղթել են Դիաղինից, Մուշի, Վանի, Բասենի, Ալաշկերտի, Երզնկայի գյուղերից: 1988-1990թթ. գյուղում բնակություն են հաստատել Ադրբեջանից բռնագաղթած հայ ընտանիքներ: Ըստ Ռ.Բաղրամյանի՝ Խաչաղբյուրում տիրապետում է Դիաղինի բարբառը<sup>198</sup>, սակայն լեզվական փաստերը վկայում են, որ այս խոսվածքը ներկայացնում է Մշո բարբառը:

Խաչաղբյուրի խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վո* և *յե*, ինչպես *վոտ, վոոց*,

յեզ, յեփ, բացառություն է որ շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *ո-ի* և *ե-ի* դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *ե*, ինչպես՝ *օյխար, օյիլ, օոնալ, էրէվալ, էրինջ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *ամչըկոտ, ասեղ, թեթըվ, խաղող*: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած *ւ* ձայնավոր, ինչպես՝ *ւնդւթ, քւնոի, քւսիբ, քւլւն, նւֆւնր* և այլն: Բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի տղումը՝ *ամչըկոտ, կարկըտան, ժողվել, հավքել, հայի*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բէրել, բանակ, գարուն, գարի, դէղին, ձի, ձուն, ջաղաչ*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *հաքնել, խափել, մէջ, օց, բանց, յեթում, օքնել* և այլն: Երբեմն խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *ավէղրան, պաղոնել, յեգրոթ, աբրել, փրրգել*: Հինհայերենյան *հ-ի* դիմաց խոսվածքն ունի *հ*, սակավ դեպքերում՝ *խ*, ինչպես՝ *խօղ, բախ, խազալ*: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ-ի* հավելում, ինչպես՝ *հէսօր, հիրկուն, հառավօտ, հէքուց, հիճնել, հընգեր, հառէչ, հուգել* և այլն: Օտար բառերի սկզբի *դ-ի* դիմաց խոսվածքն ունի *դ*, ինչպես՝ *դրստու, դօնախ, դրամաթ, դօչ, դօնդախ, դագան, դագ, դարիբ*: Բաղաձայնից առաջ հպաշփականների վերածումը շփականի պարտադիր չէ, և գործածվում են զուգահեռ ձևեր, ինչպես՝ *մէչկ/մէշկ, ծածկել/ծասկել*: Շեշտը վերջնավանկային է:

Ընդհանուր հոգնակերտներից բացի՝ գործածական են նաև *ք, անք, վանք, րանք, տիք* մասնիկները, ինչպես՝ *խընամիք, ձիյանք, իշվանք, գիլվանք, իծվանք, գէղրանք, տեղրանք, կընգըտիք*: Հան-

դիպում են հոգնակերտների կրկնակի գործածություններ՝ *էրէխէքներ, կընգըտիքներ, տըղէքներ*: Ու հոլովումը հոգնակի թվում չի դրսևորվում (օյխըրների, դաշտերի, գլխիների), եզակի թվում, *ի* ձայնավորով ավարտվող բառերից բացի, այդ հոլովման ենթարկվում են քիչ բառեր, ինչպես՝ *իշու, իծու, կատվու, գլխու/գլխի*: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *տիրոչ, քրրոչ, աներոչ, տալոչ, տէքրոչ, կիսրոչ, հընգերոչ*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *-ով*՝ *Լիսօյ, Տիկօյ, մամայ*: Բացառականը ձևավորվում է *-ով*՝ *ախաօրից, տընից, գիշերվանից*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գէղն ա, գէղի մէչ*: Որոշիչ հոդն է *ն-ն*՝ *Առշակըն գընաց*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ *Մեր Առշակ գընաց*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*: Ով դերանվան դիմաց առկա է *վան*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *քու, հինքըն, հիրա, էս, էտ, էն, էսի, էտի, էնի, էսրա, էտրա, էնդրա, էսրանք, էտրանք, էնդրանք, էսրանց, էնդրա, իմալ, էստեղ, հուր (ուր), հըմէն, համէք մէկըն, հիրար* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, էլնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէլնել, կըռնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան կազմվում է *գը//գի//կի* մասնիկով՝ *գըքամ, գիլամ, կիտամ*, մյուս բայերինը՝ *կը/կ* մասնիկով՝ *կուտենք, կըտենա*: Միանալով բայասկզբի հագագին՝ այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ *գիշաս, գիճես, գընցընես*: Վաղակատար դերբայն ունի *բ-ով* վերջավորություն՝ *գըրեր* (եմ), *գրերեր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *նըստուկ*,

<sup>198</sup> Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ:

*քրնուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*, սրանց ժխտականներն են՝ *չեմ, չես, չի, չենք, չեք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել և՛ ներկայի, և՛ անցյալի հիմքերից՝ *գ՛րրինք//գ՛րրեցինք, տրվինք//տրվեցինք*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛րնաց, մրնաց*: *Էնել* և *դ՛րնել* բայերն ունեն գուգահեռ ձևեր՝ *էն//էր* և *դ՛րն//դ՛ր* հիմքերով, ինչպես՝ *էրեց//էնեց, դ՛րեց//դ՛րնեց, էրա//էնա*: Եզակի հրամայականում տարբերվում են ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ՝ *գ՛րրա, նըստի, հասի*: Հարկադրականի ձևերը կազմվում են *պըստի* եղանակիչով: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *հ՛ուր ա կէթաս, ինչ ա կըսես, հաց ա կուտենք, ինչ էր կըսիր, ինչ էր կըսիրք*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է դերբայի վրա, ինչպես՝ *չըտէտէր եմ, չըբ՛էրէր էք*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըկառթամ* (չեմ կարդում), *չըգ՛ըրեմ* (չեմ գրում): Պատճառական ածանցն է *ուց//ցուց՝ թըռցուցել, մըտուցել, հասցուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *խըմցում, կէրցում, հ՛իչո՛ւ, մըտո՛ւ*: Խոսվածքը չ բայաձանց չունի:

Գործածական է *կօ* հաստատական մասնիկը, ինչպես՝ *կօ բ՛էրէր եմ* (արդեն բերել եմ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *կաթ, կում, շուք, տալ-դա, տախտ, ճամփա, խազ, հէթիկ, տանիս, հառիք, պատ ու հառիք էնել, տիլ, ցեխ ու տիլ, մուխ, փօշի, թունդիր, ծառի թուփ*,

*թուփ դ՛րնել, թըթու, կուտ, կըռութ, յարա, խօրիզ, ձ՛րցում, պուտուկ, ժա՛ժիկ, առճրկան, հուզընգան, աճկալուսանք, տըղածկան, մառթ, հարևան, ջուվար, մօղօզըրիկ, խօրօզ, գ՛ըռթան, հավտիկ, ձ՛ու, պուճուճակ, հունթ, կօլթուղ//դօլթուղ, թառթիչ, հընցու, հընցուցել, հ՛իստըկջ՛ըրել, հիրգուն, մըռու, պըստիկ, կակուղ, նայել, տէնալ, տըփել, ծընել, հըղի, բ՛արկ, ժըխշել, հիրար տալ, չուր, հարի (մինչև), մեծ, հօդա (հավաքատեղի), գ օմ, թալվա, փարդիչ, մօծիլ, ուոց (կավառ), հօլիկ (շան բույն), էրինջ, աչառ, դըսըր, ճըմուռ, կէսրէր, հէքնահող, մըկա, ջ՛ախճըպան, պաքել, պաչել, ճըլօթել, թուշ, ժօղօվկըրան, ճարընգան, բիճս, հօրքուր, հօրօխպէր, մօզի (մոր հետ երկրորդ ամուսնու տուն տարվող երեխա), գ ըլօխ հարցուցել, ավարեկ, դէվա, դընգ, մունսթ, հօնքուր-հօնքուր գ՛իլէր, կարքըվել (նաև կանանց վերաբերյալ), հօրթում//հէրթում, պաղըռել (ատել), տըրաքել, յեղըռճիկ, տափօցի, գախախօրել, հընգնավորել (սարսափել, կատաղել) և այլն:*

## Ծ

**ՇԱԿՔԱՐ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում՝ Կոռքար: Հիմնադրել են 1828թ. Ալաշկերտի Հասան-փաշա, Քարձոր, Մացկերտ և Ֆերան գյուղերից գաղթածները: 1878թ. գյուղում հիմնվել են Մշո գավառից գաղթած նոր գերդաստաններ: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի և *ե*-ի դիմաց առկա են *տ* և *յե*, ինչպես՝ *տոռտ, տոոց, յես, յեզ*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *n*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օսկի, օճխար, էրազ, էրգու*: Նկատելի է, որ միավանկ բառի աճման դեպքում բառի սկզբում տեղի է ունենում *տո>օ* անցում՝ *տոտ>օղներ, տոպ>օտպէվէրի*: Խոսվածքն ունի *է, ո* երկբարբառային հնչյուններ՝ *գ՛էղ, հէղեվ, չոռս, սըխտոր*: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայ-

նացած *սի* ձայնավոր, ինչպես՝ *հ'սիզկ, վսիզնել, գ'սիզսր, քսիզսն, չսիզիր, ջսիզել, սիժել, ժսիժիկ, միյնսնկ, քսիսիր, կյսնք* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի տղումը՝ *սորվել, ծիզզալ, ամճրնալ*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *դ'նու, ճ'եռ, գ'եղ, ճ'ուկ, գ'իշեր, ճ'ի, ճ'ավար, բ'ազուգ*: Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլերի և ձայնեղների դիմաց որպես կանոն գործառում են պարզ խուլեր՝ *ճոտ, տանիկ, ինճ, ժողովուրտ, հառսանիկ, հրնճի, լավուտուն, շոկ, նախրոճի, հառեճ, ճ'րծում, ճամպա, խոկի, թուպալ, վաճուն, իրեկ, քոճսրի, խած* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *պրժգել, ուղել, արբել, շաղ, պաղերագվ, քուտիգ, կրղրած, մաճուն, փագ, պաղ, պրզգիգ, կաղու, փեղե, կառաֆաղ, գ'եղին* և այլն: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում, ինչպես՝ *սովամախ, պախել, խով, խոխպեր, խու, խառս, խավես, խառսնաքուր, խառսրնիկ, խեղրն, խամով* և այլն: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հ'առու, հ'ուստագ, հ'ընճի, հ'առեճ, հ'ուրիշ, հ'երես* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ*, ինչպես՝ *կուշ, կոնախ, կրղիգ*: Բաղաձայնից առաջ հպաշփականները կարող են դառնալ շփական, ինչպես՝ *վոշ մե, անզրժներ, ծիզզալ* և այլն: Շեշտը վերջնականկային է:

Հոգնակին խոսվածքում հանդիպում է նաև *կ, անկ, րանկ, տիկ, դիկ, վրդիկ* մասնիկներով՝ *գ'եղածիկ, գ'իլանկ, ճ'իանկ, գ'եղրանկ, կրնզրտիկ, ախպրդիկ, քուրվրդիկ*: Տարածված է կրկնակի հոգնակերտների գործածությունը՝ *գ'իլանկներ, ճ'իանկներ, գ'եղրանկներ, տրդեկներ, մատտիկներ* և այլն: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *քուրզու, ճ'սկու, գ'ըլխու, քսսպու, օժու, ճիժու, օտտերու, ծրնօղներու, խավերու* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *աներոճ, քավորոճ, կիսրոճ*: Հատուկ տեղանունները Ա հոլովման են ենթարկվում՝ *Հերանտա, Օակքարա, Քսվսնա*: Չայ-

նավորով ավարտվող հատուկ անձնանունների, նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Բաբեյ, Կարոյ, աֆտոյ, թսնկոյ*: Բացառականը ձևավորվում է *ճ(ց)*-ով՝ *տարեզնիճ, պրոկըներուճ*, այլ դեպքերում՝ նաև *է*-ով՝ *մօղէն, ընճընէ, քրզնէ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *դ'ուսըն* (դրսում), *գ'ըրկի մեճ*: Որոշիչ հոդն է *ե-ն*՝ *Մատտրն կրնզան կրսա*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ *Բմ խեր գինա*: Ստացական հոդից հետո առկա է *ի* ձայնավորի հավելում, ինչպես՝ *գ'ընդըներսի, մագերսի, գ'ըլխուսի*: Հոգնակի ստացականության արտահայտման յուրահատուկ եղանակ է անձնական դերանվան հոգնակի տրականի հետադաս կիրառությունը, ինչպես՝ *վրզը մեզի* (մեր վզերին), *ճ'եռ ուրանճ* (իրենց ձեռքերը): Անորոշ հոդը կարող է գործածվել հետադաս՝ *քուրու մե, հախ մը, փրշում*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընճի, քեզի, մեզի, ճ'եզի*, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինկ, իւրանկ// ուրանկ*: Ով դերանվան դիմաց առկա է *տն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *դ'ու, քու, ընճընէ//ընճընից, քեզնէ//քեզնից, ուր//հուր* (իր), *իւրա* (իր), *իւրանճ//ուրանճ, ընդոր//էնդոր, եղի, էտուն, էդոնճիճ, էսմալ, եղմալ, ըմալ, էստեղ, էղա տեղ, դոր, հըմէն, հըմընուն* և այլն: Էլ շաղկապի դիմաց գործածվում է լեճը՝ *չուր մըգա լե, էրզըսիս լե*:

Խոսվածքում *անել, ասել, լինել, էլնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէլնել, կրոնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *գ'ի//կի* մասնիկով՝ *գ'իկամ, գ'իլամ, կիդամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըբ'ընէր, կէնէն, դ'նէն*: Գործածական է *գալ* բայի՝ *ի* հավելվածով ձև՝ *պրդի աֆտօն իգ'ա*: Միանալով բայասկզբի *հ*-ին՝ *կ*-ն ձայնեղանում է, ինչպես՝ *գուգենկ, գ'էլնի, գ'իշկա*: Վաղակատար դերբայն ունի *բ-ով* վերջավորություն՝ *եղեր ա, մաճեր էր*, հարակատարը՝ *ուգ* վերջավորություն՝ *կորուգ, պախուգ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն

են՝ *եւ, ես, ա, ենկ, էկ, են*, անցյալի ձևերը՝ *ենկ, էր, էր, ենկ, էկ, էն*: Ընդհանրապես, դիմավոր բայի եզակի առաջին դեմքի իմաստով սովորաբար գործածվում է հոգնակին, ինչպես՝ *յես կըսիրինկ, յես կըր ընենկ, յես գ՝ացեր ենկ*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքերից՝ *խուզին, դ՝ըրէծիր: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ ած, մած*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *շաղ ա սիրա, էդ տըղին էր կառնենկ*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չեղեր ա, չըտէսեր եւ*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըթըռնի, չեղիս*, ընդ որում՝ ժխտական մասնիկը, միանալով բառասկզբի *հ*-ին, դառնում է ջ՝ *ջուզեն, ջիշես*: Պատճառական ածանցն է *ծուծ/ուծ՝ խախծուծել, պարբծուծել, հիծուծել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը կըջ *օճըծու, ջ՝ օճըծո՛ւ, գիծու, հիծո՛ւ*: Հարկադրականի եղանակիչն է *պըղի պըղի հարգես*:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *չուր, մըգա, անըղնակ, ճիծ, պուղ, կատ, կեսրեր/կեսեր, բուզ, պաղ, խօվ, մէ փշուր, կըծմըտել, հուզել* (սիրել), *տանիկ, դ՛ուտ վըր դ՛ըտան, հառիկ, հէտսիկ, խավղիկ, ժէխ, փօղոց* (աղբանոց), *չըթիգ, խըրիսա, հանդա/հանդէ, ճեղ, փօշի, ջաղդա, ադէ, պարէ, անի, թատվոն, թէլիգ, գ՛ըտտան, տաղօ, դ՛ըրկեց, հունտ, խաղտուն, կուլտ, կըլավ, հուզընգան, թուռշի, գօմա, նըշանդըվէկ, պաղարակ, կագօ, հօրի, մէշու, ջ՝ աղաճ, թողդի, սէլաֆ, ջ՛ոճ, գուզ, կըտոն, ամբըրոճ, բաղան, կարկել* (նաև աղջկա համար), *մօձիլ, պըզդիգ, ջուղաբ էնել, քօխկ, ճագըրտկասպ, պուջուջագ, թանկօ, տիլ, մըղօզիգ, ճընջուխ, մըռուտ, խատունիգ, իմալ, կըմընի, մըռու, մէգ ավուր, հախ մը լէ, ծըռել վըրէն, աբուր, տեղաշոր, քասա, տալվ, պակել, կընիգ էնել* և այլն:

**ՕՍԱԿԱՇԵՆ**<sup>199</sup> - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Նախկինում՝ Քերիմքենդ, Վերին Գանձակ: Վերաբնակեցվել է 1828-1829թթ.: Բնակիչների նախնիների մեծ մասը գաղթել է Բայազետի Արծափ, Դիգա գյուղերից, Մուշից, մյուսները՝ հարևան Գանձակ գյուղից:

Գյուղի խոսվածքը ներկայացնում է Բայազետի բարբառը: Բայազետի բարբառին բնորոշ դիրքերում կանոնավորապես գործառում է շրթնային *ան* ձայնավորը՝ *անչըկոտ, կմբաս, պմճառ, տմխտակ, ծմբավ, ճմնց, սմմի, շմտ* և այլն: Փոխառություններում, հաճախ էլ՝ բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *ան* ձայնավոր՝ *անժել, դ՛անտակ, դ՛աննանլ, դ՛անխձ, ջ՛անթել, խունանր, հանխպուր, հանցանկ, հանէջ, ճ՛անք, գաննել, գանտ, գանթուն, իմանլ, վանսանկ, խէքանթ, գանգանր, կըսմանթ, կանյիմ, կանյիշ, ֆանդ, քանմանր*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ռ*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *վո* և *յե՛* *վոչ, վոր, յես, յեփ, բազմավանկ բառերի սկզբում՝ օ* և *է*, ինչպես՝ *օխճար, օչիլ, օրօճ, էրէվալ, էրկու, էրինջ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *ճ՛եվ, վեց, աներ, ջ՛ոչ, կըլոր, խըմոր*: Օտղկաշենի խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *լօկընալ, հանվընալ, սօրվել*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ՛արեվ, գ՛անգըտել, դ՛ըմակ, ճ՛ի, ջ՛օրի*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *խաքնել, դ՛անթար, խափել, մմբաք, օչիլ, օց, ուրփաթ, փօղանք, վոռփ, սըռփել*: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայ-

<sup>199</sup> Գյուղի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1998թ. լրացված թիվ 503ա տետրում, առկա են նաև գյուղում 2014թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

նեղներ՝ *ծրձաղ, մբրուստ, մզլատիգ, մվեղիս, օքուղ, փեղ, հարգ* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *հնշկ, հ իշնեկ, ծասկեկ, կօշկեկ, միշնանկ*: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ՝ խառցընել, խում, պմխել, ք ախ*: Նկատելի է հետնալեզվային պայթականների քմայնացում՝ *խեքսթ, քուրք*: Խոսվածքում *տր* խմբի դիմաց երբեմն առկա է *յր՝ կըյրել* (կտրել), *կօյրել* (կոտրել), *պմյրուք* (պատրույգ): Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ՝ կմրիք, կմփաղ, կութի*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ՝*-ի հավելում՝ *հ առտ, հ անցսկ, հ իմանալ, հ ինքք, հ իրսք, հ էսօր* և այլն: Շեշտը վերջնականային է: Բաղիյուսական հարադրություններում *ու* շաղկապի դիմաց նկատելի է *ը*-ի գործածություն՝ *տուներ տեղ, ձ ունր ք ուք*:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, անք, վանք, բանք, տանք, անիք* մասնիկները՝ *քենիք, ճմմփեք, ձ իյանք, իձվանք, իշվանք, գ իլվանք, գ էղրանք, մխպրտանք, տէքրտանք, կընանիք*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Կմրոյ, Մմրոյ, Տիկոյ, Թումոյ*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Հ էրեվնա, Սեվանա, Մմոտունա*: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տիրոյ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *աներից, ք էրնից, գ ինուց, գ ըլխընէրից*, երբեմն էլ՝ *է*-ով, *ինչպես օրվրնէ, հազարէն*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *կութին* (կուրու մեջ), *խողերի մէչք*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ էզի*, նաև գործածվում են *քե, մե, ձ է* կրճատ ձևերը: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են՝ *ընդոնք, հ իրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի*, սրանց թեք հոլովների ձևերից են՝ *ըստու,*

*ըտու, ընդու, ըստոնց, ըտոնց, ընդոնց* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *վոն* տարբերակը, որի սեռականի ձևն է՝ *վի*, տրականինը՝ *վին*: Խիստ հազվադեպ նկատվում է հետադաս կապերի նախադաս գործածություն՝ *խըտ հիրար* (իրար հետ):

*Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ՝ ալում, լալում, տալում*: Վաղակատար դերբայն ունի *էր//եր* վերջավորություն՝ *գ՝ ըրէր եմ, գ ըրէր ա*, հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *նըշանվուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին, սրանց ժխտականներն են՝ չեմ, չես, չը, չենք, չէք, չեն և չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես ներկայի հիմքից՝ *սիրի, ծանկի*, այնպես էլ անցյալի հիմքից՝ *ք էրէցին, մշխատէցին*: *Գնալ* և *մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՝ աց, մաց*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *փագա, էփա, նըստի, խաքի*: Պատճառական ածանցն է *ցըն՝ լօկըցընել, խաքցընել*: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է *ա, նան ու* վերջավորություն՝ *նըստըցըրա, կէրցըրա, բանցըրցու*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (դիբել, թըռնել, կըբնել, կուրել, փախնել, ուռել):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *մփէր, որժքսք, կմթ, պուտ, սմոուց, պմդ, պուգ, շուք, խօվ, տմնիս, հ՝ անիք, ժէխ, չըոնակօթ, տիլ, մուխ, փօշի, թուփ, կուտ, յեղըոճիկ, կըոութ, քըոչիկ, վիլկ, մուրթուղա, ձ ըցում, թէշի, ուզընգան, ծընընդկան, հնշկալուսանք, ճիժ, սմոթ, տմփոցի, մօղօզըրիկ, գ ըոթան, ձ ու, պուճուճակ, թառթափ, խօքուխաց, հ առավոտ, կում, մըոու, պըստի(կ), մէշու, ք՝ արկ, կըմըշտել, թօրգել//թօնել//թօղել, հ իրսք տմլ, հ ընցըցընել, հ իստըկջըրել, հըղօղել, ցայել, գ էտին պըշկել, կմրքըվել, պըսակվել, հ իշկալ, տմփել, տըփել, գըոըշտել, խատել,*

պըլուրել, շոր կնրոյ, մրկա, չումի, հ էքուց, օղարթ, իմնլ, հրնչի, հ էսա և այլն:

**ՄԱՂԿՈՒՆՔ** - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Բնակիչների նախնիները գաղթել են Մակուից, Խոյից և Վանից 1828-29թթ.: Հաղորդակցվում են Մակուի խոսվածքով:

Խոսվածքում մի շարք փոխառյալ և բնիկ բառերում դրսևորվում է քնայնացած *ü* ձայնավոր, ինչպես՝ *խննչնլ, օրիննլ, գննել, թննիկել, քնսնր, թնք, քնսիք, քնլնլ, գնտ, չննիչ*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի դիմաց առկա է *վո*, *ե*-ի դիմաց՝ *յե*, ինչպես՝ *վոտ, վոր, յես, յերք*, բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օղորմի, օչիլ, էրինջ, էրկու*, սակայն *ոսկի, ոչխար* բառերը ունեն *վոսկի, վոչխար* արտասանությունը: Խոսվածքն ունի *ե*, *ո* երկբարբառային հնչյուններ՝ *իրեք, մէշտեղ, շոք, պախկըվոցի*: Ծաղկունքի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում բառամիջի ձայնավորի սղումը՝ *հասկընալ, սօվրել*: Թեև առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ, ինչպես՝ *բ անակ, գ իշերը, գ էղ, բ ան, գ աթա, բ էրել, ձ ըմեռ, ձ ուկ, ջ ուր*, սակայն դրանց զուգահեռ սովորական է պարզ ձայնեղների գործածությունը (*գիշեր, դուս, դրնել, բերել, ձավար* և այլն): Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *շոք, վեռչ, հօքի, կարաք, հ իչքքընել, հանքել, ջ ոչ, յերօթական, մառթ, հ էրթիկ, ձ քցում*: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *կըղրել, հ իրգուն, գնրգել, հ էրգէն, ցերեգ, գիդալ, սըբաս, փեղ, դըբոց* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ կարող են վերածվել շփականի, ինչպես՝ *մէշտեղ, Հ էշմիածին*: Հո-ի դիմաց *ֆօ* է առկա միավանկ բառերի սկզբում, ինչպես՝ *ֆօղ* (հոտ), *ֆօրթ* (հորթ), *ֆօր* (հոր): Բառակզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում՝ *հ իմանալ, հ առաջ, Հ էրեվան, հ ըմէն, հ առու, հ էրթիկ, հ ըլնել, հ ընցնել, հ արի, հ իչքքընել, հ էրգէն, հ ընգեր, հ ընգնել* և այլն: Ժամանակին

Ռ.Բաղրամյանը նկատել է, որ Ծաղկունքի խոսվածքում էի ձայնավորներից առաջ առկա է *գ, կ, ք > ջ, ճ, չ* անցում<sup>200</sup>:

Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հոգնակի գոյականները ենթարկվում են Ի հոլովման (ախճըկների, տըղերքի, դաշտերի), սակայն երբեմն հանդիպում են Ու հոլովմամբ ձևեր՝ *լիգուներու, վոսներու*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունները, ինչպես նաև որոշ հասարակ անուններ սեռականը կազմում են *յ*-ով, ինչպես՝ *Խընկոյ, Գարոյ, վէրոյ*: Խոսվածքում բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *քարից, կօվերից*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է *ո*-ով՝ *քարից, կօվերից*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *Աշտարակ* (Աշտարակում), *կըճըճի մէչք*, հաճախ էլ՝ տրական հոլովով, ինչպես՝ *դըբոցին* (դպրոցում), *հիվանդանոցին* (հիվանդանոցում), տըլի մըչին (ցեխի մեջ): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*: Երրորդ դեմքի ուղղականի ձևերն են՝ *հ ինքը, ընդոնք, հ իրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի*: Ով դերանվան դիմաց բարբառախոսները վկայում են *օվ* տարբերակ, որի սեռականի և տրականի ձևն է՝ *ում*: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *հ իրա, ըտա, ըտան, ըտանից, ըտանք, ըտանցից, ըտըրանք, ընդոնցից, ընդոնց, ըտուց, ընդըրանից, ընդըրա, ըստա, ըտա, ընդա, ըտանից, ըտըրանից, ըտենց, հիրար, վորդե, վորդեղից, վորդուց, հրմընու*:

Գալ, լալ, տալ բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գալըմ//ում, լնլըմ//ում, տալըմ//ում*: Վաղակատար դերբայն ունի *եր//եր* վերջավորություն՝ *էկեր* (ա), *սիրեր* (ինք), հարակատարը՝ *ած* վերջավորություն՝ *էփած, նըստած*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Սրանց ժխտականներն են՝ *չեմ, չես, չի, չենք, չէք, չեն և չի, չիր, չեր, չինք, չիք, չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անց-

<sup>200</sup>Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 11:

յալի հիմքերից՝ *ասի, արեցին*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գաց, մաց*: Պատճառական անձանցն է *ցրն՝ հիչքցրնել, հանքցրնել*: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է *ա* վերջավորություն՝ *թսմբզցրա՛, հանքցրա՛*: Խոսվածքում չկան չ անձանցով բայեր:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *կուշտը, միշտական, քարկրտիկ, հրմի, կրգել, ջոչ, պրստիկ, պուզ/բ՛ուզ, պրսակել, ուզրնգան, խի, պաչել, մառթ, քրոչիկ, կանամփ, ճավիկ, փիրվագ, սիրեխ, բ՛ագուկի ճախ, չոթթան, վոնց, հանքցրնել, հալ, շսմոփն, յերոթթական, պաղրոել, զոռել, նոր, ցան, քիթը քրթին յուրա էթալ, թուխս, կրտուր, օջորթ, հերթիկ, մուխ, ժեխ, ժուլթ, չրոփկ, տիլ, փօշի, կօճ, աղինջ, վիլ, ձըցում, բըղոթ, ծրնրտկան, վրզթթ, պուճուճակ, թարթափ, սրոու, մէթթա, թսմփկել, յեթիմ* և այլն:

**ՕՈՎԱՍԳՑՈՒՂ** - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Նախկինում՝ Ճապոտիկ, Չիրուխլու: Գյուղը 1828թ. հիմնել են Բայազետի Արծափ գյուղից եկած գաղթականները: Հաղորդակցվում են Արծափի խոսվածքով:

Խոսվածքում մի շարք փոխառյալ և բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *ս* ձայնավոր, ինչպես *թսնկ, քիֆտսն, դէվլստ, ձսն, թսնսն, լսնլուխ, թսնսիք, շիշսնբսնդ, սսնֆսր, միյնսնգ, սնձսնփ, չսնդրր, լսն*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի դիմաց առկա է *վո*, իսկ *ե*-ի դիմաց՝ *յե*, ինչպես՝ *վոդ, վոռծ, յես, յեգ*, բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օդօրմի, օճիլ, էրգու, էրգաս*: Խոսվածքն ունի *ե, ռ* երկբարբառային հնչյուններ՝ *բ՛են, կանեպ, սոխ, հիվանդանոծ*: Խոսվածքն ունի *ե<sup>ք</sup>* հնչյուն, որը, թվում է, *ե* երկբարբառային հնչյունի մի տարբերակն է, և հանդիպում է բառավերջում, ինչպես նաև գործառում է իբրև եական բայի եզակի երրորդ դեմքի ձև: Օովագյուղի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում բառամիջի ձայնավորի սղումը՝ *հասկընալ, սօվրել*: Բառասկզբում գործառում են շնչեղ

ձայնեղ բաղաձայններ, ինչպես՝ *ջ՛ուր, ձ՛ուն, ձ՛ուկ, բ՛են, բ՛աց, գ՛իշեր, դ՛ուռ, դ՛եմ, դ՛ընել, դ՛աշտ*: Բառամիջում ու բառավերջում հպական ու հպաշփական ձայնեղների ու շնչեղ խուլերի դիմաց գործառում են խուլեր՝ *յոտ, ծանօտ, ուրախուտյուն, մարտ, էպել, տըպոծ, միլիծա, խածատուն, վոռծ, անկամ, ինձ, հառէճ, շրոճել*: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *ամսրգան, կրդրել, հավաղալ, շնօրագալ, մեձ, կընիգ, կօրիդ, օջորթ, կլօջ, պադ, աշխաղանկ, ագ, փարաղիչ, մաձուն, հեդօ* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ կարող են վերածվել շփականի, ինչպես՝ *վոշ մէ, ծասկել, մէշկ*: Հո-ի դիմաց *ֆօ* է առկա միավանկ բառերի սկզբում, ինչպես՝ *ֆոդ (հոտ), ֆոր (հոր)*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ՛*-ի հավելում՝ *հ՛ընծրնել, հ՛ուրիշ, հ՛ուր, Հ՛անձապ, հ՛իմանալ, հ՛ավելի, հ՛ատդ, հ՛իրես, հ՛եսօր, հուստ* և այլն: Երբեմն հինհայերենյան *հ*-ի դիմաց գործածվում է *խ*, ինչպես՝ *խառցընել, խասցընել, խագալ, խեդ, խոդ*: Բառամիջում և բառավերջում *հ*-ի դիմաց հաճախ առկա է *յ*, ինչպես՝ *են գ՛այ, պայել, սրայ, մայ, գօյվել*: Փոխառյալ բառերի բառասկզբի *դ*-ի դիմաց առկա է *կ*, ինչպես՝ *Կսնրաման, կրսս*: Շեշտը վերջնականային է:

Խոսվածքում գործառում են նաև *կ, դանկ, անիկ* հոգնակերտներ, ինչպես՝ *գ՛եղածիկ, ախպըրդանկ, քրվորդանկ, կընանիկ*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը կազմվում է *յ*-ով, ինչպես՝ *Վազօյ, Չսնկօյ, Կարօյ*: Խոսվածքում բացառականը ձևավորվում է *ծ(ց)*-ով՝ *Հ՛անձրպիծ, հառդրվանիծ, բ՛անագիծ*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէճ* կապով և սեռականով՝ *ծընվեր եմ Օօվագյուղ, գ՛ըրկի մէճը*, շատ տարածված է այս իմաստի արտահայտությունը տրական հոլովով, ինչպես՝ *ջ՛ըրին, պուլիգին, հ՛ատդին, գ՛եղին, կօլխօզին, դ՛աշտին, գավօդին, մէշուն, փրոփն, խանուտներին, քաղակին, կըջուջներին, նույնիսկ՝ գ՛եղի մըճին*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի*: Երրորդ դեմքի ուղղականի ձևերն են՝ *հ՛ինկր, ընդոնկ*,

հ'իրանկ: Ով դերանվան դիմաց առկա է վորը ձևը, բարբառախոսները վկայում են սեռականի և տրականի ուս(ը) ձևը: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *քեզնից, հ'իրանցը, էղի, էնի, ըստու, ըղու, ընդուն, էստսյր/ըստսյր* (այսքան), *ըսսյր* (այդքան), *ընդսյր, ըդենց, ումից, հ'ուր, վորդե* և այլն:

Խոսվածքում Ա, Ե խոնարհումներին զուգահեռ՝ բայն ունի նաև Ի խոնարհում՝ *աշխաղին, կնստիմ, ունին, տանին, առնիս* և այլն: Գալ, լալ, տալ բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գալըմ/ում, լսյլըմ/ում, տալըմ/ում*: Հանդիպում է *գալ* բայի՝ ենթադրական ապառնու *գ'ուկա* ձևը: Վաղակատար դերբայն ունի *ը*-ով վերջավորություն՝ *գ'ոռածէր եմ, գոյվէր ե՞*, հարակատարը՝ *ուգ* վերջավորություն՝ *քընուգ, նըստուգ*, ժխտականը՝ *ե՞* վերջավորություն՝ *չին տրպե՞* (չէին ծեծի), ընթացակցականը՝ *էն* վերջավորություն՝ *ուղէլէն, վագնէլէն*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, է/ե՞, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին: Սրանց ժխտականներն են՝ չեմ, չես, չե՞, չենք, չէք, չեն և չի, չիր, չէր, չինք, չիր, չին*: Փաստորեն, եզակի թվի երրորդ դեմքում յուրօրինակ ձև է հանդես գալիս և՛ հաստատական, և՛ ժխտական խոնարհումների դեպքում՝ *պըսագված ե՞* (վաղակատար ներկայի հոգնակի երրորդ դեմքն է՝ *պսակվել են*), *գալըմ ե՞, նըստուգ ե՞, գոյվէր է, հըլնում չե՞ հըլնում* (լինում է, չի լինում): Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքերից՝ *ասեծի//ասի, ուղարգեծի, սիրեծի, քաշեծի, արկելին, տրպին, խըրկին* և այլն: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գընած, մընած, իսկ լինել* բայինը՝ *իլ/հ իլ (իլէ, չիլէ, հ իլէ, հ իլուգ)*: Պատճառական ածանցն է *ծըն (ցըն) խասծընել, ամուսնածընել*: Եզակի հրամայականն ունի *ե, ի* վերջավորություններ, ինչպես՝ *արե՞, լըսե՞, նըստի՛, կայնի՛*: Ըղձական ապառնին եզակի երրորդ դեմքում ունի *է* վերջավորություն՝ *պայէ* (պահի), *անէ* (անի): Ըղձական անցյալի ապառնին, դրանից կազմվող ենթադրական ու հարկադրական եղանակների

անցյալի ապառնիները ունեն վերլուծական ձևեր՝ *հ'ընծընէր ին* (անցնեին), *հ ուստ կըճարէր իր* (որտեղից կճարեիր), *պըղի առնէր ինկ* (պիտի ամուսնանայի): Խոսվածքում չկան չ ածանցով բայեր:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *առուտուր, ուզընգան, մինսկ, ձ'ու, թորոն, թորան փարաղիչ, խեջերկատ// խերջըրկատ, մուտուղա, գ'եղախաղիկ, թոտա, քաֆ, քսֆգիր, մարել* (տրորելով ջրի մեջ լուծել), *թսսգս, տըպոց, ճիժ, բ'էտ, իսան, ըհընճի, սոսի, բընագըրեկ, չուրի, լեռ քար, թավլա, հուստ, ջ'ոճընալ, կուշտը, խեղ, օջօրք, կլօջ, խեռն հ'իրնից, փլից տուն, դ'իվեր, դ'իվերի ճամփով, գալօ, հորօխպօր, հողա, տախտ, կու, սըրայ, կըվանոց, թըխտըմոր, լօրիգ, տուջ, թորան շուրթ, հ'առադուն, հ'իրկուն, ուժը ախտել, մէ քիճ, պադարակ, կանեպ, թացոտ, թօռ էտալ, լայեղին, խըշալէն, մէ բ'էրան, յախնի, չուր լուս, խեր ու բ'արին, սեվ ու սուք, տախտ, հըմի, ճատկապ, տըգաշոր, վենձ, սըբաս, պուդ, մըռու, հադու, պըզղի, պուգ, մօղօզիգ, կունարկ, ծընընտկան, կըղուր, ժեխ, չըրիգ, խընօծի, տիլ, մուխ, թուփ, կուդ, աղինջ, վիլ, վըրըշնել, բըլել, պըսագվել, հ էսա, հ էքուց չէ էլօր, հ էք և այլն:*

**ՇՈՎԱԶԱՐԴ** - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Նախկինում՝ Աջամխան, Հաջի Մուխան, Մուխան: Բնակիչների մի մասի նախնիները 1829-30թթ. գաղթել են Մուշից, Ալաշկերտից: Հետագայում այստեղ են բնակեցվել արսուրյալներ Մարուխանից, այլ գյուղերից: Գյուղն ունի *եղականների* (տեղացիների՝ նկատի ունեն հին գաղթականների), գաղթականների, սարուխանցիների թաղեր: Գյուղի խոսվածքը Մշո և Բայազետի բարբառների մի յուրօրինակ խառնուրդ է՝ Ում ճյուղին հասուկ ներկայի գերակշռությամբ: Սարուխանցիների թաղում, այնուամենայնիվ, պահպանվում է Բայազետի բարբառը:

Շովազարդի խոսվածքում գործածական փոխառություններում և սակավաթիվ բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *սի* ձայնավոր՝ *ջսյլէ, քուֆուսի, քսսիք, թսրգի, բսնգս, լսրել* և այլն:

Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի դիմաց առկա է *վո*, *ե*-ի դիմաց *յե*, ինչպես՝ *վոր*, *վոտ*, *յեփ*, *յերք*, բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *ո* և *է*, ինչպես՝ *օխճար*, *օչիլ*, *էրէվան*, *էրագ*։ Խոսվածքն ունի *ե*, *ո* երկբարբառային հնչյուններ՝ *մենք*, *դ ըրկեց*, *փոցրդ*, *խընձոր*։ Ծովագարդի խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկում ձայնավորի սղումը՝ *ավէղրան*, *փաթըտել*, *բ'ածնել*։ Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ'ան*, *բ'այց*, *բ ըռնել*, *ձ ըրի*, *ձ ուկ*, *զ ըրակետ*, *զ եղ*, *դ աս*, *դ ար*, *ձ ավար*, *ջ ուր*։ Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *տէքօրկընիկ*, *վառթ*, *խափել*, *բ'անցըր*, *փոցանք*, *վեռչ*, *հառէչ*, *օց*։ Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *արբել*, *գիդալ*, *հանգառճակի*, *ցաճըրնալ*, *ծրձղալ*, *փագել*, *փէջ*, *փէղ*, *թանգ*, *տէրղէր*, *Հագօփ*, *կըրնել* և այլն։ Հինհայերենյան *h*-ի դիմաց որպես կանոն գործածվում է *խ* էն *զ'ախ*, *պախել*, *խաքնել*, *խանել*, *խող*, *խաց*, *խօրօխալէր*, *խէտ*, *խին* և այլն։ Փոխառյալ բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ* կամ *կ'*՝ *կանիշ*, *կօչաղ*, *կանիշ*, *կօնդախ*, *կուշ*, *կըլալ*։ Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *h*-ի հավելում՝ *հ'ատէչ*, *հ'էսօր*, *հ'ըլնել*, *հ'իմանալ*, *հ'ըմէն*, *հ'էքուց*, *հ'իրան-հ'իրան*, *հ'ատտ*, *հ'ախպուր*, *հ'ուստ* և այլն։ Շէշտը վերջնավանկային է։

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք*, *երք*, *տանք*, *րանք*, *անիք* մասնիկները՝ *քէչէք*, *տըղէրք*, *ախպըրտանք*, *ըտերանք*, *կընանիք*։ Բացառականը ձևավորվում է *ց*-ով տրնից, մըչից։ Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *զ'եղը* (գյուղում), *ջ ըրի մէչը*։ Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, ինչպես նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ* մասնիկով՝ *Միրօյ*, *Վանօյ*, *դ'ասատույ*։ Հատուկ տեղանունները որպես կանոն ենթարկվում են Ա հոլովման՝ *Մէվանա*, *Ռուսաստանա*։ Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տիքոյ*։ Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի*,

*քեզի*, *մեզի*, *ձ'եզի*։ Ով դերանվան դիմաց գործառում է *վոն* ձևը, որի սեռականն ունենում է *վի*, *վիր*, իսկ տրականը՝ *վին*, *վիրը* ձևերը։ Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *քու*, *ձ'եր*, *քեզնէ*//*քըզնէ*, *հ'ինքը*, *հ'իրա*, *հ'իրանք*, *էս*, *էսի*, *էտ*, *էտա*, *էտը*, *էդոր*, *էնոր*, *ըդըրան*, *ըտըրանց*, *ստոնք*, *ըտոնք*, *ըստե*, *ընդե*, *ըդենց*, *հըմընին*, *ուրիշ*, *ամէն մէկ*, *հ'ըմէն ինչ*, *ամէք հիրաւ*։

Գալ, լալ, տալ բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *զ'ալում*, *լնլում*, *տալում*։ Լինել բայի անցյալի հիմքը հաճախ դրսևորվում է էղ ձևով (էղէ, էղավ), իսկ *զնալ*, *մնալ* բայերինը՝ *զ'աց*, *մաց* ձևերով (զ'ացի, մացե)։ Վաղակատար դերբայն ունի էր//եր վերջավորություն՝ *զ'ըրէր* (եմ), *նըստեր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *սարքուկ*։ Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ*, *ես*, *ա*, *ենք*, *էք*, *են*, անցյալի ձևերը՝ *ի*, *իր*, *էր*, *ինք*, *իք*, *ին*։ Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքերից՝ *տըվին*//*տըվէցին*, *ասի*//*ասէցի*, *սարքինք*//*սարքէցինք*։ Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *փագա*, *նըստի*։ Պատճառական ածանցն է *ցըն*՝ *հ'ընցըցընել*, բայց երբեմն հանդիպում են *ցուց* ածանցով կազմություններ, ինչպես *հ'ընցուց*, *վէրցուցի*։ Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (դիրնել, թըռնել, փախնել, ուռնել)։

Խոսվածքի բառային միավորներից են՝ *նըստել*, *պըստի*, *արուներ քաշել* (հարազատություն զգալ), *խըրկել*, *հընչի*, *զ ըրկանց*, *վառթի նըման*, *ջօջ*, *ֆըռալ*, *ուզել* (խնամախոսել), *մառթի տալ*, *վախտ*, *մըկա*, *հիմի*, *քախընքել*, *հիստըրկել*, *քըռդի հառսանիք*, *րօպէն մէկ*, *հէսօր իրէք օր*, *մէկ հըլնել*, *դօրօվ*, *դ ուոր*, *ծընել* (ասվում է անասունի վերաբերյալ, չեզոք բայ է), *իմալ*, *սեղանին քաշել*, *պըսակվել*, *հախու*, *քըթիվ անել*, *ճիժ*, *բանդան*, *պուտուկ*, *տեղաշոր*, *ջէրգօվ*, *ձ'ուկ բ'ըռնօղ*, *դանէն*, *տըզուգ*, *բ'օպիկ*, *հիշկալ*, *ծիձղալ*, *օռծըկըտալ*, *տըփել*, *գըռըշտել*, *խաձել*, *փիձել*, *զ'օղտու*, *վըռթըրկալ*, *ջուղաբ անել*, *քարալըղ անել*, *սըրփանք*, *չուր*, *թէշի*, *ջուլ-փալաս*, *դ ըրկեց*, *միրավ*, *պուտ*, *պուզ*, *ճոթ*, *ժէխ*, *տանիս*,

հառիք, չըռիկ, տիլ, կեծ ու կարմիր, մուխ, պաղարաք, խավկիթ, աղմասօրիգ, մօղօզիկ, գ՛ըռթան, բ՛ըփուկ, հունթ, լուսուղ եւ, հ իրկուն, արեվմըտոց, խօրօտ, ջ՛ոչ, հուռթել, քիսել, քօմել, թօրգել, հիստըկջ ըրել, վիլ, ձ ըցում, յեղըռճիկ և այլն:

**ՕՈՎԱԿ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Ներքին Ջաղալու: Հիմնադրվել է 1827թ.: Բնակիչների նախնիները եկել են Մուշից, Խլաթից, Բայազետից: Ըստ Հ.Աճառյանի՝ բնակիչները եկել են Մշո Օնձալու գյուղից<sup>201</sup>: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ա-*ի և *ե-*ի դիմաց առկա են *ա* և *յե*, ինչպես՝ *աա*, *աոց*, *յես*, *յեգ*, բացառությամբ *աք* շաղկապը, որն ունի *օք* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *ա-*ի և *ե-*ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օսկոռ*, *օխճար*, *էրինջ*, *էրագ*, երբեմն հանդիպում է՝ *ե*, ինչպես՝ *էրվանդ*: Խոսվածքն ունի *ե*, *ո* երկբարբառային հնչյուններ՝ *գ իձեր*, *ձ ըմեռ*, *գ՛ոռծ*, *խոս*: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած *ü* ձայնավոր, ինչպես՝ *թüգü*, *քüսիր*, *գüրկել*, *ջüյէլ*, *քüվüնցի*, *չüյիր*, *քüնի* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *ծըձղալ*, *սօվրել*, *հավթել*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ՛էրել*, *գ՛եղ*, *գ՛իձեր*, *դ՛ուռ*, *ձ՛ուկ*, *ձ՛ըմեռ*, *ջ՛ուր*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *կարքին*, *անքամ*, *խօքի*, *ընթունել*, *մառթ*, *վեոչ*, *մէչ*, *շոք*, *կառթալ*, *բ՛անցըր* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *Պէղրոս*, *բըղի*, *սըռոօվ*, *մըզլօր*, *հ իրգուն*, *առդ* և այլն: Հինհայերենյան *հ-*ի դիմաց խոսվածքն ունի *խ*, ինչպես՝ *խինգ*, *խամար*, *խին*, *խասնել*, *խօքի*, *խօրօխպէր*, *խէտ*, *խանաք*, *խոդ*: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ՛*-ի հավելում,

ինչպես՝ *հ՛էվէլի*, *հ՛անէչ*, *հ՛անաչի*, *հ՛էսօր*, *հ՛ընգեր*, *հ՛ուշիկ-հ՛ուշիկ*, *ախչիկ հ՛ուգել*, *հ ընչի* և այլն: Օտար բառերի սկզբի *դ-*ի դիմաց խոսվածքն ունի *կ յ* կույ: Հպաշփականը բաղաձայնից առաջ կարող է վերածվել շփականի՝ *աշք*, *բօշկա*: Շեշտը վերջնական կային է:

Հանդիպում են բաղադրյալ հոգնակերտներ՝ *մառթիկներ*: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *բիձու*, *ճըժու*, *գ՛ըլխու*, *կօվու*, *շօքու*, *ախչիկներու*, *տարիներու*, *ճըժերու*, *թըվերու*, *թօններու* և այլն: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Տըրէլ*, *Հակօյ*, *պապէշ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *գ՛եղից*, *քընուց*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *մեր գ՛եղ* (մեր գյուղում), *գ՛եղի մէչ*, նաև՝ *նե* մասնիկով՝ *կյանքիս նե*, *գ՛եղի նե*: Որոշիչ հոդն է *ն-ն*՝ *Խէրըն չօբան ա*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես *Հ իրկուն Պէղրոս հընգերներու խէտ գ իքա*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի*, *քեզի*, *մեզի*, *ձ՛եզի*, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հ ինք*, *ուրանք/հուրանք*: Ով դերանվան դիմաց առկա է *տն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի*, *վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *քու*, *ուր*, *ուրին*, *ուրանց*, *էս*, *էսի*, *էսա*, *էտա*, *ընդուց*, *դüսի*, *դüտի*, *դաս*, *դատ*, *դան*, *ընդեղ*, *հ իրար*, *հ՛ուր* և այլն: Սովորական է *վըր* և *մըչ* կապերի նախադաս կիրառությունը, ինչպես՝ *մըչ իմ էրած գ՛ոռծի*, *վըր էտ ախչրկան*, *վըր սեղնին*:

Խոսվածքում *անել*, *ասել*, *լինել*, *ելնել*, *կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել*, *ըսել*, *եղնել*, *հէլնել*, *կըռնալ* տարբերակները: *Գալ*, *լալ*, *տալ* բայերի ներկան կազմվում է *գ ի/կի* մասնիկով՝ *գ իքամ*, *գ իլամ*, *կիտամ*, մյուս բայերինը՝ *կը/կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըխըլըսի*, *կիշկա*, *գ ըթին*: Միանալով բայասկզբի հազագին կամ հանդես գալով բայասկզբի ձայնորդ, ձայնեղ հնչյուններից առաջ՝ այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ *գէլի*,

<sup>201</sup> Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 139:

գ'ավաքա, գըլըցա: Հարկադրականի եղանակիչն է *բըղի*, ինչպես *բըղի էթան*: Վաղակատար դերբայն ունի *բ-ով* վերջավորություն՝ *գ ացեր* (եմ), *քոցեր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *սարքուկ*, *քաղուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ*, *ես*, *ա*, *ենք*, *էք*, *են*, անցյալի ձևերը՝ *ի*, *իր*, *էր*, *ինք*, *իք*, *ին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքերից՝ *տըվինք//տըվեցինք*: *Էնել* (անել) բայի բոլոր ձևերը կազմվում են *էն* հիմքով՝ *թըրաշ էնոյ*, *ջան չէնե* (չի արել), *գ ոռծ էնա* (արա): *Գնալ*, *մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ աց*, *մաց*: Եզակի հրամայականում տարբերվում են ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ՝ *թըրաշա՛*, *կայնի՛*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *շատ ա գարգեմ*, *գ ընատականներն էր կրպին*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես *չեղեր եմ*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չէնեմ* (չեմ անի): Բայասկզբի հագագին միանալով ժխտական մասնիկը ձայնեղանում է՝ *ջուզեցե* (չի ուզել), *ջեղէր* (չէր ելնում): Պատճառական ածանցն է *ուց//ցուց մըտուցել*, *խօսըցուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *թըրցուս*, *տեղավորո՛ւ*: Խոսվածքը չ ածանց չունի: Հաճախ ներկայի հիմքից կազմվող ձևերում բացակայում է նաև *ն* ածանցը՝ *առիմ*, *զեղի*, *եղի*, *գ ըթին*, *գ իչիմ*, *կըխասին* և այլն:

Գործածական է *կօ* հաստատական մասնիկը, ինչպես՝ *կօ ընձի տէսէք* (դե ինձ տեսեք):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *հընչի*, *հօրի*, *ճիժ*, *իմալ*, *մրկա*, *քօնձախ*, *բ ըլբ ըլուկ տուն*, *հօլըկ* (շան բույն), *օթաղ*, *սըրախ*, *ճար*, *տանիս*, *հ էթթիս*, *խացատուն*, *թավլա*, *ըթար*, *աղէ* (տաս), *դ ըրկեց*, *թըվիջ ըրի բօշկա*, *հունթ*, *քէլթանք* (<քէլ էթանք՝ եկ

գնանք), *տաղէ*, *կակօ*, *սաբախտան*, *գ արնան գ ըլօխ*, *խըլըսել*, *չուր*, *ափէր*, *ճամփել*, *ջուղար*, *հ իրգուն*, *քօմել*, *ձ էո թալել*, *կիշեռք*, *մըզլօր*, *ջանդառղի*, *բօռալ*, *թըրաշ էնոյ*, *քնսիբ*, *կուչ*, *քըռվրկան* և այլն:

**ՕՈՎԱՍԱՐ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում՝ Նորաշեն, Թագազյուղ: Օռվասար է վերանվանվել 2006թ.: Բնակիչների մի մասի նախնիները 1829 և 1878թթ. եկել են Ալաշկերտի գյուղերից: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո-ի* և *ե-ի* դիմաց առկա են *տ* և *յե* (հաճախ՝ *ե*), ինչպես՝ *տիս*, *տձ*, *եես*, *յերկ*, բացառություն է *ոք* շաղկապը, որն ունի *օք* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *ո-ի* և *ե-ի* դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օսկոռ*, *օճիլ*, *էրգու*, *էրտալ*: Նկատելի է, որ միավանկ բառի աճման դեպքում բառի սկզբում տեղի է ունենում *տ>օ*, *յե>է* անցում՝ *տոյ>օդներ*, *յեգ>էգներով*, *տոպ>օպանոծ*: Խոսվածքն օրինաչափորեն ունի *ե*, *ո*, սակավ դեպքերում՝ նաև *ի* երկբարբառային հնչյուններ՝ *կենկ* (կյանք), *ցօրեն*, *թոռ*, *քաղվոր*, *իւրըն*, *իւրդ*: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քնայնացած *ււ* ձայնավոր, ինչպես՝ *քււնի*, *հււզււր*, *զււրգել*, *թււզււ*, *ււշիգ*, *վււզնել*, *ււրււրա*, *խւււրօր*, *միյնււզ* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *չօրնալ*, *սօվրել*, *հ անծըզել*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ ան*, *բ անծըր*, *գ եղ*, *գ ըլօխ*, *գ ախ*, *դ աշտ*, *դ ընել*, *ձ էո*, *ձ ի*, *ջ ուր*, *ջ օվ*: Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլերի և ձայնեղների դիմաց որպես կանոն գործառում են պարզ խուլեր՝ *առտեն*, *կըտել*, *խած*, *բ անծըրնալ*, *ազգիծ*, *օծ*, *ճամպա*, *հ անէձ*, *օճիլ*, *աճկ*, *հախտոյ*, *կակավ*, *իրեկ* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *առդ*, *ախճիգ*, *տարեզան*, *էրգու*, *դըբոռոծ*, *պարէ*, *փըրգել*, *կադու*, *կըդրել*, *ծէձել* և այլն: Հինհայերենյան *հ-ի* դիմաց խոսվածքում *խ* է հանդես գալիս բառի բոլոր

դիրքերում, ինչպես՝ *խօխպեր, գ'ախ, խեր, խառս, խասնել, խօքի, խամօվ, շրնախավոր, խող* և այլն: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հ ընգեր, հ'առէճ, հ'ախպուր, հ'երես, հ'էվել, հ'առծրգել, հետտիգ* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ*, ինչպես՝ *կուշ, կօնախ*: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում հանդիպում է նաև *կ, տիկ, դիկ* մասնիկներով՝ *օսկիկ, փեսեկ, կրնգրտիկ, խօխպըրդիկ, հ ընգերտիկ*: Հանդիպում են կրկնակի հոգնակերտների գործածության դեպքեր՝ *փեսեկներ, փանողիկներ, տըղեկներ*: Որոշ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը՝ հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *Մըշու, խորու, ձ'իու, մառտու, 'երգընկու, օրերու, թամբըներու, պաբերու, կըռիվներու, հավակարարներուն* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *կիսրոճ*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Հերանոսա, Ծակքարա, Քննվնոա*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Բալէ, Սակոյ, Դննվոյ, Ջերոյ*: Բացառականը ձևավորվում է *ծ(ց)*-ով՝ *գ'եղիծ, օրերուծ*, երբեմն նաև *է*-ով՝ *ձ'եռնէ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէշ* կապով և սեռականով՝ *դ'աշտըն* (դաշտում), *դ'աշտի մէճ*: Որոշիչ հոդն է *ն*-ն՝ *Քարավանըն կերտա*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես *Բւ հ ընգեր գ'իկա*: Ստացական հոդից հետո առկա է *ի* ձայնավորի հավելում, ինչպես՝ *խօրսի, մըղէսի, ձ'եռսի*: Հոգնակի ստացականությունը կարող է արտահայտվել անձնական դերանվան տրականի հետադաս կիրառությամբ, ինչպես՝ *թէվ իւրըն* (իր թները): Անորոշ հոդը հետադաս կիրառություն ունի, ինչպես *մառտ մի, ախճիգ մի, հախպուր մի*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի(զ)* հավելված՝ *ընձի(զ), քրզի(զ), մըզի(զ), ձ'ըզի(զ)*, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինկ, ուրանկ//ընդոնկ*: Ով դերանվան դիմաց առկա է *տն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վի*: Դերանվանական ուղիղ և

թեք ձևերից են նաև՝ *մեր, ուրանձ, ուր, իւրըն, ուրնօվ* (իրենով), *ուրին* (իրեն), *իդա, էդի, էնի, էդրան, ընդուծ, էդրուծ, ըսմալ//էսմալ, էդմալ//իդմալ, իդատեխ, իդաքան, դէս, դէն, դադի, հըմէն, հիւրար, դոր, հ ուր* (ուր) և այլն: Էլ շաղկապի դիմաց գործածվում է լէ ձևը՝ *խօխպեր լէ, վանկ լէ, խեր լէ*:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէլնել, կըռնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *գ'ի//կի* մասնիկով՝ *գ'իկամ, գ'իլամ, կիդամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըծէձա, կերտան, գ'ըրիմ*: Միանալով բայասկզբի հազագին՝ այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես *գախտա* (հաղթում է), *գ'իճի* (իջնում է), *գ'ընցիս* (անցնում է): Վաղակատար դերբայն ունի *ր-ով* վերջավորություն՝ *բ'երեր ա, թալեր իմ*, հարակատարը՝ *ուզ* վերջավորություն՝ *գ'ըրուզ, նըստուզ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *իմ, իս, ա, ինկ, իկ, ին*, անցյալի ձևերը՝ *էնկ, էր, էր, էնկ, էկ, էն*: Երբեմն դիմավոր բայի եզակի առաջին դեմքի իմաստով գործածվում է հոգնակին, ինչպես՝ *յես կըռնինկ, յես չաշխադինկ*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքերից՝ *տըվէցիկ, դ'ըրէծին, թալի*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ'ած, մած*: *Դ'ընել* բայը ներկայի հիմքից կազմվող ձևերում ունենում է *ա* լծորդ ձայնավոր, ինչպես՝ *դ'ընան, կըր'ընան*: *Էնել* բայի անցյալ կատարյալի ձևերը կարող են կազմվել և՛ *էն*, և՛ *էր* հիմքերով, ինչպես՝ *էրէծի, էնէծի*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *դոր ա կերտաս, հինկ ա էգեր ա, խօխպերներն էր կըպայէն*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չըճանճըծեր ինկ, չեղեր ա*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըկըռնամ, չըխասկընամ*, ընդ որում՝ ժխտական մասնիկը, միանալով բառասկզբի *հ*-ին, դառ-

նում է ջ՝ ջրնգիս (չես ընկնի), ջէլէր ինկ (չենք ելել): Պատճառական ածանցն է ծուծ//ուծ՝ սովըռծուծել, տրզլօզծուծել, խասուծել, հիճուծել: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս ու խոնարհիչը՝ կրսովըռծու, փախծո՛ւ, կրխասուս, կրխակու, հիճո՛ւ: Հարկադրականի եղանակիչն է պըղի//բըղի՝ ինճ պըղի եղեր, բըղի էնինկ:

Խոսվածքի բառային միավորներից են՝ աղաքվա, խօխպեր, ջ՛օճօ (ծեր կին), տաղօ, չրոիգ, ջաղդա, խսրսնագ ախ//խըրրամգ ախ, պաբէ, չուրի, իւրդ, կաբրար, դ՛իգանոճ, մըգա, խօրիգ, համօլգի, հանդա, մընած, հայըսպանուտյուն, ճ՛եռըծխաղ, մատտ (ամուսին), բ՛ըղիգ, կէսրէր, մանջ, խսրօր, ինճօր, ւն... ւն, միյնսնկ, օսմանծու տեխ, փարա, իմալ, ըռուք, խանք խանել, ռաստ գ՛ալ, անըղան լար, յեղունեկ, պըզղիկ, հ՛եռտիգ, հ՛առիկ, փըշում//փըշումի, ջընախավոր, սաբախտան, աղէ (տատ), պաբէ, սրսնա, ծաղրիէրես, խըռօել, մըխըռնել և այլն:

**ՇՈՎԻՆԱՐ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում՝ Քյուլաղոան: Բնակիչների նախնիները եկել են 1828-1829թթ. Պարսկահայաստանից և Ալաշկերտից: Ըստ Հ.Աճառյանի՝ գյուղի բնակիչները եկել են Նահենից, Օնճալուից և Կրագումից<sup>202</sup>: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի և *ե*-ի դիմաց առկա են *տ* և *յե*, ինչպես՝ տոպ, տոճ (ոչ), յես, յեգ, բացառություն է որ շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *n*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ օխճար, օսկի, էրգու, էրագ: Նկատելի է, որ միավանկ բառի աճման դեպքում բառի սկզբում տեղի է ունենում *տ>օ* անցում՝ տոպ>օտպէվէրի, տոդ>օդներ: Խոսվածքն օրինաչափորեն ունի *ե*, *n* երկբարբառային հնչյուններ՝ իրեկ, քեռի, թոռ, սըխտոր: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում

<sup>202</sup> Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 139:

հանդես է գալիս քմայնացած *ա* ձայնավոր, ինչպես՝ վննգնվ, քննի, յնն, գնրգել, բ՛սրնագ, ժնճիկ, սիֆտնագ, խսրիք, թննգն և այլն: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում բառամիջի ձայնավորի սղումը՝ ավէղրան, յեռուսն, սովրել: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ գ՛եղ, գ՛ոռճ, գ՛իշեր, դ՛անակ, ճ՛ըմեռ, ճ՛էտ, ճ՛ավար, ճ՛ու, ջ՛ոճ, ջ՛աղաճ: Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլերի և ձայնեղների դիմաց որպես կանոն գործառում են պարզ խուլեր՝ գ՛ատա, միճինգ, հարգանկ, պաղմուտուն, միլիծա, թըտու, կանանճի, ուսուծիճ, խապել, բըտել, կարակ, խէլօկ, յետում, Գ՛իրկոր Նարեկէճի և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ դըբրոճ, տէրդէր, լուճ, խօրօղ, մէգ, աբրել, ուղել, պաղասխան, կօրիդ, մաճուն, փէղ, պըզղիգ և այլն: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքում խ է հանդես գալիս բառի բոլոր դիրքերում, ինչպես՝ պախել, գ՛ախ, խօխպեր, խատսընիկ, խամար, խէկատ, խառս, խօրել, խէր, խասկընալ, խօկի և այլն: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *h*-ի հավելում, ինչպես՝ հ՛ամբրոճ, հ՛առու, հ՛սնէճ, Հ՛էրանոս, հ՛էսօր, հ՛էրես, հ՛ավալ, հ՛առաճի և այլն: Օտար բառերի սկզբի *h*-ի դիմաց խոսվածքն ունի *կ*, ինչպես՝ կօնախ, կուրբան, կուվաթ, կաճաղ, կառկառ, կալիբ, երբեմն նաև *կ*, ինչպես՝ կըսմատ: Շեշտը վերջնավանկային է:

Չոզնակին խոսվածքում հանդիպում է նաև *կ*, *անկ*, *րանկ*, *տիկ* մասնիկներով՝ փէսէկ, գ՛իլանկ, տեղրանկ, ըտերանկ, կընգըտիկ: Որոշ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ առճու, գ՛ոմու, ճ՛որու, սըրպու, արեվու, խավու, կօվու, գ՛իլու, գ՛ըլխու, մննգու, ճըճէրու, ճ՛եռնէրու, յեգնէրու, բօստըննէրու, գ՛եղածիներու, պաղէրու, օղնէրու և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ կիսրոճ, քուրոճ: Հատուկ տեղանունները երբեմն ենթարկվում են Ա հոլովման՝ Ջօլաքարա, Մաղդունա: Ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ Մարօյ, Կարօյ: Բացառականը

ձևավորվում է ծ(ց)-ով՝ *ասկիծ, պաղէրուծ*, երբեմն նաև *է-ով՝ ձեռնէն, էն յանէն*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէձ* կապով և սեռականով՝ *զ էղըն* (գյուղում), *զ ոմու մէձ*: Որոշիչ հոդն է *ն-ն՝ Իմ խէրըն միլիծա յէր*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես *Կաճըղներ տարան*: Հոգնակի ստացականությունը կարող է արտահայտվել անձնական դերանվան տրականի հետադաս կիրառությամբ, ինչպես՝ *ղօշեր ձ է* (ձեր կրծքերը), *ձ էոներ մե* (մեր ձեռքերը), *ձ էո ուրանծ* (իրենց ձեռքերը), *զ ըլօխ ուրանծ* (իրենց գլուխները), *լէգու ուրանծ* (իրենց լեզուները), այդ իմաստը կարող է արտահայտվել նաև հետադաս գոյականի տրական հոլովով՝ *զ ըլօխ օխճըրին* (ոչխարների գլուխները): Սակավ դեպքերում հանդիպում է անորոշ հոդի հետադաս կիրառություն՝ *բ աժակըմ*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ էզի*, նաև կրճատ *քե, մե, ձ է* ձևեր, երբորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինկ, ուրանկ//ընդոնկ*: Ով դերանվան դիմաց առկա է *տն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վիհ*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *դ ու, քու//քօ, մեզնէ, ուր, ուրին, ուրանծ, ուրանծօվ, էղի, էղոր, էնդոր, էղրան, էղոնծ, էնդոծ, էղմալ, էմալ//ըմալ, էստէխ, էղատէխ, դասի, դստի, դստ//դսն, հ քմէն, դոր, հ իրար, վինիծ* և այլն: Էլ շաղկապի դիմաց գործածվում է լէ ձևը՝ *մէզ լէ, յես լէ, մըգա լէ*:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէլնել, կըռնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *զ ի//զ ու//կի* մասնիկով՝ *զ իկամ// զ ուկամ, զ իլամ, կիդամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըջ առտեմ, կէռտէն, լըձեն, զ օղնէն*: Միանալով բայակզբի հազագին՝ այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ *գիճուծէնկ* (իջեցնում էի), *զ էլնին* (ելնում են): Վաղակատար դերբայն ունի *ր-ով* վերջավորություն՝ *լըսեր* (եմ), *հ իճեր* (ա), հարակատարը՝ *ուզ* վերջավորություն՝ *տըրօրուզ, կայնուզ* էական բայի ներկա ժամա-

նակի ձևերն են՝ *եմ, էս, ա, ենկ, էկ, են*, անցյալի ձևերը՝ *էնկ, էր, էր, էնկ, էկ, էն*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքերից՝ *խանէճին, բ ըռնէճին//բ ըռնին, դ ըրին, շիկինկ*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *զ ած, մած*: *Դ ընել* բայը ներկայի հիմքից կազմվող ձևերում ունենում է *ա* լծորդ ձայնավոր, ինչպես *դ ընամ, դ ընանկ, կըդ ընանկ*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երբորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *էղմալ ա կիսուսամ, բան էր կըպաղմէր, մատտ էր էգաձ էն*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չըզ օխճեր էմ, չըձէձէր էր*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըկըռնինկ, չէռտէր, չըզ օղնան*, ընդ որում ժխտական մասնիկը, միանալով բառակզբի *հ-ին*, դառնում է *ջ ջընգեմ* (չընկնեմ), *ջէլնինկ* (չենք ելնում): Պատճառական ածանցն է *ծուծ//ուծ փախծուծել, կօրծուծել, հիճուծել, կըբուծել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *կըչօրծունկ, կայնրծու, կըբու*: Հարկադրականի եղանակիչն է *պըղի՝ պըղի էղի, պըղի չըխօսէնկ*: Խոսվածքում չ բայաձանցը չի գործածվում, ներկայի հիմքից կազմվող ձևերում հաճախ բացակայում է *ն* ածանցը, ինչպես՝ *մեռիմ, հ ընգեմ, կեղի, կըխասի, կըխակէն, կըփախին* և այլն: Գործածական է *կօ* հաստատական մասնիկը, ինչպես *կօ քանդին* (ինչ խոսք քանդեցին), *կօ թունդըրի մէճն էր կէպեր* (հենց թոնրի մեջ էր եփվում), *կօ յես գ իկամ* (դե էս կգամ):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *ճիծ, ջ օձօ, կէսրէր, իրիկ, աղէ, սմի, հուստ, խըրիսա, տանիս, հէտիգ, մուխ, ժէխ, չըռիկ, տալվ, ջաղղա, ժսժիկ, պաս* (սպաս), *դ ըրգեց, բաջօ, տաղօ, պարէ, յեղվընեգ, ջ ոճ, չուր, կարկըվել* (նաև կնոջ վերաբերյալ), *կըղօթ, կըղօղվել, խըլղ, գուզ, բ օլոր, տաղուխ, ակլափուս, հապիկ*

էնել, հօրի, լա, խօրօր, հայրան կրողել, մէ մադ, պրզդիգ, գօկել, ձրծում, միճինգ, փօխինդ, մրգա, էրգանկ, տանիս, պախս, մաննագ, տրրօրուգ, սարախտան, թառանա, թրմախքար, դում, բամպ, դօդ (մեծ աման), պուջադ, դ ուռ (բակ), հուզրնգան, էրտալ ձ էռ, խախ-ծրվոր, ճեդ, օդնաման, խառնըստուն, հառիկ, ազիգ օր, խավդիգ, քելի, էլման, հրնզրնավորել (ընկնավոր դառնալ), կօդռ, ճրդել, խօխպէր, մընէր (նմանվում էր, նման էր), բախալ, լուսուն չէ մրզլօր, հիճկել, քարօվ քարըսպան էնել, թըխ, ջադած, ջախ-ճրպան, պրզդիգ, տեղաշոր, տրլոխկ, խառսընկի խուր, խուրնիգ խրրէդէն և այլն:

## Կ

**ԿԱՆԱԿՆ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Սովետաբենդ: Կախակն է վերանվանվել 1991թ.: 1988թ. վերաբնակեցվել է Ադրբեջանից տեղահանված հայ փախստականներով: Ընդգրկված է Գեղամասար համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Ակնադրյուր, Գետակբուլադ: Վերանվանվել է 1946թ.: Գյուղը հիմնել են 1829-30թթ. Մուշից եկած գաղթականները: Հետագայում այստեղ հաստատվել են նաև Վանից գաղթած մի քանի ընտանիքներ: Ըստ Հ.Աճառյանի՝ գյուղի բնակիչները եկել են Լաթարից, Մուշից, Խլաթից<sup>203</sup>: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վո* և *յե*, ինչպես՝ *վոտ*, *վոռց*, *յես*, *յեգ*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օսկոռ*, *օխճար*, *էրկու*, *էրագ*: Խոս-

վածքն ունի *ե*, *ո* երկբարբառային հնչյուններ՝ *ձիյավոր*, *խրնձոր*, *ցօրեն*, *հընգեր*: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած *ա* ձայնավոր, ինչպես՝ *քսվանցի*, *ջայլ*, *գնրկել*, *կիրանկի*, *քսլան*, *քանի*, *միճակ*, *թանլել* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *մադնիք*, *պաղըտել*, *գէրընդի*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բըննել*, *բէրել*, *գարի*, *գեդ*, *ձոր*, *ձի*, *ջուր*, *ջոջ*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *խօքի*, *խափել*, *կարքըվել*, *մառթ*, *օթ*, *մէչ*, *վեռչ*, *խաքել*, *օց* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *ղըբոռց*, *աշխադել*, *աբրել*, *պաղըտել*, *փրրգել*, *հընգեր* և այլն: Հինհայերենյան *ո*-ի դիմաց խոսվածքն ունի *խ*, ինչպես՝ *խինգ*, *խէր*, *խօքի*, *տասխինգ*, *պախել*, *էն գախ*, *խարամ*, *խավէսին*, *խօրօտ*, *խամար*, *բախ*: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *ո*-ի հավելում, ինչպես՝ *հընգեր*, *հուրիշ*, *Հէրէվան*, *հէսօր*, *հուգել*, *հընցնել*, *հընչի*, *հիրկուն* և այլն: Օտար բառերի սկզբի *ո*-ի դիմաց խոսվածքն ունի *կ*՝ *կանթար*: Շեշտը վերջնավանկային է:

Հանդիպում են բաղադրյալ հոգնակերտներ՝ *վըրացիքներ*: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *խողու*, *ջըրու*, *օթու*, *ճամփու*, *գըլխու*, *մառթու*, *ամէքու*, *գէղացիներու*, *ախպըրներու* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *քուրոց*, *աներոց*: Ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Օսէյ*, *Քօչէյ*, *Կարօյ*, *ադէյ*, *պապայ*, *մամայ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *դաշտից*, *մառթուց*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գէղըն* (գյուղում), *գէղի մէչ*, նաև *նե* մասնիկով՝ *պուլկի նե*: Որոշիչ հոդն է *ն*-ն՝ *Աֆսօգէնըն դըրեց բակի վըրէն*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես *էս իմ խօրօխպէր խիվընդնա*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի*, *քեզի*, *մեզի*,

<sup>203</sup> Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 139:

ձ՛եզի, եզակի երկրորդ դեմքում գործառում է նաև *քե* կրճատ ձևը, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հ՛ինք, ուրանք*: Ուլ դերանվան դիմաց առկա է *վոն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *քու, մեզնից, ուր, ուրին, էսի, էտի, էտոր, էտոնց, էդրանք, էդրանց, էտե, էստեղաց, ըմալ, մերուն* (մերը) և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, էլնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հ էլնել, կըռնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *գ ու//գ ի//կի* մասնիկով՝ *գ ուքամ, գ իլամ, կիտամ*, մյուս բայերինը՝ *կը/կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըպախենք, կիշկեն, պախեն, գ օղնինք*: Այս մասնիկը, միանալով Բայասկզբի հագագին կամ հանդես գալով Բայասկզբի ձայնորդ կամ ձայնեղ հնչյուններից առաջ, ձայնեղանում է, ինչպես՝ *գուզեն, գըլըծինք*: Հարկադրականի եղանակիչն է *պըտի*, ինչպես *պըտի կարքըվիս*: Վաղակատար դերբայն ունի *ը-ով* վերջավորություն՝ *տարէր* (եմ), *տըփեր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *քումուկ, քընուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքերից՝ *ըսեցի, տըվեցի/տըվի, դ ըրեցինք, փըրզեցի, ուզինք, ք էրինք*: *Էնել* (անել) բայի բոլոր ձևերը կազմվում են *էն* հիմքով՝ *էնա՛* (արա՛), *քէֆ ին էնած* (արել), *խօսքն էնեց* (արեց), *էնինք* (արեցինք): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ աց, մաց*: Եզակի հրամայականում տարբերվում են ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ՝ *պախա՛, կայնի՛*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *ձ ուն ա քըռթենք, վար էր կէնինք, իրեք խօքի յէր էկած ին*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չըմեռէր էր, ձ էո չըքա-*

*շէր ին*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է Բայաձևի վրա՝ *չըցանենք* (չենք ցանում): Բայասկզբի հագագին միանալով՝ ժխտական չ մասնիկը ձայնեղանում է՝ *շէլալ*: Պատճառական ածանցն է *ուց//ցուց խաոցուցել, խախընդցուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում դրսևորվում է *ու* խոնարհիչը՝ *խախընդցուն, խաոցո՛ւ*: Խոսվածքը չ բայածանց չունի: Հաճախ ներկայի հիմքից կազմվող ձևերում Բացակայում է նաև *ն* ածանցը՝ *կեղի, մեռիմ, կըխաքեր, մըտինք* և այլն:

Գործածական է *կօ* հաստատական մասնիկը, ինչպես՝ *կօ չըտըվեցին* (դե չտվեցին):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *պըստի(կ), միճանկ, հ՛ուզել* (աղջիկ ուզել), *խաոսնիս/հաոսանիք, մօտիկ, հ իրկուն, մըկա, կարքըվել, իմալ, ջէր, ճիժ, ջ՛ոչ, կօղըռճել, կէսրէր, սաբախտան, էցկել մըտէն, էցկել, շընոխկին, խավկիթ, թանլել, խավէսին, խօրօտ, հավար թանլել, գ՛օխտու, ք՛ախ էնել, կօրի, ուոց* (կավառ, հողաշերտ ջրի ընթացքի դեմ), *պուլիկ, տըփել, ուրին-ուրին, խօրօխպէր, աղէ* (մայր), *կաստրունգա, խարամ, խախընդցուցել, ձ ուն քըռթել, էոցակ* և այլն:

**ԿԱՐՄԻԴՅՈՒՂ**<sup>204</sup> - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Նախկինում՝ Աշնակ, Ղուլալի: Վերանվանվել է 1940թ.: Բնակիչների մի մասի նախնիները 1829-30թթ. գաղթել են Բայազետից:

Գյուղի խոսվածքը ներկայացնում է Բայազետի բարբառը: Բայազետի բարբառին բնորոշ դիրքերում խոսվածքը կանոնավորապես ունի շրթնային *մ* ձայնավորը՝ *մի, կնկուղ, պմրան, տմք, ծմղիկ, ճմշ, սմր, շմտ* և այլն: Փոխառություն-

<sup>204</sup> Գյուղի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1981թ. լրացված թիվ 156 տետրում, առկա են նաև գյուղում 2013թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

ներում և սակավ բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *ւն* ձայնավոր՝ *ւնժել, ձ'ւնք, գւննել, խէքւնթ, գւնգւնք, միբիքւն, կքսւննթ, կւնրիք, վիլւնկ*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի դիմաց առկա է *վո, ե*-ի դիմաց՝ *յե, ինչպես՝ վոր, վոռց, յեգ, յեփ, յերք*, բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *ո* և *է*, ինչպես՝ *օխճար, օչիլ, օրօճ, էրակ, էրկաթ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *թել, մեղրք, ձ'ըմեռ, գ'ոմ, խընձոր*: Փոխառյալ բառերի *ու* ձայնավորի դիմաց հաճախ առկա է *ի*՝ *քիֆուս>քուֆուս, դիզը>դուզը, շիշւն>շուշւն, գիզւն>գուզւն* և այլն: Կարմիրգյուղի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *թեթըվնալ, օղըղել, մվլել*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ'արէկամ, գ'իրկ, դ'ուս, ձ'ուն, ջ'առթել*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *խարնել, դ'աթար, էք, խափել, մէչ, օչիլ, բ'առց, վոռի, սըրփել*: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *դրբա, ծրձաղ, ցածրք, մրբուստ, մըգրաղ, կըղրել* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *մէշկ, լըվասկ, կօշկել, միժնակ, մնգնաթան*: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ*՝ *խաց, պնխել, սովամնխ*: Օտար բառերի բառասկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ*՝ *կըրաղ, կուշ, կքսւննթ*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում՝ *հ'ընդանիք, հւնշկ, հ'իշնել, հ'էոթիս* և այլն: Շեշտը վերջնավանկային է: Բաղիյուսական բարդություններում կամ դրանցից ձևավորված կցականներում *ու*-ի դիմաց գործառում է *ը*՝ *մորտուր, լուռը մունջ, կողը կուշտ, ջ'առթըփըշուր*:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, անք, վանք, բանք, տանք, անիք* մասնիկները՝ *խօքիք, քւնոիք, ձ'իյանք, իշվանք, գ'էղրանք, քրվորտանք, տէքրրտանք, կընանիք*:

Ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Սմբոյ, Սըրփույ, Մուրոյ, Չւնքոյ*: Հատուկ սեռանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Հ'էրէվնա, Մէվնա, Մւնտունա*: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տիրոջ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *գ'իլից, լիզվից, տմրուց, գ'ըլխընէրից*, երբեմն էլ՝ *է*-ով, ինչպես՝ *բ'էրնէն, հազարէն*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *Հ'էրէվան* (Երևանում), *ւնշխըրքի մէչք*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ'էզի*, նաև գործածվում է *քե* կրճատ ձևը: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են՝ *ընդոնք, հ'իրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի*, սրանց թեք հոլովների ձևերից են՝ *ըստու, ըսու, ընդու, ըստոնց, ըտոնց, ընդոնց* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *վորը* տարբերակը, որի սեռականի ձևերն են՝ *վի, վիր*, տրականինը՝ *վիրը*:

*Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ'ալում, լւլում, տալում*: Հանդիպում է ապառնու *գ'ուքա* (կգա) ձևը: Վաղակատար դերբայն ունի *էր/եր* վերջավորություն՝ *գ'ըրէր են, գ'ըրեր ա*, հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *թըխուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *են, էս, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին, սրանց ժխտականներն են՝ չեն, չես, չը, չենք, չէք, չեն և չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից՝ *ուզէցի/ուզի*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են *գ'աց, մաց*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *գ'ըրա', խըմա', նըստի', բ'անցըրքի*: Պատճառական ածանցն է *ցըն՝ հ'իչըցընել, քընցընել*: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է *ա* վերջավորություն՝ *բ'անցըրցըրա', նըստըցըրա'*: Խոսվածքում էլ *ա* ածանցով բայեր (թըռնել, փախնել, կուրել, ուռել):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *պուտ, խօվ, խագ, կրտուր, հ' առիք, ամխպ, չոնըկմթ, շրփանա, տիլ, մուխ, փօշի, թուփ, կուտ, ամիհջ, կրտութ, վիլկ, մուրթուղա, ձ' ըցում, թեշի, ծրուկ, ուզընգան, գ' աջանա, դ' ըղասկան, հանշկալուսանք, ճիժ, մանթթ, միրավ, մօղօզըրիկ, գ' ըրթան, ձ' ու, պուճուճակ, թառթիչ, հ' առքֆտուն/հ' առավոտ, կում, մրոու, պըստիկ, կիսավանդի, մէշու, բ' արկ, կրժմըթել, հ' իրար տալ, հ' ընցըցընել, հ' խտըկջըրել, կմր-բըվել, հ' իշկալ, տըփել, գըրըշտել, կօխըրճել, գ' եղացվարի, մըկա, հ' էքուց, հընչի, հ' էսա, չուր, խըդ, պըսակ էթալ, պըսակավոր (պսակի արարողության մասնակիցներ, հարսանիքավորներ), ճանտկըկմպ, խեռ նըստօղաց, խեռ լըսօղաց, վայ նանչանրու* և այլն:

**ԿՈՒԹ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Զառքենդ: Կութ է վերանվանվել 1991թ.: 1988թ. վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթած հայերով: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ԿՈՒՏԱԿԱՆ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Գյունաշլի: Կուտական է վերանվանվել 1991թ.: 1988թ. վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթած հայերով: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

## Հ

**ՀԱՅՐԱՎԱՆՔ** - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Նախկինում՝ Այրիվան, Այրիվանք: Հայրավանք է վերանվանվել 1991թ.: Բնակիչների մեծ մասի նախնիները այստեղ են տեղափոխվել Նորատուս գյուղից 1920-ականների սկզբին: Հաղորդակցվում են Բայազետի բարբառի Նորատուսի խոսվածքով:

Բայազետի բարբառին բնորոշ դիրքերում խոսվածքը կանոնավորապես ունի շրթնային *մ* ձայնավորը՝ *անուև, մատըղիկ, մսել, պանդմել, մանթթ, կանշի, տանրէկան, պանպիկ, ճանչընալ, շանտ, ճանրել, կանտուրկա, ճամփա, մանտաղ, ճանայել* և այլն: Փոխառություններում, նաև բնիկ շատ բառերում (ի տարբերություն այլ խոսվածքների) դրսևորվում է քմայնացած *ան* ձայնավոր՝ *լաց, գանել, թանլել, անժի, բանանդի, շուշան, շիշանկ, մանյան, օրինանկ, հանշիվ, միյնանկ, ջանյել, թանփկօվ, հանյաթ, հանու, ձ' անք*: Նորատուսի պես՝ Հայրավանքում ևս բարբառի մյուս խոսվածքների բանվերաբերականի դիմաց գործածվում է *բա* տարբերակը: Բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը *անչըկոտ, փատըտել, քանտուն*: Հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց միավանկ բառերի սկզբում առկա են համապատասխանաբար *վո* և *յե*՝ *վոտ, վոոց, յեփ, յերք*, բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է*, ինչպես՝ *օխճար, օշլոտ, էրկու, էրագ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *նեոս, դէկտեմբեր, թաքավոր, խոոթ*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ' էրել, բ' անջար, գ' ըլօխ, գ' ըթնել, դ' ար, դ' աշտ, ձ' ուկ, ձ' էն, ջ' ոչ, ջ' առթել*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *անոչ, խափել, փոոցել, խօքի, շոք, բ' էոթ, խընթըրել* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց հաճախ առկա են ձայնեղներ՝ *անբարան, անբրել, սըրդօվ, յերգիր, յեղամընաց, պանդմել, փեղ, դըրոց, փեղըրվար* և այլն: Նորատուսի խոսվածքի պես՝ Հայրավանքի խոսվածքում ևս հետնալեզվային պայթականներն ունեն որոշակիորեն քմայնացած արտասանություն, որը առաջին շարքի ձայնավորներից առաջ հաճախ հանգեցնում է *գ, կ, ք < ջ, ճ, չ* անցման, ինչպես՝ *էթանք, խէքանթ/խէչանթ, քանու/չանու, քանան/չանանվառ, գ' էղ/ջեղ, գ' ըշեր/ջըշեր* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *հ' անշկ, բ' ասվել, հ' իշնել, մեշկ, ջ' ոչ կընիկ, միշնեկ, լըսվել, լըվասվել, անբացընել* և այլն:

Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ*՝ *խա*, *պահել*, *խամար*, *խինգ*, *խետ*, *զ ախ*, *խէր*, *խօրօխպօր*, *խառս*, *խառնիս*//*հառսանիք* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ*՝ *կօչադ*, *կուրբան*, *կօչ*, *կըրադ*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *h*՝-ի հավելում՝ *հ իմանալ*, *հ ուրիշ*, *հ առէչ*, *հ ըմէն*, *հ իրես*, *հ ուստակ*, *հ ափ*, *Հ առաքել*, *հ ախպուր*, *հ ընչի*, *հրնգեր*, *հ ուսում*՝ և այլն: Եեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք*, *վանք*, *րանք*, *տիք*, *անիք* մասնիկները՝ *մանտունէցիք*, *սուրուք*, *իշվանք*, *զ իլվանք*//*ջիլվանք*, *զ էղրանք*, *ըտերանք*, *անխպրտիք*, *կընանիք*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, նաև հասարակ որոշ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Ջալօյ*, *մթօյ*, *Կմրօյ*, *մնէլ*, *մֆտօյ*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Քնվանա*, *այրիվանքա*: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տիրոջ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *տընից*, *տըկից*, *զ էղից*, երբեմն նաև՝ *է*-ով, ինչպես՝ *դ ըռնէն*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *զ էղը* (գյուղում), *մօխրի մէչը*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի*, *քեզի*, *մեզի*, *ձ էզի*, գործածական է նաև կրճատ *քէ* ձևը: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են՝ *ընդոնք*, *հ իրանք*: Ով դերանվան դիմաց առկա է *վորը* տարբերակը, որի սեռականի ձևն է՝ *վիր*, տրականինը՝ *վիրը*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս*, *էտ*, *էն*, *էսի*, *էտի*, *էնի*, *էսա*, *էտա*, *էնա*: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *դ ու*, *ի ինքը*, *հ իր*, *ըտու*, *ընդու*, *ըտոնք*, *ընդոնք*, *ըտանք* (այդքան), *ըտանքը* (այդքանը), *ըտուրը* (դրան), *ըտունք*, *էնդանք* (այնքան), *ըստե*, *դոր*, *հրմէն ինչ*, *հիրար*, *վոր մէկը*: Ինչպես Նորաստուսի խոսվածքում, Հայրավանքի խոսվածքում ևս դրսևորվում է հոգնակի ստացականությունն արտահայտող յուրահատուկ ձև՝ *վըրնը մեն* (մեզ վրա), *կըշտը մե* (մեզ մոտ):

Գալ, լալ, տալ բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *զ ալում*, *լանում*, *տանում*: Վաղակատար դերբայն ունի *էր*//*եր* վերջավորություն՝ *թողեր ա*, *զ ացեր են*, հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *դ ըրուկ*, *բ օլըրուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ*, *ես*, *ա*, *ենք*, *էք*, *են*, անցյալի ձևերը՝ *ի*, *իր*, *էր*, *ինք*, *իք*, *ին*, *սրանց ժխտականներն են՝ չեմ*, *չես*, *չը*, *չենք*, *չէք*, *չեն* և *չի*, *չիր*, *չէր*, *չինք*, *չիք*, *չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից՝ *պանխիր*, *անիրք*, *ջ օկեցի*, *շմրեցի*: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են *զ աց*, *մաց*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *հաշըվա*, *կանյնի*: Պատճառական ածանցն է *ցըն*՝ *լօկըցընել*, *խըլըսըցընել*: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է *ա* վերջավորություն՝ *մօտկըցըրա*, *խըմցըրա*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (*թըռնել*, *փախնել*, *ուռել*):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *իմալ*, *չան լուս*, *վախտ*, *անոնել*, *տէր կանյնել*, *զ աքաթ*, *պըտըտցընել*, *սմգ զ ալ*, *հանշկերը բ ըրվել*, *հուզընգան*, *մանթ*, *պըստի(կ)*, *ճիժ*, *ֆըռալ*, *մրկա*, *մօզիկ*, *թօնել*, *զըռան զըմփան*, *կուշտը*, *օռշնիտկ*, *անչօդություն*, *շիքել*, *գէրեզմըներ*, *քուքուր*, *ման զ ալ*, *քօ տունը շիքվի*, *տիկին*, *խեռը քեզնից*, *թամաշ անել*, *սեվ քէմուր*, *անտէր-անտիրական*, *շօշ*, *տանդիլ*, *հիրկուն*, *քարխանք*, *պանլ*, *անօթի*, *կանթ*, *կուդուի*, *կըսըադ*, *թեթըվ տըղա*, *հայկարա դ ընել*, *կըտուր*, *չըքել*, *հըմա*, *փորն անոնել* *զ էտին*, *տըփել*, *խըտ զանելը*, *լապըստըրակ*, *դօշանց*, *ջ օկու*, *իսան*, *մընաց*, *հախու*, *խըլըսել*, *մըժիկ*, *հառչընեկ*, *խատել*, *լուս ու հափեղա*, *զ օֆք*, *հօղա*, *հատիք*, *կըսըադ* և այլն:

**ՀԱՅԱՌԱՍՏ**<sup>205</sup> – Գավառ քաղաքի թաղամաս, նախկինում՝ գյուղ Հացառատ, Փաշաքանդ, Առնեղ: Հացառատ է վերանվանվել 1945թ.: Քաղաքի թաղամաս է դարձել 1962թ.: Բնակիչների նախնիների մեծ մասը եկել է Բայազետից 1829-1830թթ.: Հաղորդակցվում են Բայազետի բարբառով:

Հացառատի խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սդումը՝ *բ՛ածնել, ուրխընալ, հավքել*: Բայազետի բարբառին բնորոշ դիրքերում խոսվածքը կանոնավորապես ունի շրթնային *մ* ձայնավորը՝ *մնուն, տմվար-մնլ, պմպիկ, կմր, մնտակ, մնհէրես, ճմմփա, մխշար, մնտ, սմնդերք* և այլն: Փոխառություններում և ստկավաթիվ բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *մ* ձայնավոր՝ *իշտմ, վիճմկ, միսմկ, հմշկ, դմն, գմնել, կիրմկի, լմլ, բիճմ, մմյլմ, բմլմք* և այլն: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ն*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե՝ վոոց, վոոթ, յեգ, յեփ*, բազմավանկ բառերի սկզբում՝ *ո* և *է*, ինչպես՝ *օխճար, օլրլվել, օսկոո, էրանոս, էրակ, էրինջ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *իրեք, բ՛րոթել, ճրպոթ, խոտ*: Փոխառյալ բառերի *ու* ձայնավորի դիմաց երբեմն առկա է *ի՛*՝ *Քիզմջղղ>Քուզմջղղ, շիշմ>շուշմ, քիլմշ>քուլմշ* և այլն: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ՛ածակ, բ՛ուոթ, գ՛րգել, գ՛ըշեր, գ՛ըլօի, ջ՛ուր, ձ՛ու, ձ՛ըցում*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *պարքեվաղըրել, բ՛ուոթ, խուոց, կմրաք, բ՛րոթեց, խափել* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *Հագօփ, աքրոդ, հարգ* (հարկ), *մնոդ, կմդդել, ծրձադ, փրրգել* և

<sup>205</sup> Խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1998թ. լրացված թիվ 504<sup>ա</sup> տետրում, առկա են նաև գյուղում 2014թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *խաս տմնել* (խաց), *մնճմսկել, բ՛ասվել, հրսնել, ծրդգալ, ձ՛էշմիածին, մէշկ, ճմշնալ, հ՛իշնել*: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ՛ խինգ, խօրօխպեր, խաց, խետ, խօրօխպեր, խեր, խատ, խանել, էն գ՛ախ*: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ՛ կըրադ, կմրիք, կըսմթ, կմսաք*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ՛*-ի հավելում՝ *հ՛առավոտ, հ՛արի, հ՛իրար, հ՛ախպուր, ձ՛էշմիածին, հ՛իրգուն, հ՛առցրկել, հ՛իշնել* և այլն: Երբեմն *տն* կապակցության դիմաց գործածվում է *նն՛ մնններ>մատներ, վոններ>ոտներ, դր*-ի դիմաց *յր*, ինչպես՝ *վէյրօ>վէղրօ, կըրել>կըղրել*: Շեշտը վերջնականկային է: Բաղիյուսական հարադրություններում և դրանցից կազմված կցականներում *ու* շաղկապի դիմաց հանդես է գալիս *ը՛ վարը ցանք, աչք ձախ, խերը մէր, առըտուր*:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, անք, վանք, տանք, բանք, անիք* մասնիկները՝ *մըշէցիք, փէսէք, ձ՛իյանք, դ՛իզվանք, տիրվանք, գ՛իլվանք, իշվանք, իծվանք, գ՛եդրանք, քըվըրտանք, տէքըրտանք, մխպըրտանք, կընանիք*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *մնօյ, Թաթէյ, Տօնօյ, Յետջօյ, Հատփօյ, Դըվօյ*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Բաղիցյանա, Քմրիմքմնդա*: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տիրոջ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *կմլից, տընից, սմրէրից*, երբեմն էլ՝ *է*-ով, ինչպես՝ *էն գ՛ախվընէ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ սեռականով և *մէչ* կապով՝ *մշխարքը* (աշխարհում), *բ՛էրնի մէչը*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի*, դրսևորվում է նաև *քե* կրճատ ձև: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են՝ *ընդոնք, հ՛իրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի*, սրանց թեք հոլովների ձևերն են՝

ըստու, ըտու, ընդու, ըստուց, ըտուց, ընդուց, ըստոնց, ըտոնց, ընդոնց և այլն: Ով դերանվան դիմաց առկա է վոն տարբերակը, որի սեռականի ձևն է՝ վի, տրականինը՝ վին(ը): Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ յես, դ՛ ու, էսա, էստուն//ըստուն, ըտոնք, ըտոնցը, էնդոնք//ընդոնք, ընդուց (նրանից), ընդուց (դրանից հետո), ընդե, էստս, էտտս, ըստե, ըտե, էտերանք, էսենց, էտենց//ըտենց, էնենց, էտտա (այդքան), էտտարը (այդքանը), սմվէքն հ իրան, սմվէք սմնոթ, հ իրանք և այլն:

Գալ, լալ, տալ բայերի անկատար դերբայի ձևերն են՝ գ՛ալում, լսլում, տսլում: Վաղակատար դերբայն ունի էր//եր վերջավորություն՝ գարմացէր եմ, սմցեր ա, հարակատարը՝ ուկ վերջավորություն՝ նըստուկ, կսմպուկ: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ եմ, ես, ա, ենք, էք, են, անցյալի ձևերը՝ ի, իր, էր, ինք, իք, ին, սրանց ժխտականներն են՝ չեմ, չես, չը, չենք, չէք, չեն և չի, չիր, չեր, չինք, չիք, չին: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքերից թափիր, սքսորին, քաշէցի: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են գ՛աց, մաց: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ բ՛ըռնա՛, սմբրի, խաքի՛: Պատճառական ածանցն է ցըն՝ բ՛անցընել, տմբցընել: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է ա վերջավորություն՝ խըմցըրա՛, կէրցըրա՛: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (թըռնել, փախնել, կուրել, ուռել):

Խոսվածքի բառային միավորներից են՝ թալվա, սնընավոր, պուտ, խըրտ գանել, կըվանոց, սմսիկ, սմնոթ, սէթըքս, ջ՛ օվ, թէշու ծիծեռ, տըրփոց, փորխոց հըլնել, ծըռել (սիրահարվել), հիշկալ, ծըռեծըռթիկ, բընատա, ճսմբսրսնկ, խըրտխէտին, վիլկ, կօլնել, խեռը մըկավնե, փեժգիր, մըժ, չուր//չում, պըստի//պըստիկ, ճիժ, գըշեր չուր լուս, պսն, մընաց, հ իրկըվան, սմբռնեց, դ ուրան,

մըռու, հընգնավորել, ճ՛ըցում, հատիք, հէթթիս, մուխ, ժէխ, չըռնակօթ, տսմփոցի, վախտ, կըտուր, քըրել, կաբբար, վարէլէն, ջ՛ ոչ, հոթթիկ, դըզըգը՛ ուն, հաչուչի, սմոնակավոր, տըրփոց, մէզլու և այլն:

## 2

**ՁՈՐԱԳՅՈՒՂ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում՝ Աղալու, Գետնավոր, Շողակա, Վայլաղալու: Բնակիչների մի մասի նախնիները վերաբնակեցվել են 1831թ. Ալաշկերտի Զլկանի (Ջըլկանի) գյուղից: Հաղորդակցվում են Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի դիմաց առկա է *տ*, *ե*-ի դիմաց՝ *յե*, ինչպես՝ *տխ*, *տոդ*, *յեգ*, *յեսպ*, *յես*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *n*-ի և *ե*-ի դիմաց գործառում են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օխճար*, *օսկոռ*, *էրինջ*, *էրագ*: Միավանկ բառի աճման դեպքում բառասկզբի *տ*-ն և *յե*-ն դառնում են *օ*, *է*՝ *տոդ*>*օդներ*, *յեգ*>*էգներ*: Գործածվում են *ե*, *n* երկբարբառային հնչյուններ՝ *ցօրեն*, *ձ եռ*, *չոռս*, *ամբրոռծ*: Փոխառյալ և մի շարք բնիկ բառերում գործառում է քմային *ս*՝ ձայնավոր, ինչպես՝ *սրսր* (ձիու անուն է), *քսոռի*, *չսյիր*, *գսրգել*, *բսշ*, *քսնի*, *ջսյնըմին*, *հսրիր*, *հսրի*, *հսսգ էնել*, *միյնսսգ* և այլն: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում միջնավանկի ձայնավորի աղումը՝ *բ՛աժնել*, *բ՛ալնիկ*, *սօվրել*: Բառասկզբում ձայնավորներից առաջ շատ դեպքերում առկա է *հ*՝-ի հավելում՝ *հ էրես*, *հ ընգեր*, *հ ընգնել*, *հ՛ակամա*, *հ՛ավալ*, *Հ էրէվան*, *հ՛ավէլի*, *հ՛ախպուր*, *հ առէձ*, *հ ըսօր* և այլն: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ անագ*, *բ ըռնել*, *գ ըլօխ*, *գ էդ*, *գ իշեր*, *դ ու*, *դ ըմագ*, *ջ՛ աղաչ*, *ջ՛ ոճ*, *ձ՛ ի*, *ձ՛ ըմեռ*: Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլերի և ձայնեղների դիմաց գործառում են խուլեր՝ *վեժ*, *հաժ*, *դըբրոժ*, *գ իշերանոժ*, *անկամ*, *տէկըր*, *ինձ*, *մէձկ*,

քուճա, ատար, մատոտ, մանկուտեն, տրպեյ: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *արբանկ, շարիգ, պրդի, պադե-րազմ, փեդ, կողբել, յերգար, կրրագ, մեձ, Հէճմիսաձին, ծիճղալ*: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքն ունի *h*: Օտար բառերի սկզբի *h*-ի դիմաց խոսվածքն ունի *խ*՝ *խառխառ, խօնախ, խըստու, խարիբ, խեզավար, Խարաբադ, Խագարոս, խըսա, Խագախըստան*, սրանց նմանությամբ *կանչել* բայի դիմաց գործառում է *խանճել* ձևը: Եեշտը վերջնականկային է:

Հոգնակին խոսվածքում կազմվում է նաև *կ, տիկ//դիկ, րան* մասնիկներով՝ *փեսեկ, ախպըրդիկ, տեկըրդիկ, կընզըտիկ, գեդ-րան*: Երբեմն հանդես են գալիս բաղադրյալ հոգնակերտներ՝ *կընզըտիկներ, տրդեկներ, գեդրաներ*: Շատ անուններ եզակի թվում, ինչպես նաև բոլոր քայականները հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *գըլխու, կօվու, ձիու, հայերու, թեվերու, ծառերու, օղներու* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *կիսրոճ, քուրոճ*: Հատուկ տեղանունները հաճախ ենթարկվում են Ա հոլովման՝ *Ալաշկերդա, Հերանօսա, Բասարգէշարա*: Յուրահատուկ եղանակով են հոլովվում *տիկ//դիկ* կազմությամբ հոգնակիները՝ *տեկըրդոճ*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Չարեյ, Ավեյ, Չօյրեյ, Խաչօյ, Բււչօյ, Սւննոյ*: Բացառականը ձևավորվում է *ծ(ց)*-ով՝ *պընչըներուձ, մանկութենիձ*, դերանունների դեպքում՝ նաև *է*-ով՝ *ընձընէ, քըզնէ, ձըզնէ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մեճ* կապով և սեռականով՝ *գեդըն* (գյուղում), *օտի մեճ*: Որոշիչ հոդն է *ն-ն*՝ *Իմ քուրըն փոճըխ էր կենէր*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես *Ախճիգ անձ էն-անձ ու յեր*: Ստացական հոդերից հետո դրսևորվում է *ի* ձայնավոր՝ *ձեոսի, ձեոտի, փոքսի*: Հոգնակի ստացականությունը արտահայտվում է անձնական դերանունների հոգնակի տրականի հետադաս կիրառությամբ, ինչպես՝ *գըլօխ մըզի* (մեր գլուխները), *փեշ մըզի* (մեր փեշերը): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի(զ)* հավելված՝ *ընձի(զ), քըզի(զ), մըզի(զ), ձըզի(զ)*, երրորդ դեմքի

ուղիղ ձևերն են՝ *հինկ, ուրանկ*: Ցուցական դերանունները երկանդամ են՝ *եդ, էն, էդի, էնի, իդա, ինա*: Ով դերանվան դիմաց առկա է *տն*, որի սեռականի, տրականի ձևերն են՝ *վի, վիւ*: Դերանունների ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *քօ, ընձընէ, քըզնէ, ձըզնէ, ուր, ուրին, ուրանձ, էդա, էդոր//ըդոր, ընդոր, էդուն, ընդուկ, էդոնկ, ընդըրա, ընդըրանկ, իդաքան, էդըրան, էդմալ, դաս, դատ, դւսի, դւնդի, դւնի, էտեխ, իդատեխ, վինից, վինսօվ, հըմէն, հըմընուն, դոր, հիրաբ*: Նախադաս կիրառությամբ են հանդիպում *հեդ, վըր* կապերը՝ *հեդ ուրանձ, վըր գըլխու*: Էլ շաղկապի դիմաց գործածվում է լէ ձևը՝ *ախպեր լէ, մեզ լէ, ձըմեռ լէ, շարիգ լէ*:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէլնել, կըռնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան կազմվում է *զի//կի* մասնիկով՝ *գիկամ, գիլամ, կիդամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըտըպա, ջատտինկ, կէտտա*: Գործածական է *գալ* բայի ըղձական ապառնու ի նախահավելվածով ձև՝ *իկամ*: Բայասկզբի *h*-ի հետ միանալով՝ *կ-ն* ձայնեղանում է, ինչպես՝ *գնուզին, գիշխընաս, գէլնի*: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն՝ *եղեր* (ա), *աշխատեր* (իմ), հարակատարը *ուզ* վերջավորություն՝ *շարուզ, կարուզ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *իմ, իս, ա, ինկ, իկ, ին*, անցյալի ձևերը՝ *էնկ, էր, էր, էնկ, էկ, էւ*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից՝ *գւնրգէծի, ըսպանէծի, դըրին, պակի*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գւձ, մաձ*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *խըմա, նըստի*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ա կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *իմալ ա կըբըռնա, ճիշտ ա կըսիս, ինձ էր կուղէր, ցեխ էր կէնէնկ*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չըբ էրէր*

ինկ, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չբտրպիմ* (չեմ ծեծի), *չրկրոնամ* (չեմ կարող): Պատճառական ածանցն է *ծուծ/ուծ թրոծուծել, նրստրծուծել, հասուծել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում գործածվում է *ու* խոնարհիչը՝ *կայնրծուն, թրոծո՛ւ*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (թրոնել, փախնել, ուռել): Նախադաս *խրդ* կապը անորոշ դերբայի հետ արտահայտում է ժամանակի իմաստ՝ *խրդ գւնրգէլուն* (հարվածելուն պես):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *հավգիտ, մրգա, հոխպէր, սաբախտան, իրիկ, հանսա, թնկօ, կէսրէր, տանիկ, հէտտիկ, կնկօ, տաղօ, աղաջան, հայրիգ, հորի, հանդա, ձրծում, չուրի, գ'ախ-գ'ախ, դ'իր-դ'իր, հնր մրգա, հուդա, ձրծում, ժնծիկ, հէտտիգ, կրդոդվել, հատավոդ, ճիծ, տէխ, դ'ար ու դ'աշտ, ասեդ, հ'ուզրնգան, ճագրդգար, տան ջ'ոճավոր, հատսրնիկ, բ'օլոր, քավօրգին, քասա, թակավոր, ցօնծել, պաղրոել, հէրսի գօթով, խախրնդել, աղէ (մայր), հնրի, պրլէճ էնել, թունդիր, հրնտել, պուրուգել, ջ'ոճ, հրնճի, հ'իշխրնալ, թալանուտեն, մրնա (ժամանակ անց), ճանգրտտել, յեղրոճիգ, ճամպախ, փօշի, փօղոց (աղբանոց), քամբախ, իմալ, ամբրրոծ, ուրին-ուրին և այլն:*

**ՉՈՐԱՎԱՆՔ** - Գյուղ ճամբարակի տարածաշրջանում: Նախկինում՝ Ղարաղալա: Չորավանք է վերանվանվել 1991թ.: 1988թ. վերաբնակեցվել է Ադրբեջանի Շամխորի շրջանի հայաբնակ գյուղերից բռնագաղթած հայերով: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

## Ճ

**ՃԱՍԲԱՐԱԿ**<sup>206</sup> - Քաղաք Գեղարքունիքի մարզում: Նախկինում՝ Միխայլովկա, Կարմիր գյուղ, Կրասնուելսկ: Հիմնադրվել է 1835-1840թթ.: Նախկինում հիմնական բնակիչները եղել են ռուսները: Այժմ հայաբնակ է: 1970-ական թթ. սկզբներին Կրասնուելսկին միացվել են Վերին Ճամբարակ և Ներքին Ճամբարակ գյուղերը, և բնակավայրը ստացել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ: Վերին Ճամբարակը հիմնվել է 1790-ական թթ.: Ներքին Ճամբարակի բնակչությունը եկել է Շամշադինի (այժմ՝ Տավուշի տարածաշրջան) Չորաթան և շրջակա գյուղերից: Քաղաքատիպ ավանը ճամբարակ է վերանվանվել 1991թ.: 1990-ականներին քաղաքում հաստատվել են Ադրբեջանից տեղահանված հայ փախստական ընտանիքներ: Դեռևս Ռ.Բաղրամյանն է նկատել, որ ինչպես Վերին Ճամբարակ, Ներքին Ճամբարակ, այնպես էլ նախկին Կարմիրի վարչական շրջանի մյուս գյուղերում (Մարտունի գյուղից բացի) խոսվում է միօրինակ խոսվածքով<sup>207</sup>, որը լեզվաբանը ընդգրկում է Գանձակի միջբարբառի կազմում<sup>208</sup>:

Ճամբարակի խոսվածքն ունի քնայնացած *յւ, օ, ու* ձայնավորներ, որոնք կանոնավորապես հանդես են գալիս բառակզրի ձայնեղ պայթական ու հպաշփական բաղաձայնների դիմաց դրսևորվող խուլերից հետո, ինչպես՝ *պննջւնր, պնն, կննրունք, տնննկ, տննտնկ, ծնք, ծնխ, ճննթիլ, պօխկը, կօդ, կյօմ, ծօր, տօդ, կօվիլ, պոնթթ, տոն, տոնր, ծուկը, ճուր* և այլն: Շեշտակիր վանկում գործածվում է որոշ չափով բաց *ի* հնչյուն (ը<sup>ի</sup>)՝ *քամրի*,

<sup>206</sup> Քաղաքի կազմում ընդգրկված նախկին Վերին Գետաշեն գյուղի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի կյուրթերի հավաքման ծրագրով 1978թ. լրացված թիվ 63 տետրում, առկա են նաև 2015թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

<sup>207</sup> Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 4:

<sup>208</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 3:

պր<sup>հ</sup>նդ, կրնր<sup>հ</sup>կ և այլն: Խոսվածքն ունի նաև քմայնացած հետնալեզվային պայթականներ՝ կէրան, կրրեզման, կիհնի, քիրիլ (քերել) և այլն: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի դիմաց որպես կանոն առկա է վէ, իսկ ե-ի դիմաց՝ յէ, ինչպես՝ վէչ, վէր, վէռթ, վէոց, յէզը, յէո, յէս, յէրք, յէփ: Բազմավանկ բառերի սկզբում առկա են համապատասխանաբար *o* և *է*, ինչպես՝ հոչիլ, օոնալ, հոսալ, էրեզ, հէրինջ, էրկու, էփիլ: Կան նաև բացառություններ, ինչպես՝ վէխձանր//վէչխար, վէսկի (ոսկի), վէռթի (որդի), արուճ (որոճ), իրէս, արկաթ (երկաթ), արկանք (երկանք), արագ (երագ) և այլն: Խոսվածքը երկբարբառային հնչյուններ չունի: Հինհայերենյան *ոյ*, *իւ* երկբարբառների դիմաց սովորաբար առկա է *ի՛* զըրից, թիլ, լիս, կապիտ, պըտիտ, քիր, ալիք, արին, հարիք, սին, ախպէրուրին և այլն: Բառասկզբի հինհայերենյան ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց խոսվածքն ունի խուլեր, ինչպես՝ տուոր, տէդին, պըրէկամ, կիր, կիհնի, ծի, ծօր, ճօրի: Բառամիջում ու բառավերջում այդ ձայնեղների դիմաց առկա են շնչեղ խուլեր, ինչպես՝ հաքնիլ, էք, թըքավէր, խանփիլ, ծանք, հոչիլ, օքուտ, օց, մէչ, առչ, տանցընիլ, զըռթարանք, կառթալ, ուրփաթ, սըրփիլ, փօոցանք և այլն: Չայնավորով սկսվող բառերի սկզբում շատ դեպքերում գործառում է հավելական *հ*, ինչպես՝ հաքի (ագի), հըրիվէր (ալոք), հանի՛ծ, հանրփիլ, հէրինջ, հընգէր, հընդրիլ, հըլօրիլ (ոլորել), հոչիլ (ոչիլ), հուլունք և այլն, բայց նաև՝ անգաճ, ամէն, առաչ, առաչի//ըրչի: Օտար բառերի սկզբում *դ*-ի գործածությունը սովորական է՝ դագան, դայիմ, դասաք, դավուրմա, դարիք, դափաղ, դօչ, դօնաղ, դըսմաթ, դըրաղ: Բաղաձայնից առաջ հպաշփականը երբեմն դառնում է շփական՝ աշկ, մէշկ, սակայն ավելի հաճախ պահպանվում է՝ լըվանցք, խըծկիլ, ծացկիլ, կըծկիլ, կօճկիլ, միչնակ: Բառասկզբի *խ*-ի դիմաց դրսևորվում է տարնմանական *հ*, ինչպես՝ հաղ, հաղօղ, հաղաղ: Հինհայերենյան բառավերջի *ն*-ի դիմաց որոշ դեպքերում առկա է *ը*, ինչպես՝ տանխը,

տանոր, սաոր, յէզը, պէոր, ծէոր: Երբեմն յուրօրինակ դրսևորում ունեն բառասկզբի *սպ*, *ստ* կապակցությունները, ինչպես՝ սիպտակ, սըպտանիլ, սըպանիլ, ըստակիլ (սատկել): Առկա են ձայնավորների ներդաշնակության օրենքի դրսևորումներ՝ լուլու (լեզու), տուրու (սիրում), տուրունջ (տիրոջ): Խոսվածքը *ֆ* չունի, և օտար բառերի այդ հնչյունի դիմաց գործածվում է *փ*, ինչպես՝ փայտօն, փայմ//փանիմ, փաննդ, փասօն, փէրմա, փըլան, փըստան: Շեշտը վերջընթեր է, և շեշտակիր վանկին նախորդող ձայնավորը սղվում է, ինչպես՝ պըռավիլ, հըվանիլ, բըմբասանք, ըղօղիլ, ըղընակ, սըվէրիլ, լըղանալ, խըրօված, դանձիլ (աղանձել), դանչաք (աղաչանք), ըղօթիլ, ըրէքնակ (արեգակ), ըռավէտ, ըրէխա, դանրգիլ, հըղուղ, դօղթ:

Չոգնակին խոսվածքում կազմվում է նաև *ք*, *իք*, *էք*, *անիք*, *նի*, *էնի*, *տիք* մասնիկներով՝ փէսէք, ըրէխէք, ըխճըկէք, յէզնիք, ծըլանիք (ձիեր), կընանիք, ըմըննի, տանանկնի, կատվէնի, ախպէրտիք, քըվէրտիք: Երբեմն հանդես են գալիս բաղադրյալ հոգնակերտներ՝ ըմըննըքէր, մըռթկէք, փէսըքէր, խընըմըքէր, ճըմփըքէր: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ տուրունջ: Ո ներքին հոլովման են ենթարկվում մի շարք այլ բառեր ևս<sup>209</sup>, ինչպես՝ հանօր (աներոջ), հընգօր (ընկերոջ), կէսօր (սկեսրոջ), հօրաքըվօր (հորաքրոջ): Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ աղվէսից, ախպօրից, կէղէրից: Բացառական, ներգոյական և գործիական հոլովները ևս կարող են որոշիչ հոդ առնել՝ ըշխատիլիցը, լօխիցը, հօղըմը, տաշտըմը, բախճըքէրըմը, հօղէրըմը: Տարածված են ածականի գերադրական աստիճանի կազմության երկու եղանակներ՝ ամէնալիմ, ամէնակուճուր, լօխիցը մէծ, լօխիցը կուճուր: Անձնական դերանունները տրական հոլովում հավելված հնչյուն չեն ունենում՝ ինձ, քէզ//քէ, մէզ, ծէզ, բացառականում հանդես են գալիս *ց*-ով և առանց դրա ձևեր՝ ընձանի(ց), քըզանի(ց), ծըզանի(ց), իրանցի(ց), նըհանցի(ց):

<sup>209</sup> Հայր, մայր, եղբայր բառերից բացի:

Յուցական դերանուններն են՝ *էս, էտ, էն, սս, տս, նս*, սրանց դրսևորման ձևերից են՝ *սրբանք/սրհանք, տրբանք/տրհանք, ընդունք, սրբս/ըստոս, նրբս/ընդոս* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *օվ*, որի սեռականի ձևն է՝ *ուս*:

Խոսվածքում բայն ունի երկու խոնարհում՝ Ա և Ի (*աղալ, ապրիլ, ըրմանալ, պրտավիլ, խըմիլ*): Անկատար դերբայն ունի ըմ վերջավորություն (սիրըմ, մընըմ), վաղակատարը՝ *էլ* վերջավորություն (կըրէլ), իսկ հարակատարը՝ *ած* վերջավորություն (թըխած): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *էմ, էս, ա, էնք, էք, էն, անցյալի ձևերը՝ ի, իր, էր, ինք, իք, ին*: Սրանց ժխտականի ձևերն են՝ *չէմ, չէս, չի, չէնք, չէք, չէն և չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ի խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է անցյալի հիմքից՝ *խըմէցի, սիրէցի*: Շրջուն շարադասության դեպքում դերբայի *լ, ս* վերջնամասնիկներն ընկնում են՝ *յէս էմ կյսնի, յէս էմ կըրէ*: Գալ բայի հրամայականի ձևերն են՝ *յէ, յէկէք*: Վերլուծական ժամանակաձևերի օժանդակ բայը ժխտական խոնարհման դեպքում նույնպես հաջորդում է դերբային, ինչպես՝ *մընըմ չէմ, ասիլ չէմ*: Հետադաս է գործածվում նաև արգելական մասնիկը՝ *մընալ մի, մընալ միք*: Համադրական ժամանակաձևերի ժխտականները կազմվում են հետադաս *վէչ* բառով՝ *կըրէցի վէչ, խըմէմ վէչ, խըմէր վէչ*: Հարկադրական եղանակը ձևավորվում է *դէմ, դէս, դի, դէնք, դէք, դէն* կամ *բըդէմ, բըդէս, բըդի, բըդէնք, բըդէք, բըդէն* խոնարհված (նաև՝ անցյալի) ձևերի հետադաս կիրառությամբ, ինչպես՝ *ասիլ դէմ* (պիտի ասես), *մընալ չըդէմ* (չպիտի մնամ), *կատթալ բըդիր* (պիտի կարդայիր): Պատճառական ածանցն է *ցըն խըմըցընէլ, լըդըցընէլ*: Պատճառական բայերի եզակի հրամայականն ունենում է *ու* վերջավորություն՝ *խըմըցըրու, ուտըցըրու*: Խոսվածքում գործածական են *չ* ածանցով բայեր (*դիրչիլ, թըռչիլ, կօրչիլ, ուռչիլ, փախչիլ, հրմանչիլ*):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *թուխս, կընըշկար-միր, թօռ, օճօրք, չըոթան, սընդոս, անձուղ, կըրէզմանուտ, յէխծի,*

*արխ, ցէխ, լէլ, աթար, պէծ, ճախ, ծուխ, մուլ, քոսլ, մօխիր, տակոի, տիրէլ, կօրիգ, դըռդալի, տըկօղին, ճըղօպուր, ճիթ, մախծը, խըլօպօգ, տակ, տաքտէղ, դաբաղ, պանջսն, խուռը, բըթօց, չոթ, յարա, ծըհան, հէս, խաշ, խընէցի, քօցի, իլիկ, տէղաշօր, չէչմակ, տըղօրմա, խընամխօս, ընգըճըփընուկ, պէլ, պէլակին, ծընըթկան, ըրէխա, նան, պատրօն, դայի, հըոսանիք, հըլիվէր, փայ հըվաքօղ, տըվարած, խըլէգ, դուշ, վէոցակ, թուխս, ծոս, հաքի, խատտ, կէռիք, ծիծիկ, ճիտ, խըզիտակ, պօգ, դըռճըրոճան, կըոնատակ, թըռթէվունք, վահրը, ծին, ճէրմ, մըռլահաց, յէղըծոս, կուճուր, ըոսավէտ, չըքէլ, չըքէլ լիս, քօք, կապիտ, մըթիքա, պըլօլիկ, ըրէխօլ, կըմըշտիլ, վէր ունիլ, հիլ անիլ, պըոզըճըրիլ, խըտըտիլ, կըզնըվիլ, լօխ, խի, վէնց, վէրդի, սըհէնց, տըհէնց, աղաք, մըհար, հըրէս և այլն:*

## Մ

**ՄԱՂԻՆԱ**<sup>210</sup> - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Բնակիչների մի մասի նախնիները 1920-ական թթ. եկել են Ներքին Գետաշեն գյուղից, որի բնակիչների նախնիները, իրենց հերթին, եկել էին Ալաշկերտ (Թուփրակկալա) գյուղաքաղաքից 19-րդ դարում: Մաղինա գյուղում հաղորդակցվում են Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքով:

Մաղինայի խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ռ*-ի դիմաց առկա է *վո*, *ե*-ի դիմաց՝ *յե*, ինչպես՝ *վոն, վոռծ, յերկ, յեպ, յեռ*, բացառություն է *ոք* շաղկապը, որն ունի *օք* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում առկա են

<sup>210</sup> Գյուղի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1984թ. լրացված թիվ 251 տետրում, առկա են նաև գյուղում 2014թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

համապատասխանաբար *o* և *է*, ինչպես՝ *օճխար, օսկի, օտորնել, էրեվալ, էրգաս*: Խոսվածքն ունի *ե, ռ* երկբարբառային հնչյուններ՝ *վեժ, խելկ, արեվ, գոժ, սրդոժ*: Սակավաթիվ բնիկ և փոխառյալ բառերում հանդես է գալիս քմայնացած *ւի* ձայնավոր, ինչպես *հէկսիտ, դսն, քսնի, քսնսի*: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում ձայնավորի սղումը՝ *ամճրգոդ, ալվել, սօվրել*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ՛օլոր, գ՛անգրդել, դ՛րմագ, ձ՛որ, ջ՛օգել*: Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլերի և ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են խուլեր՝ *հ ակնել, թրոճել, ուրպատ, վատտ, մրոճեմ, փօծանկ, առճ, բ՛առժ, մէճ, դ՛առծուծել*: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *ախկադուտեն, պագաս, կօջագ, շաբիգ, կադու, մօձագ*: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքն ունի *ե*: Ձայնավորով սկսվող բառերի սկզբում հաճախ գործառում է հավելական *հ*, ինչպես *հ՛առպել, հ՛առձագ, հ՛ընգեր, հ՛ըմէն, հ՛իրգուն, հ՛իճնել* և այլն: Օտար բառերի բառասկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *խ*՝ *խարիբ, խապադ, խօնախ*, սրանց նմանությամբ ձևավորվել է *խանճել* (կանչել) ձևը: Շեշտը վերջնավանկային է:

Չոգնակին խոսվածքում կազմվում է նաև *կ, անկ, վանկ, դիկ//տիկ//դանկ* մասնիկներով՝ *խընամիկ, ձ՛իանկ, գ՛իլվանկ, իշվանկ, իձվանկ, հ՛ընգերդիկ, մօրկըրդիկ, ախպըրդիկ, քուրվըրդիկ, կընգըրտիկ, ախպըրդանկ*: Երբեմն հանդես են գալիս բաղադրյալ հոգնակերտներ՝ *ախպըրդիկներ, քուրվըրդիկներ, գ՛իլվընկներ, գ՛ինիկներ*: Շատ անուններ եզակի թվում և գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *ամսու, գ՛ըլխու, ճամպու, առճու, գ՛իլու, գ՛առու, գ՛ըմշու, իշու, խոգու, կօլու, հավու, գ՛ազաններու, դ՛անգընէրու, օճխըրնէրու*: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *անէրոճ, հընգէրոճ, քուրոճ*: Ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Հայրօյ, Կարօյ, Մարօյ*: Հատուկ տեղանունները հաճախ ենթարկվում են Ա հոլովման՝ *Վանա, Հ՛երեվնա, Աբարանա*: Բացառականը ձևավոր-

վում է *ծ(ց)*-ով՝ *ամսուժ, անէրօճիժ, գ՛իլվընկնէրուժ, թունդըրնէրուժ, քուրվըրոնժիժ*, երբեմն նաև *է*-ով, ինչպես՝ *ախպըրդոնժէ, կընգընէ, էղըրնէ, ընդըրնէ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէճ* կապով և սեռականով՝ *գ՛էղ* (գյուղում), *գ՛էղի մէճ*: Անորոշ հոդը հետագայս է գործածվում՝ *մատտ մի, կընիգ մի, օր մի*: Որոշիչ հոդն է *ն*-ն՝ *Մառըն ծաղգավ*, որը հաճախ չի գործածվում՝ *Առշագ գ՛ընած Հ՛երեվան*: Ստացական հոդերից հետո առկա է *ի* ձայնավոր՝ *ձ՛ետի, հ՛երէտի, գ՛ըլօխի, մէրսի* (մայրս): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քըզի, մըզի, ձ՛ըզի*, բացառականում հանդես են գալիս գուգահեռ ձևեր՝ *ընձընէ//ընձընիժ, քըզնէ//քըզնիժ, մըզնէ//մըզնիժ, ձ՛ըզնէ//ձ՛ըզնիժ*, հոգնակի երրորդ դեմքի ձևերն են՝ *ընդոնկ, ուրանկ*: Ցուցական դերանուններն են՝ *իդա* (այս, սա), *էդի/ի* (այդ, դա), *էնի* (այն, նա), սրանց թեք հոլովների ձևերից են՝ *իդոր, էդոր, ընդոր, իդոնժ, էդոնժ, ընդոնժ, իղըրնէ//իղըրնուժ, իղընժէ//իղընժուժ, ընդըրնօվ* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *վոն*, որի սեռականի ձևն է *վի*, տրականինը՝ *վին*: Դերանվանական այլ ձևերից են՝ *քու, ուր, հ՛ըմալ, էդմալ, ուրանժ, ուրընժէ, հ՛ուր, հ՛ըմէն ինճ, հ՛իրար* և այլն: *Էլ* շաղկապի դիմաց գործառում է *լէ* ձևը՝ *հինկ լէ, պըզդիգ լէ*:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէնել, կըռնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան կազմվում է *գի//կի* մասնիկով՝ *գիկամ, գիլամ, կիդամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըսիրիմ, յես ա սիրիմ, կուդիմ*: Հանդիպում է *գ՛ալ* բայի *հ իկօդ* ձևը: Միանալով բայասկզբի հագագին, ինչպես նաև ձայնեղ բաղաձայնից առաջ *կ*-ն ձայնեղանում է, ինչպես *գ՛էնի, գուզիս, գըզարգիմ, գըջ՛առտիմ*: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն՝ *գ՛ըրէր* (իմ), *գ՛ըրէր* (ա), հարակատարը՝ *ուգ* վերջավորություն՝ *քընուգ, հ՛ուգուգ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *իմ, իս, ա, ինկ, իկ, ին*, անցյալի ձևերը՝ *էնկ, էր, էր, էնկ, էկ, էն*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ն՛ ներկայի հիմքից՝ *գ՛ըրի, ծախի*,

և՛ անցյալի հիմքից՝ *գ ըրեծի, ծախեծի*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ ած, մած*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *խըմա՛, նըստի՛, հ ընծի՛*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *պաղարատուտուն ա կըրտեսնան, գ ոռձ էր կէնէնկ*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չբբ էրէր ինկ, լավ չըկարգըղներ էր*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չէրտէնկ* (չէի գնա), *չըկըռնամ* (չեմ կարող), ընդ որում՝ միանալով բայասկզբի *հ*-ին՝ ժխտական մասնիկը դառնում է *ջ*, ինչպես՝ *ջընծամ*: Պատճառական ածանցն է *ծուծ//ուծ թըռծուծել, հ իճուծել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *կըխըմծում, խըմծո՛ւ*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (թըռնել, փախնել, կըբնել, կօրել, ուռել):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *ավուր, գ՛եստ, կատ* (կաթիլ), *շուկ, հով, տախտ, ճամպա, խագ, ծէր, տանիկ, հ առիկ, չըռիգ, տիլ, մուխ, փօշի, թուպ* (տերև), *կուղ, յեղըռջիգ, կըռուտ, խօրիս, ձ ըծում, պուղուգ, առճըգան, հ ուզընգան, հ անգըջգըլա, դ ըղաձկան, ճիժ, իրիգ, դ ըրգեծ, միրաբ, մօղօզիգ, ճեղ, գ ըտտան, հավգիտ, պուջուջագ, խօլտուղ, կում, սաբախտան//աղօտրան, հ ըրամգ ախ, մըռու, պըզղիգ, փըշում, կագուխ, էրգուհօղօվ//մըղափոխ//ծանդըրուգ, բ արգ, հ ընծուծել, հ իստըզջ ըրել, կարկըվել, հօլընդել, հ իշկալ, տըպել (ծեծել), մըգա, լուսուն, հօրի, հանդա, հ իրար տալ, միջագ* և այլն:

**ՄԱՐՏՈՒՆԻ** - Քաղաք Գեղարքունիքի մարզում: Նախկինում Կգնուտ գյուղ, Ներքին Ղարանլուղ: 1828թ. վերաբնակեցվել է Ալաշկերտի գավառից ներգաղթած հայերով: Ըստ Հ.Աճառյանի՝

գյուղի բնակիչները եկել են Նահենի Մանկասար գյուղից<sup>211</sup>: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում *ռ*-ի և *ե*-ի դիմաց առկա են *ւո* և *յե*, ինչպես՝ *ւող, տող, յեփ, յես*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *ռ*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օղօրմի, օխճար, էրինջ, էրագ*: Խոսվածքն ունի *ե, ռ* երկբարբառային հնչյուններ՝ *իրեբ, տեխ, փող, չոռ*: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում հանդես է գալիս քմայնացած *ւն* ձայնավոր, ինչպես՝ *քննւմ, քնսիբ, օրինակ, քննի, լննւն, դննիսը, գննել, յնն, սիֆտնկ, գնրկել* և այլն: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը՝ *խատունիք, ժողվել, սօվրել*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ անցըր, բ էոթ, գ էղ, գ օոծարան, դ ուս, դ ուռ, ջ ուր, ձ ավար, ձ ըմէրուգ, ձ որ*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *խօթի, մաոթ, Մարքիս, աոթէն, բ անցըր, օց, անքամ, բ էոթ, վաոթ, վեռչ, մէչ* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց հաճախ առկա են ձայնեղներ՝ *կընիգ, խեդ, ձ ուգ, աբրել, ջ օգել, հընդանիք, խըբատտ, ցէրէգ, կադու, մօղ, ախճիգ, պըղի, ազադություն, շուշուղ, աշխաղօղ* և այլն: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքն ունի *խ*, ինչպես՝ *խաց, խատս, խավնել, խէր, խա, խամար, պախել, խամ, բ ախ, մախ, խայերէն, խող*: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հ առէչ, հ ուրիշ, հ էսօր, հ էրգէն, հ ընցընել, հ առու, հ ընգընել, հ առաջի, հ առավօղ, հախօռ* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ*՝ *Կազախըստան, կուրբան, Կազար, կավուրմա, կօնախ*: Շեշտը վերջնավանկային է:

Գործառում են նաև *ք, տիք/դիք, րան* հոգնակերտներ, ինչպես՝ *գ էղացիք, կընգըտիք, ախպըռղիք, գ էղրան*: Հանդիպում են

<sup>211</sup> Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 136:

բաղադրյալ հոգնակերտներ՝ տըղէքներ, տըղամառթիգներ, գ'եղ-  
րաներ: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը  
հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ գ'ըլխու, հատվու,  
ճըժու, իշու, կօվերու, օխճըրներու, գ'ոմերու, լամպերու, ձ'եռներու,  
հուսերու, թըրվերու, պընչըներու, սարերու և այլն: Խոսվածքն ունի  
Ոջ հոլովում՝ քուրոջ, խօրքըրոջ: Հատուկ անունները կարող են  
ենթարկվել Ա հոլովման, ինչպես՝ Մառտունա, Հ'երվնա: Չայնա-  
վորով ավարտվող հատուկ անձնանունների, նաև որոշ հասարակ  
անունների սեռականը ձևավորվում է յ-ով՝ Զիրօյ, Վանօյ, Հարէյ,  
աղէյ, պարէյ, աֆտօյ, վեղթօյ: Բացառականը ձևավորվում է ց-ով  
գ'եղից, պընչըներուց: Ներգոյականի իմաստը արտահայտվում է  
հայցականով կամ մէջ կապով և սեռականով՝ դ'ուսըն (դրսում),  
աշխըրքի մէջ, նաև՝ նէ մասնիկով՝ գ'եղի նե, փէջի նե, աֆտօյ նե:  
Որոշիչ հոդն է ն-ն՝ էս հընդանիքըն սօվամահ կեղի, սակայն միշտ  
չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ Իմ խէր կըսէր: Հանդիպում է  
անորոշ հոդի հետադաս կիրառություն՝ թոռըմ, քանիմ: Անձնա-  
կան դերանունները տրական հոլովում ունենում են ի հավելված՝  
ընձի, քեզի, մեզի, ձ'եզի, նաև՝ քե, մե, ձ'ե կարճ ձևերը, երրորդ  
դեմքի ուղիղ ձևերն են՝ հինք, ուրանք: Ով դերանվան դիմաց առկա  
է տն, որի սեռականի և տրականի ձևերն են՝ վի, վին: Դերանվա-  
նական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ քու, ուրա, հուրին, ուրան,  
ուրանց, էսա, էստեղ, ըմալ, էղմալ, էստըրանօվ, էղա, էղոր, էղոնց,  
էղըրանից, էտեխ, էս, էսա, էտրա, էղի, էղմալ, էսմալ, էղրան,  
էտեխից, հուրիշ, ամէք, ամէքին, հըմընուց, հըմէն, դանի, դաս,  
հուր (ուր), դոր, վինից, հուստ, հիրար և այլն:

Խոսվածքում անել, ասել, լինել, ելնել, կարողանալ բայերի  
դիմաց գործածվում են էնել, ըսել, եղնել, հէլնել, կըռնալ տարբե-  
րակները: Գալ, լալ, տալ բայերի ներկան կազմվում է գ'ի/կի մաս-  
նիկով՝ գ'իքամ, գ'իլամ, կիղամ, մյուս բայերինը՝ կը/կ մասնիկով  
կամ առանց դրա՝ կըսօվրիմ, կուղեմ, թըխեմ: Միանալով բայա-  
սկզբի հագագին՝ այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ գիշամ,  
գաշիվա, գաղթա, գ'էնի, գ'ուգա: Հարկադրականի եղանակիչն է

պըղի, ինչպես՝ պըղի եղի: Վաղակատար դերբայն ունի *ր-ով*  
վերջավորություն՝ փախէր (եմ), դ'անկեր (ա), հարակատարը  
*ուկ//ուգ* վերջավորություն՝ ծըռուգ, կըռկուկ: Էական բայի ներկա  
ժամանակի ձևերն են՝ եմ, ես, ա, ենք, էք, են, անցյալի ձևերը  
*ի//ինք, իր, էր, ինք, իք, ին*: Անցյալ ժամանակում եզակի առաջին  
դեմքի իմաստը սովորաբար արտահայտվում է հոգնակի ձևով,  
ինչպես՝ յես գ'ացէր ինք, գ'անգինք (գարկում էի), յես կիճկինք,  
խօրօտ ինք (գեղեցիկ էի), կըպախինք (պահում էի), յես հընգէր ինք  
և այլն: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը սովո-  
րաբար կազմվում է ներկայի հիմքից՝ Բըռնին, խանին, տըվին,  
վառնինք, ծըխինք, Բ'էրիր, տըվիր, բայց կարող է կազմվել նաև  
անցյալի հիմքից՝ դ'ըրեցինք, տըրփեցի: Գնալ, մնալ բայերի անցյալի  
հիմքի ձևերն են՝ գ'աց, մաց: Դնել բայի ներկայի ձևերում հանդես է  
գալիս *ա* խոնարհիչը՝ դ'ընան, կըղ ընան: Եզակի հրամայականն  
ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ պախա՛,  
կայնի՛: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաս-  
տի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ  
դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է  
նախորդ բառը, ինչպես՝ Բան ա կըխառցուք, քաղաքն ա կարբի,  
տունն էր կաշխաղէր: Վերլուծական ժամանակաձևերում չ'ժխտա-  
կան մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա,  
ինչպես՝ չըմեռեր ա, համադրական ձևերում ժխտական մասնիկը  
դրվում է բայաձևի վրա՝ չըմըղաձեմ (չեմ մտածում): Բայասկզբի  
*հ*-ին միանալով ժխտական մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝  
ջ'իչավ, ջ'իչամ: Պատճառական ածանցն է ուց/ցուց՝ խաքուցել,  
ֆրորըցուցել: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և  
հրամայականում գործածվում է ու խոնարհիչը՝ կըպարըցուն,  
մըղո՛ւ: Խոսվածքը չ'բայածանց չունի, ներկայի հիմքից կազմվող  
ձևերում շատ դեպքերում բացակայում է նաև ն ածանցը, ինչպես  
կեղի, կառին, կըթըրիս, գ'ընգիմ, մեռիմ:

Հանդիպում է կօ հաստատական մասնիկի գործածություն,  
ինչպես՝ կօ էղմալ էս (հենց այդպիսին էս):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *ճիժ, կարքել* (նաև կանանց վերաբերյալ), *ջոչ, պըստիկ/պըզտիգ, կեսրեր, բըռվուգ, ջըրի, պընդի, սըպաս, խառննիք/հառսանիք, կընիկ, դոլօլ, կօգ-բախ, մըկա, քուֆտա, մատթ, հըմէն տեղ, չուր/չուրի, պաղել, հօրի, պախս, լուսուն, պարե, սօյ, իճկել, շուշուղ, տիլ, տըլաթըթաղ, գըլւն, խավոդ, հ իրիգուն, խավդիգ, պաղըռել, պաղըռդել, հւնգ էնել, սարախտան, մունաթ գ ալ, տըփել, բ ըլել արուն, կօտ, արընքտիր, հ ուզընգան/ուզընգան, կէճակ, խօրօդ, իշտըտըռուկ, ջ օգել, մընալ* (Ժամանակ անցնել), *գանդա, քաշել, թամքել, օյաղնալ, խեռ ի լըսօղաց, ֆըռըցուցել, ծըռել* (սիրահարվել), *կարկըղնել, կըռկել* և այլն:

**ՄԱՐՏՈՒՆԻ** - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Բնակիչների մի մասի նախնիները այստեղ են գաղթել Արևմտյան Հայաստանից, մի մասինը՝ 1921թ. ներկայիս ՀՀ Տավուշի մարզի Այգեձոր և Կարմիրաղբյուր գյուղերից: Հաղորդակցվում են խոսակցական հայերենով:

**ՄԱՔԵՆԻՍ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Ղզլվանք, Չիչակլու: Բնակիչների նախնիները 1828-29թթ. այստեղ են գաղթել Մուշից, Բիթլիսից, Վանից, Մանազկերտից: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վո* և *յե*, ինչպես՝ *վոռթ, վոռփ, յերք, յեփ*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օչիլ, օչխար, օխչար, էրինջ, էրագ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *իրեք, հ էրես, գ ղոժ, թոռ*: Փոխառյալ ու բնիկ որոշ բառերում հանդես է գալիս բնայնացած *ւն* ձայնավոր, ինչպես՝ *սանդւն, ջանիլ, վանգել, գաննել, թանգւն, խաննան, շանքւր, քանի, յանջիկ, թաննք* և այլն: Խոսվածքին

բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը՝ ավեղրան, *ծիծղալ, կարկըտնել, փաթըթվել, ամչընալ*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *դ ու, գ ղոժ, ջ ուր, բ աց, դ ուռ, գ եղ, դ ուս, ձ էվ, ձ նր*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *անքամ, հ իչուցել, հատչ, մատթ, բ անցել, խաքնել, պաքել, բ ըռթել, կարքել, հ էռթիս* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *կըղրել, փեղըրվար, պաղայել, փագել, փեղ* և այլն: Հինհայերենյան *հ*-ի դիմաց բոլոր դիրքերում առկա է *խ*, ինչպես՝ *խա, խին, խեստ, խինգ, խասկըցա, խառս, խօրօխպեր, խամար, պախել, խա՛րիբ, խեր, խիվանդ, խայ, բ ախ, խավտիկ*: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հ առչ, հ էվել, հ էրես, հ առու, հ էռթիս, հ ըմէն, հ ընգեր, հ իրար, հ իչուցել* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց առկա է *կ*՝ *կօնախ, կարիք, կըստու/դըստու, կավուրմա*: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակիի կազմության մեջ խոսվածքում գործածվում են նաև *ք, րանք, տիք*, անք, վանք մասնիկները՝ *իշվանք, ձ իյանք, իծվանք, ախպըրտիք, հընգերտիք, գ էղրանք, ըստեղրանք, էրէխէք, կընգըթիք*: Հանդիպում են բաղադրյալ հոգնակերտների կիրառություններ՝ *տըղէքներ, մատթիկներ, էրէխէքներ*: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *խավու, աղվըսու, ճըժու, կըռվու, գըժու, գ ըլխու, խայու, թոռու, ջըրու, անձըրեվու, տիրու, օտներու, ճըժէրու, տընէրու* և այլն: Առկա է Ոջ հոլովում՝ *հընգերոջ, անէրոջ, քըրոջ*: Ձայնավորով ավարտվող անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *վեղրոյ, Աննայ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *գ էղից, դ ըսուց*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գ էղըն* (գյուղում), *ջըրու մէչ*: Որոշիչ հոդն է *ն*-ն՝ *խացըն կեր*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ *տըղէքներ գ ացին*: Անձնական դերանվան հոգնակի տրականի հետադաս կիրառությամբ արտահայտվում է հոգնակի ստացականություն, ինչպես՝ *վոտ մե,*

*գ՛րլօխ մե* (մեր ոտքերը, մեր գլուխները): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, մեզի, քեզի, ձեզի*, գործառում են *քե, մե, ձե* կրճատ ձևեր, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հ ինք, հ ուրանք*: Ուղղերանվան դիմաց առկա է *վան*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *ընձրնից, մեզնից, էսի, էտի, էնի, էստրրա, էտրրա, էնդրրա, քու, հ ուր, հուրին, հ ուրանց, էսի, էտի, էդրրանց, դաս, դասի, դատի, դանի, իմալ, հ ուր, դոր, հիրար, հրմէն, հրմընու, հրմէն ինչ, ամէք, ամէքուն* և այլն:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *կնել, սել, եղնել, հ էլնել, կրոնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *գ ի//կի* մասնիկով՝ *գ իքամ, գիլամ, կիտամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըփագեն, քրսենք* (<կըսենք), *էնի մընա տոււ*: Բայասկզբի հագագին միանալով՝ *կ-*ն ձայնեղանում է *գ ընգիս, գուգես*: Վաղակատար դերբայն ունի *ր-ով* վերջավորություն՝ *ծախէր* (ենք), *գ ացեր* (ա), հարակատարը *ուկ* վերջավորություն՝ *բանցուկ, նըստուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Բայն ունի Ե,Ի,Ա խոնարհումներ: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ներկայի հիմքից՝ *տըփի, ջ ըրիք*: *էնել* բայի անցյալի հիմքում ևս առկա է *էն* ձևը, ինչպես *էնած* (արած), *հաջող եմ էնե* (արել), *էնեց* (արեց), *էնա* (արա), *ձ էն չէնի* (չարեցի): Երբեմն *դ ընել* բայի *դ ըն* ձևն է հանդիպում անցյալի հիմքում՝ *փէջ ենք դ ընե* (դրել), դրնի *ճամփու* (դրի): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ աց, մաց*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում դրսևորվում է օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *ձեզի յա քսեմ, վան էր կըսէր, ինչ ա կէնես, յես ա գ իքամ*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չըտէսէր եմ*,

համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըխասի* (չի հասնում), *չըգ՛ըթի* (չի գտնում): Բայասկզբի հագագին միանալով՝ ժխտական մասնիկը ձայնեղանում է՝ *ջընգի, ջէվէլնա*: Պատճառական ածանցն է *ուց//ցուց՝ խատուցել, մըտուցել, խասուցել, ֆրորցուցել, նըստըցուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում գործածվում է *ու* խոնարհիչը՝ *կընըստըցում, խասու, մըտու, նըստըցու*: Խոսվածքը չ բայաձանց չունի: Ներկայի հիմքից կազմվող ձևերում հաճախ ն բայաձանցը ևս բացակայում է, ինչպես *մեռիմ, եղին, առիս, չըմըտիք, գընգիմ*: Հարկադրականի եղանակիչն է *պըտի պըտի մընանք*:

Գործածական է *կօ* հաստատական մասնիկը, ինչպես՝ *կօ գ ացի* (իհարկե գնացի):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *տըփել, մըկա, հընչի, մատթ* (ամուսին), *նախրագ ընա, չօբան, նախըռչի, կընիկ, յեռստ, ճամփել, նեղէնալ, խօրօտ, գ էշ, հունթ, իմալ, կըռիվ-պօտօոոց, պաք-պըռօշտի, տեղաշոր, թալել, սաբախտան, ճիժ, դ ըրկեց, բ՛ընակըռել, դորից, մուխ, չուր//չուրի, ծըռել* (սիրահարվել), *ջ ոչ, կարքել* (ամուսնացնել նաև կանանց վերաբերյալ), *աբլօր, խավ, խավտիկ, խավկիթ, շաղ, մէ կաթ, մէ պուտ, տանիս, հառիք, հէռթիս, պատ ու հառիք էնել* (ամբողջ տունը մաքրել), *ժեխ, չըռիկ, տիլ, չուր մըկա, ջէք, պըստիկ, հուզել* (սիրել, ցանկանալ), *մէ փըշուր, մուռ* և այլն:

**ՄԵԾ ՄԱՍՐԻԿ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Մեծ Մազրա: Ըստ Ռ.Բաղրամյանի՝ գյուղի բնակիչների նախնիները ներկայացնում են գաղթականության երեք շերտ՝ 1896-ի, 1914-ի և 1922-1926-ի, և եկել են Բասենից, Մուշից, Կարսից, Վանից, սակայն մեծ մասը մշեցիներ են՝ Կոպ, Մասրիկ և այլ գյուղերից<sup>212</sup>: Խոսվածքը հիմնականում Մշո բարբառի հատկանիշներ է երևան բերում, սակայն անխառն չէ, հաճախ խոսողները

<sup>212</sup> Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 5:

նան սահուն անցնում են Ում ճյուղին հատուկ ժամանակաձևերի (բացվում ա, ցանում ին):

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի և *ե*-ի դիմաց առկա են *վո* և *յե*, ինչպես՝ *վոտ*, *վոռց*, *յես*, *յեգ*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *n*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օղորմի*, *օսկոռ*, *էրկու*, *էրնէկ*: Խոսվածքն ունի *ե*, *n* երկբարբառային հնչյուններ՝ *ջոչ*, *վոնց*, *քեզի*, *ընդեդ*: Փոխառյալ ու բնիկ մի շարք բառերում դրսևորվում է քմայնացած *ա* ձայնավոր, ինչպես՝ *թնգն*, *յննի*, *լնրել*, *քնլան* և այլն: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սդումը՝ *հանցրկել*, *հասկընալ*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *ջոչ*, *բաժակ*, *գինի*, *գըլօխ*, *դուս*, *բան*, *բերել*, *ձըմեռ*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *խափել*, *կարքրվել*, *մառթ*, *օթ*, *մէչ*, *վեռչ*, *հանէչ*, *օց*, *հանցրկել* և այլն: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հընցնել*, *հանէչ*, *հանափոտ*, *Հերէվան*, *հըլնել*, *հինք*, *հանցրկել*, *հընգընել* և այլն: Փոխառյալ բառերի սկզբում հանդիպում է *դ* հնչյուն՝ *դարիք*, *դավուրմա*: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *գեղըն* (գյուղում), *գեղի մէչ*: Որոշիչ հոդն է *ն*-ն՝ *ճամփէքըն սարքուկ ա*, սակայն այն միշտ չէ, որ գործածվում է, ինչպես՝ *էն կընիկ գընաց*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի*, *քեզի*, *մեզի*, *ձեզի*, հանդիպում են երրորդ դեմքի ուղղականի *հինքըն*, *էտնք*, *ըղըրանք* ձևերը: Ով դերանվան դիմաց արձանագրվել է *վով*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի*, *վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *քու*, *ըտըրա*, *ըղրա*, *ըստըրա*, *ընդըրա*, *ըղըրանց*, *էտնց*, *դոր*, *դորից*, *ըստեդ*, *ըտեդ*, *ընդեդ*, *էսենց*, *վինից*, *վինսով*, *հուր* (ուր), *ամէք մի* և այլն:

Խոսվածքում *անել*, *ասել*, *լինել*, *ելնել*, *կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել*, *ըսել*, *եղնել*, *հէլնել*, *կրոնալ* տարբերակները: *Գալ*, *լալ*, *տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *գը//գի//կի* մասնիկով՝ *գիքամ//գըքամ*, *գիլամ*, *կիտամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըդընեն*, *կէթան*, *բէրին ծախին* (բերում ծախում էին): Միանալով բայասկզբի հագագին կամ հայտնվելով բայասկզբի ձայնորդ կամ ձայնեղ հնչյուններից առաջ՝ այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ *գէնի*, *գըլացի*: Հարկադրականի եղանակիչն է *պըտի*, ինչպես՝ *պըտի եղներ*: Վաղակատար դերբայն ունի *ր-ով* վերջավորություն՝ *տեսեր* (ես), *եղեր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *տեսուկ*, *հընգուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *ես*, *ես*, *ա*, *ենք*, *էք*, *են*, անցյալի ձևերը՝ *ի*, *իր*, *էր*, *ինք*, *իք*, *իր*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքերից՝ *գըրէցին//գըրին*: *Գնալ*, *մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գաց*, *մաց*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *գըրական ա կըխօսաք*, *վինսով ա կըթըրովրոաս*, *ինչ էր կըծախիք*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չըմացեր ա*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըհասկընան* (չեն հասկանում): Խոսվածքը չ բայածանց չունի:

Գործածական է *կօ* հաստատական մասնիկը, ինչպես՝ *կօ էն կընիկ գընաց* (դե այն կինը գնաց):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *մրկա*, *հէսա*, *ճիժ*, *պըստիկ*, *թունդիր*, *իմալ*, *հաոսնիք*, *վախտ*, *ջէք*, *հընչի*, *ջուվար*, *դայադ*, *ջայէլ-ջուուկ*, *գըրըշտել*, *ըշկէ լուս*, *լուսախատ*, *չօք*, *պըլուլել*, *խօոս*, *գըլոր էրթալ* և այլն:

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում՝ Ներքին Աղյաման, Կոթ: Բնակիչների նախնիները

հիմնականում գաղթել են 1828-29թթ. Ալաշկերտ (Թուփրակկալա) գյուղաքաղաքից: Հաղորդակցվում են Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում *n*-ի դիմաց առկա է *ւո*, իսկ *ե*-ի դիմաց՝ *՛ե*, ինչպես *ւոռծ*, *ւոռայ*, *՛եգ*, *՛ես*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում այդ միավորների դիմաց գործառում են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օխճար*, *օտպէվերի*, *էրինջ*, *էրագ*: Միավանկ բառի աճման դեպքում բառասկզբի *ւո*-ն դառնում է *օ*՝ *ւոռայ > օտպէվերի*: Խոսվածքն ունի *ե*, *n* երկբարբառային հնչյուններ՝ *հ ընգեր*, *արեվ*, *թոռ*, *չօրանոճ*: Փոխառյալ և մի շարք բնիկ բառերում գործառում է քմային *ւն* ձայնավոր, ինչպես՝ *դւնն*, *քւնոի*, *քւնճւն*, *քուֆտւն*, *Քւնվւնո*, *սրլւն* և այլն: Առկա է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սդում՝ *ծիճղալ*, *հ իմնալ*: Բառասկզբում ձայնավորներից առաջ շատ դեպքերում տեղի է ունեցել *h*-ի հավելում՝ *հ առէճ*, *հ առու*, *Հ էրէվան*, *հ ընգերուտուն*, *հ ախպուր*, *հ իմնալ*, *հ արի՛* և այլն: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *դ ուրան*, *դ ար*, *բ աժան*, *բ անձրր*, *ջ ուր*, *գ էղ*, *ճ ավար*: Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլերի և ձայնեղների դիմաց գործառում են խուլեր՝ *էպէլ*, *թուպ*, *հօրկուր*, *հօկի*, *տակ-տակ*, *անկամ*, *քիճ*, *չօրանոճ*, *գ օղուտուն*, *ջ էրմուտուն*, *ճրրակու*: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *արբել*, *պաղմուտուն*, *պառգաճ*, *փագ*, *մէգ*, *հաղ*, *խաղառագ*, *բ աժագ*, *ճանգ*, *պուղուգ*, *սիրղ*, *ուղէլ*: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքն ունի *h*: Բառամիջի ու բառավերջի *h*-ի դիմաց մի շարք դեպքերում հանդիպում է *յ*, ինչպես՝ *սայման*, *մայ*, *պայօղ*, *պայէլ*: Օտար բառերի սկզբի *ղ*-ի դիմաց խոսվածքն ունի *խ*՝ *խանտար*, *խուրբան*, *խօնախ*, *խավուրմա*: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում երբեմն հանդես են գալիս բաղադրյալ հոգնակերտներ՝ *տրղէկներ*, *էրէխէկներ*: Շատ անուններ եզակի թվում, ինչպես նաև բոլոր գոյականները հոգնակի թվում ենթարկվում են

Ու հոլովման՝ *հավու*, *իշու*, *ջ ըրու*, *կօվու*, *շընէրու*, *դ աշտէրու*, *սարէրու*, *տընէրու* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *քուրոճ*, *կիսրոճ*: Հատուկ տեղանունները կարող են ենթարկվել Ա հոլովման՝ *Մառդունա*, *Քւնվւնո*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Գ առօյ*, *Ք էրօյ*, *Տուճօյ*: Բացառականը ձևավորվում է *ծ(g)*-ով՝ *դ աշտէրուճ*, *դ ըննիճ*, այլ դեպքերում՝ նաև *ե*-ով՝ *գ իշերվորէ*, *կէսօրվորէ*, *ճ էռէս*, *ընձընէ*, *քրզնէ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէճ* կապով և սեռականով՝ *գ էղըն* (գյուղում), *բօճկի մէճ*: Որոշիչ հոդն է *ն*-ն, ինչպես՝ *Հ ազըն քէլա փագա*, սակայն այն հաճախ բացակայում է, ինչպես՝ *Խող լրոիվ լրծուգ ա յեգնէրու տագ*: Ստացական հոդերից հետո դրսևորվում է *ի* ձայնավոր՝ *սիրղսի*: Անորոշ հոդն ունի հետադաս կիրառություն, ինչպես *բ աժագ մի*, *ճանգ մի*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի(q)*՝ հավելված՝ *ընձի(q)*, *քրզի(q)*, *մրզի(q)*, *ճ ըրզի(q)*, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինկ*, *ուրանկ*: Ով դերանվան դիմաց առկա է *ւոն*, որի սեռականի, տրականի ձևերն են՝ *վի*, *վին*: Դերանունների ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *յե* (ես), *ընձընէ*, *քրզնէ*, *ուր*, *ուրին*, *ուրանճ*, *էղի*, *էնդոր*, *իղա*, *իղմալ*, *իղրուճ*, *իղատէխ*, *իղաքան*, *էղրանճ*, *էղրրան*, *էնմալ*, *էղմալ*, *էնդուճ* (այնտեղից), *ամէկ*, *դոր*, *հըմէն*, *վորտէխ*, *վինիճ*, *հիրար*: Էլ շաղկապի դիմաց գործածվում է լէ ձևը՝ *թալվա լէ*, *հողա լէ*, *մէգ լէ*, *յեղ լէ*:

Խոսվածքում *անել*, *ասել*, *լինել*, *ելնել*, *կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել*, *ըսել*, *եղնել*, *հէլնել*, *կըռնալ* տարբերակները: *Գալ*, *լալ*, *տալ* բայերի ներկան կազմվում է *գ ու/գ ի/կի* մասնիկով՝ *գ ուկամ*, *գ իլամ*, *կիղամ*, մյուս բայերինը՝ *կը/կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըզ ըրիմ*, *կէնին*, *ծիճղան*: Բայասկզբի հագագին միանալով այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ *գուգա*, *գ ընգընէր*: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն՝ *եղեր* (ա), *կէլր* (խ), հարակատարը՝ *ուգ* վերջավորություն՝ *խաշուգ*, *կընդուգ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *իս*, *իս*, *ա*, *ինկ*, *իկ*, *ին*, անցյալի ձևերը՝ *էնկ*, *էր*, *էր*, *էնկ*, *էկ*, *էն*: Ե

խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից՝ *բ էրէծին, բ ըռնէծի, թողէծիր, լրծի, քաշի*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ՛ած, մած*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *իշկա՛, նքստի՛*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *աֆտօբուզ ա քըշիմ, իմալ ա կաբրի, խըմսաձ էր կեղնին, թունդըրա մէձ էր կըթըխէնի*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չաշխաղէր իմ, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ չըգինանկ (չենք իմանում), չըխօսամ (չեմ խոսում), ընդ որում բայասկզբի հազագին միանալով ժխտական մասնիկը դառնում է ջ, ինչպես՝ ջուզին, ջիշամ*: Պատճառական ածանցն է *ծուծ//ուծ՝ կայնըծուծել, քրնծուծել, հիճուծել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *կըխախծունկ, հիճո՛ւ*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (թըռնել, փախնել, ուռել):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *կէսրէր, դօղ, բօլոն, ճիժ, հէրաթաղուզ, տըպել (ծեծել), հուրիգ-հըրեղեն, հօրի, իմալ, չուրի, լուսուն, սաբախտան, լուսուն չէ մըզլօր, էլման, օղօրտ, դուզ, գ՛օղդու, մըգա, հուդա, հօնի, աղէ (մայր), ժէխ, փուղոժ (արտաքնոց), տանիկ, հառիկ, հէրտիկ, ապօ, տալվ, իրիկ, տաղօ, պարէ, ջ՛օձօ (տատ), բօռալ, ձիտխած, ջ՛աղաձ, ջ՛ախձըբան, կուլոն, հօխպէր, պաղ, քըռճիգ, քուֆտան թալել, թունդիր, գ՛ալել, գ՛ոմ, հըրիսա, արուր, պուլիգ, պուղուկ, ճէղիկ, փօշի, խէխտ աշուն, թուպ դ՛ընել, սիլօս, ձ՛ըծում, խարխիձա, լօղգընալ, բօջազ, հօշմրի, ճարընգան, ջ՛օգել, թուպ (կաղամբի թթու), լընալ և այլն*:

ՆՈՐԱԿԵՐՏ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Հիմնադրել են 1927թ. Վանի գավառի Սեղ գյուղից գաղթած 12 ընտա-

նիքներ: Բնակիչների մի մասի նախնիները եկել են Մոկսից, Բիթլիսից, Խիզանից, Մուշից, Ալաշկերտից: Դեռևս Ռ.Բաղրամյանը 20-րդ դարի 70-ական թվականներին նկատել է, որ գյուղում «միօրինակ բարբառով չի խոսվում»<sup>213</sup>: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ խոսվածքում գերակշռում են Մշո բարբառի հատկանիշները:

Խոսվածքում միավանկ և բազմավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի դիմաց առկա է *օ*, ինչպես՝ *օր* (որ), *օտ* (ոտք), *օսկի, օղնաման*: Հինհայերենյան *ե*-ի դիմաց միավանկ բառերի սկզբում առկա է *յէ*, ինչպես՝ *յէս, յէգ*, իսկ բազմավանկ բառերի սկզբում՝ *է*, ինչպես՝ *էրգիր, էրկու, էրէխա*: Քիչ տարածում ունի քմայնացած *ւի* ձայնավորը՝ *քւիրփինջ, օրինակ, գւյլւն, խւնջւն* և այլն: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի աղումը՝ *ավէրան, սօվրէլ*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ՛ան, բ՛օլօր, գ՛էղ, գ՛ըթան, դ՛ընէլ, ջ՛ուր, ձ՛էո, ձ՛ըցում*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *մառթ, ջ՛օջ, ձ՛ըցում, հ՛առէչ, մէչ, կարքէլ* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց որպես կանոն առկա են ձայնեղներ՝ *պար, արբէլ, Ալաշկէոդ, տագ, պադմէլ, լամուգ, հէղ, պաղիվ, էրգիր, կըղօր, էրգու, տախտագ, մըշագ, էգաձ, պըղի, ագաղէլ* և այլն: Բառասկզբի ձայնավորից առաջ հանդիպում է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հ՛էսօր, հ՛առէչ, հ՛իրար, հ՛առիք, հ՛ունթ* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ՛ կօնդախ*: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *քըռդու, մառթու, աղվըսու, գ՛իլու, պարէրու, ծընօղներու, քըռղէրու* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *կիսրօջ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *դ՛աշտից, պարէրուց, վինից*, բայց քիչ չեն նաև *է*-ով ձևավորվելու դեպքերը, ինչպես՝ *հօղէն, ջ՛ըրէն, էրգըրէն*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *դ՛աշտըն* (դաշտում), *գ՛էղի մէչ*: Որոշիչ հոդն է *ն*-ն

<sup>213</sup> Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 5:

էղ մատթըն րօպէ մէ բանդ չընքստավ, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպէս *Քրողերու լամուզներ էկան*: Անորոշ հողն ունի հետադաս կիրառություն, ինչպէս՝ *կրդօրըմ, տունըմ, կրդօր մէ, տախտագ մէ, օր մի, րօպէ մէ*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քզի, մէզի, ձ էզի*, եզակի երկրորդ դեմքում գործառում է նաև *քէ* կրճատ ձևը, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հ ինք, էնօնք*: Ով դերանվան դիմաց բարբառախոսները վկայում են *օվ*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *էնօր, էնօնց, ուր, իւր, էսի, էտի, էնի, իդա, էդմալ/ըդմալ, էսթիւ* (այսպէս), *էնթիւ, ըստեղ, ըտեղ, ընդեղ, հ իրար, ամէն, ամէք մատթ, վինից, դօր* և այլն: *Էլ* շաղկապի դիմացն խոսվածքն ունի լէ՝ *երգուս լէ, գ էղ լէ*:

Խոսվածքում *անել, ասել, լինել* բայերի դիմաց գործածվում են *էնէլ, ըսէլ, էղնէլ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (և անցյալ անկատարը) կազմվում է *գ ի//կի* մասնիկով՝ *գ իքամ, գ իլամ, կիտամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըտէնան, կերթան, հաց բ էրին*: Հարկադրականի եղանակիչն է *պըդի*, ինչպէս՝ *պըդի կազմակերպէ*: Վաղակատար դերբայն ունի *ը-ով* վերջավորություն՝ *գ ացէր* (են), հարակատարը *ուկ* վերջավորություն՝ *նըստուկ, կարքուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *էմ, էս, է, էնք, էք, էն*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքում գուգահեռաբար գործածվում է նաև *ա* ձևը, ինչպէս՝ *գ ըրուկ ա*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է անցյալի, երբեմն նաև ներկայի հիմքերից՝ *փօխտցին, կադարեցին, տըվէցին, սարքէցին/սարքին*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ աց, մաց*: Երբեմն դիմավոր բայաձևերից առաջ խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձև, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպէս՝ *յօլա է գ ացած է*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը կարող է դրվել դերբայի վրա, ինչպէս՝ *չըմացէր է, չէղէ* (<չէղէր է), իսկ համադրական ձևերում՝ բայաձևի վրա՝ *չէղնի* (չի լինի): Պատճառա-

կան ածանցն է *ուց/ցուց՝ կըզըցուցէլ, մըդուցէլ*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս ու խոնարհիչը՝ *կըկըզըցու, մըդո՛ւ*: Խոսվածքը չ բայաձանց չունի:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *տափէլ, քըչում, մի հանքի, կիսուր, կէսրէր, իմալ, գ ըրթան, հավտիկ, գօմփ, հ ընթէլ, թառթափ, սըրփանք, սըպաս//պաս, մըռու, պախս, կըռունձ, տախտ, հըմա, մըկա, էքսի, ճիժ, ժէխ, ճէտ, փարատիչ, յէղըռճիկ, չըրիկ, հ առիք, տանիս, յարա, ուզընգան, տըղացկան, գ օղտու, ափէր, կալօ, տիլ, ձ ըցում, լամուգ, ճան և այլն*:

**ՆՈՐԱՇԵՆ** - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Նախկինում Էֆենդի, Ռահման, Քարաշեն: Հիմնադրվել է 1920թ.: Բնակիչների նախնիների մի մասը եկել է Կարսի շրջանից, Մուշից, Մակուից, հետագայում՝ շրջակա գյուղերից: Նորաշենի խոսվածքը հարում է Մակուի խոսվածքին՝ Մշո բարբառի որոշ հատկանիշներով:

Խոսվածքում մի շարք փոխառյալ և բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *ւ* ձայնավոր, ինչպէս՝ *լւնրէլ, հւնշկ, լւնլ, քւսսւնր, ջւնյէլ, գւննէլ, գւնրկէլ, հւնտչ, կուլւնկ, տէքւնրկընիկ, բւնրւնկ, սիֆտւնկ* և այլն: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ն*-ի դիմաց առկա է *վո*, իսկ *ե*-ի դիմաց՝ *յե*, ինչպէս՝ *վոք, վոտ, յես, յեգ*, բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *օ* և *է*, ինչպէս՝ *օղօրմի, օխճար, էրկու, էրէխա*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *գ ացե, ձ ըմեռ, չոռս, գ ում, վոսկի*: Բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը, ինչպէս՝ *յեռսուն, փատտել, սօվրել*: Նորաշենի խոսվածքում առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ, ինչպէս՝ *բ էո, բ էրէլ, բ ըրթել, գ աթա, գ ըլօխ, դ էմ, դ ուրան, դ ընել, ձ ավար, ձ ըցում, ջ ուր, գ ոռժ, գ էղ, գ էլ, գ ութան, դ ուս* և այլն: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *յեփ, մէչ, հւնտչ, ջ ոչ, տէքրր, անքամ, խօքի, բւնոցել, բւնոց, բ ըրթել, ձ ըցում* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ

յերգիր, կրողել, փեղ, աբրել, տերդեր, գիդալ և այլն: Հինհայերենյան *h*-ի դիմաց բոլոր դիրքերում առկա է *խ*, ինչպես՝ *խէր, մէ խատ, պախել, խէտ, խող, էն գ'ախ, խա, խինգ, խօրքուր, խացատուն, խին, խօքի, խառու, խօրօխպէր, խոտ* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ սովորաբար վերածվում են շփականի, ինչպես՝ *մէշկ, մէշտեղ, իշքան, վոշ թէ, կօշկել, ծասկուկ*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *h*-ի հավելում՝ *հ'առու, հ'ընգնել, հ'ընչի, հ'առու, հիւնչուց, հ'ըլնել* և այլն: Փոխառյալ բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ* կամ *կ*, ինչպես՝ *կ'արսէցի, կ'ուրթի, կուրբան, Կանգնիր, կըշլէցի, կանմիշ*: Եեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում գործածական են նաև *ք, էքք, բանք, տանք* հոգնակերտ մասնիկները, ինչպես՝ *վոսկիք, լրճաշէնցիք, տրդէքք, ըդերանք, խօրօխպէրտանք*: Հատուկ տեղանունները կարող են ենթարկվել Ա հոլովման՝ *Սէվանա, Քանվանա, Արագա*: Հատուկ անձնանունները և որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Գարոյ, Տիկոյ, աֆտոյ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *Լըճաշէնից, տեղէրից*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէշ* կապով և սեռականով՝ *քաղաքն ա, գ'եղի մէշը*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ'եզի*: Երրորդ դեմքի ուղղականի ձևերն են՝ *հ'ինքը, հ'իրանք, ընդոնք*: Ով դերանվան դիմաց բարբառախոսները վկայում են *օվ* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը, վիրը*: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *մեզնից, էսա, էտի, ըստօվ* (դրանով), *ըստու, ըտոնք, ընդոնք, ըտրրան, ըտրրանից, ընդրրա, ընդրրանց, ըստե, ըտե, ընդե, ընդեն, ըդերանքից, հիրանց, դոր, հ'ուր, վորը* (որ մեկը), *հ'ըմէն, հ'ամէքքս, ըտոնք* և այլն:

*Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ'ալում, լալում, տալում*: Վաղակատար դերբայն ունի *էր/եր* վերջավորություն՝ *հ'էլեր* (ա), *փախէր* (ին), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *կախուկ, քընուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն

են՝ *եմ, էս, ա, ենք, էք, են, անցյալի ձևերը՝ ի, իր, էր, ինք, իք, ին*: Սրանց ժխտականներն են՝ *չեմ, չես, չի, չենք, չէք, չեն և չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքերից՝ *թողին, աքսօրին/աքսօրէցին, տըվէցին*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ'աց, մաց*: Տրամաբանական շէշտն արտահայտելու համար օժանդակ բայը կարող է կրկնվել՝ *գ'ուրթան ինք քըշում ինք*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *պաղմա', նըստի*: Վերլուծական կազմության դեպքում ժխտական մասնիկը կարող է դրվել դերբայի վրա՝ *չէլեր ա//չի հ'էլե, չըտըված//չի տըված, չուզում ի//չի ուզում*: Հարկադրականն ունի *պըտի* եղանակիչ՝ *պըտի էթանք*: Պատճառական անձնանուն է *ցըն տաքցընել, նըստըցընել*: Խոսվածքում չկան չաժանցով բայեր:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *իմալ, քար քընսի, տըփել, քօ տուն շէն, մինչեկ էս քանօր, թայդաշ, ճըխնախան, բէթսիր, կօոձել, պըսակվել, թսնուց, մէ քիչ, պըոձընել, ջ'օջընալ, առնել* (ամուսնանալ), *պուտուկ, դ'ուր ու դ'ուս, մէշու, ադէ* (տատ), *կուբօվ տուն, հըմա, չոոս ք'օլորը, թունդիր կախվել, հ'ատիք, տըփել, տըփոց, պըստի, մառթ, ընդօքի, հէսա, փուշկ, մըժ, կալըո, սուրու, կըթի սուրու, հառավոտ, հիրկըվան, ջ'օկ, լալրել, մէ ճանգ, նաֆար, կ'ուրթի* և այլն:

**ՆՈՐԱՏՈՒՄ**<sup>214</sup> - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Նախկինում՝ Նորատվաց գյուղ, Նորատունք: Բնակիչների մի մասի նախնիները 1829թ. եկել են Բայազետի գավառի Քորուն և Մոսուն

<sup>214</sup> Գյուղի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 1998թ. լրացված թիվ 502ա տետրում, առկա են նաև գյուղում 2013թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

գյուղերից, հետագայում եկել են նաև Մուշից, Ալաշկերտից, Արծափից, Սուրմալուից և այլ վայրերից<sup>215</sup>:

Գյուղի խոսվածքը ներկայացնում է Բայազետի բարբառը՝ զգալի յուրահատկություններով: Ինչպես Բայազետի բարբառի մյուս դրսևորումներում, այստեղ ևս համապատասխան դիրքերում կանոնավորապես գործառում է շրթնային *մ* ձայնավորը՝ *մսեղ, կանկրդել, պմկաս, տմնել, ծմղել, ճմն, սմր, շմտ* և այլն: Փոխառություններում, նաև բնիկ շատ բառերում (ի տարբերություն այլ խոսվածքների) դրսևորվում է քմայնացած *մ* ձայնավոր՝ *մոճել, ձմք, լւց, ժանգ, ընդմր, խեքմթ, խմյլի, հմշվել, սիֆտմկ, փեսմ, մմտմկ, բմխտ, գմզմր, դմնդոտ, դմզմնմկ, թմմբմլ, կմյիմ, ջմյել*: Նորաստուսի խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը՝ *մնջրկոտ, լոկընալ, հավըլնալ*: Բարբառի մյուս խոսվածքների բւ վերաբերականի դիմաց Նորաստուսում գործածվում է *բա* տարբերակը: Միավանկ բառերի սկզբում *n*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *վո* և *յե*՝ *վոռթ, վոոց, յեգ, յեփ, յերք*, բազմավանկ բառերի սկզբում *ո* և *է*, ինչպես՝ *օրձար, օշլոտ, օրօձ, էրէվալ, էրինջ*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *խելք, լէղի, շէրեփ, փոր, սըղոց*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ ուռթ, գ ունդ, դ ըժվար, ձ ութ, ջ ընջել*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *խաքնել, դաթար, ճրրաք, խափել, բ օրփոս, կմթթալ, մէչ, օչիլ, փոոցանք, վոոփ*: Նույն դիրքերում խուլերի դիմաց բավականին հաճախ առկա են ձայնեղներ՝ *մզադել, հառավոդ, ուղել, էղի, խըռղընել, յեգեղեցի, շըլւց, հէրգըննալ, կըղըրտել, ծըձադ, ցաձրր, մբրուստ, մրգրադ, կըղրել* և այլն: Խոսվածքում հետնալեզվային պայթականներն ունեն որոշակիորեն քմայնացած արտասանություն (խեքմթ, շիքենք, գէղ,

գիրք), որը առաջին շարքի ձայնավորներից առաջ հաճախ հանգեցնում է *գ, կ, ք < ջ, ճ, չ* անցման, ինչպես՝ *գ էտին < ջ էտին, գ էրընդի < ջ էրընդի, գ էղացի < ջ էղացի, գ ինի < ջ ինի, կիրմկի < ճիրմճի, քերել < չերել, քմվմո < չմվմո, քմլմմ < չմլմմ* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *հմշկ, ծմսկել, կօշկել, մնզնի, միշնսկ, հանգըժներ, վառսկ*: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի խ՝ *խաքուստ, խաստ, պմխել, բախ*: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է կ՝ *կօնախ, կմփադ, կմսաք*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *h*-ի հավելում՝ *հըմէն, հառէչ, հիմանալ, հառփէնալ* և այլն: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք, անք, վանք, րանք, տանք/դիք, անիք* մասնիկները՝ *խմյլիք, մզոք, ձիանք, իշվանք, գեղանք, մխպըրտանք/մխպըրդիք, քըվորտանք/քըվորդիք, տէքրտանք/տէքրդիք, կընանիք*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականը ձևավորվում է *-ով*՝ *Մմթոյ, Յենգոյ, Մմթոյ, Շուռայ*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Հէրէվնա, Սէվանա, Մմնտունա*: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տիրոջ*: Բացառականը ձևավորվում է *-ով*՝ *բըրթից, գինուց, գըլխըներից, մխպըրդիքից, իշվանքից*, երբեմն նաև *է-ով*, ինչպես *գըլխէն, սմրէն, տընէն, օրէն*: Ներգոյականը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *Հէրէվան* (Երևանում), *ջըրի մէչը*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են ի հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են՝ *ընդոնք, հիրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի*, սրանց թեք հոլովաձևերից են՝ *ըստու, ըտու, ընդու* (սեռ. հոլով), *ըստուրը, ըտուրը, ընդուրը* (հայց. հոլով), *ըստոնց, ըտոնց, ընդոնց* և այլն: Հետաքրքրական են նաև *ըստմր,*

<sup>215</sup> Գյուղի պատմությունը ներկայացված է «Նորաստուս» գրքում (Ե., 2000, 520 էջ):

ըստնր, ընդսնր, այստսնր, իշտսնր (այսքան, այդքան, այնքան, ինչքան) ձևերը և այլն: Ուլ դերանվան դիմաց առկա է վորը տարբերակը, որի սեռականի ձևն է՝ վիր, տրականինը՝ վիրը: Նորատուսի խոսվածքում դրսևորվում է հոգնակի ստացականություն արտահայտող յուրահատուկ ձև՝ թևը մեին (մեր թևերին), գ ըլխը մե (մեր գլուխները), վոտը մե (մեր ոտքերը):

Գալ, լալ, տալ բայերի անկատար դերբայի ձևերն են՝ գ՛ալում, լնլում, տնլում: Վաղակատար դերբայն ունի էր//եր վերջավորություն՝ գ՛ըրէր եւ, գ՛ըրեր ա, հարակատարը՝ ուկ վերջավորություն՝ թըխուկ: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ եւ, ես, ա, ենք, էք, են, անցյալի ձևերը՝ ի, իր, էր, ինք, իք, ին, սրանց ժխտականներն են՝ չեւ, չես, չը, չենք, չէք, չեն և չի, չիր, չէր, չինք, չիք, չին: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից՝ սիրէցի//սիրի: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ գ՛աց, մաց: Եզակի հրամայականն ունի ներգործած և կրավորած վերջավորություններ՝ ք՛ըռնա՛, պնդմա՛, մըտի՛, մօտկըցի՛: Պատճառական ածանցն է գրն՝ խասկըցրնել, մըտցրնել: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է ա վերջավորություն՝ մօտկըցըրա՛, խըմցըրա՛: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (թըռնել, փախնել, կօրել, ուռել):

Խոսվածքի բառային միավորներից են՝ մնա, ջան (դիմելաբառ), կըտվըչի, տնփկոցի, պուտ, կնթ, սնռուց, պնդ, խօվ, խագ, ճոթ, կըտուր, հ՛առիք, ժեխ, չըռնակօթ//չըռկօթան, տիլ, մօծիլ, մուխ, փօշի, թուփ, կուտ, յեղըռճիկ, կըռութ, վիլկ, խօրիգ, մուռթուղա, խընօցի, թէշի, հ՛ուզընգան, դ՛ըղասկան, հնշկալուսանք, ճիժ, մնոթ, հարևան, դ՛ըրկեց, միրան, մօղօզըրիկ, օրօճիկ, գ՛ըրթան, ձ՛ու, պուճուճակ, պնդարաք, հ՛առավոտ, կոււ, մըռու, պըստի(կ), մէշու, ք՛արկ, թօնել//թօղել, կըժմըթել, հ՛իրար տալ, հ՛ընցըցրնել, հ՛խտըկջըրել, կնրթըվել, տնփել, հ՛իշկալ, տը-

փել, գըռըշտել, խատել, մըկա, հ՛էքուց, հ՛էքուց չէլօր, իմալ, հ՛ընչի, հ՛էսա, չնշկն և այլն:

Շ

ՇԱՏՁՐԵՔ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Ղոշաբուլաղ: Շատջրեք է վերանվանվել 1991թ.: 1988-89թթ. այստեղ բնակություն են հաստատել Ադրբեջանից բռնագաղթած հայեր: Ընդգրկված է Գեղամասար համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ՇԱՏՎԱՆ - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Նարիմանլու: 1991թ. վերանվանվել է Շատվան: Բնակիչների մեծ մասը 1988-89թթ. Ադրբեջանից բռնագաղթած հայեր են: Ընդգրկված է Գեղամասար համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

ՇՈՐԺԱ - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Նախկինում՝ Նաղեժդինո: Հիմնադրվել է 1810թ.: 1989-1992թթ. վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթած փախստականներով և Արծվաշենից տեղահանված ընտանիքներով: Ընդգրկված է Շողակաթ համայնքի կազմում: Հաղորդակցման միջոցը Ղարաբաղի բարբառն է՝ Գանձակի միջբարբառի տարրերով:

Չ

ՉԿԱԼՈՎԿԱ - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Նախկինում՝ Ալեքսանդրովկա, Ջեյնալ: Մինչև 1926թ. ռուսաբնակ է եղել: Ներկա բնակիչների վկայությամբ՝ իրենց նախնիները եկել են Գումաձորից, Վարսերից, Լճաշենից, շրջակայքի այլ գյուղերից: Չկալովկա է վերանվանվել 1946թ.: Հաղորդակցվում են հիմնականում Մակուի խոսվածքով:

Խոսվածքի մի շարք փոխառյալ և բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *ւն* ձայնավոր, ինչպես՝ *Քւնվւնո, գւնթի, քւնլւն, օրինակ, թանգւն, չւնրնգ, ձւն, հնւկտին, միյնակ, մանդակ, գւննել, քուֆտւն, հւնչկաչափ* և այլն: Երբեմն բառի առաջին վանկում նկատելի է *ա* ձայնավորի շրթնայնացած արտասանություն՝ *անպնյման, մվիրել, մլուր, ճնշնալ*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի դիմաց առկա է *վո, ե*-ի դիմաց՝ *յե*, ինչպես՝ *վոր, վոտ, յեփ, յես*, բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օղորմի, օխճար, էրինջ, էրէխա*: Խոսվածքն ունի *է, ո* երկբարբառային հնչյուններ՝ *թել, ցօրեն, թոռ, կրթվոր*: Բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի աղումը, ինչպես՝ *բածնել, գ'օղնալ, խասկընալ*: Չկայովկայի խոսվածքն ունի շնչեղ ձայնեղ բաղաձայններ, ինչպես՝ *բագուկ, բ'էրել, բ'անակ, բ'օվել, գ'իշեր, գ'եղ, դ'ընել, դ'ուս, ջ'ուր, ձ'եռ, ձ'ու, բ'ան, գ'ըթալ* և այլն: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *ընթունել, մառթ, բ'ըռթել, խարնել, յերթ, վեռչ, մէչ, բ'անց, օց* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *դրբոց, գիդալ, փագել, սրբաս* և այլն: Հինհայերենյան *հ*-ի դիմաց բոլոր դիրքերում առկա է *խ*, ինչպես՝ *խեր, հիցունխինգ, խօրօխալեր, պախել, խօրել, էն գ'ախ, խառնիս// հառսանիք, խաց, խէտ, խավ* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ հաճախ վերածվում են շփականի, ինչպես՝ *վոշ թէ, բոշկա, ճաշնալ, պրոզնել* (ավարտել), *հնշկ*: Բառասկզբի ձայնավորից առաջ շատ դեպքերում առկա է *հ*-ի հավելում՝ *հ'առէչ, հ'ըլնել, հ'իմանալ, հ'ուզրնգան, հ'արէք, հ'առճի* և այլն: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հատուկ տեղանունները կարող են ենթարկվել Ա հորվման՝ *Մուխանա, Մէվանա, Քւնվւնա*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունները սեռականը ձևավորում են *յ*-ով՝ *Գարօյ, Ափօյ, Սօնօյ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *Գնմաճորից, տրնից*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է

հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *տեխնիկումը* (տեխնիկումում), *գ'եղի մէչը*: Անձնական դերանունները տրական հորվում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ'եզի*: Երրորդ դեմքի ուղղականի ձևերն են՝ *հ'ինքը, հ'իրանք, ընդոնք*: Ով դերանվան դիմաց բարբառախոսները վկայում են *վորը* ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վիր, վիրը*: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *ձ'եր, հ'իրա, հ'իրանք, հ'իրանօվ, հ'իրանց, ընդոնց, էտի, ըստըրա, ըտըրա, ըտուց, ընդըրանից, ըստե, ընդե, հ'իրար, հ'ըմէն* և այլն:

*Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գ'ալում, լւլում, տալում*: Վաղակատար դերբայն ունի *եր//եր* վերջավորություն՝ *սօրվեր* (ա), *էկեր* (են), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *կայնուկ, սօրվուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքերից՝ *սպանին//սպանեցին, սիրեցինք, պախի, դըրկին, սարքեցին, տըվեցին*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ'աց, մաց*: Հարկադրականն ունի *պըտի* եղանակիչ՝ *պըտի հ'իմանաա*: Պատճառականն ածանցն է *ցըն*՝ *խաքցընել, փախճընել*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *վախտին, իմալ, մառթ, պըստիկ, մէշու, կըվաս* (մանր կտրատված կաղամբով և այլ բանջարեղեններով թթու), *գ'էրէզմըներ, միտը էթալ, հըմի, պըսակել, հ'ուզրնգան, խօսկ առնել, նոր* (դրանից հետո), *խաբար//ջուղաբ, պըստիկ, շաղվոր, ջ'ոչ, բ'օլորը, խարակվել, հէտա, խերճրկաթ, փօշի, կամ տէնալ* (կամենալ), *աչառ, գ'օխտու, հայաթ, շըրըփալօվ, հիշկալ, դըրկել* և այլն:

## Ջ

**ՋԱՂԱՑԱՉՈՐ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Սարիյաղուբ: 1991թ. վերանվանվել է Ջաղացաձոր: Բնակիչները 1988-89թթ. Ադրբեջանից բռնագաղթած հայեր են: Ընդգրկված է Գեղամասար համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

**ՋԻԼ** - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Նախկինում՝ Ճիլ: Վերաբնակեցվել է 1988թ. Ադրբեջանից բռնագաղթած հայերով: Ընդգրկված է Շողակաթ համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

## Ս

**ՍԱՐՈՒԽԱՆ** - Գյուղ Գավառի տարածաշրջանում: Նախկինում՝ Ակունք, Դալիդարդաշ: Բնակիչների մեծ մասի նախնիները գաղթել են Բայազետի Զանգիզոր և Սուրբ Օհան գյուղերից 1829 - 30թթ.: Հաղորդակցվում են Բայազետի բարբառով, որը գյուղի երկու Զանգիզոր և Սրբահան (Սուրբ Օհան) թաղամասերում դեռևս ունի որոշ զանազանություններ:

Սարուխանի խոսվածքում բառասկզբի խուլ բաղաձայններից (բացի *h*-ն և *խ*-ն), *ւ*, *ն* ձայնորդներից հետո, բացարձակ բառասկզբում կանոնավորապես գործառում է շրթնային *մ* ձայնավորը (սրա շրթնայնացումը Սարուխանում ավելի ընդգծված է, քան, ասենք, Գավառի խոսվածքում)՝ *մսել*, *կանանչ*, *պմքսել*, *տմխտակ*, *ծմնդրր*, *ճմկաթ*, *մմսուր*, *նմխանձ*, *սմր*, *շմրել* և այլն: Փոխառություններում և մի շարք բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *ս* ձայնավոր՝ *ղ աննակ*, *ձ սք*, *թ սք*, *զ սնել*, *լ սց*, *ծ սնգ*, *փեսս*, *զ սնք*, *կէրսք*, *կմրիք*, *հմյսք*, *նմս*: Միավանկ բառերի սկզբում *n*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և

*յե՝ վոր*, *վոռց*, *վոխ*, *յեգ*, *յեռ*, *յերք*, բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է*, ինչպես՝ *օխձար*, *օլրրել*, *օրօտում*, *էրեվալ*, *էրակ*, *էրկաթ*: Խոսվածքն ունի *ե*, *n* երկբարբառային հնչյուններ՝ *թեք*, *գորեն*, *գ իշեր*, *բճց*, *կըտոր*: Սարուխանի խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի աղումը՝ *քառուն*, *մմդնիք*, *կմրկըտան*: Առկա են շնչեղ ձայնեղ բաղաձայններ՝ *բ՛աց*, *գ՛ըլօխ*, *դ՛ուս*, *ձ՛ավար*, *ջ՛ոչ*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *շմփաթ*, *սուրփ*, *կմրաք*, *մքայ*, *հ՛առչի*, *վեռչ*, *բ՛առցել*, *մմռթ*: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *փեղ*, *փրդել*, *ցաձրր*, *պմդրաստ*, *փագ*, *մրգրադ*, *գօջի* և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *հ իշնել*, *կօշկել*, *ծմսկել*, *խեզնել*, *հ՛անգրժներ*: Հինհայերենյան *h*-ի դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ՝ խավ*, *սմխմընել* (սահմանել), *մմխ*, *պմխել*: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց գործածվում է *կ՛ կմստու*, *կմգ*, *կօչադ*, որոշ բարբառախոսների խոսքում՝ նաև *կ՛*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ տեղի է ունեցել *h*-ի հավելում՝ *հ՛առտ*, *հ՛առավոտ*, *հ՛էրուց*, *հ՛իրկուն*, *հ՛ուս* և այլն: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հոգնակիի կազմությանը մասնակցում են նաև *ք*, *անք*, *վանք*, *րանք*, *տանք*, *անիք* մասնիկները՝ *փեխէք*, *ձ՛խանք*, *իշվանք*, *գ իլվանք*, *տիրվանք*, *գ էդրանք*, *կողրանք*, *հ ընգերտանք*, *տէքրրտանք*, *կընանիք*: Ձայնավորով ավարտվող հատուկ անունների, նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Սմբոյ*, *Մօսկըվայ*, *Մըրփոյ*, *Մըլքէյ*, *կիհոյ*, *ադէյ*, *կըլէյ*: Հատուկ տեղանունները ենթարկվում են Ա հոլովման՝ *Հ՛էրեվնա*, *Քմվմոտա*, *Հացառատա*: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը՝ *տի՛րոյ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *կընգրնից*, *տմրուց*, *գ իլվանքից*, *դ ըններից*, երբեմն էլ՝ *է*-ով՝ *հ՛առավնէ*, *տընէ*, *մօրէ*: Ներգոյականը արտահայտվում է հայցականով կամ սեռականով և

մէջ կապով՝ *քաղաքը* (քաղաքում), *ջրի մէջը*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*, սակավ դեպքերում՝ *իկ* հավելված (ընձիկ, քեզիկ, մեզիկ, ձեզիկ), դրսևորվում են նաև *քե, մե, ձե* կրճատ ձևեր: Հոգնակի երրորդ դեմքի ձևերն են՝ *ընդոնք, հիրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *ես, էտ, էն, էսի, էտի, էնի* (նաև՝ *եսիկ, էտիկ, էնիկ*), *եսա, էտա, էնա*, սրանց թեք հոլովների ձևերից են՝ *ըստու, ըտու, ընդու, ըստոնց, ըտոնց, ընդոնց* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *վորը* տարբերակը, որի սեռականի ձևն է *վիր*, տրականինը՝ *վիրը*:

*Գալ, լալ, տալ* բայերի անկատար դերբայի ձևերն են՝ *գալում, լալում, տալում*: Վաղակատար դերբայն ունի *էր/եր* վերջավորություն՝ *գրէր եմ, գրէր ա*, հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *նըստուկ, գրուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին, սրանց ժխտականներն են՝ չեմ, չես, չը, չենք, չէք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից *պահելիցի/պահի*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են *գաց, մաց*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *գրա՛, ճրդա՛, կմնի՛, գրթի՛*: Պատճառական ածանցն է *ցրն՝ յեոցրնել, քրնցրնել*: Պատճառական բայերի եզակի հրամայականը ունենում է *ա* վերջավորություն՝ *խըմցըրա՛, մօտկըցըրա՛*, երբեմն էլ՝ *ու* վերջավորություն՝ *մօտկըցու, նըստըցու*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (*թըոնել, փախնել, կուրել, ուտել*): Երբեմն ներկայի հիմքից կազմված ձևերում բացակայում է ն ածանցը՝ *հընգեմ* (ընկնեմ), *մըտում* (մտնում): Խոսվածքում գործածական է *կօ* հաստատական մասնիկը, բայց ոչ շարունակական իմաստով՝ *կօ գրէր եմ* (ախր արդեն գրել եմ):

Սարուխանի երկու թաղամասերի միջև դեռևս նկատելի են որոշ տարբերություններ: Այսպես, Զանգիզորի *հառու, հառէչ*,

*գընա, մըկա, պըտի, տըսկել* (թըջվել) ձևերի դիմաց Սրբահանում հաճախ գործածական են *հառու, հառէչ, գընա, հըմկա, բըդի, թըռչել* ձևերը:

Սարուխանի խոսվածքի բառային միավորներից են՝ *պուտ, կմթ, պուգ, խօվ, խագ, ջըդինձ, ճոթ, տանիս, հառիք, ժեխ, չըոկօթան, տիլ, կմվառ, չօրէք կօղմանց, մօծիլ, մուխ, փօշի, թուփ* (տերև), *կուտ, յեղըոճիկ, կըոութ, վիլկ, ջօվ, լմմբմկ, տըզըոգ, խանգուոց, մուոթուդա, ձըցում, թէշի, տըդասկան, հմշկալուսանք, ճիժ, մմոթ, խըլղ, լուլմ, օցմօղօզիկ, գըոթան, ձու, պուճուճակ, թաոթափ, պմդարաք, գըոեխ, հաոաֆտուն, կում, մըոու, պըստի(կ), մէշու, բարկ, յաղու, կըմըշտել, օրօշկըտալ, հիրար տալ, ժըխշել, հընցըցընել, հխտըկջըրել, տմփել, հիշկալ, տըփել, գըոըշտել, ուոթել, շենքել, մըկա, հէքուց, օղոոթ, հընչի, վիթ վոթանց ա, չում, չուր, հէսա* և այլն:

**ՍԵՎԱՆ** - Քաղաք Գեղարքունիքի մարզում: Նախկինում Ելենովկա: Ներառում է Ցամաքաբերդ և Գոմաձոր թաղամասերը, Գազարին բնակավայրը: Հիմնադրվել է 1842թ.: Հաղորդակցման ընդհանուր միջոցը խոսակցական հայերենն է բարբառային որոշ երանգներով (հիմնականում՝ Մակուի խոսվածքի հատկանիշներով):

**ՍՈԹՔ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Սոթ, Զոդ: Սոթք է վերանվանվել 1991թ.: 1988-89թթ. այստեղ բնակություն են հաստատել Ադրբեջանի Խանլարի շրջանի Ոսկանապատ գյուղից բռնագաղթած հայերը: Ընդգրկված է Գեղամասար համայնքում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

## Վ

**ՎԱՀԱՆ** - Գյուղ Ճամբարակի տարածաշրջանում: Նախկինում՝ Ռուբենակերտ, Օրջոնիկիձե: 1925թ. հիմնադրել են Հին Բաշքենդից եկածները: Հին Բաշքենդի բնակիչները իրենց հերթին եկել են Տավուշի տարածաշրջանի Չորաթան գյուղից 1854թ.: Գյուղը Վահան է վերանվանվել 1991թ.: Ներկայում ընդգրկված է Ճամբարակ համայնքի կազմում: Հաղորդակցվում են Գանձակի միջբարբառով:

Վահան գյուղի խոսվածքն ունի քմայնացած *ü, ö, iii* ձայնավորներ, որոնք կանոնավորապես հանդես են գալիս բառակազմի ձայնեղ պայթական ու հպաշփական բաղաձայնների դիմաց դրսևորվող խուլերից հետո, ինչպես՝ *պսմբսնկ, պսրց, կսնգսնտ, կսնգսն, տսն, տսրտսնկ, ծսք, ծսխ, ճսրթիլ, պօխկ, կօմ, տօղ, ծօր, պոորթ, տոոր, ծուկ, ճուր* և այլն: Շեշտակիր վանկում գործածվում են որոշ չափով բաց *ի* (*ը<sup>ի</sup>*) և *է* (*ը<sup>է</sup>*) հնչյուններ՝ *կընը<sup>ի</sup>կ, ծը<sup>ի</sup>տ, մը<sup>ի</sup>ս, խընամը<sup>ի</sup>, ցը<sup>է</sup>ց, սը<sup>ի</sup>ր, ասը<sup>է</sup>դ, կարպը<sup>ի</sup>տ* և այլն: Խոսվածքն ունի նաև քմայնացած հետնալեզվային պայթականներ՝ *կէտ, կէրան, կիննի, քօմակ, կօրտ, քըշիլ, քըսիլ* և այլն: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ն*-ի դիմաց որպես կանոն առկա է *վը<sup>է</sup>*, իսկ *է*-ի դիմաց՝ *յէ*, ինչպես՝ *վը<sup>է</sup>չ, վը<sup>է</sup>ր, վը<sup>է</sup>րթ, վը<sup>է</sup>րց, յէգ, յէփ, յէրք*: Բազմավանկ բառերի սկզբում առկա են համապատասխանաբար *օ* (*հօ*) և *է* (*հէ*), ինչպես՝ *հօջիլ, հօրսիլ, էրկու, էփիլ, հէրինջ*: Կան նաև այլ դրսևորումներ, ինչպես՝ *վը<sup>է</sup>խճար, վը<sup>է</sup>սկի, վը<sup>է</sup>րթի, արուճ* (որոճ), *իրէք, րէվալ* (երևալ), *արկաթ* (երկաթ), *արկանք* (երկանք), *արագ* (երագ) և այլն: Բառամիջի *օ* ձայնավորի դիմաց հանդես են գալիս *օ, ö, ու, iii* հնչյուններ, ինչպես՝ *թօք, կօշտ, լսնկօտ, խընձօր, հաղուղ, խէլունք, կյոմէշ, է*-ի դիմաց՝ *է* և *ը<sup>է</sup>*, ինչպես՝ *թէլ, թէփ, ասը<sup>է</sup>դ, կարպը<sup>է</sup>տ*: Խոսվածքը երկբարբառային հնչյուններ չունի: Հինհայերենյան *ոյ, իւ* երկբարբառների դիմաց սովորաբար առկա

է *ի* կամ *ը<sup>ի</sup>*՝ *զըրից, թիլ, լիս, կապը<sup>ի</sup>տ, պատրիք, պըտիտ, քիր, ալը<sup>ի</sup>ր, արին, հարը<sup>ի</sup>ր, չօրութին* և այլն: Բառակազմի հինհայերենյան ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց խոսվածքն ունի խուլեր, ինչպես՝ *պսնգուկ, պէրան, կինն, կիննի, տսնլսր, տէղին, ծի, ծըմէրուկ, ճընջիլ, ճօկ*: Բառամիջում ու բառավերջում այդ կարգի ձայնեղների դիմաց առկա են շնչեղ խուլեր, ինչպես՝ *թաքավը<sup>է</sup>ր, խափիլ, մարաք, մէչ, հօջիլ, օց, պսրց, մըրչիմ, ուրփաթ, վարթ, փօրցանք* և այլն: Չայնավորով սկսվող բառերի սկզբում շատ դեպքերում գործառում է հավելական *հ*, ինչպես՝ *հաքի* (ազի), *հըլիվէր* (ալևոր), *հանիծ, հսրփիլ, հէրինջ, հընգէր, հընդրիլ, հըլօրիլ, հօջիլ* և այլն: Օտար բառերի սկզբում *դ*-ի գործածությունը սովորական է՝ *դագ, դըլմըղալ, դավուրմա, դարիք, դափաղ, դօչ, դօնաղ, դըսմաթ, դըրաղ, Ղազար, դուշ*: Բաղաձայնից առաջ հպաշփականը դառնում է շփական՝ *աշկ, հըմաշկօտ, հըրգսնկվիլ, իշքան, լըվասկ, ծասկիլ, միշնակ*: Բառակազմի *խ*-ի դիմաց դրսևորվում է տարնմանական *հ*, ինչպես՝ *հաղ, հաղուղ, հաղաղ, հըղըղցընիլ*: Առկա են ձայնավորների ներդաշնակության օրենքի դրսևորումներ՝ *լուգու* (լեգու), *սուրու* (սիրու), *ուրու* (իրար), *ուրուշ* (ուրիշ): Խոսվածքը *ֆ* չունի, և օտար բառերի այդ հնչյունի դիմաց գործածվում է *փ*, ինչպես՝ *փայմ, փսնդ, փասօն, փայտօն, փըլան*: Շեշտը վերջընթեր է, և շեշտակիր վանկին նախորդող ձայնավորը սղվում է, ինչպես՝ *հըմանչկօտ, ըշխատիլ, ըրգընսնսն, նըղանալ, ըղօղիլ, սըվը<sup>է</sup>րիլ, բըսնիլ, խըրօված, ըղանձիլ, դանչանք, ըրէքնակ, ոսվը<sup>է</sup>տ, րախա, դարկիլ*:

Հոգնակին խոսվածքում կազմվում է նաև *ք, էք, անիք, նի, տիք* մասնիկներով՝ *կինիք, խընամիք, քէնիք, դայիք, ճամփէք, ըխճըկէք, կընանիք, կոմէշնի, կյսնգսննի, ամաննի, զըշէրնի, հընգէրտիք, ըխպէրտիք, քըվէրտիք, տըքէրտիք*: Երբեմն հանդես են գալիս բաղադրյալ հոգնակերտներ՝ *ըխպըրքը<sup>է</sup>րը, սըտնըքէր, տըռնէրնի, տըռնըքէր, մըրթկը<sup>է</sup>ք*: Ոջ հոլովման բառեր չկան (*հըն-*

գերի, տալի, տըրի): Ո ներքին հոլովման ենթարկվող բառերի քանակը ավելի մեծ է, ինչպես *քրվոր, հանօր, ըսկէսօր, տէքօր, հրրաքօր, մըրաքօր*: Բացառական, ներգոյական և գործիական հոլովները ևս որոշիչ հոդ են ստանում *հընօրիցը, քրվօրիցը, Ըրշակիցը, հօրօվը, ախպօրօվը, ըշխարքումը, հօղումը, դութումը, դութէքումը*: Հատուկ տեղանունները ենթարկվում են նաև Ա հոլովման *Ապարանա, Մևանա, Վանա*: Ածականի գերադրական աստիճանը կազմվում է լօխճի բառով՝ *լօխճի մէծ, լօխճի սորոնը, լօխճի լւնվ*: Հիսուն, վաթսուն թվականներն ունեն *իծծուն, վածծուն* ձևերը: Անձնական դերանունները տրական հոլովում հավելված հնչյուն չեն ունենում *ինձ, քէ(զ), մը՞զ, ծը՞զ*, այլ ձևերից են *ընձանից, քըզանից, մըզանից, ծըզանից, ուրանից, ուրանցից, ծըզանից, ուրանից, նըհանք, ըստունք, տըհանք, տըհանց, սըհանցօվ, սըրան, նըրան, սըրանից* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *օվ*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վը՞րի, վը՞րին*:

Խոսվածքում բայն ունի երկու խոնարհում՝ Ա և Ի (*Կոնդանայ, կօրչիլ, կըտաղիլ, թիլանայ, մէռնիլ*): Անկատար դերբայն ունի ում վերջավորություն (սիրում, մընում), վաղակատարը էլ վերջավորություն (*կըրէլ*), իսկ հարակատարը ած վերջավորություն (*քընած*): Էական բայի ներկա ժամանակի ձևերն են *էմ, էս, ա, էնք, էք, էն*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Սրանց ժխտականի ձևերն են՝ *չէմ, չէս, չի, չէնք, չէք, չէն և չի, չիր, չէր, չինք, չիք, չին*: Ի խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է անցյալի հիմքից՝ *կըրէցի, փօխէցի*: Գալ բայի հրամայականի ձևերն են՝ *յէ/յէկ, յէկէք*: Վերլուծական ժամանակաձևերի օժանդակ բայը ժխտական խոնարհման դեպքում նույնպես հաջորդում է դերբային, ինչպես *ասում չէմ, տէսէլ չէմ, ասը՞լ չէմ*: Հետադաս է գործածվում նաև արգելական մասնիկը՝ *կըրիլ մի, կըրիլ միք*:

Համադրական ժամանակաձևերի ժխտականները կազմվում են հետադաս *վէչ* բառով՝ *կըրէցի վէչ, խըմէմ վէչ*: Սահմանականի ապառնու իմաստն արտահայտվում է անորոշով և *պիտի* եղանակիչի հետադաս կրճատ ձևերով (մընալ *դը՞մ, դը՞ս, դի, դը՞նք, դը՞ք, դը՞ն*): Խոսվածքում ժխտական խոնարհման դեպքում գործածական են *ական* վերջավորությամբ ապառնի դերբայով կազմված ձևեր, ինչպես՝ *մընըլական չէմ*: Ըղձական անցյալի ապառնու իմաստը խոսվածքում արտահայտվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով՝ *կըրէլ ի* (գրէի), *մընացէլ իր* (մնայիր), սրանց ժխտականի ձևերն են *կըրէլ չի* (չգրէի), *մընացէլ չիր* (չմնայիր): Հարկադրական եղանակը ձևավորվում է *պը՞տք ա չիր* (չմնայիր): Հարկադրական եղանակը ձևավորվում է *պը՞տք ա եղանակիչով* (*պը՞տք ա կըրէմ*), ընդ որում հարկադրականի անցյալի ապառնին ևս ձևավորվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի ձևերով՝ *պէտք ա կըրէլ ի* (պիտի գրէի): Պատճառական ածանցն է *ցըն ըրմըցընիլ, խուսըցընիլ, փըխըցընիլ*: Պատճառական բայերի եզակի հրամայականն ունենում է ու վերջավորություն *խըմըցըրու, հըրըցըրու*: Խոսվածքում գործածական են չ ածանցով բայեր՝ *թըռչիլ, կօրչիլ, ուռչիլ, փախճիլ, կըպչիլ*:

Խոսվածքի բառային միավորներից են *թուխպ, կընընչկարմիր, թօռ, սառիծ, շըվաք, տափ, դօլ, մըղակ, կըտուր, օճօլք, չըռօթան, սըմբո, անձօղ, հանգիստ* (գերեզման), *կըրէզմանուտ, յէխցի, լէլ, աթար, պէծ/պը՞ծ, ծուխ, մոլ, մօխիր, տակոյի, տիրէվ, կօրինձ, դըրդանի, տըկօղին, ճըղօպօր, ճիտ, մախձ, խըլօպօզ, տակ* (ճակնդեղ), *տաքտեղ, դաբաղ, պանջար* (եղինջ), *խուռ, քըթօց, չոթ, յաբա, ծրհան, հէս, տըխտըմօր, խընը՞ցի, քօցի, իլիկ, տը՞ղաշօր, չէչմակ, տըղօրմա, խընամխօս, ըշկըլիսէնք, պէլ, պըլակին, տատմը՞ր, (ը)րախա, ազի, նանի, ամայ, պատրօն, հանօր տըղա, մարթ/հայ* (ամուսին), *դուլ, հըրէվան, դայի, հըռսանիք, հըլիվը՞ր, փայ հըվաքօղ, տըվարած, խըլէզ, դուշ, ծըռըկուտկուտ, վը՞րցակ, թըխսըկան, ծո, հաքը՞, խարտ, կը՞ռիք, ծիկիկ, անդան, ճիտ, խըզանտակ, մէշկ, պօզ, դըրճըրճուկ, կըռնատակ, թըրթէվունք, վաերը,*

ծըն, ճը՛րմ, բըղմնաք, յըղըծո՛ւ, կօրկօտ, սաղուծ, մօլլաբըրի, ուշո՛ւնց, մուռ, վախտ, կուճո՛ւր, ըռավը՛տ, քըսօր (կէսօր), չըբը՛լ, բօ՛ք (գեր), կը՛շ, լեղի, սարո՛ւ, պընդըպըռունգ, պըլօ՛րիկ, բախօվ, կիսու, ճըլօ՛րիկ, փըրսըվը՛ր տընի, վը՛ր ունի, թօլ անի, պըրգըճըրի, ըռեշնի, բըրըպըրանուկ անի, կէնալ (հագնել), պըրանվի, յեշի, տապուռը կըենալ, թակիլ, շտափիլ, մըհի, էքուց չէ էլօր, դըվը՛ր, լօխ, վը՛նց, խի, դօր, սըհէ(նց), տըհէ(նց), աղաք, հէտի, հըրէս, ուրո՛ւր (իրար) և այլն:

**ՎԱՂԱՇԵՆ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում՝ Արղալաղալու: Հիմնադրել են Ալաշկերտի Քուփկոան գյուղից եկած 15 ընտանիքներ<sup>216</sup>: Բնակիչների մի մասի նախնիները 1828-29թթ. գաղթել են Ալաշկերտի և Մուշի գյուղերից: Հաղորդակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո-ի* և *ե-ի* դիմաց առկա են *ւո* և *՛ե*, ինչպես՝ *ւոտի*, *ւոռց*, *՛ես*, *՛եգ*, բացառությամբ է *ոք* շաղկապը, որն ունի *օք* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *ո-ի* և *ե-ի* դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ *օսկի*, *օսկոռ*, *էրագ*, *էրինջ*: Խոսվածքն ունի *ե*, *ո* երկբարբառային հնչյուններ՝ *իքեք*, *հ ընգեր*, *չոռս*, *կըտոք*: Բառի առաջին վանկում երբեմն նկատելի է *ա-ի* շրթնայնացում: Փոխառյալ ու բնիկ որոշ բառերում հանդես է գալիս քմայնացած *ււ* ձայնավոր, ինչպես՝ *քււլււմ*, *քււվււոցի*, *քււննդի*, *ջււյլ*, *գււրգել*, *գււյրումււր*, *քււտի*, *յււն*, *ձ՛ւք*, *գււրկել*, *գււնել* և այլն: *Եա//յա-ի* դիմաց երբեմն առկա է *յւ* կամ *է*, ինչպես՝ *Ավէտիսյււն*, *Պէղրօւեն*, *յււն*: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկում ձայնավորի սղումը՝ *սօվրել*, *հ՛առցրկել*, *հ՛իրկուն*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական

<sup>216</sup> Հ.Աճառյանը ևս վկայում է, որ գյուղի բնակիչները եկել են Մանկասարի մոտ գտնվող Քուփոան գյուղից (տե՛ս Հ.Աճառեան, նշվ. աշխ., էջ 137):

է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *ջ՛ուր*, *ջ՛ոչ*, *ձ՛որ*, *ձ՛ի*, *դ՛աշտ*, *դ՛ար*, *գ՛եղ*, *գ՛ան*, *գ՛լօխ*, *բ՛աժակ*, *բ՛անցրը*, *բ՛ան*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *ձ՛ւք*, *պաքել*, *խօքի*, *հ՛առցրկել*, *օց*, *սուրփ*, *կարքել*, *մառթ*, *առթեն*, *վեռչ*, *մէչ* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *էրգու*, *դըբոց*, *ցուող*, *գււրգել*, *լըձել*, *ըստիբել*, *առդ*: Հինհայերենյան *հ-ի* դիմաց խոսվածքն ունի *խ*, ինչպես՝ *խասկընալ*, *խէրը*, *էն գ՛ախ*, *խա*, *խատ*, *պախել*, *խիվանդ*, *խօրօխպէր*, *մախ*, *խավէս*: Հաճախ բառակցքի ձայնավորից առաջ առկա է *հ-ի* հավելում, ինչպես՝ *հ ընգեր*, *հ էրգէն*, *հ էսօր*, *հ ուզել* (ուզել), *հ՛առու*, *հ՛առցրկել* և այլն: Օտար բառերի սկզբի *դ-ի* դիմաց խոսվածքն ունի *կ՛* կըրադ, *կայիշ*, *կըյամաթ*, *կագ*, *կօնախ*, *կավուրմա*, *կատկառ*: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում կազմվում է նաև *ք*, *անք*, *տիք*, *վանք* մասնիկներով՝ *խալիք*, *ձ՛իյանք*, *կընգըտիք*, *ճիղվանք*: Երբեմն հանդես են գալիս բաղադրյալ հոգնակերտներ՝ *տըղէքներ*, *էրէ-խէքներ*, *խալիքներ*, *ճիղվանքներ*, *մառթիկներ*: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովան՝ *ամսու*, *գ՛ըլխու*, *ճըժու*, *մատկու*, *գ՛օւշու*, *կօվու*, *աչըռու*, *ճիղու*, *պատվու*, *խորու*, *կատկըռու*, *ջ՛ըրու*, *իշու*, *դ՛ասերու*, *խառսներու*, *սըրփերու*, *գ՛ողերու*, *յեզներու* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *քուրոջ*, *հընգերոջ*, *աներոջ*: Ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, նաև հասարակ որոշ անունների սեռականը ձևավորվում է *-ով*՝ *Շաբօյ*, *Չակօյ*, *Կօիօյ*, *Գըվօյ*, *Գ՛ալօյ*, *Միսէյ*, *պապէյ*, *աֆտօյ*: Բացառականը ձևավորվում է *-ով*՝ *պատերազմից*, *գ՛ըլխուց*, հազվադեպ՝ *է-ով*՝ *ձ՛եռնէ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *դ՛աշտըն* (դաշտում), *թէշտի մէչըն*, ինչպես նաև *նէ* մասնիկով՝ *ամբըրոցի նէ*, *գ՛եղի նէ*, *դ՛իզի նէ*: Որոշիչ հոդն է *ն-ն*՝ *Հինքըն քըսան թիվն ա*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ *Օսկէխատ հ ըրըքէ*: Երբեմն անորոշ հոդը հետադաս է գործածվում, ինչպես՝ *բ՛աժակըմ*, *մէ քււնիմ խատ*: Հոգնակի ստա-

ցականության իմաստն արտահայտվում է դերանվան հոգնակի տրականի հետադաս կիրառությամբ, ինչպես՝ *գ ըլօխ մեզի* (մեր գլուխները), *վրբե մեզի* (մեր վրաները): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձեզի*, ինչպես նաև՝ *քե, մե, ձե* կարճ ձևեր, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինք, ուրանք//հուրանք*: Ով դերանվան դիմաց առկա է *ւոն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *քու, ձրգնից, ուր// հուր, ուրա, ուրանց//ուրանց, էսա, էսի, էդի, էնի, էնդոր, էդրա, էդրան, էնդրա, էտոնք, էդոնց, էնդոց, էստըրան, էստեն, էնտեդ, էսմալ, ըմալ, էդմալ, էստեդ, էնտեդ, էտե* (այդտեդ), *դաս, դան, դասի, դանի//դանի, դանտ, դադի, սադ հրմէն, հրմընուն, ամէք, ամէքուն, հիրար//հիրան, վինից, դոր, հուր, տր մէկըն* և այլն: Սովորաբար հետադաս գործածվող կապը երբեմն կարող է նախադաս գործածվել, ինչպես՝ *վրբ թունդըրան*:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէնել, կրոնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան (նաև անցյալ անկատարը) կազմվում է *գ ու, գ ի//կի* մասնիկով՝ *գ ուքամ, գ իլամ, կիտամ, մյուս բայերինը կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըփախի, կըսես, թանալ գ էտին մոտթա*: Բայասկզբի հազագին միանալով այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ *գէլի* (կելնի), *գ իչի* (իջնում է): Վաղակատար դերբայն ունի *ը-ով* վերջավորություն՝ *պախեր* (եմ), *էդեր* (ա), հարակատարը *ուկ* վերջավորություն՝ *պախուկ, կըդրուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ինք, իր, էր, ինք, իք, ին*: Անցյալ անկատար ժամանակաձևում եզակի առաջին դեմքը հոգնակի ձև ունի՝ *յես կաշխատինք, յես կըսինք*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից՝ *ըսեցի//ըսի, դ ըրինք//դ ըրեցինք, դ առտրկեցինք, ք ընեցինք, ք էրի, վառի, գանկի*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմ-

քի ձևերն են՝ *գ՛աց, մաց*: *էնել* բայի բոլոր ժամանակաձևերը կազմվում են *էն* հիմքով, ինչպես՝ *էնեց* (արավ), *էնեցի, էնեցինք*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *խօխալէր ա կըսենք, փէջ էր վառին*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չունեցէր եմ, չըտէսէր ինք*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըկըոնա, չուտեմ* (չեմ ուտի), *չըխապնէր* (չէր հավանում): Բայասկզբի հազագին միանալով՝ ժխտական մասնիկը ձայնեղանում է՝ *ջընցէր, ջիչինք, ջուզեմ*: Պատճառական ածանցն է *ուց//ցուց*՝ *կըլուցել, լօխկըցուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *կըպաղըոցու, մըտո* : Խոսվածքը չ բայաձանց չունի: Ներկայի հիմքից կազմվող ձևերում և բայաձանցը սովորաբար բացակայում է, ինչպես՝ *եդի, գէլի, կըփախի, կըմտի, առիմ, խէձիս*: Հարկադրականի եղանակիչն է *պըդի*, ինչպես՝ *պըդի էթա*:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *ջ ոչ, պըստիկ, կարքել, ճիժ, մըկա, տըփել, չուրմի, օյին խանել գ ըլօխը, խօխալէր, անջախ, ամբըրոց, հորի, տատե, մուխ, կիտուռ, գըրան-գըրան, անըղնակ, մէշու, պապե, ափօ, մանջ, ձիթխաց, օտփէվէրի, խօզընի, ժանժիկ, ձրցում, պուտուկ, ճըլոր, քիսել, կօխըոճել, թացան, հօթթիկ, պըլէճ էնել, պուճուճակ, թալվա, ցունցել, ճետ, դ ըրկեց, մէթիթա, օտից գ ըլօխ, տանիս, ամբըրոց, խօխալէր, կիշըոնել, թայտաշեղ, թինգընել, հորի, լավօ, աղէ (տատ), ջան, սաբախտնախառ, խօրօտ, իմալ, քընուց հիմնալ, օսյանթ, իշավոր, չըմբուլ, խոթ ու ավել, խօթթել, հ՛ առիք, ճըխախան էնել, ըոթընել, իշկընոց, ժէխ, չըոիկ, կըլըրկել, կօլթուդ, հունթ, լօոդել, պըզտիկ, ստաստօրել, պօզել, ջ աղաց, ջ ախճըփան, յօրդան, ճոթ, կընիկ-ճիժ, դէվա, կակօ, տատե, քեռընգին, կըտօտել, կէսէր, դօր, հըրըրել, հըրըրան, թարթախում և այլն:*

**ՎԱՆԵՎԱՆ** - Գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: Նախկինում՝ Քարքիբաշ, Շաֆակ: 1828թ. հիմնել են Ղարսկահայաստանից գաղթածները: 1988թ. վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթած հայերով: Վաննան է վերանվանվել 1991թ.: Հաղորդակցման միջոցը հիմնականում Ղարաբաղի բարբառն է:

**ՎԱՐԴԱՉՈՐ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում՝ Ադամխան: Վերանվանվել է 1968թ.: Բնակիչների նախնիները 1828-29թթ. և 1877-78թթ. գաղթել են Ալաշկերտի գյուղերից: Հաղորդակցվում են Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ն*-ի դիմաց առկա է *ւո*, իսկ *ե*-ի դիմաց՝ *յե*, ինչպես՝ *ւոռծ*, *ւոդ*, *յես*, *յեզ*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում առկա են համապատասխանաբար *օ* և *ե*, ինչպես *օռծրկտալ*, *օսկի*, *էրգատ*, *էրագ*: Գործածվում են *ե*, *ո* երկբարբառային հնչյուններ՝ *իրեկ*, *գիշեր*, *թոռ*, *բօկոն*: Եւ-ի դիմաց դրսևորվում է *'ե* երկբարբառ՝ *կ'ենկ*, *տեղ'եկ*, *նրնջեճեկ*, *օկնուտեմբ*: Մակավաթիվ բառերում գործառում է քմայնացած *ա* ձայնավոր՝ *յան*, *քնվանցի*, *թննքնքննդ*, *քար ու քրոնն*, *անի*, *քնոի* և այլն: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սդումը՝ *ծիճղալ*, *դ'առտըզե*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում՝ *հ'ախպուր*, *հ'առեճ*, *հ'առաճի*, *հ'էսօր*, *հ'առավօդ*, *հ'ուստ*, *հ'ընդանիկ*, *հ'ագոա*, *հ'այ*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *գ'եդ*, *գ'ըշեր*, *բ'ընագուտուն*, *բ'ախ*, *ջ'ըրել*, *ջ'ոճ*, *գ'ոռճ*, *ձ'էտ*: Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլերի և ձայնեղների դիմաց գործառում են խուլեր՝ *մատտրն*, *ինճքան*, *հավակել*, *ատտէն*, *վեճ*, *մէճ*, *ապէր*, *յետէ*, *հիծուն*, *հընճի*, *գ'օղուտուն*, *հաճալ*, *տակ*, *հօկի*, *թօպալ*, *թուտուն*: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *աբրել*, *աշխաղել*, *ունէցաճ*,

*դ'աղարգ*, *էրգու*, *ատդ*, *կըղդել*, *դըբրոճ*, *կըղավադ*, *պաղասխան*, *կընիգ*, *ծիճղալ*, *ցաճ*: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքն ունի *հ*, սակավ դեպքերում՝ *խ*, ինչպես՝ *բ'ախ*, *գ'ախ*: Բառամիջում ու բառավերջում *հ*-ի դիմաց երբեմն առկա է *յ*, ինչպես՝ *գ'օյ*, *պայել*, *փայլեկան*: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *խ*՝ *խուտի*, *խեզավար*, *խաճաղ*, *խեբբտել*, *խուճ* (*կույտ*), *խառխառ*, *խագ*, *խըլավ*, *խօնախ*, *խօճաղ*, *խայիշ*, *խուշ*, սրանց նմանությամբ *կանչել* բայի դիմաց գործառում է *խանճել* ձևը: Առանձին դեպքերում բաղաձայնից առաջ նկատվում է հպաշփականի վերածում շփականի՝ *զիշնիմ*, *կըճաշնան*, *մէշն ա*: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում կազմվում է նաև *կ*, *վանկ*, *տիկ* մասնիկներով՝ *քնվանցիկ*, *ձ'իլվանկ*, *կընզըտիկ*: Երբեմն հանդես են գալիս բաղադրյալ հոգնակերտներ՝ *ձ'իլվանկներ*, *նասիլկեկներ*, *տըղեկներ*: Շատ անուններ եզակի թվում, ինչպես նաև գրեթե բոլոր գոյականները հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *գ'իլու*, *գ'ըմշու*, *քրոտու*, *ճամպու*, *թըվէրու*, *քարէրու*, *զինվորներու*, *հայէրու*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, ինչպես նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Գօզէյ*, *Բապկէյ*, *Մըխօյ*, *պաբէյ*: Հատուկ տեղանունները հաճախ ենթարկվում են Ա հոլովման՝ *Մատդունա*, *Թննքնքննդա*, *Չ'օրուգ'եղա*, *Հերանտա*: Բացառականը ձևավորվում է *ծ(ց)*-ով՝ *դ'աշտիճ*, *դ'ըսուճ*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէճ* կապով և սեռականով՝ *սարերն* (սարերում), *դ'աշտի մէճ*: Որոշիչ հոդն է *ն*-ն՝ *Էս մատտըն կըրվախէնա*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ *Մենկ դ'աշտ հանձներ ինկ ուրիւ*: Ստացական հոդից հետո հանդես է գալիս *ի* ձայնավոր *պաբէյսի*, *հէրսի*, *մէրսի*, *մօտսի*, *հաճկսի*, *հաճկտի*: Հոգնակի ստացականությունն արտահայտվում է դերանվան հոգնակի տրական հոլովի հետադաս կիրառությամբ, ինչպես՝ *գ'ըլօյ ուրանճ* (իրենց գլուխները), *թեվերն ուրանճ* (իրենց թևերը): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընճի*, *քըզի*,

մրգի, ձրգի, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ հինկ, ուրանկ: Ով դերանվան դիմաց առկա է *ւոն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ վի, վին: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ ընձընիծ, բու//բո, ուր, ուրին, ուրանծ, ընդըրանկ, էս, էդ, իսս, իդա, ինա, էդրա, էդրան, էդրուծ, ընդոկ, էտանծ, էդըրանծ, էտեղիծ, էտեղ, դաս, դադ, դադի, դոր, ըմալ, հիրար, հըմընու և այլն: Հետագայում որոշ կապեր ունեն նաև նախադաս կիրառություն՝ հըդ իրար, մրճ քախկին: Էլ շաղկապի դիմաց գործածվում է լէ ձևը՝ ընդըրանք լէ, էն լէ, մրգա լէ:

Խոսվածքում *անել*, *ասել*, *լինել*, *ելնել*, *կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել*, *ըսել*, *եղնել*, *հէլնել*, *կըոնալ* տարբերակները: *Գալ*, *լալ*, *տալ* բայերի ներկան (նաև անցյալ անկատարը) կազմվում է *գ ի//կի* մասնիկով՝ *գ իկամ*, *գ իլամ*, *կիդամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըբանա*, *կէտան*, *տըխրի*: Միանալով բայասկզբի հազագին՝ այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ *գէլնին*, *գ ընծընի*, *գուզինկ*, *գ աոծում*: Վաղակատար դերբայն ունի *բ*-ով վերջավորություն՝ *բ էրեր* (ա), *ըսեր* (իւ), հարակատարը՝ *ուգ* վերջավորություն՝ *ըսուգ*, *կայնուգ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *իւմ*, *իս*, *ա*, *ինկ իկ*, *ին*, անցյալի ձևերը՝ *էնկ*, *էր*, *էր*, *էնկ*, *էկ*, *էն*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքից՝ *ըսէծի*, *կադարէծիր*, *պակկին*: *Գնալ*, *մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ ած*, *մած*: Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *օկնա՛*, *ծածկա՛*, *կայնի՛*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *փառկ ա կիդանկ*, *Հերանտան էր կըսորվէնկ*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չըդ ըրէր իւմ*, *չըտէսէր էնկ*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըթօղէր* (չէր թողնում): Բայա-

սկզբի հազագին միանալով՝ ժխտական մասնիկը կարող է ձայնեղանալ՝ *ջամաձայնալ*: Պատճառական ածանցն է *ծուծ//ուծ կօրծուծել*, *մեձածուծել*, *դ՛ աոծուծել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս ու խոնարհիչը՝ *կըվախէծու*, *հաոծո՛ւ*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր: Հարկադրական եղանակը ձևավորվում է *պըդի* եղանակիչով՝ *պըդի տան*:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *ադէ* (տատ), *աճկալուսանկ*, *առջըկան*, *բոնձիգ*, *բոտալ*, *գըլօխկօնձի*, *գուլաշ*, *դան*, *եղնադ*, *գ՛ օղդու*, *ժէխ*, *լուսուն* չէ *մըզլօր*, *լօպ*, *լօրդել*, *խազ*, *խուլտուդ*, *կէսրէր*, *կըտոն*, *հապնուգ*, *հ՛ առիկ*, *հարել*, *հէրտիս*, *հըրամգ խի*, *հըրօր*, *հ իշկել*, *հիստրգջ ըրել*, *հօրի*, *ճամպել*, *ճարընգան*, *ժողօվկըրան*, *մեռել-կէնտան*, *մըգա*, *մըռու*, *յեղըռջիգ*, *չըրիգ*, *չուրի*, *չումկի*, *պարէ*, *պադարակ*, *պակել*, *պըջգել*, *պուճուջազ*, *ջադդա*, *ջըդա*, *ջ՛ ոճ*, *ջուլ*, *ջ՛ օճօ* (դիմելաբառ ուղղված տարեց անձին), *տադօ*, *տանիս*, *տապել* (թաքնվել), *տապոծի*, *տասնագբաշի*, *տեղաշոր*, *տիլ*, *քաշել* (սման լինել), *քար ու քըռն*, *քումագ*, *օղորտ* և այլն:

**ՎԱՐԴԵՆԻԿ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում՝ Ազնվածոր, Ներքին Գեղածոր, Գյոզալդարա: Բնակիչների մի մասի նախնիները 1827-29թթ. գաղթել են Ալաշկերտի ու Մուշի գյուղերից: Ըստ Հ.Աճառյանի՝ Ներքին Գյոզալդարայի բնակիչները եկել են Նահենից, Գուլասորից, Ուլիքենդից, Ղուլուպուճաղից, Լաթարից, իսկ Վերին Գյոզալդարայի բնակիչները՝ Իրիցու գյուղից, Վանքի գյուղից, Քոռունից, Մուսունից և Արծափից<sup>217</sup>: Հաղորակցվում են Մշո բարբառով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են *ւո* և *յե*, ինչպես՝ *ւոտ*, *ւոչ*, *յեփ*, *յեգ*, բացառություն է *որ* շաղկապը, որն ունի *օր* արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում *ո*-ի և *ե*-ի դիմաց առկա են համապատասխանաբար *օ* և *է*,

<sup>217</sup> Տե՛ս Հ.Աճառեան, նշվ. աշխ., էջ 138:

ինչպես՝ *օսկոռ, օխճար, էթում* (որբ), *էրագ*: Միավանկ բառի աճման դեպքում բառասկզբի *ւ*-ն կարող է դառնալ *օ՝ տտ>օտօս*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *խամեւ, նեղութեն, փող, դ՛անցրվոր*: Փոխառյալ ու բնիկ որոշ բառերում հանդես է գալիս քմայնացած *ւ*՝ ձայնավոր, ինչպես՝ *քւնոի, յւն, քւլամ, գւնրկել, քւնի, քւսիբ, սիֆտակ* և այլն: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի տղու՛մը՝ *սօվրել, խասկրնալ, յեռուն*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *դ՛ուռ, դ՛ուս, դ՛անց, ձ՛եռ, բ՛ան, գ՛աթա, գ՛եղ, ջ՛ուր, գ՛եա*: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *դ՛անցրվոր, պաքել, կարաք, խաքնել, կարքել, հ՛եթիս, մառթ, վեռչ, մէչ, բ՛անց* և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ *պադայել, Առշագ, աբրել, յերգինք, տրդեղ, փեղ, օղներ, խ՛ճուց* և այլն: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքն ունի *խ*, ինչպես՝ *խոտ, խամար, խավտիկ, խառս, խէր, խետ, պախել, մէխատ, խասավ, խաց*: Հաճախ բառասկզբի ձայնավորից առաջ առկա է *հ*-ի հավելում, ինչպես՝ *հ՛եսօր, հ՛ընցրնել, հ՛իրկուն, հ՛ուստ, Հ՛երէվան, հ՛ընչի, հ՛եժան, հ՛վէլի, հ՛առչի* և այլն: Օտար բառերի սկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *կ՛ կօշաղ, կալբ, կուշ, կառկառ*: Շեշտը վերջնավանկային է:

Հանդիպում են բաղադրյալ հոգնակերտների գործածություններ՝ *տրդէքներ, երէխէքներ*: Շատ անուններ եզակի թվում, գոյականների մեծ մասը՝ հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *ամսու, գ՛ըլխու, կրովու, տոու, յերկընքու, հըմընու, մառթու, ճըժէրու, օղէրու, տընէրու* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *խօրքըրոչ, աներոչ*: Հատուկ անունները կարող են ենթարկվել Ա հոլովման, ինչպես՝ *Ջօլախաչա, Հ՛երէվա*: Չայնավորով ավարտվող հասուկ անձնանունների, նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Ժուլօյ, Վառսէյ, Համօյ, Խըչէյ, Աստըղօյ, պապէյ*: Բացառականը ձևավորվում է *ց*-ով՝ *ջըրից, յերկընքուց*, հաճախ նաև՝ *է*-ով, ինչպես՝ *հեթթրսէն, գ՛եղէն,*

*տարվանէ, էսա յւնէն, մեզնէ*: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ *մէչ* կապով և սեռականով՝ *աշխարըն* (աշխարհում), *դ՛ աշտի մէչ*, նաև՝ *նէ մասնիկով՝ գ՛ եղի նէ*: Որոշիչ հոդն է *ն*-ն՝ *Գ՛ էտըն գ՛ընցիմ*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ *Բ՛ էրան բ՛ացվէր էր*: Անորոշ հոդն ունի հետադաս կիրառություն՝ *բ՛ աժակ մէ, դօղը*: Հոգնակի ստացականությունն արտահայտվում է անձնական դերանվան հոգնակի ձևի հետադաս կիրառությամբ, ինչպես՝ *օղէրու մեր* (մեր ոտքերի), *ձ՛ եռ մէ* (մեր ձեռքերը): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* հավելված՝ *ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի*, նաև՝ *քե, մե, ձ՛ե* կարճ ձևերը, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինք, ուրանք/հուրանք*: Ով դերանվան դիմաց առկա է *ւն*, որի սեռականի և տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանվանական ուղիղ և թեք ձևերից են նաև՝ *քօ//քու, ձ՛ եր, մեզնէ, ուր, ուրանց, էսի, էնի, էսա, էտա, էտոնք, ըտոնց, էտրանցից, էտքան, էտմալ, ըմալ, էտեխ, ընդէ, դատի, դան, դանի, հըմընուն, դոր, հիրար* և այլն: Սովորական է *վըր* կապի նախադաս կիրառությունը, ինչպես՝ *վըրընձի, վըր ձ՛ե, վըր պատին, վըր պալին*:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հէլնել, կըռնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկան կազմվում է *գ ու, գ ի//կի* մասնիկով՝ *գ՛ ուքամ, գ՛ իլամ, կիտամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըք՛անա, կառնիս, բ՛ էրենք*: Միանալով բայասկզբի հագագին՝ այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ *գիշաս, գիչի*: Հարկադրականի եղանակիչն է *պըտի*, ինչպես՝ *պըտի էթա*: Վաղակատար դերբայն ունի *բ-ով* վերջավորություն՝ *ծընվէր* (եմ), *եղէր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *ծըռուկ, թըմբըրուկ*: Բական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը ավելի հաճախ կազմվում է ներկայի հիմքից՝ *բ՛ էրին, ըսին, թօրկին, մօրթին, քօչինք, ծախինք*, բայց կարող է կազմվել նաև անցյալի հիմքից

*բ'երեցին: Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ'աց, մաց: Դնել* բայի ներկայի ձևերում հանդես է գալիս *ա* խոնարհիչը՝ *կրդ ընանք*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես *ընձի յա կրտանա, վին ա կանոնիս, բուկի էր կրծախին*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես *չեղեր եմ*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըխասկընան* (չեն հասկանում): Պատճառական ածանցն է *ուց/ցուց՝ կըլուցել, լօխկըցուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում դրսևորվում է *ու* խոնարհիչը՝ *կըմեոցունք, կըլու*: Խոսվածքը չ բայաձևաց չունի:

Գործածական է *կօ* հաստատական մասնիկը, ինչպես *կօ յես գուզի* (ես հենց ուզում էի):

Խոսվածքի բառային միավորներից են՝ *չօլի խամեմ, մրկա, գատ, իսվտիկ, իմալ, ավալ, պախս, մրնաց, բախտ իճկել, ջ ոչ, էն ավուր, ջաղղա, հանրի մրկա, էթում* (որք), *գ ըլխու գ ալած, խօրօտ, էրօղ-դ'րօղ, ուզընգան, ձ իթխաց, բանակային խախծուցել, սաբախտան, նըշանտըվէք, կընիկ, տանիս, հ էթթիս, սալըխօվ, կարքել* (նաև՝ կնոջ վերաբերյալ), *հօրի, ֆուրդուն, գ ըլխանց, դ'անցըվոր, նաֆար, գ օխտու, իմ կուշտ, ճիժ, նեղութեն, կէսրէր, պըստիկ, մընէր* (նմանվում էր), *մընի* (նմանվում է), *առուտուր, ջըխտօվ, սօմի, լուսուն, էլման, տըզընգ, չուր, հըմ ... հըմ* (համ ... համ), *հընգնել գ ըլոր, ծաղըր* (ծիծաղ), *ձ ըցում, անխացթըխել, դ'ըրկեց, օռչընել, մառթ, տըփել, իսան, կայիլ, հանսա, ժէխ, խատել, խանք, տիլ, առճրկան, էրկանք, թըփջ ուր, յանջ* և այլն:

**ՎԱՐԴԵՆԻՍ**<sup>218</sup> - Քաղաք Գեղարքունիքի մարզում: Նախկինում՝ Վասակաշեն, Բասարգեչար: Վերանվանվել է 1969թ.: Բնակիչների մի մասի նախնիները՝ 60 ընտանիք, 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Դիաղինից գաղթել են ներկայիս Վարդենիս:

Քաղաքի խոսվածքը ներկայացնում է Դիաղինի բարբառը: Բառի տարբեր դիրքերում, իսկ բառասկզբի շնչեղ ձայնեղներից հետո կանոնավորապես, հանդես է գալիս քմայնացած *ւն*, ինչպես՝ *բ'ւնի, գ'ւնան, դ'ւնանկ, ձ'ւնի, ջ'ւնթել, ննթ, քւնի, հօղւն, քւնիք, վւնտ, վւնգել, վւնրել, քւնց, վւնել, հւնու, Վւնթան, քւնի, գւնել, կընգ'ւն, օրինանկ, հւնիք, հւնչվէպա, հւնչկ, ժւնմանանկ, քւնւն, դ'ըժվւնր, ննֆւնր, խւնգւնր, խւնրիք*: Հանդիպում են նաև քմայնացած *օ//ո* և *ու* հնչյուններ, ինչպես՝ *գ'ոն, ք'օնձախ, իւր, ք'իւր*: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի դիմաց համապատասխանաբար առկա են *վո* և *յե*՝ *վոր, վորթ, յեգ, յեփ, յեռ*, բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է*, ինչպես՝ *օխձար, օչիլ, օնալ, էրէվալ, էրկու*: Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ՝ *վեց, սսեղ, թեթըվ, բ'ոխկ, խավոր*: Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի տղումը՝ *ամչըկոտ, ավէրան, ժողվել, խայլի*: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ'էրել, բ'անակ, գ'ւնուն, գ'ւնրի, դ'եղին, ձ'ի, ձ'ուն, ձ'ուկ, ջ'ւնաց, ջ'օկել*: Բառամիջում ու բառավերջում հպական ու հպաշփական ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ *խաք'նել, խափել, մէչ, օց, բ'ւնց, վոռի, օքնել, մառթ*: Նույն դիրքերում երբեմն խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *ավէրան, պաղըրել, մըղնել, յերգըրօթ*: Տարածված է

<sup>218</sup> Քաղաքի խոսվածքի հատկանիշները արձանագրված են Հայերենի բարբառագիտական ատլասի կյութերի հավաքման ծրագրով 1977թ. լրացված թիվ 8 տետրում, առկա են նաև քաղաքում 2015թ. կատարված տեսաձայնագրություններ: Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

հետնալեզվային բաղաձայնների քմայնացումը տարբեր դիրքերում, ինչպես՝ *թամել, էթ, պաթել, գեդ, գինձ, շնխկնմ, կրնիկ*: Բաղաձայնից առաջ հետնալեզվային պայթականի դիմաց հաճախ առկա է յ ձայնորդ՝ *խայնել, նյլոր, բնյլա, պայսել, տայնալ, ճայտի, գնյլէնէր*, բաղաձայնասկիզբ բառից առաջ, նաև բառամիջում բաղաձայնից առաջ տարածված է *նք>յ, նգ>յ* փոփոխությունը՝ *մեյ չքմրոսինք* (մենք չենք մրսում), *քաղիյ բ էրինք* (քաղում բերում էինք), *չիյ կանե հրլինի դ ուս* (չէինք կարողանում՝ էլնէինք դուրս), *տեղէկայ տասս* (տեղէկանք տասս), *քէլէթ էթայ տուն* (եկեք գնանք տուն), *իշվայներ* (<իշվանքներ), *յեղույներ* (եղունգներ): Երբեմն բաղաձայնից առաջ հպաշփականի դիմաց առկա է շփական՝ *հննչկ, մէշկ, ծասկել, ճաշնալ*: Հինհայերենյան *հ-ի* դիմաց խոսվածքը բոլոր դիրքերում ունի *խ՝ խանել, ախ, բ՛նիս, պախել, խող, խայլի, խա, խաց*: Բառասկզբի ձայնավորներից առաջ հաճախ առկա է *հ-ի* հավելում՝ *հ էսօր, հ ուրիշ, հ նոու, հ նոիք, հ ըմէն, հ էրեկ, Հ էրեվան, հ էժան, հ ախպուր, հ ննգաջ, հ ուս, հ էվրլնալ հ ննցնկ, հ ընգեր, հ ննէշ, հ իմնալ, հ իճնել*: Օտար բառերի սկզբի *դ-ի* դիմաց խոսվածքն ունի *կ, կ, գ* կամ *գ՛*, ինչպես՝ *կօշ* (դոշ), *կազան* (դազան), *կափաղ, կնստու, կօնախ, կրամնթ, գ՛օնդախ* (դոնդախ), *գ՛րժէր* (դժում էր), *գազան* (դազան), *գարիբ* (դարիբ), *գօնախ* (դոնախ), *գուշ* (դուշ): Մի շարք բառերում էլ հետնալեզվային պայթականների դիմաց է հնչում կոկորդային կիսաշփական *կ, ինչպես՝ կանչել, կուս, կրչկրչալ* և այլն: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում կազմվում է նաև *ք, վանք, անք, րանք, տիք* մասնիկներով՝ *խընամիք, գիլվանք, իշվանք, իծվանք, ձիյանք, տեղրանք, քուրվրտիք, կրնգըտիք //կրնթեր //կրնթըներ*: Մի շարք անուններ եզակի թվում, ինչպես նաև գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման խայու, ճրժու, տավրու, աղվրսու, իծու, գիլու, գնոու, գօւճու, իշու, կատվու,

*կօվու, խավու, բ՛ացէրու, օխչրներու, յեթմներուն, դաշտերու, դ՛ասերու*: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *տիրոշ, քըրոշ, անէրոշ, տալոշ, տէքրոշ, կիսըրոշ, հրնգերօշ*: Հատուկ տեղանունները կարող են ենթարկվել Ա հոլովման՝ *Մատտունա, Հէրէվնա*: Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է յ-ով, ինչպես՝ *Գօրէյ, Կարօյ, Խըլօյ, Լիպօյ, Տիկօյ, Աննայ, Բիշիյ, Բիրօյ*: Բացառականը ձևավորվում է ց-ով՝ *աղվրսուց, ախպօրից, խօրէրուց*: Ներգոյականը արտահայտվում է հայցական հոլովով, ինչպես նաև սեռականով և մէշ կապով՝ *գեղըն* (գյուղում), *ջ ըրու մէշ*, երբեմն էլ՝ *նէ* մասնիկով՝ *օթխի նէ*: Որոշյալության իմաստն արտահայտվում է ն հոդով՝ *Մառըն ծախկալ*, որը միշտ չէ, որ գործառու է, օրինակ՝ *Մէր ծընօղներ էկան, մեզի շըլկին բ էրիէ*: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* կամ *իկ* հավելված՝ *ընձի(կ), քնզի(կ), մեզի(կ), ձ էզի(կ)*, կան նաև կրճատ ձևեր՝ *քէ, մէ, ձ է*: Բացառական հոլովը հանդիպում է նաև է մասնիկով՝ *ընձնից/ընձնէ, քեզնից/քեզնէ*: Երրորդ դեմքի ուղղականի ձևերն են՝ *հինք, ընդոնք, (հ)ուրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի*, սրանց թեք հոլովների ձևերից են՝ *ըստոր, ըտոր, ընդոր, ըստոնց, ըտոնց, ընդոնց* և այլն: Ով դերանվան դիմաց առկա է *վոն* ձևը, որի սեռականն է *վի*, տրականը՝ *վիէ*: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *քօ, իւր* (իր), *հիր, ինոր, ուր, հուրին, հուրանց, էսա, էսան, էտան, էնան* (սա, դա, նա), *ըմնլ, էտթնր, ըթնր* (այդպես), *դնտ, դնս, դնսի, դնտի, դննի, ըստոնք, ընդոնք, էղըրանց, էնքնն, դոր, դորից, հ ուր, հ ըմէն, ամէք մէկ, հ ըմընու, հ իրուր* և այլն:

Գալ, լալ, տալ բայերի ներկան կազմվում է *գ՛ու/կու* մասնիկով՝ *գ՛ուքնմ* (երբեմն նաև՝ *գ՛ըկնմ*), *գ՛ուլնմ, կուտամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըգըրեմ, կուտեմ, խաքի էթա* (հազնում գնում է): Միանալով բայասկզբի հազագին, ինչպես նաև բայասկզբի ձայնեղ բաղաձայնից առաջ այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ *գ՛իշաս, գ՛իշնես, գիճում*,

գ՛րնցուս, գրվանդին: Խոսվածքն ունի նաև շարունակական ներկայի ձև, որը կազմվում է կօ մասնիկով՝ կօ կրկառթամ (այժմ կարողում եմ), կօ կէթամ (գնում եմ): Վաղակատար դերբայն ունի *p*-ով վերջավորություն՝ գրրէր (եմ), մացեր (ա), հարակատարը՝ ուկ վերջավորություն՝ քրնուկ, դ՛ուս հրնգուկ: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ եմ, ես, ա, ենք, էք, են, անցյալի ձևերը՝ ի, իր, էր, ինք, իք, ին: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ներկայի հիմքից՝ շրվկին, բ՛էրին, կարին, ասի, քյանդինք, քաշի, խըմի, ծախի, չեն բացառվում անցյալի հիմքով կազմությունները, ինչպես՝ ասէցի, խըմէցի: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ գ՛աց, մաց: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում կարող է հանդես գալ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ա կամ էր ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ խաց ա կուտեմ, դորից ա գ ուքսն, բիշի յէր թըխին: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես չունէցեր ա (չի ունեցել), համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ չըխանա (չի հանում): Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ խըմա՛, նըստի՛, խասի՛: Պատճառական ածանցն է *ցուց/ուց թրոցուցել, մըսուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս ու խոնարհիչը՝ խըմցում, գիճում, գ՛րնցուս, խըմցո՛ւ: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (դիպնել, թըռնել, փախնել, ուտել):

Խոսվածքի բառային միավորներից են՝ կաթ, շուք՝ տախտ, ճամբրնի, խագ, տանիս, հանդիք՝ տիլ, մուխ, փօշի, թուփ, կուտ, կըռութ, շանն, մուռթխա, ձ՛րծում, պուտուկ, առչրկան, ուզրնգան, խօզգրնի, հանչկանուսանք, տըղածկան, ճիժ, իրիկ, դ՛ըրկեց, միրավ, մօղօզրիկ, սյօր, գ՛րոթան, ձ՛ու, պուճուճակ, հունթ, թառթափ,

հ՛րնցուցել, հ՛խտանկջ՛ըրել, խըլըսուն, վեռչինք, մըռու, պըստիկ, կակուղ, հիշկել, տըփել, պաճառավոր, բ՛անկ, ժըխշել, խաքել, հիրիկուն, չուր, ջ՛ոչ, տանիս, հողն, սըրախ, թունդիր, փարատել, մօժիլ, դանտըխուն, գ՛րոթան, դաննք, խատսնիս, հօլիկ (շան բույն), էրինջ, սնան, էրմունգ, ճամփա, ճըմուտ, կէսրէր, էքխող, մըկա, ջ՛անճըփան, պաքել, իմն, սարախտան, ճըլօթել, թուշ, ժողովկըրան, ճանրնգան, բիճան, ափէր, ջ՛օջօ, ադէ (տատ), խօրթուր, դ՛ասատուր, մօզի (երկրորդ ամուսնու տուն մոր հետ տարվող երեխա), գ՛ըլօխ խառցուցել, կօժէ, դաննջ, դանն, կուզրոնեկ, սանյան, գ՛անխ-գ՛անխ, դընգ, ջ՛աղաց, մուննթ, հօնքուտ-հօնքուտ, կարքըվել (նաև կանանց վերաբերյալ), տալվ, տիլ, յանն, մանի (նման է), հ՛օրթում, պաղըրել, խօրօխպէր, յեղըռճիկ, տափոցի, գախախօրել, հուրին-հուրին և այլն:

**ՎԱՐՄԵՐ** - Գյուղ Սևանի տարածաշրջանում: Նախկինում՝ Չոչո: Վերանվանվել է 1946թ.: Բնակիչների մի մասի նախնիները 1828թ. գաղթել են Խոյի և Մակուի գյուղերից, ինչպես նաև 1829թ. Բայազետ քաղաքից: Հաղորդակցման միջոցը Մակուի խոսվածքն է՝ Բայազետի բարբառի որոշ տարրերով:

Խոսվածքի մի շարք փոխառյալ և բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *ան* ձայնավոր, ինչպես՝ ձան, գաննել, քուֆտան, միյնանկ, գանրկել, բիքան, լան, թանգան և այլն: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի դիմաց առկա է *վո*, իսկ *ե*-ի դիմաց՝ *յե*, ինչպես՝ վոք, վոտ, յեգ, յես, բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ օղօրմի, օսկոռ, էրկու, էթաբ: Խոսվածքն ունի *ե*, *ո* երկբարբառային հնչյուններ՝ *ցօրեն*, *վեց*, *չոռ*, *թըխտըմոր*: Բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը, ինչպես՝ *բաժնել*, *գօղնալ*, *սօվրել*: Վարսերի խոսվածքն ունի շնչեղ ձայնեղ բաղաձայններ, ինչպես՝ *բըռնել*, *բան*, *գէլ*, *գարի*, *գաթա*, *դուռ*, *դուս*, *ձուկ*, *ձրմեռ*, *ջուր*, *ջոչ*, *գաթա*,

գ՛րնցուս, գրվանին: Խոսվածքն ունի նաև շարունակական ներկայի ձև, որը կազմվում է կօ մասնիկով՝ կօ կրկառթամ (այժմ կարդում եմ), կօ կէթամ (գնում եմ): Վաղակատար դերբայն ունի *p*-ով վերջավորություն՝ գ՛րրէր (եմ), մացեր (ա), հարակատարը՝ ուկ վերջավորություն՝ ք՛րնուկ, դ՛ուս հրնգուկ: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ եմ, ես, ա, ենք, էք, են, անցյալի ձևերը՝ ի, իր, էր, ինք, իք, ին: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ներկայի հիմքից շրկին, բ՛էրին, կարին, ասի, քյանդինք, քաշի, խըմի, ծախի, չեն բացառվում անցյալի հիմքով կազմությունները, ինչպես՝ ասէցի, խըմէցի: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ գ՛աց, մաց: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում կարող է հանդես գալ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ա կամ էր ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես խաց ա կուտեմ, դորից ա գ՛ուքսս, բիշի յէր թըխին: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես չուներեցեր ա (չի ուներեցել), համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ չըխանա (չի հանում): Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ խըմա՛, նըստի՛, խասի՛: Պատճառական ածանցն է *ցուց/ուց թըրցուցել, մըսուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում հանդես է գալիս ու խոնարհիչը՝ խըմցում, գիճում, գ՛րնցուս, խըմցո՛ւ: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (դիպնել, թըռնել, փախնել, ուռել):

Խոսվածքի բառային միավորներից են՝ կաթ, շուք՝ տախտ, ճանրանիս, խագ, տանիս, հանիք՝ տիլ, մուխ, փօշի, թուփ, կուտ, կըռուք, շանն, մուրթխա, ձ՛րծում, պուտուկ, առչրկան, ուզընգան, խօզզընի, հանչկանյուսանք, տըղածկան, ճիժ, իրիկ, դ՛ըրկեց, միրավ, մօղօզըրիկ, նյլօր, գ՛ըրթան, ձ՛ու, պուճուճակ, հունթ, թառթափ,

հ՛ընցուցել, հ՛խտանկջ՛ըրել, խըլըսուն, վեռչինք, մըռու, պըստիկ, կակուդ, հիշկել, տըփել, պաճառավոր, բ՛անկ, ժըխշել, խաքել, հիրիկուն, չուր, ջ՛ոչ, տանիս, հօդս, սըրախ, թունդիր, փարատել, մօծիլ, դանսըխուն, գ՛ըրթան, դաննք, խատնիս, հօլիկ (շան բույն), էրինջ, նչան, էրմունգ, ճամփա, ճըմուռ, կէսրէր, էքխող, մըկա, ջ՛անձըփան, պաքել, իմնլ, սաբախտան, ճըլօթել, թուշ, ժողովկըրան, ճանրնգան, բիճս, ափէր, ջ՛օջօ, ադէ (տատ), խօրքուր, դ՛ասատուր, մօզի (երկրորդ ամուսնու տուն մոր հետ տարվող երեխա), գ՛ըլօխ խառցուցել, կօժէ, դանդաշ, դանն, կուզըռնեկ, սանյան, գ՛անի-գ՛անի, դընգ, ջ՛աղաց, մուննթ, հոնքուռ-հոնքուռ, կարքըվել (նաև՝ կանանց վերաբերյալ), տալվ, տիլ, յանն, մանի (նման է), հ՛օթթում, պաղըռել, խօրօխալէր, յեղըռճիկ, տափոցի, գախախօրել, հուրին-հուրին և այլն:

**ՎԱՐՄԵՐ** - Գյուղ Սեանի տարածաշրջանում: Նախկինում Չոչո: Վերանվանվել է 1946թ.: Բնակիչների մի մասի նախնիները 1828թ. գաղթել են Խոյի և Մակուի գյուղերից, ինչպես նաև 1829թ. Բայազետ քաղաքից: Հաղորդակցման միջոցը Մակուի խոսվածքն է՝ Բայազետի բարբառի որոշ տարրերով:

Խոսվածքի մի շարք փոխառյալ և բնիկ բառերում դրսևորվում է քմայնացած *ն* ձայնավոր, ինչպես՝ ձ՛նն, գաննել, քուֆսան, միյնանկ, գանրկել, բիբան, լան, թանն և այլն: Միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *n*-ի դիմաց առկա է *վ*ն, իսկ *ե*-ի դիմաց՝ *յե*, ինչպես՝ վոր, վոտ, յեգ, յես, բազմավանկ բառերի սկզբում՝ համապատասխանաբար *օ* և *է*, ինչպես՝ օդօրմի, օսկոռ, էրկու, էթալ: Խոսվածքն ունի *ե*, *n* երկբարբառային հնչյուններ՝ *ցօրեն*, *վեց*, *չոռս*, թըխտըմոր: Բնորոշ է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը, ինչպես՝ բ՛աժնել, գ՛օղնալ, սօլրել: Վարսերի խոսվածքն ունի շնչեղ ձայնեղ բաղաձայններ, ինչպես՝ բ՛ըռնել, բ՛ան, գ՛էլ, գ՛արի, գ՛աթա, դ՛ուռ, դ՛ուս, ձ՛ուկ, ձ՛ըմեռ, ջ՛ուր, ջ՛ոչ, գ՛աթա,

դ՛րնել և այլն: Բառամիջում ու բառավերջում ձայնեղների դիմաց գործառում են շնչեղ խուլեր՝ մառթ, հ՛եթիս, ջ՛ոչ, վեոչ, կարաք, ճրրաք, օց, ք՛անցրր, յեփ և այլն: Նույն դիրքերում խուլերի դիմաց երբեմն առկա են ձայնեղներ՝ կըղըել, կօղըել, սըբաս, վորդուց, աբբել և այլն: Հինհայերենյան հ-ի դիմաց բոլոր դիրքերում առկա է խ, ինչպես՝ խետ, խառս, խա, խառնիս/հառսանիք, էն գ՛ախ, խինգ, խավնել, պախել, խավ, խիվանդ, ք՛ախ և այլն: Հպաշփականները բաղաձայնից առաջ կարող են վերածվել շփականի, ինչպես՝ վոշ մե, մեշկ, տըղասկան: Բառասկզբի ձայնավորից առաջ շատ դեպքերում առկա է հ՛-ի հավելում՝ հ՛ուստ, հ՛ուր, հ՛ուրիշ, հ՛իմանալ, հ՛ւնեչ, հ՛ընչի, հ՛ատու, հ՛ընգեր, հ՛ուգել և այլն: Օտար բառերի սկզբի դ-ի դիմաց խոսվածքն ունի կ, ինչպես՝ կանթար, կուրբան, կավուրմա: Շեշտը վերջնավանկային է:

Խոսվածքում հոգնակին կազմվում է նաև ք, անք, վանք, տանք, անիք մասնիկներով՝ գ՛ինիք, վոսկիք, ձ՛իյանք, գ՛իլվանք, իշվանք, ախպըրտանք, քըվորտանք, կընանիք: Բացառական հոլովը ձևավորվում է ց-ով՝ դ՛ըռնից, դ՛աշտերից, երբեմն էլ՝ է-ով, ինչպես՝ գ՛իշերվորե: Ներգոյականի իմաստը արտահայտվում է հայցականով կամ մէչ կապով և սեռականով՝ Վառսեր եմ ծընվե, կըճուճի մէչ: Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են ի հավելված՝ ընձի, քեզի, մեզի, ձ՛եզի: Երրորդ դեմքի ուղղականի ձևերն են՝ հ՛ինքը, հ՛իրանք, ընդոնք: Ցուցական դերանվան եռանդամ ձևերն են՝ էս, էտ, էն, էսի, էտի, էնի: Ով դերանվան դիմաց խոսվածքն ունի վորը ձևը, որի սեռականի և տրականի ձևերն են՝ վիր, վիրք: Դերանվանական ուղիղ և թեք այլ ձևերից են՝ մեր, հ՛իր, հ՛իրանը, ընդոնց, ըստու, ըստուն, ըտուր, ըստըրա, ըտըրա, ընդըրա, ըստըրան, ըտըրան, ընդըրան, վորդուց, հ՛ուր, հ՛ուրիշ, հըմէն, հ՛իրսնր և այլն:

Գալ, լալ, տալ բայերի անկատար դերբայի ձևերն են՝ գ՛ալում, լսյում, տալում: Վաղակատար դերբայն ունի էր/էր վերջավորություն՝ ք՛ացեր (ա), դ՛ըրեր (ին), հարակատարը՝ ուկ վերջավորություն՝

ություն՝ խըմուկ, դ՛ըրուկ: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ եմ, ես, ա, ենք, էք, են, անցյալի ձևերը՝ ի, իր, էր, ինք, իք, ին: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի հիմքերից՝ թողի, լըցինք, ք՛էրեցին: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ գ՛աց, մաց: Պատճառական ածանցն է ցըն՝ փախծընել, պարկըցընել: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր:

Խոսվածքի բառային միավորներից են՝ իմալ, մառթ, չօլ, խարար հ՛ըլնել, ջեվիկ, պըստիկ, շուշարանդ, խընօցի, ժսժիկ, ճըխտել, փօշի, փայ, քըջուջ, կըտուր, հ՛ատիք, հ՛եթիս, ժեխ, ժօլօք, տիլ, մուխ, թուփ (տերև), կուտ, կըթուն, յեղըռճիկ, իրեքմատ, չոոսմատ, վիլ, պուտուկ, ուզընգան, տըղասկան, ճիժ, ադէ, ք՛ըլել, ոսստ գ՛ալ, պըսակվել, պախկըվել, տըփել, թառթափ, ձ՛ու, սըբաս, պուտ, կում, խօրօտ, ջ՛ոչ, մըռու, պադ, պըղօղել, ժօղօվկըրան, մօղօզիկ, գ՛ըթան, պուճուճակ, կանթար, կավուրմա, շանտըղի, քաղ անել, խամբըրել, կօծել, թօ, վէյրօ, վէյրօք և այլն:

**ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ** - Գյուղ Մարտունու տարածաշրջանում: Նախկինում՝ Վերին Աղյաման: Վերանվանվել է 1945թ.: Բնակիչների նախնիները 1828-29թթ. գաղթել են հիմնականում Ալաշկերտի Խաստուր գյուղից: Հաղորդակցվում են Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքով:

Խոսվածքում միավանկ բառերի սկզբում հինհայերենյան n-ի դիմաց առկա է տ, ե-ի դիմաց՝ յե, ինչպես՝ տոդ, տոծ, յեպ, յես, բացառություն է որ շաղկապը, որն ունի օր արտասանություն: Բազմավանկ բառերի սկզբում n-ի և ե-ի դիմաց գործառում են համապատասխանաբար օ և է, ինչպես՝ օխճար, օսկոռ, էրինջ, էրագ: Գործածվում են է, ո երկբարբառային հնչյուններ՝ գ՛իշեր, մենկ, ձ՛որ, քուրոճ: Եա երկբարբառի դիմաց խոսվածքն ունի է կամ է, ինչպես՝ Հսճօպեն (Հակոբյան), ծընընդեն (ծննդյան), Համալեգ (Հմայակ), կանեգ (կոնյակ), տեղեգ (տեղյակ), ցանկուտեմք (ցանկություն): Փոխառյալ և մի շարք բնիկ բառերում գործառում է

քմային *ա* ձայնավոր, ինչպես՝ *քննի, թնձն, քնլն, քնսիր, մնսնլն, միյնակ, յննի թէ, քնլն, յննի, գնրգել* և այլն: Խոսվածքին բնորոշ է բազմավանկ բառերում միջնավանկի ձայնավորի սղումը *ավէրան, փատտել, սովրել*: Բառասկզբում ձայնավորներից առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում՝ *հախար, հելլի, հէսոր, հառէ, հէրես, Հառակել, հոխար, հառու* և այլն: Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *գեղ, գատ, գարի, գիշեր, դուս, դուրան, ավար, ան, անր, ջուր, ջոճ*: Բառամիջում ու բառավերջում շնչեղ խուլերի և ձայնեղների դիմաց գործառում են խուլեր՝ *ճամպա, Տիկրան, մարակ, հոկի, հորկուր, Ավէրիկ, ամօտ, կրոտու, ուտանասուն, հրնուտեն, գորոտուն, ջոճ, խաճ, ինճ, գեղածի, վեճ, օճ*: Նույն դիրքերում խուլերի դիմաց առկա են ձայնեղներ՝ *հառո, վառժարեղ, շաղ, Հնգօպեն* (Հակոբյան), *տարեգան, պրզդիգ, մեգ, արուր, արբել, դրբոճ, պար, փեղ, աշխաղել, աղամ*: Հինհայերենյան *հ*-ի դիմաց խոսվածքն ունի *հ*: Օտար բառերի բառասկզբի *դ*-ի դիմաց խոսվածքն ունի *խ*՝ *խուրուխճի, խավուրմա, խրսն, խրստու, խարածուտուն, խօճ, խօլթուղ*, սրանց նմանությամբ *կանչել* բայի դիմաց գործառում է *խանճել* ձևը: Շեշտը վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում կազմվում է նաև *կ, անկ, դիկ, վրդիկ* մասնիկներով՝ *թավլեկ, գօլեծիկ, անիանկ, գիլանկ, ախարդիկ, հոխարդիկ, տէկնրկընզրդիկ, քուրվրդիկ, հերվրդիկ* (հերանք), *գեղրան*: Հաճախ հանդես են գալիս բաղադրյալ հոգնակերտներ՝ *անիանկներ, տրդեկներ, գարիկներ, էրեխեկներ*: Շատ անուններ եզակի թվում, ինչպես նաև գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման՝ *արեվու, հայու, գըլխու, գիլու, կօվու, ճամպու, անրու, ջրու, սրբու, սրտու, պարու, ճիժերու, հայերու, սելերու, փրջերու, քօլերու, կրտսրներու, հաճկերու* և այլն: Խոսվածքն ունի Ոջ հոլովում՝ *մօրկուրոճ, հօրկուրոճ, քուրոճ, տիրոճ, կիսրոճ*: Հաստուկ տեղանունները հաճախ ենթարկ-

վում են Ա հոլովման՝ *Գօլա, Մաղմաղանա, Մաղղունա, Ռուսաստանա, Իրանա, Քնվանա*: Ց հոլովման են ենթարկվում *իկ* հնչյունախումբ ունեցող հոգնակի կազմությունները՝ *քուրվրդիկ* > *քուրվրդոնճ, գեղածիկ* > *գեղածոնճ*: Չայնավորով ավարտվող հաստուկ անձնանունների, նաև որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Ջրնոյ, Խաճոյ, Տիկոյ, աֆսոյ*: Բացառականը ձևավորվում է *ծ(ց)*-ով՝ *հաճկերուճ, գեղիճ, քեղիճ*, այլ դեպքերում նաև *է*-ով՝ *դըննէն, մօղէս, մօղէն, օղնէ գըլօխ, քրզնէ, հինկ ուրնէ, էտեխէն*: Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցականով կամ *մէճ* կապով և սեռականով՝ *գեղըն* (գյուղում), *հառղի մէճ*, այդ իմաստը կարող է դրսևորվել նաև *տեխ* (տեղ) բառով, ինչպես՝ *բանակ տեխ*: Դիտարկվել է *գ* նախդրի կիրառություն, ինչպես՝ *Ջիմ պարըն գինա*: Որոշիչ հոդն է *ն*-ն՝ *Խաճըն բամբրկօլ դըրեր ա մէճըն*, սակայն միշտ չէ, որ այն գործածվում է, ինչպես՝ *Ավէրիկ ըսեճ*: Անորոշ հոդը ունի հետադաս կիրառություն՝ *փրջումի, ճանգ մի, գեղ մի*: Ստացական հոդերից հետո դրսևորվում է *ի* ձայնավոր՝ *մօրկուրոճի, տտսի, մամայիսի, հայրիգսի, դէրիսի, սօլերսի, հառէճսի, դէմսի, ծոճսի, գըլխուսի, սիոտսի, բեոտի* (բեռը): Հոգնակի ստացականությունը արտահայտվում է անձնական դերանունների հոգնակի տրականի հետադաս կիրառությամբ, ինչպես՝ *թեվ մրզի* (մեր թեերը), *օղներ մրզի* (մեր ոտքերը), *հունտ մրզի* (մեր թևատակերը): Այս ձևերի հետ կարող են գործածվել կապեր, ինչպես՝ *հաճ թալի թեվեր ուրանճ վրքէն* (իրենց թևերի վրա հաց գցեցի), *գըլխու ուրանճ վրքէն* (իրենց գլուխների վրա):

Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի(զ)* հավելված՝ *ընճի(զ), քրզի(զ), մրզի(զ), անրզի(զ)*, երրորդ դեմքի ուղիղ ձևերն են՝ *հինկ, ուրանկ*: Ցուցական դերանունները երկանդամ են՝ *էղ, էն, էղի, էնի, իղա, ինա*: Ով դերանվան դիմաց առկա է *տն*, որի սեռականի, տրականի ձևերն են՝ *վի, վին*: Դերանունների ուղիղ և թեք այլ ձևերից են՝ *ընճընիճ, քրզնէ, ուր, ուրին, ուրնէ, ուրանճ, էղտեխ, էտեխէն/էղտեխէն, էղոնկ, էղոճ, իղոնկ, էղոր, ընդոր, էնդուճ, էղրուճ, էնէնճ, էղմալ, էղմրալ, հրմալ// ըմալ, էտեխ,*

իդատեխ, իդաքան, ամեկ//ամեգ, ամեգուն, հրմէն, հրմէն ինճ, հիրար, դէս, դէն, դան (այնտեղ), հ ուր, դոր և այլն: Էլ շաղկապի դիմաց գործածվում է լէ ձևը՝ մօրկուր լէ, ձ րմեռ լէ, մենկ լէ, իմ հէր լէ, իսնէրուծ լէ:

Խոսվածքում *անել, ասել, լինել, ելնել, կարողանալ* բայերի դիմաց գործածվում են *էնել, ըսել, եղնել, հ էլնել, կրոնալ* տարբերակները: *Գալ, լալ, տալ* բայերի ներկյան (նաև անցյալ անկատարը) կազմվում է *գի//կի* մասնիկով՝ *գ իկամ, գ իլամ, կիդամ*, մյուս բայերինը՝ *կը//կ* մասնիկով կամ առանց դրա՝ *կըփախնի, կուրխընանկ, բ էրէն*: Միանալով բայասկզբի հագագին՝ այդ մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ *գիճու, գէլնէնկ*: Գործածական են *գալ* բայի ըզձական ապառնու ի նախահավելվածով ձևեր՝ *իգ ամ, հ իկանկ, հ իկա, հ իկան, հ իկէր*: *Դնել, տեսնել* բայերը ներկայի հիմքից կազմվող դիմավոր ձևերում ունենում են *ա* լծորդ հնչյուն, ինչպես՝ *կըդ ընան, կըդ ընանկ, տեսնանկ, կրտեսնան, տեսնամ*: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն՝ *մածեր (ա), քրճըծուծէր* (ինկ), հարակատարը՝ *ուգ* վերջավորություն՝ *լրծուգ, թալուգ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *իմ, իս, ա, ինկ, իկ, ին*, անցյալի ձևերը՝ *էնկ, էր, էր, էնկ, էկ, էն*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կարող է կազմվել ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հիմքերից՝ *քանդէծին//քանդին, քաշէծի, ըսպանինկ*: *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ ած, մած*: Եզակի հրամայականն ունի ներգործածև և կրավորածև վերջավորություններ՝ *ըսա՛, կայնի՛*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում հանդես է գալիս օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *ըմալ ա գիլամ, իմալ ա կէնիս, դ աշտն էր հառէճ կըջ ըրէն*: Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա, ինչպես՝ *չըգ ագէր էր*, համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըսիրէնկ* (չէի սիրում), *չըլըփան* (չեն լվանում), ընդ որում՝ բայասկզբի *հ*-ի

հետ միանալով կամ ձայնեղ բաղաձայնից առաջ ժխտական մասնիկը ձայնեղանում է, ինչպես՝ *ջընգընիկ* (չէք ընկնի), *ջըգինանկ* (չենք իմանում): Պատճառական ածանցն է *ծուծ//ուծ՝ քրճըծուծէլ, լածուծէլ*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում և հրամայականում դրսևորվում է *ու* խոնարհիչը՝ *գիճու* (իջեցնում է), *հիճն ի* (իջեցրո ի): Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (*թըռնել, փախնել, ուռել*): Հարկադրական եղանակը ձևավորվում է *բըդի* եղանակիչով՝ *բըդի գ ա*:

Խոսվածքի բառային միավորներից են՝ *աբուր, ճիժ, խարախարման, լուսուն, չուր//չուրի, իճկել, հավդիգ, ջաղդա, մինսնգ, հուդա, հառավօդ, սաբախտան, իմալ, պալ, ջ՝ ըրդուկ, հարսընիս, խեխտ աշուն, սըրախ, հըրիսա, սիլօգ, հօրի, միրավ, ջ՝ ոճ, պըզդիգ, ադէ (տատ), չընտիգ, մատտ, խըլդ, ջէր, դըհա, բ՝ էդ, մըգա, հիրգուն, ժուռ էնել, սինօռ, լէնկ, հապիգ-հապիգ, ինճօր, կօվկիտ, օխճըրկիտ, թայմընել, պուշ, կամ, խախընդել, ապէր, ֆըլանքասս-բէֆանքաս, ւօդնաման, հունտ, թունդիր, անձ էն-անձ ու, ցավակէր, տապէլ (թաքնվել), պինճ, խուլ, կէրսէր, խօսկառում, բարիշում, թըսիբ, խօրօդ, պակել, մըգա, թըք, հըրօր, հըր, հախու, նահադգել, հօխպէր, ճէռօկ, թուպ (թթու դրած կաղամբ), թըպջ ուր, տօշնի վըր տօշնի, հանդա, կօրգել, շիդգել, համ հ ընգնել հ իրար, աճառ, շիշնգ, մակի, չըդիգ, պուբուջագ, փօդոճ (աղբանոց), գ ակատ, սօմի, փատանի, դ՝ արկ, ուրին-ուրին, հինկ ուրին և այլն:*

## Փ

**ՓԱՄԲԱԿ** - գյուղ Վարդենիսի տարածաշրջանում: 1988-89թթ. այստեղ բնակություն են հաստատել Ադրբեջանի Դաշքեսան քաղաքից բռնագաղթած հայեր: Ընդգրկված է Գեղամասար համայնքի կազմում: Հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառով:

## ԳԼՈՒԽ 2.2.

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ  
ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի խոսվածքներում դրսևորվող բարբառային առավել էական հատկանիշներից են հետևյալները.

1. քմայնացած *ü*-ի առկայություն, <sup>+1</sup>. օրինաչափ դրսևորմամբ, <sup>+2</sup>. լայն տարածումով.
2. քմայնացած *ü*, *ö*, *ni* ձայնավորների առկայություն.
3. շրթնայնացած *ü*-ի առկայություն.
4. խառը տիպի ձայնավորների առկայություն.
5. միավանկ բառերի սկզբի *n*-ից առաջ շրթնային տարրի հավելում՝ *վn*, <sup>+1</sup>. *ւn*, <sup>+2</sup>. *վէ*, *վը*<sup>+</sup> <sup>+3</sup>. *վօ*.
6. միավանկ բառերի սկզբի *ե*-ից առաջ *յ*-ի հավելում՝ *յէ*, <sup>+1</sup>. *յե*, <sup>+2</sup>. *յէ*.
7. *ոք* շաղկապի արտահայտություն *օք* հնչատարբերակով.
8. բազմավանկ բառերի սկզբի *n*-ի դիմաց՝ *օ*.
9. բազմավանկ բառերի սկզբի *ե*-ի դիմաց՝ *է*.
10. *ոյ*, *իւ* երկբարբառների դիմաց՝ *ի*, <sup>+1</sup>. *իւ* երկբարբառի առկայություն.
11. փոխառյալ բառերի *ու* ձայնավորի դիմաց՝ *ի*.
12. շեշտանախորդ վանկի ձայնավորի սղում. <sup>+</sup>. միջնավանկում, <sup>+1</sup>. առաջնավանկում.
13. երկբարբառային *ե* – ի առկայություն.
14. երկբարբառային *n* – ի առկայություն.
15. *եա* երկբարբառի դիմաց՝ *ե*, *է*, *յü*, <sup>+1</sup>. *յե*.
16. ձայնավորների ներդաշնակության դրսևորում.
17. վերջընթեր շեշտի դրսևորում.
18. շնչեղ ձայնեղների առկայություն.

19. բառասկզբի ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց խուլեր.

20. բառամիջում ու բառավերջում հպական ու հպաշփական ձայնեղների դիմաց՝ շնչեղ խուլեր.

21. բառամիջում ու բառավերջում հպական ու հպաշփական ձայնեղների ու շնչեղ խուլերի դիմաց՝ խուլեր, <sup>+1</sup>. միայն շնչեղ խուլերի դիմաց.

22. բառամիջում ու բառավերջում հպական ու հպաշփական խուլերի դիմաց՝ ձայնեղներ.

23. հետնալեզվային պայթականների քմային արտասանություն.

24. հետնալեզվային պայթականների դիմաց՝ *ջ, ճ, չ* հպաշփականներ.

25. բաղաձայնից առաջ հպաշփականի վերածում շփականի.

26. հինհայերենյան *h*-ի դիմաց՝ *իւ*.

27. փոխառյալ բառերի սկզբի *դ*-ի դիմաց՝ *կ*, <sup>+1</sup>. *գ*.

28. փոխառյալ բառերի սկզբի *դ*-ի դիմաց՝ *կ*, <sup>+1</sup>. *գ*.

29. փոխառյալ բառերի սկզբի *դ*-ի դիմաց՝ *իւ*.

30. փոխառյալ բառերի սկզբի *դ*-ի դիմաց՝ *դ*.

31. բառասկզբի *իւ*-ի դիմաց՝ տարնմանական *h*.

32. բառասկզբի *հօ*-ի դիմաց՝ *ֆօ*.

33. բաղաձայնից առաջ հետնալեզվային պայթականի դիմաց՝ *յ* ձայնորդ

34. բաղաձայնասկիզբ բառից առաջ, նաև բառամիջում՝ *նք>յ*, *նգ>յ* փոփոխություն.

35. *ֆ*-ի բացակայություն.

36. բառավերջի *ն*-ի դիմաց՝ *ը*.

37. բառասկզբի ձայնավորից առաջ ձայնեղ *h*-ի հավելում, <sup>+1</sup>. խուլ *h*-ի հավելում.

38. բաղիյուսական բարդություններում *ու*-ի դիմաց՝ *ը*.

39. բաղադրյալ հոգնակերտների գործածություն.

40. Ու հոլովում հոգնակի թվում.

41. Ոջ հոլովման առկայություն.  
 42. Ո ներքին հոլովման ընդգրկման ընդլայնում.  
 43. սեռականի ձևավորում *յ*-ով.  
 44. հատուկ տեղանունների *Ա* հոլովում.  
 45. ներգոյական հոլովի առկայություն.  
 46. ներգոյականի իմաստի արտահայտություն *նե* մասնիկով.  
 47. ներգոյականի իմաստի արտահայտություն տրական հոլովով.  
 48. միայն որոշիչ *ն* հոդի առկայություն՝ սահմանափակ կիրառությամբ.  
 49. որոշիչ հոդի գործածություն նաև բացառական, ներգոյական և գործիական հոլովներում.  
 50. անորոշ հոդի հետադաս կիրառություն.  
 51. ստացական հոդերից հետո *ի* մասնիկի դրսևորում.  
 52. հոգնակի ստացականության արտահայտություն հետադաս դերանուններով.  
 53. անձնական դերանունների տրական հոլովում *ի(իկ)*-ի առկայություն.  
 54. անձնական դերանվան *քե* կրճատ ձևի առկայություն.  
 55. անձնական դերանունների *քե, մե, ձե* կրճատ ձևերի առկայություն.  
 56. ցուցական դերանունների երկադիմություն.  
 57. Ով դերանվան դիմաց *վոն, +<sup>1</sup>. տն*.  
 58. Ով դերանվան դիմաց *վոր/ը/*.  
